Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

891.99
Մ 25

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ

Ա Շ Խ Ա Ր Հ

Երրորդ տարուայ

ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ

Կեցցէ յաւիտեան մեր գանձ թանկագին —
Մեր հայոց լեզուն քաղցրիկ նորածին,
Թող նա զօրանայ, ծաղկի և աճի
Ապահովութեամբ Աստուծոյ աջի։

Դոդոխեանց։

ՅՕՐԻՆԵՑ

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ

Բ. Տպագրութիւն

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԱՅ ԷՆՖԻԱՃԻԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.

1880

Дозволено цензурою Тифлисъ 30-го Іюля 1880 года.

ՀԱԿՀ. ՊԵՏ ԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԲԱԺՆՓՈՐԱՆԻ
990

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ.

Արդէն առաջին տպագրութեան ժամանակ մենք յայտնել էինք այն միտքը, թէ Հայերս որքան կարօտութիւն ունինք մի «ընթերցարանի» ունենալ, որ նա ՄԱՅՐԵՆԻ լինի ոչ միայն իւր գործած լեզուով, այլ նախ և առաջ իւր ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ, որ նա ազգային տարրերի բովանդակիչ լինի, որ նա բուն Հայոց լեզուն, Հայոց ժողովուրդը և Հայոց աշխարհը կենդանի կերպով պատկերացնէ. և ինչպէս այն տեղ, այս տեղ էլ ընթերցողին հրաւիրում ենք «Փորձի» առաջին տարւայ IV համարում տպագրած մեր քննութիւնը աչքի առաջ ունենալ Տ. Ղեոնդեանի «Մայրենի լեզուի» մասին, ուր մեր գաղափարը ընթերցարանի մասին մանրամասն բացատրուած է։

Մենք այն ժամանակ «Նահապետական և հայրենի աշխարհը» հրատարակեցինք, իբրև օրինակ ընթերցարանի։ Արդեօք ինչ ընդունելութիւն գտաւ նա մեր ուսումնարաններում, այս մասին մեր մամուլ շատ չ'զբաղուեցաւ, թէ և այն բազմաթիւ համակրութիւնները որ մենք մասնաւոր կերպով ստանում էինք, պարզ ապացոյց էին մեզ համար, թէ այն գիրքը շատերի հետաքրքրութիւն էր շարժում, և ուրեմն արժանի էր բազմակողմանի քննութեան։ Միայն պ. Բահաթրեանցը «Մանկավարժական թերթում» քննելով մեր ընթերցարանների մանկավարժական ուղղութիւնը, «որ նոքա անկարող են հայ երեխային ոչ հայ, ոչ էլ առ հասարակ մարդ կրթելու, որովհետև նոքա իւրեանք էլ ոչ հայի ծնունդ են, ոչ ռուսի, ոչ թուրքի. . .» մատնացոյց է անում մեր երկասիրութեան վերայ, թէ նա այդ կարգի ընթերցարաններից դուրս է։ Նորա վկայութեամբ մենք ենք եղել առաջինը, «որ աշխատել է ներկայացնել երեխայի դատողութեան այն, ինչ որ յատուկ է հայ կեանքին և մօտ հայ մանկան մտաւոր շրջանին

«ու հայեցողութեան։ Նա իւր աշխատասիրութեամբ առաջինը ցոյց «տուաւ այն գանձերը, որոնք ամենայն իրաւամբ պիտի ծառայեն իբրև «աղբիւր հայ մանկան դաստիարակութեան և առաջինը աշխատ«եղաւ հայ մանկան հայ դաստիարակել»։ — Ի հարկէ այս ամենամեծ գովեստ է, որ կարող է ասուիլ մի ընթերցարանի մասին։ Եւ եթէ մենք պ. Բահաթրեանցի վերջին խօսքերը չեղծելով խաղեցինք, մենք ոչ թէ պարծենալ ուզեցանք, այլ աւելացնել, թէ ինչով մեր ընթերցարանը հայ մանկան հայ է դաստիարակում։ Շատ հասկանալի է, որովհետև նորա մէջ առաջին անգամ մտաւ մեր ազգային մատենագրութեան ծնունդը և միայն նորան է վայել այն գովեստը։

Բացի այս՝ որովհետև 1000 օրինակը 2 տարուայ մէջ տարածուեցաւ, այնպէս որ այժմ կարօտութիւն եղաւ ընթերցարանի երկրորդ տպագրութիւնը, այնև մի այնպիսի ընթերցարանի, որ միայն 3 դ տարուայ համար էր նշանակուած և իւր առաջին ու երկրորդ մասը դեռ չ՚ունէր — այս ամէնը լաւ ապացոյց է, թէ գիրքը ընդունելութեան է արժանացել։ Եւ ուրեմն մենք ամենայն համարձակութեամբ կարող էինք մի անգամ սկսած գործը շարունակել, որ և այժմ երկու լոյս ենք ընծայում, այսինքն «Նահապետական և հայրենի աշխարհի» հետ լոյս ենք ընծայում և «Ազգային ընտանեկան աշխարհըն» ու «Ազգային դիւցազնական աշխարհը», որով այս ընթերցարանները արդէն մի ամբողջութիւն են կազմում ուսման 1-ն, 2-դ և 3-դ տարեշրջանների համար։

Մենք այս անգամ Նահ. և հայր. աշխարհը անփոփոխ կրկին տպագրում ենք, բաց հանելով վերջին փոքրիկ ոտանաւորը «Ցարի մ՚ալ անցաւ», որ մեղանից անկախ պատճառով չի տպագրւում։ Բայց թող ընթերցողը չը կարծէ, թէ այս մենք անում ենք — նորա թերութիւնները չ՚զգալով։ Արդէն պ. Բահաթրեանցը մեր ընթերցարանի պակասութիւնները ցոյց տալով, մեզ նկատեց, թէ նորա մէջ մեր մատենագիրների լեզուն անփոփոխ չը պէտք է թողնէինք, այլ պէտք է աւելի մաքուր գրականի դարձնէինք։ Մենք նոյն

«Մանկավարժական Թերթում» հրաւիրեցինք թէ նորան և թէ մեր բանաքննիչներին այս հարցը աւելի բազմակողմանի քննել. բայց աւաղ որ այս հրաւէրը լուռ անցաւ։ Բայց այսպիսի մի կարևոր փոփոխութիւն անելը առանց բազմակողմանի քննութեան՝ մենք չը վստահացանք։ Միւս կողմից խոստովանում ենք, որ փոքր ինչ շտապել ստիպուած էինք։ Ինչպէս որ «Նահապետական և հայրենի աշխարհի» առաջին տպագրութիւնը գործնական պատճառով լոյս տեսաւ, այսինքն Տփխիսու Ներս. Դպրոցի մէջ մանկավարժութիւն սովորող աշակերտների առաջնորդութեան համար, այնպէս էլ այժմ յիշեալ 3 ընթերցարանները շտապով պէտք է տպագրուէին Ղարաբաղու Հոգևոր Դպրոցի աշակերտներին առաջնորդութիւն տալու համար, որոնք այս եկող Սեպտեմբերից ուղղակի դասատուութիւն պէտք է անեն պատրաստական դասատանց մէջ մեր առաջնորդութեամբ։

Վերջապէս մի քանի խօսք այս գրքի գործածութեան մասին։

Շատ ուսումնարաններում, ինչպէս լսում ենք, մեր «Նահ. և հ. աշխարհը» ծայրէ ի ծայր կարգով է կարդացուել։ Բայց ի հարկէ, ինչպէս նորա առաջին տպագրութեան յառաջաբանից երևում է, նա այդպէս չը պէտք է գործածուի։ Եթէ այժմեան 3 ընթերցարանն էլ ուշի ուշով կարդան իմ պատուելի պաշտօնակիցները, նոքա կը տեսնեն, թէ ամենայն տարուայ համար բոլոր ուսմունքների միջից մի կենդրոնացուցիչ նիւթ ենք ընտրում՝ աշակերտի միտքը զբաղեցնելու համար, ուր նա այդ նիւթով նախ և առաջ մարդկային կեանքը պիտի ճանաչէ։ Առաջին տարին նա այդ կեանքի հետ է ծանօթանում ընտանեկան կեանքի վերաբերեալ երգերով և հէքիաթներով, երկրորդ տարին՝ Սասունցի Դաւթի վէպով (Սրուանձտեանի հրատարակած), երրորդ տարին՝ Ս. Գրքից նահապետների պատմութեամբ։ Սոքա են բուն կենդրոնացուցիչ նիւթերը, որոնց հետ որ պատշաճ տեղերում պէտք է համակցուեն թէ միւս ուսմունքները և թէ ընթերցարանի յաւելուածները։ Եւ ճշմարիտ իւրաքանչիւր ընթերցարանը մի մի յաւելուած ունի։ Թէ ինչպէս 1-ն տարուայ յաւելուածը պէտք է գործածուի՝ նորա մասին մանրամասն բացատրու-

թիւններ ենք տպագրել յատկապէս ուսուցիչների առաջնորդութեան համար. 2-դ տարուայ յաւելուածի բացատրութիւնը թէ և չուտ կը տպագրուի նոյնպէս, բայց, յոյս ունինք, արդէն նիւթն ինքը ցոյց կուտայ նորա ճիշդ գործածութիւնը։ Պարզ է որ 3-դ տարուայ «Հայրենիք վերտառութեամբ յօդուածները այդպիսի յաւելուած է, նա պէտք է կարդացուի ոչ թէ Ս. Գրքի պատմութիւնները լրացնելուց յետոյ, այլ նորա հետ զ ո ւ գ ը ն թ ա ց կերպով։ Այսինքն Ս. Գրքի պատմութիւնները նկարագրում են իսրայէլացւոց ը ն տ ա ն ի ք, հովուական, ե ր կ ր ա գ ո ր ծ ա կ ա ն, ո ր ս ո ր դ ա կ ա ն, զինուորական կեանք. իսկ «Հայրենիքը» նոյն է նկարագրում Հայոց կեանքից։ Պարզ է, որ եթէ մանուկը օտար (թէ և կրօնով արդէն հայացած) հանգամանքների մասին տեղեկութիւն է ստանում, մի և նոյն ժամանակ զ ո ւ գ ը ն թ ա ց օ ր է ն բուն հայկական կեանքի հանգամանքներն էլ պէտք է իւր մտքում պատկերացնէ, որպէս զի մէկով միւսը և փոխադարձաբար միւսով առաջինը լուսաբանուի և աւելի խոր տպաւորուի մտքի մէջ։

Յառաջաբանը չերկարացնելու համար, յատկապէս խնդրում ենք պ. պ. Ուսուցիչներից, որ կարդան թէ առաջին հրատարակութեան յառաջաբանը և թէ «Մանկավարժական թերթի» 5 համարում մեր յօդուածը Նահ, և հայ. աշխարհի մասին։

Արդ տայ Աստուած, որ այս երկրորդ տպագրութիւնը իւր կրտսեր ուղեկիցներով աւելի բարեկամներ գտնէ մեր ուսումնարաններում։

Ս. Մ.

աշխարհն այն.
Խնկոն Ար.

աշխարհ այն [illegible]

Առաջին բաժին

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ։

Որպէս ծաղիկ մանուկ, քաղցր ես. և շնորհագեղ որպէս օր։
Մանուկ, մանուկ, ինձ չխաբես, մինչև կաց այդպէս լուսաւոր։
Նայիր վերև տես, ինչ սիրուն այն տեղ փայլում են աստղեր։
Եւ անթիւ են. և շողշողուն, որպէս երկու քո աչեր։
Այն տեղ, հոգեակ, բնակվում է մեր սուրբ Հայրը երկնքի,
Նա է, որ մեզ ուղարկում է և կեանք, և Սէր, և Հոգի։

Շահազիզեան։

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՆԱԽԱՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ։

1. Միջագետք։

Հայաստանի ամենից յայտնի սարը Արարատն է կամ Մասիսը։ Նա իրա շրջապատող բոլոր սարերից բարձր է, և ամբողջ տարին ձիւնով պատած։ Արարատի սահմաններին մօտիկ բղխում է Եփրատ գետը։ Սա հոսում է նախ դէպ արևմուտք սարերի միջով, յետոյ վազում է դէպի հարաւ։ Այն կողմերում ծագում է նաև Տիգրիսը, որ շատ արագավազ է։ Այս երկու գետերի մէջ մի ընդարձակ դաշտավայր կայ որ Միջագետք է կոչվում։ Դաշտավայրը ծածկուած է լայն և խոտաւէտ տափաստաններով, ուր ոչ արտեր, ոչ պարտէզներ, ոչ այգիներ և ոչ մեծ քաղաքներ կան. մարդիկ էլ քիչ են բնակւում։ Եւ նոքա ապրում են ոչ թէ հողագործութեամբ կամ արուեստներով, այլ խաշնապահութեամբ, և նոցա հօտերն այն մեծ և սիգաւէտ տափաստաններում լաւ սնունդ են գտնում։

Միջագետքի արևմտեան մասում, Եփրատին մօտիկ, ընկնում էր հին ժամանակներում քաղդէացւոց աշխարհը, Ուռհա և Խառան քաղաքներով. Ուռհան հիւսիսում, իսկ Խառանը տափաստանների մէջտեղը։

Եփրատից այն կողմը, դէպի հարաւ երթալով, երկիրն աւազոտ ու մերկ է. ուր այլ և ջուր չկայ, խոտ այլ և չէ երևում, և ուր սկսվում է այն անապատը, որ Ասորական անապատ է կոչվում։ Այս երկիրը հարիւրաւոր մղոնների տարածութեամբ դէպ արևելք և հարաւ՝ տափարակ և անմար-

ցաքնակ է, իսկ արեւմտեան կողմից բարձրանում են այն լեռները, որոնց ետեւն է ընկնում Քանանացոց աշխարհը, որ ձգւում է մինչեւ Միջերկրական ծովի ափերը:

2. Աբրահամի Միջագետքից դուրս գալը:

Մեզանից չորս հազար տարի առաջ՝ Միջագետքի Ուռհա քաղաքի մէջ մի հարուստ հովիւ կար անունը Թարա, որ երեք որդի ունէր. Աբրահամ, Նաքովր եւ Առան: Հօրը կենդանութեան ժամանակ Առանը Ուռհայում մեռաւ, Ղովտ անունով մի որդի թողնելով:

Թարան առաւ իւր որդի Աբրահամին, նորա կին Սարային եւ իւր թոռ Ղովտին, հանեց Ուռհայից ու տարաւ Խառան, եւ այնտեղ բնակեցան: Նորա մահուանից յետոյ Տէրն ասաց Աբրահամին. «Քո երկրից եւ քո ազգից եւ քո հօր տնից ել եւ գնա այն երկիրը, որ ես քեզ ցոյց եմ տալու. ես քեզ մեծ ազգ կանեմ ու կորհնեմ քեզ»:

Եւ գնաց Աբրահամը, ինչպէս որ Աստուած նորան պատուիրեց, եւ Ղովտն էլ նորա հետ գնաց: Եւ Աբրահամը եօթանասուն ու հինգ տարեկան էր երբ որ Խառանից ելաւ:

Եւ ճանապարհ ընկաւ նա իւր կնոջ Սարայի, իւր եղբօրորդի Ղովտի, իւր ծառաների եւ աղախինների հետ. առաւ հետը բոլոր ինչքը եւ գնաց դէպի Քանանացոց երկիրը, մինչեւ Սիւքէմ քաղաքը, այն է մինչեւ բարձր կաղնին:

Եւ երեւեցաւ Տէրը Աբրահամին եւ ասաց. «Ես այս երկիրը քո զաւակներին կըտամ:» Իսկ Աբրահամը այն տեղ սեղան շինեց Աստծուն՝ որ նորան երեւեցաւ:

Յետոյ այն տեղից հեռացաւ եւ գնաց դէպի մի լեռան, որ Բեթէլի արեւելեան կողմն է: Այն տեղ զարկեց իւր խորանը (վրանը), Աստծուն մի սեղան շինեց եւ Աստուծոյ անունովը կոչեց:

Սուրբ գրքից:

3. Յորդանանու դաշտը:

Աբրահամի նոր հայրենիքը Քանանացոց երկիրն է, որ եւ սուրբ երկիր է կոչւում: Համարեա նորա մէջ տեղն է Սիւքէմ քաղաքը, ուր Աբրահամն առաջին անգամ հանգստացաւ, իսկ այն տեղից հարաւ Բեթէլն է, նորա երկրորդ հանգստութեան տեղը: Այդ երկիրն աւելի զուարթ է քան Միջագետքը. այդ տեղ բուսնում են ցորեն, պտղատու ծառեր եւ որթ: Այդ տեղ փոփոխակի երեւում են անտառներ եւ մարգագետիններ, արտեր եւ այգիներ, շինուած են գիւղեր եւ քաղաքներ: Սակայն Քանանացոց աշխարհի ամենագեղեցիկ մասը Սիւքեմի եւ Բեթէլի կողմը չէ, այլ աւելի դէպի արեւելք՝ Յորդանանու ձորի մէջ: Այս գետը ծագում է Հերմոն եւ Լիբանան սարերից, որ սուրբ երկրի հիւսիսումն են, եւ հոսում է դէպի հարաւ մի ձորի միջով, որ մօտ երկու մղոն լայն է: Այն տեղ կանանչն աւելի պերճ է, մարգերն աւելի ջրարբի, պարտէզներն աւելի ծաղկաւէտ եւ արտերն աւելի պարարտ են՝ քան Քանանացոց աշխարհի որ եւ իցէ ուրիշ տեղը: Բայց Աբրահամն ու Ղովտը կանգ չառան այս գեղեցիկ տեղերում, որպէս զի աւելի դէպ արեւմուտք երթան բնակեն:

4. Աբրահամի եւ Ղովտի բաժանումը:

Աբրահամը շատ հարուստ էր եւ ունէր հօտեր, նախիրներ, էշեր, ուղտեր, ծառաներ, աղախիններ, արծաթ եւ ոսկի: Եւ Ղովտը, որ Աբրահամի հետ եկել էր, նոյնպէս ունէր արջառ, ոչխար եւ անասուն, ծառայ եւ խորան: Եւ երկիրը բաւական չէր նոցա համար, եւ նոքա չէին կարող միասին բնակել, որովհետեւ նոցա ստացուածքը շատ էր: Ուստի Աբրահամի եւ Ղովտի հովիւները անդադար վիճում եւ կռւում էին:

Եւ Աբրահամն ասաց Ղովտին. «Թող իմ եւ քո մէջ, իմ հովիւների եւ քո հովիւների մէջ կռիւ չլինի, որովհետեւ մենք եղբայր

մարդիկ ենք։ Ահա քո առաջն է բոլոր երկիրը, բաժանուիր ինձանից. եթէ դու ձախ կողմն երթաս, ես կերթամ աջ կողմը. իսկ եթէ դու աջ կողմն ես ուզում երկիր ընտրել, ես կերթամ ձախը։

Ղովտը բարձրացրեց աչքը և տեսաւ Յորդանանու բոլոր կողմերը, որ գեղեցիկ և ջրով առատ են Աստուծոյ դրախտի նման, և ընտրեց այն երկիրը՝ և գնաց դէպ արևելք, և բնակեցաւ Սոդոմի մէջ։

Աբրահամը գնաց դէպի Քեբրոն և իւր խորանը զարկեց Մամբրէի կաղնու մօտ և այնտեղ Աստծուն սեղան շինեց։

Սուրբ գրքից։

Յ. Հովուական կեանք։

Միջագետքի բնակիչները ոչ հողագործութեամբ և ոչ արուեստներով են պարապում, այլ խաշներ են պահում, որոնք այն կողմի խոտաւէտ տափաստաններում լաւ սնունդ են գտնում։ Եթէ հովիւը տեսաւ թէ մէկ տեղում արածեցնելով՝ խոտը վերջացաւ, քաշվում է ուրիշ տեղ։ Թարան էլ իւր որդկերայնով Ուռհայից Խառան քաշուեցաւ. իսկ Աբրահամն ու Ղովտը մինչև Քանանացոց երկիրն անգամ գնացին։

Երբ քաշուելու նշանը տրվում է՝ բանակի մէջ մեծ կենդանութիւն է տեսնվում։ Ծառաներից ոմանք վրաններն են տեղերից հանում, փաթաթում և էշերին ու ուղտերին բառնում, միւսները ցիրուցան արածող անասուններն են ժողովում։ Կանայքն էլ հաւաքում ու պարկերի մէջ են դնում փոքրաթիւ կահ կարասիքը, տիկերը ջրով լցնում և ամեն բան բեռնակիր անասունների վրայ են դցում ու կապում, ի հարկէ նախ և առաջ ճանապարհին հարկաւոր ուտելեղէնը։ Այս նախապատրաստութիւններն որ վերջացան՝ ողջ բանակն սկսում է շարժվել։ Առջևից գնում են զինաւորուած ձիաւոր ծառաներ, նոցա գլուխն անցած գնում է ճանապարհին տեղեակ առաջնորդը. սոցա ետևից էլ դանդաղ ոտով՝ խաշն ու անդեան, այսինքն ոչխարն ու

այծը, արջառն ու էշն և ուղտը իրանց մատաղ ձագերով, որոնք արագ երթալ չեն կարող։ Սովորաբար սոցանից յետոյ գալիս է տէրն իւր ընտանիքով և իւր ծառաների կանանցով և որդկերանցով։ Ծայրը վերջացնում են դարձեալ զինաւորուած ծառաներ։ Կողքերից էլ դարձեալ գնում են նոյնպիսի ծառաներ՝ դամփռ շներն հետները, որոնց պաշտօնն է պահպանել հօտերն ու նախիրը բէդուինների (Թափառականների) ասպատակութիւնից և վայրենի կենդանիների յարձակումներից։ Այսպէս այս բանակը՝ իւրաքանչիւր օր կարճ կարճ ճանապարհ կտրելով՝ տեղից տեղ փոխվում է, մարդկանց աղաղակով և երգով, զանգուլակների զրնկզրնկոցով ճրնկճրնկոցով, անասունների բառաչով ու մնչով, մինչև որ դէմ դրած վերջին տեղն հասնի։ Տեղը հասնելուն պէս նոր տեսարան է բացվում։ Վաստակած լինելով՝ մեր սևամօրուս, արևակէզ, առոյգ մարդիկը փոքր ինչ հանգստանում են։ Յետոյ վեր են կենում և հետզհետէ ոմանք ցըցում են վրանները, որոնց մէջտեղն է բռնում աւագ տիրոջ խորանը. ոմանք տանում են տիկերը, սառը ջրհորից ջուր են լցնում բերում։ Այս տեղ քրտնքի ու փոշու մէջ կորած մարմինն են լուանում ու իւղով օծում, այն տեղ ուղտերն ու ձիանն են թիմարում ու մաքրում։ Նախիրն ու ոչխարն էլ խոտի վրայ պառկած որոճալով հանգստանում են, որոնց վրայ խնամատար ծառաներն արթուն հսկում են, որովհետև պատասխանատու են իրանց տիրոջը՝ իրանց յանձն եղած նախրի համար։ Վրաններն որ զարկին պրծան, կահ կարասիքը տեղաւորեցին ու իրանք էլ տեղաւորուեցան՝ այնուհետև կրկին սկսվում է խաշնապահի սովորական կեանքը. ամեն օր գիշերանց վեր են կենում հովիւներն ու տանում են ոչխարն արածացնելու. կէս օրին բերում են պէրատեղը կթելու, ու էլի քշում տանում են արօտը։ Նախրորդներն էլ նախիրն են արածեցնում։ Երեկոյեան երբ բանակատեղն են վերադառնում, տէրը համարում է իւր ապրանքը որ տեսնի լրիւ են՝ թէ չէ։ Եթէ վայրենի գազանները մի անասուն պատառել կամ թէ աւազակները խլել են, կամ եթէ մէկը ճանապարհին մոլորուել է, ծառան պէտք է փոխարէնը վճարէ։ Ուստի և ամենայն հոգատարութեամբ և զգուշութեամբ հովւում է հովիւը իւր հօտ և նախրորդը նախիրը։ Եթէ անասուններից մէկը հիւանդանում է, բոլոր ջանքով խնամում են որ առողջացնեն։ Եւ ինչպէս չհոգան նոքա այս

արդիւնաբեր կենդանիները: Չէ՞ որ հովուին ամեն բան մատակարարողը նոքա են, ինչ որ նոցա ապրուստի համար հարկաւոր է. նոցա բուրդն ու մազը՝ վերարկու և վրանի ծածկոց է դառնում, նոցա կաշին ու մորթին՝ քանի քանի պիտոյք է կատարում, նոցա միսն ու կաթը՝ սնունդ է նորան. թող այդ՝ ձիան, էշերն ու ուղտերը բեռներ են կրում, հեծնվում են: Երեկոյեան թէպէտ և նախիրը բանակն է վերադառնում, բայց մնում է դուրսը՝ բաց երկնքի տակ: Միայն մատաղ ձագերը երեկո- ցուրտ ժամանակ վրանի մէջ են տարվում: Ծառաները մեծամասամբ վրանից դուրս են քնում: Մի կտաւի կտոր գլխին փաթաթած, կտաւէ բաճկոն հագած ու մէջքը կաշիէ կամ շալէ գօտիով կապած, թիկունքին մի վերարկու և ոտքին սանդալիկներ (հողաթփներ), ահա այդ է հովուի հագածն ու կապածը, որ հերիք է նորան տաքից ու ցրտից պաշտպանուելու համար: Շատ նման են հագնվում նաև կանայքը, միայն երեսներին քօղ են առնում: Նոցա զարդարանքն է ոսկուց կամ արծաթից շինուած ապարանջաններ և օղեր:

Այս վրանաբնակների կերակուրը պարզ՝ բայց սննդարար է: Միս, կաթ, իւղ և պանիր — կենդանին է տալիս: Ցորեն, ձէթ և պտուղ գնում են նստաբնակ ժողովուրդից կամ իրանց բերքերի հետ փոխում են: Խմիչքը ջուրն է, որ ճանապարհին կաշէ տըկերով հետներն են առնում:

Այս տները, մի քանի վերմակներ, պարզ՝ պղնձկարգը, զէնքերը, ուղտերի և էշերի համետները, ձիերի թամքերը՝ իրանց ամբողջ կահ կարասիքն են: Վրաններն էլ շատ պարզ են. խրեցնում են հողի մէջ մի քանի ձողեր և նոցա վրայ փռում են այծի կամ ուղտի մազից շինած գորշագոյն չլա: Սոքա տխուր պատկեր կ'ունենային՝ եթէ չորս կողմը աշխոյժ գործունէութիւն և կենդանութիւն չտիրապետէր: Այս պատճառով արդարև զուարճութիւն է նորա համար, ով որ այսպիսի բանակի մէջ է ապրում: Եթէ բանակի տէրը նկատում է հեռուից՝ թէ մի օտար մարդ է մերձենում, անպատճառ գնում է նորա առաջ և հրաւիրում է իր խորանը: Ապա ջուր են բերում, հիւրի ոտները լուանում են, սեղան են գցում և բերում են նորան թանէ սպաս, կարագ, սեր, մածուն, մինչև անգամ խորոված:

6. Սենաար:

Աբրահամի հին հայրենիքն էր Միջագետքը, վերին Եփրատի և վերին Տիգրիսի մէջ եղած աշխարհը: Այս երկու գետերը քանի գնում՝ այնքան միմեանց մերձենում են, վերջապէս միանալով թափվում են Պարսից ծովի մէջ: Խառնուրդին մօտիկ երկու գետերի մէջ եղած երկիրը կոչվում էր Սենաար: Սենաարը հարթ դաշտագետին է, լեռներից զուրկ, ինչպէս Միջագետքը, բայց չունի արօտատեղիներ, որովհետև հողը բոլոր մշակուած է: Այն տեղ կան շատ բերրի արտեր, պտղաւէտ պարտէզներ և դալարազարդ անտառներ: Հին ժամանակներում այս տեղ էր Բաբիլոն քաղաքը Եփրատի ափերում: Եւ որովհետև շինութեան համար քար չկար, կաւից աղիւս էին թափում թրծում ու բանեցնում և շաղախի փոխարէն գետնի կուպրն էին գործ ածում: Այս նիւթերից շինուեցաւ Բաբելոնի քաղաքն ու աշտարակը: Սենաար աշխարհի ժողովուրդը շատ պատերազմասէր էր և հզօր թագաւորներ ունեցաւ: Նոցանից մէկն էր և Նեբրովթը, որ մի հսկայ որսորդ և քաջ մարտիկ մարդ էր: Ուստի և յետոյ առակ դարձաւ այս խօսքը «Նեբրովթի պէս հսկայ որսորդ Աստծու առաջ.» որ ասում էին քաջ ու կռուող մարդու համար: Նեբրովթին կամ Բէլին յաղթեց միայն մեր նախահայր Հայկը և ազատեց նորա բռնակալ ձեռից իր երկիրը և մեր հայրենիքը, այն է Հայաստանը:

7. Աբրահամի կռիւը չորս թագաւորների հետ:

Մի անգամ Սենաարի թագաւորը և նորա հետ երեք ուրիշ թագաւորներ յարձակուեցան դրսի երկիրների վրայ և ամենայն ինչ կողոպտեցին և աւերեցին: Սոդոմի և Գոմորի թագաւորներն ու ուրիշ երեք թագաւորներ պատրաստուեցան և չորս օտար թագաւորների դէմ ելան աղի ձորի մէջ, ուր շատ նաւթի հորեր կան: Բայց Սոդոմի և Գոմորի թագաւորները կռուի մէջ

յաղթուեցան, և շատ մարդիկ էլ կոտորուեցան: Մնացածները փախան լեռնակողմը: Չորս օտար թագաւորները առան Սոդոմի և Գոմորի բնակիչները և նոցա համբարները, եւս և Ղովտին և նորա ինչքը՝ և գնացին:

Մահից ազատուածներից մէկը հասաւ Աբրահամին, որ բնակւում էր Մամբրէի կաղնու տակ և պատմեց այս: Եւ երբ որ Աբրահամը լսեց, թէ իւր եղբօրորդին Ղովտը գերի է առնուած, երեք հարիւր և տասնուութ ընդոծիններին (տանու մարդ) զինւորեց և ասպատակ թագաւորների ետևներից ընկաւ մինչև Դանի կողմերը:

Այս տեղ գիշեր ժամանակ հասաւ նա նոցա իւր ծառաներով, որ երկու խումբ բաժանեց, յաղթեց՝ և փախցրեց նոցա Դամասկոսից էլ հեռու:

Այսպէս Աբրահամը ազատեց Ղովտին և Սոդոմի ու Գոմորի ժողովրդին իրանց ստացուածքներով:

Եւ երբ որ նա կոտորածից դառնում էր, նորա առաջն եկաւ Սոդոմի թագաւորը և Մելքիսեդեկ Շաղեմի թագաւորը: Մելքիսեդեկը հանեց հաց և գինի, օրհնեց Աբրահամին և ասաց. «Օրհնեալ ես դու բարձրեալ Աստծուց, որ երկինք և երկիրը ստեղծեց. փառաբանեալ է բարձրեալ Աստուածը, որ քո ձեռքդ մատնեց քո թշնամիներիդ:»

Եւ Սոդոմի թագաւորն ասաց Աբրահամին. «Տուր ինձ դարձեալ իմ մարդիկները, աւարը թող քեզ մնայ:»

Իսկ Աբրահամը պատասխանեց. «Երդւում եմ բարձրեալ Աստուծով, որ երկինքն և երկիրն ստեղծեց, որ ես ամենայն բանից, ինչ որ քոնն է, մի թել կամ կօշկի մի կապ չեմ վերցնի, որ չասես թէ դու հարստացրիր Աբրահամին: Բայց որչափ որ ծառաներդ կերան և այն մարդիկը, որոնք ինձ հետ եկան պատերազմելու, նոցա իրանց բաժինը տուր:»

Սուրբ գրքից.

8. Զինուորական կեանք:

Մեզանում այժմ զինուորականները առանձին դասակարգ են կազմում: Ամեն ազգերից չեն առնում զինուոր, զոր օրինակ անդրկովկասի Հայերը առ այժմ ազատ են զինուորագրութիւնից. անչափահասներին էլ զինուոր չեն տանում, այլ չափահասներին: Զինուորութեան կանչուածները շատ տարի մնում են նոյն պաշտօնի մէջ և այդ ժամանակ վարժւում են զէնք բանեցնելու: Հին ժամանակներում այսպէս չէր, հապա՝ ամեն առողջ տղայ մարդ զէնք էր բանեցնում, որ մանկութիւնից սովորում էր: Եթէ թշնամի գար, նորա դէմ ոտի էին կանգնում բոլոր զինավարժ տղայ մարդիկը: Մի և նոյն մարդիկ, որ խաղաղութեան ժամանակ ոչխար էին արածում, կամ արտ էին հերկում, կամ որսի էին գնում, պատերազմի ժամանակ զինուորական էին դառնում. թողնում էին իրանց վրանները, քաղաքներն ու անտառները, բաժանվում էին իրանց ընտանիքից և ցեղեց, զէնք էին առնում ձեռքերը, որ լինում էր կամ նետ ու աղեղ, կամ նիզակ և կամ պարսատիկ: Թափառող հովիւներին առաջնորդում էր նահապետը կամ ցեղապետը, իսկ քաղաքացիներին առաջնորդում էր թագաւորը: Սա իր զօրքի վրայ կարգում էր հարիւրապետներ և յիսնապետներ: Թագաւորներից ոմանք շատ ցեղերի վրայ տէր էին, նոցա հետ ի միասին արշաւում էին ուրիշ երկիրներ, կողոպտում ու բնակիչներին գերի էին տանում: Այսպէս «Սենարի թագաւորը և նորա հետ երեք ուրիշ թագաւորներ յարձակուեցան Քանանացոց երկրի վրայ և ամենայն ինչ կողոպտեցին ու աւերեցին: Սոդոմի և Գոմորի թագաւորներն ու ուրիշ երեք թագաւորներ պատրաստուեցան և չորս օտար թագաւորների դէմ ելան աղի ձորի մէջ:» «Եւ երբ որ Աբրահամը լսեց թէ իր եղբօրորդին գերի է առնուած, զինուորեց իր ծառաներին՝ և ասպատակ թագաւորների ետևներից ընկաւ մինչև Դանի կողմերը, որ տեղ գիշեր ժամանակ հասաւ նա նոցա իր ծառաներով, որ երկու խումբ բաժանեց, յաղթեց նոցա և փախցրեց Դամասկոսից էլ հեռու:»

Ասորիքի և Արաբիայի անապատներում, ինչպէս առաջ, այժմ էլ կենում են այնպիսի մարդիկ՝ որ միայն աւազակու-

թեամբ են ապրում: Նոքա անապատի աւազակներ են և այս օր Բեդուին են կոչվում: Եթէ պատահեցաւ որ նոքա մի տեղ նախիր փախցրին կամ կարաւան կտրեցին, իսկոյն քշում են ձիերն ու փախչում իրանց աւարովն անյայտանում են անապատի հեռաւոր խորքերում: Այս անծանօթ խորշերն են նոցա սովորական ապրելու տեղերը. և եթէ լինում է որ երկար ժամանակ առիթ չեն գտնում մարդաբնակ դաշտերում ու մեծ ճանապարհների վրայ աւազակութիւններ անելու, որսի հետ են լինում, կամ իրանց համար խաշնարածութիւն են անում: Որսում են՝ իրանց անշէն դաշտերում կամ անկոխ ժայռերում՝ ջայլամն և յամոյր (վայրի այծ): Նոցա հագուստը հովիւների և որսորդների հագուստի նման է:

9. Մեռեալ ծով:

Ելնենք Աբրահամի կացած տեղից, այսինքն Քեբրոնից, առնենք Ղովտի ճանապարհն ու երթանք դէպ արևելք: Ճանապարհի վրայ կը պատահենք մի մեծ ջրի, որի մէջ թափվում է Յորդանան գետը. Մեռեալ ծով է իւր անունը: Լայնութիւնն է մօտ երկու մղոն. տասը մղոն է երկայնութիւնը: Արևելեան և արևմտեան ափերը ցից ժայռերով պատած են: Չորս կողմը անապատ ու անբեր է: Այդ Մեռեալ ծովի ջուրն աղի ու դառը համ ունի. ձուկ ու բոյս էլ մէջը ապրել չեն կարող: Իսկ առաջ այդպէս չէր. իւր ափերին փառաւոր ծառաստաններ, ջրաւէտ մարգագետիններ և շքեղ պարտէզներ կային: Ս. Գրոց մէջ ասուած է. «Ղովտը բարձրացրեց աչքը և տեսաւ Յորդանանու բոլոր կողմերը, որ գեղեցիկ են և ջրով առատ են Աստուծոյ դրախտի նման, և ընտրեց այն երկիրը:» Այդ տեղ շինուած էին նաև պերճ և հարուստ քաղաքներ, օրինակ Սոդոմ և Գոմոր, որոնց մէջ իշխում էին թագաւորներ, ինչպէս և Սենաար դաշտի Բաբելոն քաղաքի մէջ:

10. Սոդոմի և Գոմորի կործանումը:

1. Եւ Աստուած Աբրահամին երևեցաւ Մամբրէի կաղնու տակը, երբ որ նա նստած էր իր խորանի դրան առաջ, օրուայ ամենատաք ժամանակը: Եւ աչքերը բարձրացնելով՝ տեսաւ որ ահա երեք մարդիկ կանգնած էին իրանից մի փոքր հեռու: Եւ նոցա տեսնելուն պէս՝ իւր խորանի դռնից ելաւ գնաց նոցա առաջ, երկիր պագեց և ասաց. «Տէր, եթէ քեզ հաճոյանալ կարողացայ, մի հեռանար իսկոյն քո ծառայից. թող քիչ ջուր բերել տամ, լուանան ձեր ոտները և զովացէք այս ծառի տակ. հաց էլ բերեմ, կերէք և այնպէս գնացէք ձեր ճանապարհը. բախտս բերեց՝ որ դուք դէպի ձեր ծառայի դուռն եկաք:» Նոքա ասացին. «Արա՛, ինչպէս ասացիր:»

Աբրահամը վազեց խորանը Սառայի մօտ և ասաց. «փութա շաղ տուր երեք չափ շորմաղուն ալիւր և շինիր նկանակներ:» — Իսկ ինքը վազեց նախիրը և առաւ մի մատաղ ու լաւ որթ և տուեց ծառային ու պատուիրեց շուտով պատրաստել: Եւ առաւ կարագ ու կաթ և պատրաստ հասուցած որթը դրեց նոցա առաջ՝ ու կերան, իսկ ինքը կանգնած էր նոցա առաջ՝ ծառի տակ:

Երբ մարդիկ կերան խմեցին պրծան, վերկացան ու գնացին դէպի Սոդոմի կողմը. Աբրահամն էլ գնում էր հետները, նոցա ճանապարհ ձգելու: Եւ ասաց Տէրը. «Միթէ թագցնելո՞ւ եմ իմ ծառայ Աբրահամից այն ինչ որ անելու եմ. նա մեծ ու հզօր ազգ է լինելու: Ես գիտեմ որ նա իւր որդոց և ժառանգներին կը պատուիրէ՝ որ Աստուծոյ ճանապարհը պահեն և արդարութիւն ու իրաւունք գործեն:» Եւ ասաց Աստուած Աբրահամին. «Սոդոմացոց և Գոմորացոց աղաղակը շատ շատացաւ, նոցա մեղքն էլ մեծացաւ. երթամ տեսնեմ թէ արդեօք իրանց

աղաղակի համեմատ, որ ինձ հասնում է, անո՞ւմ են թէ չէ՛, որ գիտենամ։»

Դարձրին այն մարդիկ իրանց երեսը դէպի Սոդոմի կողմը ու գնացին։ Իսկ Աբրահամը մնաց Աստուծոյ առաջ կանգնած, մօտեցաւ և ասաց. «Միթէ դու արդարին ամբարշտի հետ պիտի կորցնե՞ս։ Եթէ քաղաքի մէջ յիսուն արդար լինին, նոցա կը կորցնե՞ս, չե՞ս ների բոլորին այն յիսուն արդարի համար, եթէ կան։ Քաւ լիցի քեզ, թէ դու այդ բանն անես՝ և արդարին ամբարշտի հետ սպանես, որ արդարը ամբարշտի հաւասար լինի. քաւ լիցի քեզ, որ բովանդակ երկրի դատաւորն ես. դու այդպէս չես դատիլ։»

Եւ ասաց Աստուած. «Եթէ ես Սոդոմ քաղաքի մէջ յիսուն արդար գտնեմ, նոցա համար բոլոր տեղին կը ներեմ։» —Աբրահամը պատասխանեց։ «Համարձակուեցայ Աստուծոյ հետ խօսել, բայց ես հող եմ և մոխիր։ Եթէ յիսուն արդարից հինգով չափ պակասի, միթէ հնգի համար բոլոր քաղաքը կը կործանե՞ս։» —Նա ասաց. «Չեմ կործանիլ, եթէ քառասուն և հինգ արդար գտնեմ։» —Եւ Աբրահամը էլի խօսեցաւ և ասաց. «Իսկ եթէ քառասուն արդար գտնուի այն տեղ։» —Նա պատասխանեց. «Քառասունի համար չեմ կործանիլ։» —Աբրահամն ասաց «Կը բարկանա՞ս, Տէ՛ր, եթէ էլի խօսեմ. գուցէ երեսուն գտնուի այն տեղ։» —Իսկ նա ասաց. «Եթէ երեսուն գտնեմ, չեմ կորցնիլ։» —Եւ Աբրահամն ասաց. «Էլ՛ միանգամ սկսայ խօսել Աստուծոյ հետ. գուցէ քսան գտնուի։» —Տէրն ասաց. «Քսանի համար չեմ կորցնիլ։» Եւ Աբրահամն ասաց. «Տէ՛ր, չբարկանաս, եթէ մի խօսք էլ ասեմ. գուցէ տասը գտնուին։» Իսկ նա ասաց. «Տասի համար էլ բոլորին կը ներեմ։»

Եւ գնաց Աստուած՝ երբ որ Աբրահամի հետ խօսելը դադարեցրեց. իսկ Աբրահամը դարձաւ իւր տեղը։

2. Երկու հրեշտակները Սոդոմ եկան իրիկնադէմին. Ղովտը նստած էր քաղաքի դռանը մօտ։ Եւ երբ որ նոցա տեսաւ, վեր կացաւ, առաջ գնաց, երկրպագեց և ասաց. «Տէարք, եկէք ձեր ծառայի տունը և գիշերեցէք. թող ձեր ոտները լուանամ, և այնպէս առաւօտը վաղ վեր կացէք և գնացէք ձեր ճանապարհը։»

Բայց նոքա ասացին. «Ոչ, մենք քաղաքի հրապարակումը կը մնանք գիշերը։» —Իսկ նա չուզեց թողնել նոցա, այնպէս որ նոքա փոխեցին իրանց ճանապարհը և գնացին նորա տունը։ Եւ նա ընթրիք պատրաստեց նոցա համար, բաղարջ թխեց, և նոքա կերան։

Եւ դեռ նոքա քուն չէին մտել՝ որ քաղաքի մարդիկը, մեծից սկսած մինչև փոքրը, բոլոր ժողովուրդը ի միասին, պատեցին տունը, և Ղովտին դուրս էին կանչում և ասում. «Ո՞ւր են այն մարդիկը, որ գիշերը քեզ մօտ մտան։ Դուրս բեր նոցա, որ նոցա հետ մեր բանը տեսնենք։» —Դռնից դուրս ելաւ Ղովտը նոցա մօտ, դուռը վրայ քաշեց իւր ետևից և ասաց. «Եղբայրք, մի՛ գործէք այդ չարութիւնը. այդ մարդկերանց մի՛ վնասէք, որովհետև մի անգամ իմ տան գերանների տակ մտան։»

Իսկ նոքա ասացին. «Հեռո՛ւ գնա. պանդխտութեամբ եկար մեր մէջ բնակելու, միթէ դատաստա՞ն էլ դատելու. թէ չէ՛ հիմա քեզ էլ կը չարչարենք նոցանից աւելի։» —Եւ խիստ բռնադատում էին Ղովտին. և այն է դուռն էլ կոտրելու վրայ էին, երբ հրեշտակները ձեռքերը մեկնեցին և Ղովտին տուն քաշեցին ու դուռը կողպեցին։ Իսկ այն մարդիկը, որ դուրսը դռան առաջ լցուած էին, մեծ և փոքր բոլորեքեանք կուրացան՝ այնքա՛ն զուր ման եկան դռները գտնելու համար՝ որ դադարեցան։

Հրեշտակներն ասացին Ղովտին. «Ունի՞ս այս տեղ փեսայ,

որդիք կամ դստերք, կամ ուրիշ ազգական ունի՞ս քաղաքի մէջ. հանիր նոցա այս տեղից, որովհետև մենք պէտք է այս տեղը կործանենք, նոցա մեղքը մեծ է Աստուծոյ առաջ. նա մեզ ուղարկից, որ նոցա սատակենք:» —

Գնաց Ղովտը և խօսեցաւ իր փեսաների հետ, որ իւր աղջիկներին պէտք է առնէին. «Ելէք այս տեղից դուրս գնացէք, որովհետև Աստուած այս քաղաքը կործանել է ուզում:» Իսկ նոքա կարծեցին թէ ծաղր է անում և չհաւատացին նորան:

Եւ երբ որ առաւօտ եղաւ, հրեշտակները Ղովտին շտապեցնում էին և ասում. «Վեր կաց, առ քո կնոջդ և երկու դստերներիդ, որ քեզ մօտ են, և դուրս արի, որպէս զի դու էլ չկորչես այս քաղաքի անօրէնութեան հետ:» Բայց որովհետև նոքա տարակուսած էին թէ ինչ անեն, հրեշտակները բռնեցին նորա, նորա կնոջ և նորա երկու դստերների ձեռքը, որովհետև Աստուած նորան խնայել էր ուզում: Եւ տարան նորան՝ քաղաքից դուրս հանեցին և ասացին. «Ազատիր կեանքդ և յետ մի՛ նայիր. մինչև անգամ մի՛ մնար այս կողմերում, այլ գնա լեռը՝ որ նոցա հետ չոչնչանաս:»

Եւ երբ արեգակը ծագեց երկրի վրայ, Աստուած ծծումբ ու հուր թափեց երկնքից Սոդոմի և Գոմորի վրայ և կործանեց Յորդանանու ամբողջ դաշտը: Ղովտն ու իւր աղջիկները փախան, միայն նորա կինը, որ լսելով հրեշտակների ձայնին՝ կանգնեց և յետ նայեց, իսկոյն տեղն ու տեղը պատժուեցաւ և աղի արձան դարձաւ:

Ղովտը իր երկու դստերներով գնաց լեռը ապաստանելու, և կացաւ մէկ քարանձաւի մէջ:

Եւ Աբրահամը առաւօտը վաղ երթալով այն տեղը, ուր Աստուծոյ առաջ կանգնել էր, աչքը շրջեց Սոդոմի և Գոմորի

կողմը և գաւառի երկրի վրայ. և ահա տեսաւ որ երկրից հնոցի մրրիկի նման բոց էր ելնում:

Սուրբ գրքից:

11. Արաբիա:

Թէ Քեբրոնից, ուր Աբրահամն է կենում, ելնենք երթանք դէպի հարաւ—արևելք, կը հասնենք մի աշխարհ, որ մեզ ծանօթ եղած երկրներից շատ աւելի ընդարձակ է, և կոչվում է Արաբիա: Արևելից նորա սահմանն է Պարսից ծովը, հարաւից՝ արաբիականը, և արևմուտքից՝ Կարմիրը: Հիւսիսից Ասորիքի անապատն է՝ կից արաբիական անապատին: Այս անապատը շատ բարձր է ծովի երեսից և շատ ընդարձակ տարածութիւն ունի. Ճանապարհորդի աչքին երևում են միայն աւազ ու երկինք: Սակայն երբեմն այստեղ այնտեղ երևութանում են առատաւազ ջայլամը, սրարշաւ յամոյրը կամ բեդուինները իրանց օդապարիկ նժոյգներով: Արեգակն այրում տոչորում է: Շատ քիչ է պատահում, որ անձրև գայ: Ոչ մէկ տեղ չի երևում անընդհատ հոսող գետ, իսկ մի ծառ՝ որ զովարար ստուեր արձակէր՝ շատ հազիւ է գտնվում: Գրեթէ հողի-հաւասար թուփն ու տատասկի մի քանի բոյսերը երբեմն երբեմն ուղտերին մի պատառ սնունդ են տալիս: Միայն մի քանի օր երկար ճանապարհ անելուց յետոյ կ'երևայ օվազիս, այսինքն այնպիսի տեղ՝ ուր յորդաջուր աղբիւրը իւր չորս կողմի հողը բարեբեր է արել: Այդ տեղերում արմաւենին զովացնում և սընունդ է մատակարարում կարաւաններին:

Արաբիան մեծ քաղաքներ ունի ծովի եզերքներին, կամ նաև փոքր քաղաքներ երկրի խորքերում:

12. Աբրահամի զաւակները:

Մի անգամ Աստուած Աբրահամին երազում երևեցաւ և ասաց. «Ես եմ քո Աստուածը, հաճոյ եղիր իմ առաջ և ա-

նարատ եղեր: Եւ մի երկնչեր, ես կը լինեմ քեզ վերակացու, և քո վարձքը առատ կը լինի:»

Իսկ Աբրահամն ասաց. «Տէր, էլ ինչ ես ուզում ինձ անել, ես կորչում եմ անորդի, ինձ ժառանգ չտուիր. ահա տես իմ ծառայի որդին, այս Եղիազար Դամասկացին, իմ տան ծառան իմ ժառանգս պէտք է լինի:»

Իսկոյն Աստուծոյ ձայնը լսելի եղաւ նորան. «Դա քեզ չի ժառանգի, այլ քո որդին քեզ պէտք է ժառանգէ.» Հրամայեց որ խորանից դուրս գայ, և ասաց. «Նայիր երկնքին և համարիր աստղերը. կարօ՞ղ ես համարել: Ահա այդպէս պէտք է բազմանայ քո ժառանգութիւնը:»

Շատ տարիներ անցնելուց յետոյ յիրաւի Աստուած Աբրահամին և նորա կնոջ Սառային մէկ զաւակ պարգևեց, և Աբրահամը նորան Իսահակ կոչեց:

Մանուկն աճում էր և ծծից կտրուեցաւ. և Աբրահամը մեծ ուրախութիւն արաւ այն օրը, երբ նորա որդի Իսահակը ծծից կտրուեցաւ: Այս բանի վրայ Իսմայելը, որ եգիպտացոց աղախին Հագարի որդին էր, ծիծաղեցաւ և Սառան տեսաւ որ նա իր որդուն ծաղրում է: Եւ ասաց Աբրահամին: «Հեռացրու այս աղախնին իր որդով:» Այս խօսքը խիստ թուեցաւ Աբրահամին: Բայց Աստուած ասաց նորան. «Մի նեղանար մանկան և աղախնի համար: Ինչ որ Սառան քեզ ասէ, լսիր, որովհետև Սահակով պէտք է կոչուի քո ժառանգութիւնը բայց և աղախնի որդուն մեծ ազգ պէտք է անեմ:»

Առաւօտը վերկացաւ Աբրահամը, առաւ հաց և տիկով ջուր ու տուեց Հագարին. նորա ուսի վրայ դրեց մանուկին և արձակեց նորան: Գնաց նա. բայց մոլորուելով անապատում շրջեցաւ և եկաւ Բերսաբէ: Տկի ջուրը հետզհետէ նուազեց և նոքա ծարաւում էին. մայրը ձգեց մանուկին մի ծառի տակ և

գնաց նստաւ նորա յանդիման փաւանի (նետ ձգելու չափի) հեռաւորութեամբ: Եւ ասաց. «Չեմ կարող որդուս մահը աչքովս տեսնել:» Յանդիման նստած էր, իսկ մանուկը ձայն բարձրացրեց և լաց եղաւ:

Աստուած լսեց մանկան ձայնը՝ և Աստծոյ հրեշտակը երկնքից Հագարին կանչեց և ասաց. «Այդ ինչ է, Հագար: Մի վախենար, Աստուած լսեց մանուկի ձայնը, որ այդ տեղ ընկած է: Վեր կաց, առ մանուկդ և քո ձեռքով զօրացրու նորան, որովհետև մեծ ազգ եմ ուզում անել դորան:»

Եւ Աստուած բաց արաւ նորա աչքը, այնպէս որ մի ջրհոր տեսաւ նա. գնաց տիկը ջրով լցրեց և խմացրեց որդուն: —Եւ Աստուած Իսմայէլի հետ էր. աճում էր և բնակում էր անապատի մէջ և քաջ աղեղնաւոր դարձաւ: Նորա ժառանգները տասներկու ազգ բաժանուեցան և տասներկու իշխան ունեցան և բնակում էին իրանց հովուական վրաններում:

Սուրբ գրքից.

13. Քաղաք և տուն արևելքում:

Մենք արդէն արևելքում բաւական քաղաքներ գիտենք. Քանանացոց աշխարհի մէջ՝ Սիւքէմ բարձր կաղնով, Բեթէլ, Քեբրոն Մամբրէի կաղնով, Դան և Սալէմ (Երուսաղէմ), Յորդանանու դաշտի մէջ՝ Սոդոմ և Գոմոր, Ասորիքի մէջ՝ Դամասկոս, Միջագետքի մէջ՝ Ուռհա և Խառան, Սենաարի մէջ՝ Բաբելոն: Այժմ տեսնենք թէ մեր դրացի երկիրներում քաղաքը ինչ տեսք ունի և ինչպէս է շինուած:

Քաղաքները արևելքում գրեթէ այժմ էլ այնպէս են ինչպէս որ հին ժամանակներումն էին: Մեծաւ մասամբ պարտէզներով պատուած են նոքա: Երբեմն ամբողջ քաղաքի շուրջը քաշուած են պարիսպներ, և պարիսպների վրայ կան-

գուն են բարձր, քառակողմեան աշտարակներ, որոնք ունին նաև կոփած քարից շինուած պաշգամբներ (տարապաՀ-ներ): Պատնէշներից էլ վեր բարձրանում են պատից ներս տըն-կուած նոճիներն ու ուրիշ ծառերը: Պարսպի դռներից մտնում ենք քաղաքի փողոցները, որ նեղ ու ծուռ են և վատ կամ բնաւ չեն սալայատակած: Աւելի լայն են այն փո-ղոցները, որոնք տանում են Հրապարակները:

Տները երբեմն քարից, բայց մեծաւ մասամբ կաւից են շինած: Նոքա դրսից շատ անշուք են. նոցա պատերը բոլորովին մերկ են և ունին մի երկու վանդակապատ փոքր պատուՀան-ներ, որոնք կարմիր կամ կանաչ ներկած փեղկերով են փակ-վում: Տան դռները ցած են և անգեղ: Տանիքները տափակ են, և սանդուղներ ունին վերան ելնելու Համար: Հով երե-կոներին բնակիչները նստում են այնտեղ և շատ անգամ նաև վերևն են քնում: Տան ներսը աւելի ուրախ տեսք ունի: Գաւ-իթը շատ անգամ մարմարով է սալուած, ծառերը չորս կող-մից ստուեր են արձակում, շատրուանները ախորժ զովութիւն են տարածում, ծաղիկները բուրում են: Շատ անգամ գաւիթը սիւնազարդ անցքերով է պատած: Նոցա ետևից երևում են դռներ, որոնք սենեակներն ու դաՀլիճներն են տանում: Սոքա ևս մարմարեայ յատակ ունին, որոնց վրայ Հա-րուստ տներում նուրբ և թանկագին գորգեր են փռուած: Պա-տերի ստորին մասը երեսը մարմարով է ծածկուած, իսկ վե-րին մասը շքեղ նկարուած է: Պատի կողմը շարուած են բազ-մոցներ, որ թախտ կամ դիւան են կոչվում. ուրիշ աւելի կաՀ կարասիք սենեակներում չեն երևում:

14. Կրկին այրի գնելը:

Սառան Հարիւր քսան և եօթ տարեկան էր երբ մեռաւ Քեբրոնում՝ Քանանացոց աշխարՀի մէջ: ԱբրաՀամն եկաւ Սա-ռայի վրայ ողբալու և սուգ անելու: Յետոյ վեր կացաւ դիակի վրայից և խօսեցաւ Քետի ցեղի որդոց Հետ և ասաց. «Ձեր մէջ

պանդուխտ և նժդեՀ եմ. արդ տուէք ինձ մի ժառանգական գերեզման՝ որ իմ մեռելը թաղեմ:»

Քետի որդիքը պատասխանեցին ԱբրաՀամին և ասացին. «Լսիր մեզ, Տէր. Աստուծոյ իշխան ես մեր մէջ, մեր ընտիր շիրիմների մէջ թաղիր քո մեռելը, և ոչ ոք քեզ այդ չի ար-գելի:»

Վեր կացաւ ԱբրաՀամը երկիր պագեց ժողովրդեան ա-ռաջ և ասաց. «Եթէ դուք յօժար էք որ իմ մեռելը թաղեմ, Հապա լսեցէք և ինձ Համար բարեխօսեցէք Եփրոնի առաջ, որ ինձ կրկին այրը տայ, որ իր ագարակի վերջակումն է. ես կը տամ նորան արծաթ որչափ որ արժէ, ձեր մէջը իմ սեփ-Հական գերեզմանն ունենալու Համար:»

Պատասխանեց Եփրոնը Քետի որդոց ականջին և ամե-նուն, որոնք նորա քաղաքի դռներով ել ու մուտք էին ա-նում. «Ոչ, Տէր, լսիր ինձ. ես քեզ պարգևում եմ ագարակը և նորա միջի այրը և տալիս եմ քեզ իմ ամենայն քաղաքա-կիցներիս առաջ. դու քո մեռելը թաղիր նորա մէջ:»

ԱբրաՀամն երկիր պագեց երկրի ժողովրդեան առաջ և ասաց Եփրոնին. «ՈրովՀետև ագարակը տալիս ես ինձ, Հապա խնդրեմ փոխարէնը առ ինձանից արծաթ, առ ինձանից և ես մեռելս կը թաղեմ:»

Եփրոնը պատասխանեց. «Չէ, լսիր ինձ, այն գետնի գինը չորս Հարիւր սատր (դրամի կշիռ) արծաթ է. իսկ իմ և քո մէջ այս ի՞նչ արժէք ունի: Ուրեմն թաղիր քո մեռելը ան-Հոգ:»

Եւ երբ որ ԱբրաՀամն այս լսեց, կշռեց Եփրոնի արծաթը, այսինքն չորս Հարիւր սատր վաճառականների ընտիր արծա-թը: Այսպէս Հաստատեցաւ Եփրոնի ագարակը, ուր կրկին այրն է, Մամբրէի յանդիման, որպէս ԱբրաՀամի ստացուածք, ագա-

րակը և նորա մէջ եղած այրը և բոլոր ծառատունկը՝ որ ագարակի շուրջը և նորա սահմաններումն է: Եւ ապա թէ Աբրահամը իր կին Սառային թաղեց ագարակի կրկին այրի մէջ:

Սուրբ գրքից:

15. Քեբրոնից Խառան:

Աբրահամը Ղովտի հետ Միջագետքից եկաւ Քանանացոց աշխարհը: Այժմ, որ մենք բաւական ճանաչում ենք մեր դըրացի երկիրները, աւելի մանր քննենք այս ճանապարհը. բայց մենք ներհակ ընթացքով կ'անցնենք այդ ճանապարհը, այսինքն սուրբ երկրից սկսած կու գանք Խառանի տափաստանները:

Թողնենք Աբրահամի վրանները, որ Մամբրէի կաղնու տակն են, Քեբրոնից դէպ արեւելք, ուր՝ ոչ հեռու այդ քաղաքի դռնից՝ Աբրահամը Քետի ժողովրդեան առաջ Եփրոնից գնեց մի ագարակ կրկին այրով իր և իր ժառանգների թաղման համար, և շարունակենք մեր ճանապարհը դէպի հիւսիս: Մենք կը հասնենք նախ և առաջ Սալէմ (Երուսաղէմ), որի Մելքիսեդեկ թագաւորը Աբրահամի առաջն եկաւ և հաց ու գինի բերեց: Սալէմը մի քանի բլուրների վրայ է շինած. մինը նոցանից կոչվում էր Սիօն, որի վրայ շինուեցաւ թագաւորական ամրոցը: Արեւմտեան, հարաւային և արեւելեան կողմից Սալէմը շրջապատում են խոր, զառիվայր ձորեր., արեւելեանը կոչվում է Յովսափատ: Այս ձորերով անձրեւի ժամանակ վտակներ են վազում դէպի Յորդանան: Սալէմից հիւսիսային ճանապարհը անցնելով Բեթէլի միջով, որ Աբրահամի հանգստութեան տեղն է, տանում է դէպի Սիւքէմ: Նա այստեղ իր առաջին խորանը կանգնեցրեց և սեղան շինեց Աստուծուն: Այժմ դառնանք հիւսիսային արեւելք, իջնենք Յորդանանու դաշտը և անցնենք այդ գետի ծանծաղ տեղովը: Յորդանանու այն կողմը որ բարձրանանք սարերի վրայ՝ կը հասնենք Հերմոնի ստորոտը: Նորա գագաթները ամբողջ տարին ձիւնով պատուած են: Գնանք նորա հարաւային կողմը և շըր-

ջելով շարունակենք մեր ճանապարհը այն պտղաւէտ դաշտով, ուր ի միջի այլոց կայ Դանը, և յետոյ դառնանք հիւսիս: Շուտով կըտեսնենք Դամասկոս, Եղիազարի հայրենիքը: Նորա պարիսպներն ու աշտարակները մարմարից են շինուած, և ինքը մեծ տարածութեամբ ծաղկաւէտ պարտէզներով շրջապատուած է: Մինչև այս տեղ քշեց Աբրահամը Սենաարի թագաւորին և նորա դաշնակիցներին: Շարունակենք մեր ճանապարհը Ասորիքի անապատով դէպի հիւսիսային արեւելք: Դեռ երկար ժամանակ մեր աչքին կ'երեւան արեւմտքից Լիբանանի սարերը: Պէսպէս զրկողութիւններից և վտանգներից յետոյ կը հասնենք Եփրատի ափերը: Գետի այն կողմն է երեւում Միջագետքը իր սիզաւէտ տափաստաններով: Գուցէ մի որև է հովուական բանակի գորշ վրաններն էլ երեւան մեր աչքին: Որոնենք դարձեալ մի ծանծաղ տեղ, որովհետև այս տեղ կամուրջներ չկան: Միւս ափը հասնելով, դառնանք հիւսիս, ու շուտով կը հասնենք մեր միտքը դրած տեղը, այսինքն Խառան, որ Աբրահամի նախնական հայրենիքն է:

16. Ռեբեկայ:

Աբրահամը ծերացած էր և Աստուած օրհնեց նորան ամենայն բանով: Եւ Աբրահամն ասաց Եղիազար դամասկացուն, իր տան ծառաների երէցին, որ իր ամենայն ինչքերի կառավարողն էր. «Երդուիր ինձ Աստուծոյ առաջ, երկնքի և երկրի Աստուծոյ առաջ, թէ իմ որդի Իսահակի համար կին չես առնի Քանանացոց դուստրներից, որոնց մէջ բնակում ես. այլ թէ կերթաս այն երկիրը և իմ տունը, որ տեղից որ ես եկել եմ, և այն տեղից կ'առնես կին իմ որդի Իսահակի համար:»

Ծառան ասաց. «Բայց եթէ իմ ընտրած կինը չուզենայ գալ այս աշխարհը. այն ժամանակ դարձնե՞մ քո որդուդ այն աշխարհը, որ տեղից որ եկել ես:»

Աբրահամն ասաց. «Զգոյշ կաց, որդուս չդարձնես այն տեղ: Երկնքի Տէր Աստուածը և երկրի Աստուածը, որ ինձ իմ հօր տնից և իմ ծնած տեղից վեր առաւ, և որ ասաց ինձ.«քո ժառանգներին կու տամ այս երկիրը,» նա կ'ուղարկէ իւր հրեշտակը քո առաջ, որ դու իմ որդուս համար կին ընտրես իմ ցեղից: Իսկ եթէ այն կինը չուզէ գալ այս երկիրը, ազատ ես դու քո երդումից, բայց միայն որդուս չդարձնես այն տեղ:» Ծառան երդուեց այս բանը ճշտութեամբ կատարել:

Եւ առաւ ծառան իր տիրոջ ուղտերից և ամենայն բարութիւններից տասն ուղտ բարձած և գնաց Միջագետքի այն քաղաքը, ուր Աբրահամի եղբայր Նաքովրը իր ժողովրդով կենում էր: Եւ երբ որ հասաւ տեղը, ուղտերին հանգստացրեց քաղաքից դուրս մէկ ջրհորի առաջ՝ երեկոյեան ժամանակ, երբ աղջկերքը դուրս են գալիս ջուր տանելու համար: Եւ աղօթեց. «Տէր, իմ տիրոջ Աբրահամի Աստուած, օգնիր ինձ այսօր և ողորմութիւն արա իմ տիրոջ Աբրահամին: Տես, ես ջրհորի կշտին եմ կանգնած, և բնակիչների դուստրները դուրս կու գան ջուր հանելու: Արդ այն կոյսը, որին ես ասեմ «խոնարհիր սափորդ, որ ես խմեմ», և որ ինձ պատասխանէ «խմիր, և ուղտերիդ էլ կը խմացնեմ», նա է որ դու պատրաստեցիր քո ծառայ Իսահակին. այդպէս կ'իմանամ թէ դու ողորմութիւն արիր իմ տիրոջ Աբրահամին:»

Հազիւ թէ այս խօսքը իր մտքում կատարել էր, և ահա եկաւ Ռեբեկան, Բաթուէլի դուստրը, որ Աբրահամի եղբօր Նաքովրի որդին էր, և ունէր ուսին սափոր. և երեսով շատ գեղեցիկ էր կոյսը: Կոյսը իջաւ աղբիւրը, սափորը լցրեց և վեր ելաւ:

Եղիազարն առաջ գնաց և ասաց. «Սափորիցդ քիչ ջուր խմեցրու:»

Նա պատասխանեց. «Խմիր:» Եւ իսկոյն սափորը ուսից վայր բերեց և խմեցրեց: Եւ երբ որ Եղիազարը դադարեց խմելուց, կոյսն ասաց. «Ուղտերիդ համար էլ ջուր հանեմ, որ բոլորն էլ խմեն կշտանան:» Եւ շտապով թափեց սափորը աւազանի մէջ և դարձեալ գնաց աղբիւրը ջուր հանելու, և բոլոր ուղտերի համար էլ հանեց: Իսկ այն մարդը լուռ դիտում էր նորան տեսնելու թէ արդեօք Աստուած նորա ճանապարհը յաջողեցրե՞ց, թէ ոչ: Եւ երբ որ բոլոր ուղտերը դադարեցին խմելուց, առաւ նա մի ոսկէ օղակ կէս սատր ծանրութեամբ և երկու ապարանջան՝ տասը սատր ոսկի կշիռ՝ տուեց նորան և ասաց. «Ո՞ւմ դուստրն ես դու, ասա ինձ. հօրդ տան մէջ իջեւանելու տեղ կա՞յ մեզ համար:»

Նա պատասխանեց. «Բաթուէլի դուստրն եմ, որ Նաքովրի որդին է. և յարդ և խոտ շատ ունինք, նոյնպէս և իջեւանելու տեղ:»

Ուրախացաւ մարդը, գոհութիւն տուեց Աստծուն և ասաց. «Օրհնեալ է Տէրը, իմ տիրոջ Աբրահամի Աստուածը, որի ողորմութիւնը չթողեց իմ տիրոջ անօգնական, այլ Աստուած յաջողեցրեց իմ ճանապարհը և բերեց ինձ իմ տիրոջ եղբօր տունը:»

Աղջիկը վազեց տուն և այս ամենայն բանը պատմեց մօրը: Ռեբեկան մի եղբայր ունէր, անունը Լաբան: Երբ որ սա օղակն ու ապարանջանը տեսաւ իւր քրոջ ձեռքում և նորա բերանից այն մարդու խօսքերը լսեց, վազեց այն մարդու մօտ, որ աղբիւրի մօտ ուղտերին նայում էր: Եւ Լաբանն ասաց. «Եկ մտիր տուն, Աստծուց օրհնուած մարդ, ինչո՞ւ ես կանգնած դուրսը: Ես պատրաստեցի տունն ու ուղտերիդ համար տեղ:

Այսպէս տուն տարաւ նորան, ուղտերից բեռը վայր իջուց և նոցա յարդ և խոտ տուեց: Ջուր բերեց այն մարդու

և նորա հետ եկած ծառաների ոտերը լուանալու համար, և հաց դրեց նորա առաջ ուտելու: Իսկ Եղիազարն ասաց. «Ես չեմ ուտի, մինչև իմ խօսքս չասեմ:» Նոքա պատասխանեցին. «Ասա:»

Նա ասաց. «Աբրահամի ծառան եմ ես, և Աստուած իմ տիրոջը մեծապէս օհնեց, այնպէս որ նա բարձրացաւ, և տուեց նորան արջառ և ոչխար, արծաթ և ոսկի, ծառայ և աղախին, ուղտ և էշ: Եւ իմ տէրը մի որդի ստացաւ, որին տուեց իր ամէն ունեցածը: ինձ երդուեցրեց իմ տէրը և ասաց. «Դու իմ որդի Իսահակի համար Քանանացոց դուստրներից կին պէտք չէ առնես, որոնց մէջ ես բնակում եմ, այլ գնա իմ հօր տունը և իմ տոհմը, և այն տեղից առ կին իմ որդուս համար: Իսկ եթէ իմ տոհմը գնաս, և նոքա քեզ աղջիկ չտան, այնուհետև ազատուած ես քեզ երդումիցդ:» — Այսպէս եկայ ես այսօր ջրհորի մօտ և ասացի. «Իմ տիրոջ Աբրահամի Աստուած, եթէ ողորմեցար իմ ճանապարհին, որ ես յանձն առայ, ահաւասիկ ես աղբիւրի մօտ կանգնած եմ. եթէ գայ մի կոյս ջուր հանելու, և ես նորան ասեմ. «Քիչ ջուր տուր խմելու սափորիցդ:» և նա ասէ. «Խմիր, ու քո ուղտերին էլ կը խմեցնեմ,» Նա է այն կինը, որ Աստուած իմ տիրոջ որդուն պատրաստել է:» — Հազիւ այս խօսքերը մտքիս մէջ ասացի, տեսնեմ գալիս է Ռեբեկան՝ սափորը ուսին, որ գնաց աղբիւրը և ջուր հանեց: Ես ասացի նորան. «Տուր ինձ խմեմ:» Եւ իսկոյն սափորը ուսից իջուց և ասաց. «Խմիր և քո ուղտերիդ էլ կը խմեցնեմ:» Ես խմեցի և ուղտերս էլ խմեցրուց: Եւ հարցուցի նորան և ասացի. «Ո՞ւմ դուստրն ես դու:» Նա պատասխանեց. «Ես Բաթուէլի, Նաքովրի որդու, աղջիկն եմ:» Եւ տուեցի նորան օղակն ու ապարանջանը, խնդացի, ծնկիր պագեցի, օրհնեցի իմ տիրոջ Տէր Աստուծուն, որ ինձ ճշմարիտ ճանապարհով առաջնորդեց, որ իմ տիրոջ Աբրահամի որդու հա-

մար նորա եղբօր որդու դուստրը տանեմ: — Արդ եթէ դուք շնորհ և սէր էք ուզում անել իմ տիրոջը, ասացէք. ապա թէ ոչ մերժեցէք, որպէս զի աջ կամ ձախ կողմը գնամ:

Պատասխանեցին Բաթուէլն և Լաբանը և ասացին. «Աստուծոյ տնօրէնութիւն է այս, և մենք բարի բանին հակառակ չենք կարող ասել. ահաւասիկ Ռեբեկան քո առաջն է, առ և գնա. թող քո տիրոջ որդուն կին լինի, ինչպէս որ Աստուած այդ կամեցաւ:

Եւ երբ որ Եղիազարը այս լսեց, երկիր պագեց Աստծուն: Հանեց ոսկէ և արծաթէ անօթները և հանդերձները և տուեց Ռեբեկային. եղբօրն և մօրն էլ ընծաներ տուեց: Ապա կերան և խմեցին նաև իր հետ եղած մարդիկը և ննջեցին: Առաւօտը վաղ վերկացան և ասացին. «Արձակեցէք, որ երթամ իմ տիրոջ մօտ:»

Բայց Ռեբեկայի եղբայրն ու մայրն ասացին. «Թող այս կոյսը մեզ մօտ մնայ տաս օրի չափ, և յետոյ երթայ:»

Իսկ նա պատասխանեց. «Մի խափանէք ինձ, որովհետև Աստուած իմ ճանապարհը յաջողեցրել է: Թողէք որ իմ տիրոջ Աբրահամի մօտ գնամ:»

Նոքա պատասխանեցին. «Կանչենք աղջկան և տեսնենք թէ նա ինչ է ասում:» Եւ կանչեցին Ռեբեկային և ասացին. «Կ'ուզե՞ս այս մարդու հետ գնալ:» Նա ասաց. «Այո կ'երթամ:» Եւ այսպէս ուղարկեցին Ռեբեկային, Աբրահամի ծառային և նորա մարդկերանց: Եւ օրհնեցին Ռեբեկային և ասացին. «Քոյր մեր, քո տոհմը բազմանայ հազարով և բիւրով և ժառանգէ իր թշնամու քաղաքը:»

Վեր կացաւ Ռեբեկան իւր նաժիշտներով, նստեցին ուղտերի վրայ և գնացին այն մարդու հետ: Այսպէս ծառան Ռեբեկային առաւ գնաց:

Այն ժամանակ իսահակը բնակւում էր երկրի հարաւային կողմը և գնացել էր երեկոյեան դէմ դաշտում զբօսնելու: Աչքը բարձրացրեց և տեսաւ որ տասն ուղտ են գալիս: Ռեբեկան էլ աչքը բարձրացրեց և տեսաւ իսահակին. իսկոյն իջաւ ուղտից և ասաց ծառային. «Ո՞վ է այդ մարդը, որ դաշտի վրայ մեր առաջն է գալիս:»

Ծառան պատասխանեց. «Այն է իմ տէրը:»

Այս որ լսեց Ռեբեկան՝ առաւ քօղը և երեսը ծածկեց: իսկ ծառան իսահակին պատմեց ամենայն բան, ինչ որ արել էր: Եւ իսահակը իր մօր Սառայի խորանը տարաւ Ռեբեկային, որ եղաւ նորա կին: իսահակը սիրեց նորան և այսպէս մխիթարեցաւ իր մօր մահուան վրայ:

Եւ Աբրահամը իր բոլոր ունեցածը տուեց իսահակին և ծերանալով մեռաւ հարիւր եօթանասուն և հինգ տարեկան հասակին: Եւ իսահակը թաղեց նորան Եփրոնի ագարակի կրկին այրի մէջ:

Սուրբ գրքից.

17. Փղշտացոց աշխարհը.

Մինչև հիմա մենք ճանաչեցինք ցամաքային երկիրները, այժմ գնանք ծովի ափը: Քեբրոնից՝ ուր Աբրահամն ու իսահակը սովորաբար կենում էին, ժայռոտ անցքերով և բլեկների անտառով ծածկուած ձորերով կ՚երթանք դէպ արևմուտք, ու կը հասնենք Միջերկրական ծովի ափերը: Այդ ափերը Լիբանանին մօտիկ՝ անձուկ և աւազոտ են, որոնց վրայ գտնուած բազմաթիւ մեծ և հզօր ծովափնեայ քաղաքներում կենում էին ծովագնաց Քանանացիք (որ փիւնիկեցիք կոչվում էին): Նորանից հարաւ է Սարոնի շատ պտղաւէտ և ծաղկաւէտ դաշտավայրը: Սորա հետ կցուած է փղշտացւոց հետզհետէ դէպի հարաւ երթալով լայնացող երկիրը: Փղշտացիները

շինեցին բազմաթիւ բարձրապարիսպ քաղաքներ, որոնք շինուած էին մասամբ ծովի ափին և նաւահանգիստ քաղաքներ էին՝ մասամբ երկրի ներսը, զոր օր. Գերարա, Քեբրոնից հարաւային արևմուտք, Բերսաբէ, Գերարայից արևելք, Գազա՝ արևմուտք:

Բնակիչներն էին զօրեղ, պատերազմասէր ազգ. պարապում էին երկրագործութեամբ և խաշնարածութեամբ: Դաշտավայրը, զոր օր. Գերարի մօտ, նախիր արածելու համար շատ ընտիր էր: Երկրի իշխանները թագաւորներ էին:

18. Իսահակ.

Աբրահամի մահուանից յետոյ Տէրն օրհնեց նորա որդի իսահակին: Բայց մի մեծ սով տարածուեցաւ երկրի մէջ. և գնաց իսահակը Աբիմելէք փղշտացոց արքայի մօտ Գերարա քաղաքը և բնակեցաւ այնտեղ:

Եւ իսահակը այն երկրում սերմ սերմանեց և այն տարին մէկի տեղ հարիւրաւոր հնձեց նա, որովհետև Աստուած օրհնեց նորան: Բարձրացաւ այն մարդը, յառաջադէմ գնում և մեծանում էր, մինչև շատ հզօր եղաւ, որովհետև անթիւ ոչխար և արջառ և արմտիք ունէր: Ուստի նախանձեցան փղշտացիք, և բոլոր ջրհորները որ նորա ծառաները փորեցին Աբրահամի ժամանակ, հողով լցին փակեցին: Աբիմելէքն էլ ասաց իսահակին. «Հեռացիր մեզանից, որովհետև մեզանից շատ զօրագոյն եղար:»

Այդ տեղից գնաց իսահակը և իր վրանները զարկեց Գերարացոց ձորը և այն տեղ բնակեցաւ: Եւ դարձեալ փորել տուեց այն ջրհորները, որ իր հօր ժամանակը փորած էին և Փղշտացիք հողով լցել էին իր հօր Աբրահամի մահից յետոյ. և դարձեալ նոցա այն անունը դրեց, ինչ անուն որ Աբրա-

համը տուել էր: Իսահակի ծառաները Գերարացոց ձորն էլ փորեցին և այն տեղ էլ գտան կենդանի ջրի աղբիւր: Բայց Գերարացոց հովիւները Իսահակի հովիւների հետ կռւում էին թէ «ջրհորն իրանցն է»: —Նոքա փորեցին ուրիշ ջրհոր, բայց սորա համար էլ հակառակում էին նոքա: —Իսահակը այդ տեղից էլ հեռացաւ և մի երրորդ հոր փորել տուեց. սորա համար էլ չէին կռւում: Այն տեղից գնաց Բերսաբէ և Աստուծուն սեղան շինեց և իր խորանն այն տեղ կանգնեցրեց: Իսահակի ծառաները այս տեղ էլ ջրհոր փորեցին:

Եկաւ Աբիմելէքը, հետն էլ իւր տաճարապետը ու մէկ էլ զօրքի սպարապետը: Իսկ Իսահակն ասաց նորան. «ինչո՞ւ եկաք ինձ մօտ, դուք ինձ ատում էք և ինձ հալածեցիք ձեր մօտից:»

Նոքա ասացին. «Ակնյայտնի տեսանք որ Աստուած քեզ հետ է, ուստի փափագում ենք որ դաշն լինի մեր և ձեր մէջ, և ուխտ դնենք միմեանց հետ, որ դու մեզ ոչինչ չար բան չանես, ինչպէս և մենք քեզ չմեղանչեցինք, այլ խաղաղութեամբ արձակեցինք: Բայց դու այժմ օրհնած ես Աստուծուց:»

Այս լսելուց յետոյ Իսահակը ճաշ պատրաստեց նոցա, նոքա կերան և խմեցին: Առաւօտը վաղ վեր կացան մէկ մէկու երդում տուին և Իսահակը արձակեց նոցա և նոքա գնացին խաղաղութեամբ:

Սուրբ գրքից:

19. Քանանացոց աշխարհը:

Աբրահամի, Ղովտի և Իսահակի ճանապարհորդութիւններով մենք արդէն մի քանի տեղեկութիւններ ստացանք Քանանացոց աշխարհի մասին: Հապա մի անգամ էլ Ասորիքից

ճամբայ ընկնելով անց կենանք այդ աշխարհով, աւելի ճիշդ ծանօթութիւն ստանալու համար:

Դամասկոսից որ երթանք՝ կը հասնենք Դան, Հերմոնից հարաւ: Այն տեղից սկսվում են Յորդանանու ձախ ափի սարերը: Նոցանից մէկը կոչվում է Գաղաադ: Այդ լեռնաշղթան հիւսիսից հարաւ է գնում: Նորանից բղխում են շատ վտակներ և թափվում են Յորդանան և Մեռեալ ծովը: Այս վերջինը այն տեղն է, ուր առաջ Սիդդիմ ձորը և Սոդոմ և Գոմոր քաղաքներն էին: Սոկքովթի յանդիման մի ծանծաղ տեղով անցնենք Յորդանանու աջակողմեան ափը, թողնենք նորա դաշտը և բարձրանանք սարերի վրայ, որ արեւմուքից ամբառնում են: Նոցա մէջն է Ձիթենեաց լեառը, Սալէմից արեւելք: Քանանացոց արեւմտեան լեռնաշղթաներն Ասորիքի սարերից են գալիս, այսինքն Լիբանանի շարունակութիւն են: Նոքա մեծաւ մասամբ խիտ անտառներով էին ծածկուած: Որոնց մէջ կային ընտիր արօտատեղիներ և որթի այգիներ: Այն տեղ կան շատ քաղաքներ, որոնց մէջն է Սիւքէմ բարձր կաղնով, Բեթէլ, Սալէմ (Երուսաղէմ) որ Սիօն լեռան վրայ մի ամրոց և արեւելեան կողմը Յովսափատ անուն մի ձոր ունի, Եփրաթա (Բեթղեհեմ), և Քեբրոն Մամբրէ կաղնիով և կրկին այրով: Արեւմտեան կողմի լեռները հետզհետէ իջնում և կազմում են շատ տափարակ տեղեր: Որոնք սոքա են. հիւսիսում՝ փիւնիկեցիներից բնակած ափը, յետոյ Սարոնի տափարակը, և վերջապէս հարաւում՝ Փղշտացոց աշխարհը Գերարա, Բերսաբէէ և Գազա քաղաքներով: Այդ տափարակները տարածվում են մինչեւ Միջերկրական ծովը: Քանանացոց երկրի մեծութիւնը ցոյց տալու համար շատ անգամ Ս. Գրքի մէջ ասուած է. «ի Դանայ ցԲերսաբէէ», այսինքն «Դանից մինչև Բերսաբէէ:»

Մենք արդէն յիշեցինք Քանանացոց աշխարհի այն քաղաքներն ու գետերը, լեռներն ու տափարակները, որչափ որ դոքա մեր պատմութիւններից յայտնի են: Բայց մենք պէտք է տեսնենք այն ևս, թէ ինչ բոյսեր են բսնում սուրբ երկրի մէջ և ինչ կենդանիներ են ապրում:

Ինչպէս մեզանում՝ այն տեղի սարերի լանջերի վրայ մենք տեսնում ենք խաղողի որթ, դաշտերում ցորենի ալեծածան արտեր և տեղ տեղ ոսպ: Անտառներում հպարտու-

թեամբ ամբառնում են զօրագոյն կաղնիներն և շքեղաշուք ոփիներն. իսկ նոցա մէջ յաճախակի տխուր նոճին: Մեզանում չեն բուսում բևեկնին (թերմենթին), որից շինում են տերպենտին կոչուած խէժը, ձիթենին՝ որի պտուղներից ձէթ են ճմլում, և արմաւենին՝ որ արևելեան ժողովուրդների համար հարկաւոր ծառ է և մանաւանդ կարաւանների համար ճշմարիտ օրհնութիւն է: Լիբանանի վրայ մայրի ծառերի անտառներ կան որոնց ծառերի տերևները ասեղնաւոր են, իսկ փայտը շատ բուրում է:

Բոյսերի կեանքը տարուայ ընթացքում փոքր ինչ զանազան է մեր բոյսերի կեանքից, որովհետև այն տեղի տարուայ եղանակներն էլ մերից տարբեր են: Գարունքն սկսվում է փետրուարին. մարտին արդէն ամենայն ինչ գեղեցիկ զարդով ծածկուած է: Այս ամսին թանձր անձրև է գալիս: Որով բոլոր բոյսերն ու հացաբոյսերն էլ հետը հասնում են: Ապրիլին կամ մայիսի կիսին հունձն արդէն պատրաստ է: Այս միջոցին՝ և առհասարակ ամբողջ ամառը՝ անձրև չէ գալիս: Արեգակն այրում խորովում է: Եւ անտարակոյս ամենայն տեղ կչորանար, եթէ շատ ցուրտ գիշերները բոյսերը չզովանային ցօղով: Սեպտեմբերին դարձեալ թափվում է շարունակ անձրև. սկսվում է աշունք: Ձմեռը կարճ է, միայն դեկտեմբեր և յունվար ամիսներն են ձմեռ: Բայց այդ ժամանակ էլ շատ անգամ շատ տաք օրեր են լինում: Ընդհանրապէս ամբողջ տարուայ եղանակը մեր երկրի եղանակից աւելի ջերմ է: Հովիւները կարողանում են ամբողջ տարին տաղաւարների մէջ կենալ և իրանց նախիրներով արօտատեղիներում թափառել:

Նոցա կենդանիներն են, ոչխար, այծ, արջառ, էշ և ուղտ: Վերջինը քանանացոց համար և ամբողջ արևելքի համար առանձին կերպով կարևոր է: Մեր մեղուները այն տեղ էլ կան, որ իրանց մեղրն ու մոմը քանանացոց ես ընծայում են: Յորդանանու և Մեռեալ ծովի ափերին բոյն և սնունդ են գտնում նաև վիթեր (այծեամնի տեսակ), նապաստակներ և ճագարներ, մինչև անգամ գայլեր և վագրեր:

20. Եսաւ և Յակոբ:

1. Իսահակն ունեցաւ երկու որդի, առաջնին անուանեց Եսաւ, երկրորդին՝ Յակոբ:

Մանուկները աճեցին, և Եսաւը հմուտ որսորդ եղաւ և կեանքը դուրսն էր անցկացնում. իսկ Յակոբը պարզ մարդ էր և ապրում էր վրաններում: Իսահակն Եսաւին սիրում էր, որովհետև ախորժով ուտում էր նորա որսը. իսկ Ռեբեկան սիրում էր Յակոբին:

Մի օր Յակոբը ոսպէ թան էր եփել, Եսաւն եկաւ դաշտից խիստ անօթի: Եւ ասաց Յակոբին. «Տուր ինձ չեկաթանից ուտեմ, ես քաղցած եմ:»

Իսկ Յակոբն ասաց. «Առաջ ծախիր ինձ քո անդրանկութիւնդ:»

Եսաւը պատասխանեց. «Տես, ես մեռնում եմ, ինչի՞ս է պէտք անդրանկութիւնս:»

Յակոբն ասաց. «Ապա ուրեմն երդուիր ինձ:» Եւ Եսաւն երդուեցաւ և ծախեց Յակոբին իր անդրանկութիւնը: Եւ Յակոբը տուեց Եսաւին հաց և ոսպէ թան, նա կերաւ խմեց, վեր կացաւ և գնաց, և չէր ափսոսում որ անդրանկութիւնը ծախեց:

2. Եւ Իսահակը ծերացել ու աչքերի լոյսը կորցրել էր, կանչեց մի օր Եսաւին և ասաց. «Որդիս:»

Իսկ նա պատասխանեց. «Ահաւասիկ եմ:»

Իսահակն ասաց. «Տես, ես ծերացել եմ և ո՞վ գիտէ թէ երբ կը մեռնեմ: Ուստի առ քո գործիքները, աղեղն ու կապարճը, գնա դաշտը և ինձ համար մի որս որսա և խորտիկ շինիր, ինչպէս ես սիրում եմ, բեր ինձ տուր, որ ուտեմ, որպէս զի իմ անձս քեզ օրհնէ, քանի դեռ կենդանի եմ:»

Սակայն Ռեբեկան լսեց, ինչ որ Իսահակը իր որդուն ասաց. և երբ որ Եսաւը դաշտը գնաց որսալու, ասաց Յակոբին, իր երկրորդ որդուն. «Ես լսեցի, ինչպէս հայրդ Եսաւի հետ խօսում էր և ասաց.—Բեր ինձ որս և խորտիկ շինիր, ինչպէս ես սիրում եմ, որ Աստծոյ առաջ օրհնեմ քեզ, քանի չեմ մեռել:—Այժմ լսիր իմ պատուէրը, որդի: Գնա՛ դու նախիրը և բեր երկու փափուկ և ընտիր ուլ, որ ես քո հօր սիրած խորտիկը պատրաստեմ: Դու կը տանես այդ հօրդ, որ ուտէ և քեզ օրհնէ մահուանից առաջ:»

Բայց Յակոբը պատասխանեց. «Եսաւ եղբայրս մազոտ է, իսկ ես մազ չունիմ: Գուցէ հայրս շօշափէ ինձ, նորա աչքում խաբեբայ կը լինեմ և իմ գլխիս անէծք կը թափի և ոչ թէ օրհնութիւն:»

Մայրն ասաց. «Իմ գլխիս լինի այդ անէծքը, որդեակ, դու լսիր միայն իմ խօսքը և գնա բեր:» Նա գնաց և բերեց ուլերը մօրը, որ և հօր սիրած խորտիկը պատրաստեց. և բերեց մայրը իր երէց որդու Եսաւի ազնիւ պատմուճանը և հագցրեց Յակոբին. և ուլի մորթը փաթաթեց ձեռքին և վզի վրայ, ուր որ մերկ էր, և տուեց նորան իր պատրաստած խորտիկը: Յակոբը գնաց հօր մօտ և ասաց. «Հայր իմ:»

Նա ասաց. «Ահաւասիկ եմ. ո՞վ ես դու, որդեակ:»

Յակոբն ասաց. «Ես եմ Եսաւ, քո անդրանիկ որդիդ. կատարեցի ինչ որ պատուիրեցիր: Վեր կաց նստիր և կեր, որ հոգիդ օրհնէ ինձ:»

Իսահակն ասաց որդուն. «Որդեակ, ի՞նչպէս կարողացար շուտ գտնել.»

Նա պատասխանեց. «Տէր Աստուածը պատրաստեց իմ առաջ:»

Իսահակն ասաց նորան. «Մօտ եկ, որդեակ, որ քեզ շօ-

շափեմ, տեսնեմ իմ որդի Եսա՞ւն ես, թէ ոչ:»—Յակոբը մօտեցաւ հօրը. սա շօշափեց և ասաց. «Ձայնը Յակոբի ձայնն է, բայց ձեռքերը Եսաւի ձեռքերն են:» Եւ չճանաչեց նորան, որովհետև Յակոբի ձեռները մազոտ էին իր եղբօր ձեռների պէս: Նա մի անգամ էլ հարցրեց. «Դո՞ւ ես իմ որդի Եսաւը:»

Նա պատասխանեց. «Այո՛, ես եմ:»

Եւ Իսահակն ասաց. «Բեր ուտեմ, որդեակ, որսդ՝ որ ուտեմ:» Բերեց Յակոբը և Իսահակը կերաւ, բերեց և գինի, և նա խմեց: Ապա խօսեց Իսահակն և ասաց Յակոբին. «Մօտ արի, որդեակ, և համբուրիր ինձ:»—Նա մօտեցաւ և համբուրեց. Իսահակը հոտ առաւ նորա հանդերձից. և օրհնեց Յակոբին և ասաց. «Ահա իմ որդու հոտը լի արտերի հոտի պէս է, որ Աստուած օրհնել է: Աստուած տայ քեզ երկնքի ցօղից և երկրի պարարտութիւնից և ցորենի ու գինու առատութիւնը: Քեզ ծառայեն ազգերը և երկիր պագանեն իշխանները: Տէր դառնաս եղբայրներիդ վրայ: Եւ օրհնուի քեզ օրհնողը:»

Երբ որ Իսահակը հեռացաւ, եկաւ Եսաւը որսից, և նա էլ խորտիկ պատրաստեց և տարաւ հօրն ու ասաց. «Վեր կաց, հայր, և կեր քո որդու որսը, որ քո հոգին ինձ օրհնէ:»

Եւ հայրն ասաց. «Ո՞վ ես դու:»

Նա պատասխանեց. «Ես Եսաւն եմ, քո անդրանիկ որդիդ:»

Շատ զարմացաւ Իսահակն և ասաց. «Իսկ այն ո՞վ էր, որ որսաց ինձ համար և բերեց ինձ: Եւ ես կերայ մինչև քո գալը և օրհնեցի նորան. և թող օրհնեալ մնայ:»

Երբ որ Եսաւը նորա խօսքերը լսեց, դառնացած աղաղակ բարձրացրեց և ասաց. «Ինձ էլ օրհնիր, հայր:»

Իսահակը պատասխանեց. «Եկաւ եղբայրդ նենգութեամբ և առաւ քո օրհնութիւնը:

Եսաւն ասաց. «Ահա Յակոբն ուրեմն իմ անդրանկութիւնը և իմ օրհնութիւնը ինձնից խլեց: Հայր, ինձ համար էլ օրհնութիւն չե՞ս թողել:»

Իսահակը պատասխանեց և ասաց. «Ես նորան քեզ վրայ տէր նշանակեցի, և բոլոր եղբայրներին նորա ծառայ դարձրի, ցորենով և գինով հաստատեցի նորան. էլ ի՞նչ կարող եմ քեզ անել, որդեակ:»

Եսաւն ասաց. «Միթէ մի՞ օրհնութիւն ունիս, հայր: Ինձ էլ օրհնիր:» Եւ բարձրացրեց իր ձայնն և լաց եղաւ:

Իսահակը պատասխանեց և ասաց. «Ահա երկրի պարարտութիւնից և երկնքի ցօղից լինի քո բնակութիւնը: Քո սրով ապրիս և եղբօրդ ծառայես, և յետոյ կըգայ ժամանակ որ նորա լծից ազատուիս:»

3. Եւ Եսաւը Յակոբի դէմ ոխ էր պահում այն օրհնութեան համար՝ որ նա իրանից խլեց և ասաց իր մտքում. «Սգի օրեր կու գան իմ հօր վրայ, այն ժամանակ կըսպանեմ իմ եղբայր Յակոբին:» Ա՛յս իմացաւ Ռեբեկան, կանչել տուեց Յակոբին և ասաց. «Եսաւը սպառնում է քեզ սպանել. ուստի վեր կաց փախիր Խառան իմ եղբօր Լաբանի մօտ, և մնա նորա մօտ մինչև որ քո եղբօր բարկութիւնը անցնի. այն ժամանակ կուղարկեմ՝ քեզ կանչել կըտամ այն տեղից: Ախ՛ չըլինի թէ մի օրում թէ քեզանից և թէ քո հօրիցդ զրկուիմ:»

Եւ Իսահակը կանչեց Յակոբին, օրհնեց նորան և ասաց. «Տէր Աստուածը օրհնէ քեզ, աճեցնէ և բազմացնէ քեզ և մեծ ազգ դառնաս և իմ հօր Աբրահամի օրհնութիւն քեզ տայ և քո ժառանգներին:»

4. Եւ գնաց Յակոբը Բերսաբէից դէպի Խառանի կողմը՝ այն աշխարհը, որ Միջագետքի հիւսիսումն է: Եւ տեսաւ դաշտի վրայ մի ջրհոր և կողքին ոչխարների երեք հօտ, որ հանգչում էին. այն ջրհորն՝ շինած էր ոչխարներին ջուր խմեցնելու

համար, և ջրհորի բերանի վրայ մի մեծ վէմ կար դրած: Երբ որ բոլոր հօտերը ժողովւում էին, ջրհորի բերանից վէմը գլորում էին և խաշներին ջուր տալիս և ապա վէմը դարձեալ դնում էին հորի բերանին:— Յակոբն ասաց հովիւներին. «Եղբարք, ո՞ր տեղից էք դուք:» Նոքա պատասխանեցին. «Խառանից:» Նա ասաց. «Ճանաչո՞ւմ էք Լաբանին, Նաքովրի որդուն:»

Եւ նոքա ասացին. «Ճանաչում ենք:»

Նա ասաց. «Առո՞ղջ է նա:»

Նոքա պատասխանեցին. «Այո՛, առողջ է. և ահա գալիս է նորա դուստր Ռաքէլը խաշնով:»

Նա ասաց. «Արեգակը դեռ բարձր է և ժամանակ չէ որ հօտը տուն տանիք. խմեցրէք ոչխարներին և տարէք արածելու:»

Նոքա պատասխանեցին. «Մենք չենք կարող, մինչև որ բոլոր հովիւները չժողովուին և վէմը ջրհորի բերանից չգլորեն:»

Մինչ Յակոբը հովիւների հետ խօսում էր, եկաւ Ռաքէլը իր հօր խաշների հետ, որովհետև նա էր արածում հօր խաշները:

Եւ երբ որ Յակոբը տեսաւ Ռաքէլին, իւր քեռի Լաբանի աղջկան, մօտեցաւ և ջրհորի բերանից վէմը գլորեց և քեռու խաշներին ջուր տուեց: Ապա համբուրեց Ռաքէլին և բարձրաձայն լաց եղաւ և պատմեց նորան թէ ինքը Ռեբեկայի որդին է: Իսկ նա վազեց և պատմեց այս բանը հօրը: Լաբանը որ լսեց թէ իր քրոջ որդի Յակոբը եկել է, նորա առաջ վազեց, գրկեց և համբուրեց և իր տունը բերեց նորան: Եւ Յակոբը պատմեց նորան այս բոլորը:

5. Մի ամսի չափ Յակոբը մնացել էր Լաբանի մօտ, երբ սա նորան ասաց. «Թէև դու իմ մօտիկ ազգականն ես, միթէ ձրի՞ պէտք է ծառայես ինձ: Յայտնիր ինձ, ի՞նչ է քո վարձը:»

Իսկ Լաբանն ունէր երկու դուստր, երէցի անունն էր Լիա, կրտսերինը Ռաքէլ: Բայց Լիայի աչքերը ջրջրոտ էին, իսկ Ռա-

քէլը գեղեցիկ տեսիլ և սիրուն երես ունէր: Յակոբը սիրեց Ռաքէլին և ասաց. «Ես եօթը տարի կը ծառայեմ քեզ քո կրտսեր դստեր Ռաքէլի համար:»

Լաբանը պատասխանեց. «Լաւ է քեզ տամ դորան, քան թէ օտարին. ուրեմն մնա ինձ մօտ:» Այսպէս Յակոբը Ռաքէլի համար եօթը տարի ծառայեց. իսկ իրան անպէս թուեցաւ, թէ միայն մի քանի օր է ծառայել, այնքան սիրում էր նորան:

Բայց երբ որ եօթը տարին լրացաւ, Լաբանը տուեց նորան Ռաքէլի փոխարէն Լիային: Եւ Յակոբն ասաց Լաբանին. «Այս ի՞նչ գործեցիր. մի՞թէ Ռաքէլի համար չծառայեցի քեզ. ինչո՞ւ խաբեցիր ինձ:»

Լաբանը պատասխանեց. «Մեր աշխարհում օրէնք չէ, որ կրտսերին երէցից առաջ մարդու տանք: Ես քեզ Ռաքէլին էլ կը տամ, եթէ էլի եօթը տարի ծառայես ինձ:» Յակոբը այս էլ կատարեց: Եւ Լաբանը Ռաքէլին էլ տուեց նորան:

Եւ Յակոբն ունեցաւ տասներկու որդի. Ռուբէն, Շմաւոն, Ղևի, Յուդա, Դան, Նեփթաղիմ, Գադ, Ասեր, Իսաքար, Զաբուղոն, Յովսէփ և ամենից կրտսերն էր Բենիամին:

6. Եւ որովհետև տասնուչորս տարի արդէն անցել էր, մի օր Յակոբն ասաց Լաբանին. «Արձակիր ինձ, որ իմ երկիրը գնամ:»

Լաբանը պատասխանեց. «Թէ որ գտայ շնորհք քո առաջը, մնա ինձ մօտ. ես տեսայ որ Աստուած քո պատճառով օրհնեց ինձ: Ասա՛, ի՞նչ է վարձդ, որ տամ քեզ:»

Իսկ Յակոբը ասաց նորան. «Այժմ ոչինչ մի՛ տար. բայց եթէ ինչ որ քեզ ասեմ՝ կատարես, ես դարձեալ կ'արածեմ քո ոչխարները և կը պահեմ: Թող այս օր բոլոր խաշները քո առջևից անցնեն, նոցանից զատիր և հանիր բոլոր խայտախաբիւ և գորշ ոչխարները և բոլոր պիսակ այծերը: Եւ ինչ որ

մնացած միագոյն խաշներից գորշախայտ և պիսակ ծնանին, այն լինի իմ վարձը:

Լաբանը պատասխանեց. «Այդպէս լինի:» Եւ զատեց նոյն օրը գորշախայտ և պիսակ ոչխարներն ու այծերը, յանձնեց իր որդոց և երեք օր ճանապարհով հեռացրուց Յակոբից: Եւ Յակոբն սկսեց արածել մնացած միագոյն խաշները:

Բայց այս խաշները շուտով ծնեցին շատ գորշախայտ և պիսակ գառներ և ուլեր, որ Յակոբը զատում էր Լաբանի խաշներից և իր համար սեպհական խաշն ունեցաւ: Լաբանն որ այս տեսաւ՝ փոխեց վարձի պայմանը. թէև տասն անգամ էլ այսպէս փոփոխէր վարձի պայմանը, Յակոբը դարձեալ հարըստանում էր և շատ ոչխարների և արջառի, ծառաների և աղախինների, ուղտերի և էշերի տէր դարձաւ:

7. Եւ Յակոբը լսեց Լաբանի որդոց գանգատները, որ ասում էին. «Յակոբն առաւ բոլորը՝ ինչ որ մեր հօրն էր պատկանում, և մեր հօր ընչեցն այսքան հարստութիւն ժողովեց:» Յակոբն այն ևս նկատեց, որ Լաբանը նորա հետ այնպէս չէր վարվում, ինչպէս երէկ և մէկէլ օր: Եւ Տէրն ասաց նորան. «Դարձիր քո հօր և քո ազգի երկիրը, ես քեզ հետ եմ:»

Յակոբն իսկոյն մարդ ուղարկեց և կանչեց Ռաքէլին և Լիային դաշտը, ուր նախիրն էր, և ասաց նոցա, «Ես տեսնում եմ որ ձեր հայրը ինձ հետ այնպէս չի վարվում, ինչպէս երէկ և մէկէլ օրը. բայց դուք գիտէք, թէ ինչպէս ծառայեցի նորան. իսկ ձեր հայրը ինձ նենգեց և տասն անգամ վարձս փոխեց. սակայն Աստուած չթողուց որ ինձ վնասէ: Եւ Աստուած ասաց ինձ. «Վեր կաց դուրս արի այս երկրից և գնա քո ծննդեան երկիրը, ես քեզ հետ եմ:»

Իսկ Ռաքէլն ու Լիան պատասխանեցին. «Արա՛ ինչ որ Աստուած քեզ ասաց:»

8. Վեր կացաւ Յակոբը նստեցրեց իր որդոց և կանանց ուղտերի վրայ, դուրս հանեց իր բոլոր խաշներն ու բոլոր ստացուածքը, որ Միջագետքի մէջիրը ձեռք բերեց, և գնաց իր հօր Իսահակի մօտ, Քանանացոց աշխարհը: Եւ Ռաքէլը գողացաւ իր հօր կուռքերը:

Այսպէս գաղտուկ կերպով հեռացաւ Յակոբը իր աներից, որ ոչխարները խուզելու էր գնացել, և ոչինչ չ՚ասաց նորան: Եւ փախաւ հետն առնելով իր ամենայն ինչքը, անցաւ գետը և դիմեց Գաղաադի լեռը:

Երրորդ օրը Լաբանին լուր հասաւ, թէ Յակոբը փախել է: Իսկոյն առաւ հետը եղբայրներին, ընկաւ նորա ետևից եօթն օր ճանապարհ, մինչև որ հասաւ նորան: Բայց Աստուած ասաց նորան երազում. «Զգոյշ եղիր, որ Յակոբի հետ անզգամութեամբ չխօսիս:

Եւ Լաբանը հասաւ Յակոբին. Յակոբն արդէն իր վրանները դրել էր լեռան վրայ, և Լաբանը իր եղբայրների հետ նմանապէս Գաղաադու լեռան վրայ կացաւ:

Եւ ասաց Լաբանը Յակոբին. «Այդ ի՞նչ արեցիր, ինչո՞ւ գաղտագնաց հեռացար և իմ դուստրներին տարար՝ սրով գերի առնուածների պէս: Ինչո՞ւ ինձ իմաց չարիր, որ ես քեզ ուրախ սրտով, երգերով, թմբկով և քնարով ճանապարհ ձգէի: Եւ միթէ արժանի չէի՞ իմ որդոցս՝ իմ աղջկներիս համբուրելու: Դու անմտութեամբ վարուեցար: Ես կարող էի քեզ չարութիւն վճարել, բայց քո հօր Աստուածը երէկ ինձ ասաց. «Զգոյշ եղիր, որ Յակոբի հետ անզգամութեամբ չխօսիս:» Եւ եթէ դու գնում ես, որովհետև այդ է քո սրտի փափագը, կուռքերս ինչո՞ւ համար գողացար:»

Յակոբը պատասխանեց. «Ես առանց քեզ ասելու գնացի որովհետև վախեցայ՝ թէ դու քո դուստրներդ ինձնից կը խլես:

Իսկ որի մօտ որ դու քո կուռքերը գտնես, թող նա մեռնի: Ահա իմ եղբայրների առաջ քրքրիր բոլորը և առ ինչ որ քոնն է:»—Յակոբը չգիտէր թէ Ռաքէլը կուռքերը գողացել էր:

Գնաց Լաբանը Յակոբի վրանը, Լիայի և երկու հարճերի վրանները, բայց ոչինչ չգտաւ. եւ եկաւ Ռաքէլի վրանը: Ռաքէլը առաւ կուռքերը և ուղտի պաստառի տակ դրեց ու վրէն նստաւ: Լաբանը տնտղեց բոլոր տաղաւարը, բայց ոչինչ չգտաւ: Եւ Ռաքէլն ասաց հօրը. «Տէր, մի՛ բարկանար որ չեմ կարող քո առաջ ոտի կանգնել, տկար եմ:» Այսպէս՝ Լաբանը չգըտաւ ոչինչ, թէև շատ որոնեց:

Իսկ Յակոբը բարկացաւ և յանդիմանեց Լաբանին և ասաց նորան. «Ի՞նչ յանցանք եմ գործել, որ այդպէս ետևիցս ընկած եկար և իմ բոլոր ինչքը տնտղեցիր: Քո տան բաներիցն ի՞նչ գտար այս տեղ: Բեր ինչ որ գտար, դի՛ր իմ և քո եղբայրների առաջ, և թող նոքա մեզ դատեն: Քսան տարի քեզ մօտ էի. քո ոչխարներն ու այծերը անպտուղ չէին, քո մաքիների խոյերը երբէք չեմ կերել: Վայրի գազանների պատառածը դու չկորցրիր, այլ ես իմ ունեցածից տուժեցի. նոյնպէս էլ թէ՛ օրուայ և թէ՛ գիշերուայ ժամանակ գողացածը: Ցերեկը տօթից այրվում էի, գիշերը ցրտից, և աչքս քուն չգիտէր: Այսպէս ծառայեցի ես քսան տարի քո տան մէջ, տասնուչորս տարի դուստրներիդ համար և վեց տարի խաշների փոխարէն, և դու տասն անգամ վարձս փոխեցիր: Եթէ ինձ օգնական չլինէր իմ հօր Աստուածը, Աբրահամի Աստուածը, և նա որի երկիւղը որ Իսահակը ունի, դու գուցէ ինձ ունայն արձակէիր այժմ: Այլ Աստուած տեսաւ իմ տառապանքն ու վաստակը և երէկ քեզ յանդիմանեց:

Լաբանը պատասխանեց և ասաց Յակոբին. «Ո՞չ ապաքէն

այս աղջկերքը իմ դուստրներն են, և քո տղերքը իմ որդիքն են, և այս խաշները իմ խաշներն են: Արդ ի՞նչ կարող եմ անել այս օր իմ դուստրներին կամ նոցա որդկերանց որ նոքա ծնան: Ուրեմն արի ես և դու ուխտ կապենք, և այդ ուխտը լինի վկայութիւն իմ և քո մէջ:»

Եւ առաւ Յակոբը վէմ և արձան կանգնեց և ասաց իր եղբայրներին. «Քարեր կուտեցէք:» Եւ նոքա քարեր ժողովեցին և շինեցին մի բլուր, և կերան ու խմեցին այն բլրի վրայ:

Եւ ասաց Լաբանը. «Այս բլուրը այսօր վկայ է իմ և քո մէջ, և Աստուած լինի մեր սահմանների պահապանը երբ որ միմեանցից մեկնենք: Ահա ոչ ոք չկայ մեր մէջ, միայն Աստուած վկայ է իմ և քո մէջ: Ես այս կարկառից (քարի դիզուած) չեմ անցնի դէպի քո կողմը և դու էլ այս արձանից մի անցնիր դէպի իմ կողմն չարութեամբ: Աբրահամի Աստուածը, Նաքովրի Աստուածը և նոցա պապերի Աստուածը մեր մէջ դատաւոր լինի:»

Եւ Յակոբը երդուեցաւ Աստուծոյ անունով և մատաղ մորթեց լերան վրայ, և իր ազգականներին կանչեց հաց ուտելու: Կերան խմեցին ու մնացին գիշերը նոյն լերան վրայ: Եւ Լաբանը առաւօտը վաղ վեր կացաւ, համբուրեց իր դուստրներին և նոցա որդոց և օրհնեց նոցա: Եւ նա հեռացաւ, դարձաւ իր տեղը, և Յակոբն էլ գնաց շարունակեց իր ճանապարհը:

9. Յակոբն իրանից առաջ հրեշտակներ ուղարկեց իր եղբայր Եսաւի մօտ, Եդովմի աշխարհը, և պատուիրեց նոցա և ասաց. «Այսպէս ասացէք իմ եղբայր Եսաւին. Թէ քո ծառայ Յակոբը այս է ասում.— Մինչև այս օր Լաբանի մօտ կացայ և ունիմ արջառ և ոչխար և էշ և ծառաներ ու աղախիններ,

իսկ այժմ մարդ եմ ուղարկում իմ տէր Եսաւի մօտ, որ շնորհ գտնեմ նորա առաջ:»

Եւ հրեշտակները դարձան և ասացին, «Գնացինք քո եղբայր Եսաւի մօտ և ահա քո առաջն է գալիս չորս հարիւր մարդով:»

Վախեցաւ Յակոբը և տարակուսած էր. և բաժանեց իր ժողովուրդը, արջառը և ոչխարները և ուղտերը երկու բանակի, և ասաց. «Եթէ Եսաւը գայ և յարձակուի առաջին բանակի վրայ և կոտորէ, ազատ կը մնայ երկրորդ բանակը:» Յետոյ աղօթեց Յակոբը Աստծուն. «Ո՛վ իմ պապերի Աստուած, Տէր, որ ինձ ասացիր, թէ գնա քո ծննդեան երկիրը և ես կօգնեմ քեզ:— Ես շատ անարժան եմ այն ողորմութեան և ճշմարտութեան համար, որ դու քո ծառայիդ շնորհեցիր: Միայն ցուպը ձեռիս անցայ այս Յորդանանը, իսկ այժմ վերադառնում եմ երկու բանակներով: Արդ փրկիր ինձ իմ եղբօր Եսաւի ձեռից. որովհետև վախենում եմ, գուցէ գայ և ջարդէ ինձ, և մայր ու որդի միասին կոտորէ:»

Եւ Յակոբը գիշերն այն տեղ մնաց և իր հետ բերածներից ընծաներ առաւ և ուղարկեց Եսաւին, այսինքն երկու հարիւր այծ, քսան քաղ, երկու հարիւր մաքի, քսան խոյ, երեսուն ուղտ իրանց կոզեներով, քառասուն կով, քսան ցուլ, քսան էշ և տասն մտրուկ: Եւ իր ծառաներին յանձնեց, ամէն մէկին մէկ հօտ և ասաց նոցա. «Գնացէք ինձանից առաջ, և ամէն մէկ հօտը հեռու պահեցէք միւսից և միմեանցից բաժան տարէք:» Եւ առաջինին պատուիրեց և ասաց. «Եթէ քեզ իմ եղբայր Եսաւը պատահի և հարցնէ, թէ «որի՞նն ես, և ո՞ւր ես գնում և ո՞ւմն է այդ որ առջևիցդ գնում է,» դու ասա. «Քո ծառայ Յակոբի ընծան է, որ իր տէր Եսաւին է ուղարկում. և ինքը մեր ետևից գալիս է:» Այսպէս պատուիրեց և

միւսին և երրորդին, և ամենուն, որոնք խաշների հետ յառաջ էին գնում, և ասաց. «Ինչպէս պատուիրեցի, այնպէս ասացէք Եսաւին, երբ որ նորան պատահիք, և չմոռանաք, ասացէք. «Ահա քո ծառայ Յակոբը մեր ետևից գալիս է:» Որովհետև Յակոբը այս էր մտածում. «Ես Եսաւին ուզում եմ հաշտեցընել այն ընծաներով՝ որ առաջից գնում են. ու նա թերևս յետոյ ինձ ընդունի:»

Եւ առաւօտը վաղ վեր կենալով, անցաւ Յակոբը Յորդանանու մէջ Թափուող հունով (ջրի անցք): Բարձրացրեց իր աչքը և տեսաւ, և ահա գալիս էր Եսաւը և նորա հետ չորս հարիւր մարդ: Իր որդկերանց ու նոցա մայրերին բաժանեց, իսկ ինքը նոցանից առաջ գնաց, և եօթն անգամ երկիր պագեց մինչև մերձեցաւ Եսաւին: Եւ Եսաւն էլ առաջ եկաւ, գրկեց նորան և փաթաթուեցաւ նորա պարանոցը, և երկուսն էլ լաց եղան: Եսաւը աչքերը բարձրացնելով, տեսաւ կանանց և մանուկներին և ասաց. «Դոքա քո ինչե՞րդ են:» Յակոբը պատասխանեց. «Իմ որդիքս են, որ Աստուած քո ծառային պարգևեց:» Նոքա յառաջ եկան և երկիր պագեցին Եսաւին:

Եւ Եսաւն ասաց, «Ի՞նչ էին այն բոլոր հօտերը, որ ինձ հանդիպեցան:»

Յակոբը պատասխանեց. «Որ քո ծառան շնորհք գտնէ քո առաջ:»

Եսաւն ասաց. «Ես ինքս շատ ունիմ, եղբայր, քեզ լինի ինչ որ քունն է:»

Յակոբը պատասխանեց. «Ահ ոչ: Եթէ քո առաջ շնորհ գտայ, ընդունիր այդ ընծաները իմ ձեռից. որովհետև ես քո երեսն այնպէս տեսայ, իբր թէ մէկն Աստծոյ երեսը տեսնի. զուարթ եղիր ինձ համար, առ ինձնից այս օրհնութիւնը, որ ես քեզ մատուցի. որովհետև Աստուած ինձ ողորմել է և ես

ամենայն ինչ շատ ունիմ:» Եւ այնքան բռնադատեց, մինչև որ ստիպեց նորան առնելու:

Եւ Եսաւն ասաց. «Չուենք երթանք, ես քեզ հետ եմ ուզում գնալ:»

Իսկ նա ասաց. «Եղբայր, դու տեսնում ես որ մանուկներս մատաղ են, և հետս ունիմ ծնունդ արձակած ոչխարներ և կովեր, որ եթէ մի օր ստիպեմ՝ կը մեռնին: Տէր, դու քո ծառայիցդ առաջ գնա. իսկ ես, որչափ մանուկներն ու խաշները կը կարողանան ու ճանապարհը յաջող կը լինի՝ ետևից կուգամ, ու կը հասնեմ Սէիր՝ իմ տիրոջ մօտ:

Եսաւն ասաց. «Գոնէ իմ ժողովրդից քեզ մօտ մի քանիսներին կը թողնեմ:»

Յակոբն ասաց. «Ինչի՞ է հարկաւոր այդ. այն էլ շատ է, որ քո առաջ ողորմութիւն գտայ, տէր:» Եւ այն օրը Եսաւը նոյն ճանապարհով դարձաւ Սէիր:

10. Եւ չուեց Յակոբը Սուքովթի ճանապարհով և Եսաւի երեսից փախչելով ողջ եկաւ Սիւքեմ քաղաքը, որ Քանանացոց աշխարհումն է, և բնակեցաւ քաղաքի յանդիման: Այն տեղից էլ գնաց և եկաւ Բեթէլ և այն տեղ էլ սեղան շինեց, և Տէրն երևեցաւ Յակոբին, օրհնեց նորան և ասաց. «Այսուհետև անունդ էլ Յակոբ պէտք չէ կոչուի, այլ Իսրայէլ (Աստուածատես). ես եմ ամենակարող Աստուած. այն երկիրը, որ Աբրահամին և Իսահակին տուի, քեզ կու տամ և քո ժառանգներին քեզանից յետոյ:» Յակոբը այն տեղ մի արձան կանգնեցրեց, ուր Աստուած նորա հետ խօսեցաւ:

Բեթէլի մէջ մեռաւ Ռեբեկայի դայեակ Դեբովրան և թաղուեցաւ Բեթէլի ներքև կաղնիի տակ, որ կոչուեցաւ սգի կաղնի:

Յակոբը գնաց Բեթէլից և եկաւ Սալէմի միջով Եփրաթի մօտիկ որ է Բեթլեհեմ: Այս տեղ մեռաւ Ռաքէլը և թաղուե-

ցաւ ճանապարհի վրայ Եփրաթի մօտիկ: Եւ Յակոբը մի արձան կանգնեցրեց նորա գերեզմանի վրայ, այն է Ռաքէլի շիրիմը, որ մինչև այս օր կայ:

Եւ գնաց Յակոբը Մամբրէ, այն է Հեբրոն, իր հօր Իսահակի մօտ, ուր Աբրահամն ու Իսահակը կենում էին: Իսահակն էր հարիւր ութսուն տարեկան, հետզհետէ նուաղելով մեռաւ ծերացած և կեանքից յոգնած: Եւ նորա որդիքն, Յակոբն ու Եսաւը, թաղեցին նորան կրկին այրում:

Եւ Եսաւն առաւ իր կանայք, որդիքը և իր տան բոլոր մարդիկը, իր բոլոր անասուններն ու ինչքը, որ Քանանացոց երկրում ստացել էր, և մէկ ուրիշ աշխարհ գնաց և հեռացաւ իր եղբայր Յակոբի երեսից: Որովհետև նոցա երկուսի ինչքը այնքան շատ էին, որ չէին կարող մէկմէկու մօտ միասին բնակել. և պանդխտութեան երկիրը այնքան ընդարձակ չէր, որ կերակրէր նոցա բազմաթիւ անասունները: Եւ Եսաւն բնակեցաւ Սէիրի լերան վրայ, Եդովմացոց աշխարհում:

Իսկ Յակոբը բնակեցաւ այն երկրում, ուր նորա հայրը պանդխտեցաւ, այսինքն Քանանացոց երկրում:

Սուրբ գրքից:

21. Որսորդական կեանք:

Արևելքում հովիւները միշտ զէնք ունին իրանց հետ թէ թափառելու ժամանակ և թէ հօտն արածելու ժամանակ: Նոքա իրանց անասունները վայրի գազաններից պէտք է պաշտպանեն: Բայց յատկապէս գազաններ որոնել ու սպանել՝ մէկ ուրիշ մարդկերանց զբաղմունքն է. այսինքն որսորդների: «Նեբրովթը հսկայ որսորդ էր Աստծոյ առաջ. Եսաւն էլ որսորդ էր և բացօթեայ կենում էր:»

Որսորդները շատ նեղութիւններ պէտք է կրեն, որովհետև հովիւների պէս վրաններ չունին և ոչ երկրագործների պէս

խուղեր, այլ անդադար չափում են սար ու ձոր, զառիվայր խոռոչներում և խաւար անտառներում են թափառում, թէ արեգակի կիզող ճառագայթների տակ և թէ ձմեռուայ սաստիկ ցրտին: Փոթորիկն ու անձրևը որսորդին արգելք չեն, որ նա իր զբաղմունքը դադարեցնէ: Այսպէս նա բրտանում և դիմացկուն է դառնում, իսկ նորա մարմինը աւելի և աւելի վարժուելով զօրեղանում է: Որսորդի կեանքը ոչ միայն չարչարանք է, այլ և միշտ երկիւղալի: Իրանց խիստ համարձակութեամբ՝ շատ անգամ նոքա վայրի գազաններին զոհ են լինում, որովհետև Քանանացոց անտառներում և շրջակայ երկիրներում ոչ միայն այծեամներ, նապաստակներ և ճագարներ կան, այլ և յովազներ, բորեններ, գայլեր և վագրեր կան: Անապատներում և արօտատեղիներում երևում են յամոյրներ և ջայլամներ, որոնց որսալու համար մեծ ճարպիկութիւն պէտք է բանեցնել: Որսորդը միշտ աստանդական կեանք վարելով և ամենայն տեսակ վտանգների հանդիպելով, աւելի բիրտ, խիստ, վայրի և կոպիտ է դառնում՝ քան հովիւը կամ երկրագործը:

22. Քանանացոց երկրից մինչև Եգիպտոս:

Թողնենք սիրուն հովիտը, ուր Հեբրոնն է, և գնանք հարաւային արևմուտք: Մեր ճանապարհը կը բռնենք մենք այն հովիտների միջով, որ այգիներով և անտառներով լիքն են: Մեր բռնած լեռնաշղթայի գլխից մինչև Բերսաբէէն դեռ դարձեալ երևում են ծաղիկներով զարդարած և արգաւանդ արօտները: Բերսաբէում կը յիշենք մենք այն ուխտը, որ Իսահակն ու Փղշտացոց արքայ Աբիմելէքը կապեցին: Այն տեղ վերջանում է Քանանացոց աշխարհը (Դանից մինչև Բերսաբէէ): Էլի շարունակելով մեր ճանապարհը կը հասնենք մի անապատ, որ տարածվում է դէպի արևմուտք: Նորա գետինը կրային է, աւազով և կայծքարով ծածկուած: Ցիր ու ցան եղած ոսկորները մեզ ցոյց կը տան ճանապարհը, որի վրայ որ ով գիտէ որքան պանդուխտ մարդիկ, որքան ուղտ իրանց շունչը փչել են:

Դեռ այսօր էլ վտանգաւոր է այդ կողմի ճանապարհորդութիւնը՝ անապատի մէջ թափառող բեդուինների պատճառով: Եթէ դէպի արևմուտք գնանք, մեր ետևը կը մնան մեզ յայտնի Սէիրի լեռները՝ Եդովմացոց աշխարհում, ուր Եսաւն էր բնակում: Հիւսիսում Գերարա և Գազա: Հարաւում հեռուից կերևան Սինայի լեռան գագաթները: Սա որձաքարի մի ահագին լեռն է, որ զետեղուած է եռանկիւնի ձևով Սինայի թերակղզու վրայ: Այս եռանկիւնը հարաւային արևմուտքից և հարաւային արևելքից սահմանուած է կարմիր ծովով: Մի քանի օր ճանապարհին նեղութիւններ կրելուց յետոյ՝ կը հասնենք աւելի գեղեցիկ և բարեբեր կողմերը: Գետինն աւելի պտղաբեր կը գտնենք, բուսականութիւնը աւելի հարուստ, անապատը երթալով մեր աչքից կանհետանայ արևելքում, և մենք վերջապէս կը հասնենք Գեսեմ երկիրը, Եգիպտոսի ամենապտղաբեր մասը:

23. Յովսէփի եղբայրները նորան ծախում են:

Յովսէփ տասնուեօթ տարեկան էր և եղբայրների հետ ի միասին ոչխար էր արածում. եղբայրները նորա մասին չար համբաւ էին բերում հօրը: Իսկ Յակոբը Յովսէփին առաւել սիրում էր քան միւս որդոց, և կարել տուեց նորա համար ծաղկեայ պատմուճան: Երբ որ եղբայրները տեսան թէ հայրը նորան առաւել էր սիրում, ատեցին նորան և էլ չէին կարողանում նորա հետ խաղաղութեամբ խօսել: Յովսէփը մի երազ տեսաւ և պատմեց եղբայրներին, որով նոքա աւելի ատեցին նորան: Նա ասաց նոցա. «Լսեցէք իմ տեսած երազը: Ինձ թւում էր թէ խուրձեր էինք կապում դաշտում. իմ խուրձը կանգնեց և ուղիղ կացաւ, իսկ ձեր խուրձերը դարձան և երկիր պագեցին իմ խուրձին:» Եղբայրները ասացին նորան.

«Միթէ մեր թագաւորը պիտի դառնաս և տիրես մեզ:» Եւ նոքա աւելի ատեցին նորան այս երազի համար:

Մէկ երազ էլ տեսաւ Յակոբը և պատմեց իր եղբայրներին և ասաց. «Ահա մի երազ ևս տեսայ, իբր թէ արեգակը, լուսինը և տասնումէկ աստղերը ինձ երկրպագում էին:»

Եւ երբ որ այս բանը իր հօրը և եղբայրներին պատմեց, սաստեց նորան հայրը և ասաց. «Այդ ի՞նչ երազ է: Միթէ ես, քո մայրը և քո եղբայրները պէտք է գանք և քեզ երկրպագե՞նք:»—Եղբայրներն սկսեցին նորա վրայ նախանձել, բայց հայրը սրտում պահեց նորա խօսքերը:

Մի օր եղբայրները Սիւքէմ գնացին իրանց հօր խաշները արածելու: Եւ Իսրայէլը ասաց Յովսէփին. «Գնա տես արդեօք ո՞ղջ են եղբայրներդ և համբաւ բեր ինձ:»—Եւ ուղարկեց նորան Քեբրոնի ձորձորից, և նա գնաց Սիւքէմի կողմը: Դաշտում մոլորուած մէկ մարդ գտաւ նորան մանգալիս և հարցրեց նորան և ասաց. «Ի՞նչ ես ման գալիս:»

Նա պատասխանեց. «Ես իմ եղբայրներին եմ ման գալիս. ասա ինձ թէ գիտես, ո՞ւր են արածեցնում նոքա:»

Մարդն ասաց. «Նոքա այստեղից հեռացան. և ես լսեցի որ նոքա ասացին, թէ գնանք Դովթայիմ:»—Յովսէփն էլ գնաց եղբայրների ետևից և գտաւ նոցա Դովթայիմի մէջ:

Երբ որ նոքա հեռուից նորան տեսան, ասացին միմեանց. «Ահա երազատեսը գալիս է: Եկէք սպանենք նորան և մէկ գբի մէջ ձգենք. և ասենք, թէ մի չար գազան նորան կերաւ. և տեսնենք թէ ինչպէս պէտք է կատարուին նորա երազները:»—Իսկ երբ Ռուբէնը այս լսեց, աշխատեց ազատել նորան նոցա ձեռքից և ասաց. «Չսպանենք նորան: Արիւն մի՛ թափէք, այլ ձգեցէք դորան այս անապատի գբերից մէկի մէջ և ձեռք մի՛ տաք նո-

րան։»—Բայց Ռուբէնը այս ասաց, որպէս զի Յովսէփին ազատէ և հօրը հասցնէ։

Եւ երբ որ Յովսէփը եղբայրներին մերձացաւ, նոքա հանեցին նորանից ծաղկեայ պատմուճանը և ձգեցին նորան մի գբի մէջ, որ այդ ժամանակ դատարկ էր և ջուր չկար մէջը։ Յետոյ նստեցին հաց ուտելու, և մէկ էլ աչքերը բարձրացուցին տեսան՝ որ Գաղաադի վաճառականները գալիս են իրանց ուղտերով, որոնց վրայ բարձած էին խունկ, ստաշխ և ռետին, և գնում էին Եգիպտոս։ Եւ ասաց Յուդան իր եղբայրներին. «Ի՞նչ օգուտ, եթէ մեր եղբօրը սպանենք։ Եկէք վաճառականներին ծախենք, և թող մեր ձեռքը չշաղախուի նորա արիւնով, որովհետև նա մեր եղբայրն է։»—Եւ նոքա լսեցին նորան։

Եւ երբ որ վաճառականները անցնում էին, հանեցին գբից Յովսէփին և քսան դահեկանով ծախեցին։ Եւ Ռուբէնը դարձաւ գուբը, բայց էլ Յովսէփին դրա մէջ չգտաւ. իր հանդերձը պատառեց, եկաւ եղբայրների մօտ և ասաց. «Պատանեակն այն տեղ չէ, այժմ ո՞ւր կորչիմ ես։»—Նոքա մի ուլ մորթեցին և առան Յովսէփի պատմուճանը ու թաթախեցին արեան մէջ. ծաղկեայ պատմուճանը ուղարկեցին հօրը և պատուիրեցին նորան ասելու. «Այս պատմուճանը գտանք. տես արդեօք քո որդու պատմուճանն է, թէ չէ։»—Նա իսկոյն ճանաչեց այն և ասաց. «Իմ որդուս պատմուճանն է այս. չար գազանն է նորան կերել. գազանը յափշտակել է Յովսէփին։» Պատառեց իր հանդերձները, սգի քուրձ հագաւ և երկար ժամանակ սուգ արաւ որդու վրայ։ Ժողովեցան նորա բոլոր որդիքը նորան մխիթարելու, բայց նա չէր մխիթարվում։

Սուրբ գրքից.

24. Նեղոս։

Նեղոսը երկու աղբրի վտակներից է գոյանում. առաջինը կապոյտ Նեղոսն է, իսկ արևմտեանը սպիտակ։ Առաջինը բղխում է Հաբեշստանի սարերից, որ այնպէս բարձր են ինչպէս մեր Կովկասը։ Սպիտակ Նեղոսը հոսում է ներքին Ափրիկէից, նորա աղբիւրները դեռ մինչև յայտնի չեն։ Այս երկու գետերը իրար հետ միանալուց յետոյ, գընում են դէպի հիւսիսային կողմը ու թափվում են ծովը։ Ձախ և աջ՝ լեռնաշղթաներ են ձգվում։ Նեղոսը մօտ իւր 300 մղոն երկայնութեան վրայ ոչ մի գետ չէ ընդունում իւր մէջ։ Քանի որ ծովին մօտենում է, այնքան լեռները երթալով տափանում ու անյայտանում են, ու ինքը շատ ճիւղերի է բաժանվում, որոնք պատ պատ թափվում են ծովը. բայց թափուելուց առաջ մի եռանկիւն են կազմում, որ կոչվում է դելտա։

Նեղոսը մէկ և կէս անգամ աւելի երկայն է Եփրատից, երկու և կէս անգամ Տիգրիսից և վեց անգամ երկայն քան Քուրը և նոյնպէս վեց անգամ երկայն քան Երասխը։

Իւր շուրջն եղող աշխարհների համար նա նշանաւոր և օրհնաբեր է, մանաւանդ իր յորդութեանց ժամանակ։ Երբ որ ներքին Ափրիկէի մէջ անձրև տեղալու ժամանակը գալիս է, Նեղոսի ջուրը յորդանում է (ամենայն տարի Յունիսի վերջին և Յուլիսի սկզբին) և բոլոր երկիրը իր ափերի շուրջ ծածկում է։ Երբ որ նորա ջուրը դարձեալ պակասում է, նա դաշտի վրայ թողնում է տիղմ, ուր մարդիկ ցանք են անում, և շուտով ամենայն տեղ հասկերով ծածկվում է։ Եւ այսպէս ուրեմն Նեղոսի երկիրները իսկապէս ցորենի ամբարներ են արևելքի համար։

25. Յովսէփ Եգիպտոսում։

1. Վաճառականները Յովսէփին ծախեցին Եգիպտոսում Պետափրէսին, որ փարաւոնի ներքինին էր և դահճապետը։ Եւ

Աստուած Յովսէփին օգնական էր, այնպէս որ նորան ամենայն բան յաջողվում էր, քանի Եգիպտացի տիրոջ տանն էր: Այս տեսնում էր և նորա տէրը, և նա շնորհ գտաւ իր տիրոջ առաջ, այնպէս որ նորա աւագ ծառան դարձաւ. տէրը նորան տան վերակացու կարգեց և ամենայն բան, ինչ որ իրն էր, յանձնեց Յովսէփին: Եւ օրհնեց Աստուած Եգիպտացու տունը Յովսէփի համար, և Աստուծոյ օրհնութիւնը տարածուեցաւ նորա բոլոր ընչերի վրայ թէ տանը և թէ դաշտումը: Ահա այսպէս Պետափրէսը ամենայն բան թողուց Յովսէփի ձեռին, և ոչինչ բանի հոգ չունէր, թէ ինչ կար կամ ինչ էր կատարվում տան մէջ. բայց միայն գիտէր այն կերակուրները, որ ուտում էր:

Յովսէփը ազնիւ երես և գեղեցիկ տեսք ունէր և մի օր Պետափրէսի կինը աչք ձգեց նորա վրայ, սիրեց նորան և կամենում էր նորա հետ փախչել: Բայց նա չէր համաձայնում և ասաց. «Ես ի՞նչպէս այդ մեծ չարութիւնը գործեմ և մեղանչեմ Աստուծոյ առաջ:»

Իսկ կինը միշտ կրկնում էր նոյնը, բայց նա դարձեալ չէր լսում նորան: Մի օր էլ Յովսէփը տուն մտաւ որ իր սովորական տնտեսական գործքը կատարէ. տանեցիներից ոչ ոք չկար. և կինը բռնեց նորա վերարկուից որ նորան պահէ: Բայց նա թողեց վերարկուն նորա ձեռքը ու ինքը փախաւ: Կինը շատ բարկացաւ և կանչեց տան ծառաներին և ասաց. «Տեսէք, Պետափրէսը մեր տունը մի եբրայեցի ծառայ բերեց մեզ խայտառակելու: Նա եկաւ ինձ մօտ և յորդորում էր որ հետը փախչեմ. իսկ երբ որ բարձր աղաղակեցի ու փէշից բռնեցի՝ երկիւղից թողեց իւր ձորձն իմ ձեռքս ու փախաւ:»

Եւ պահեց ձորձը մինչև որ տէրը տուն եկաւ, և նոյն խօսքերը նորան ևս ասաց. «Քո բերած եբրայեցի ծառան մըտաւ ինձ մօտ և ստիպում էր որ հետը փախչեմ: Իսկ ես երբ որ աղաղակեցի, նա թողեց իր վերարկուն ինձ մօտ և փախաւ:»

Եւ երբ որ տէրը իր կնոջ խօսքերը լսեց՝ շատ բարկացաւ. ու առաւ Յովսէփին բանտը դրեց, ուր արքունի կալանաւորներն էին կապուած: Բայց Աստուած Յովսէփին օգնական էր. բանտապետի քաղցր աչքը նորա վրայ դարձրեց, այնպէս որ բանտապետը Յովսէփի ձեռքը յանձնեց բոլոր կալանաւորներին և այն տեղի բոլոր գործքերը նորան էր կատարել տալիս: Եւ բանտապետն էլ ոչինչ հոգս չունէր, որովհետև Աստուած Յովսէփի հետ էր և բոլոր Յովսէփի արածը լաւ յաջողեցնում էր:

2. Այս բաներից յետոյ մի օր եգիպտացոց Թագաւորի տակառապետը և մատակարարը իրանց տիրոջ՝ այսինքն Թագաւորի առաջ յանցանք գործեցին: Եւ փարաւոնը բարկացաւ իր այդ երկու ներքինիների վրայ և հրամայեց բանտ դնել նոցա դահճապետի մօտ, այն բանտը՝ ուր Յովսէփն էր բանտարկուած: Բանտապետը նոցա Յովսէփին յանձնեց որ նոցա սպասաւորէ. և նոքա մի քանի օր այն տեղ էին: Եւ երկուսն էլ, այսինքն Թագաւորի տակառապետն ու մատակարարը, երազ տեսան միևնոյն գիշերը: Առաւօտը երբ որ Յովսէփը մտաւ նոցա մօտ և տեսաւ որ տխուր էին, հարցրեց նոցա և ասաց. «Ձեր երեսն ինչո՞ւ է տրտում այսօր:»

Նոքա պատասխանեցին: «Երազ տեսանք, և ոչ ոք չկայ որ մեզ մեկնէ:»

Յովսէփն ասաց. «Մեկնութիւնը Աստուծոյ ձեռին է. բայց պատմեցէք ինձ:»

Նախ տակառապետը պատմեց Յովսէփին և ասաց. «Ես տեսայ երազում իմ առաջ մի որթ, և որթի վրայ երեք ուռ, որ դեռ կանաչ էին, բայց յանկարծ ծաղկեցաւ և խաղողի ողկոյզները հասան: Եւ ես ձեռիս ունէի փարաւոնի բաժակը, առնում էի խաղողը և ճմլում էի բաժակի մէջ և տալիս էի բաժակը փարաւոն ձեռքը:»

Յովսէփն ասաց նորան. «Այս է դորա մեկնութիւնը. Երեք

ուռը երեք օր է: Երեք օրից յետոյ փարաւոնը կը յիշէ քո իշխանութիւնը և յետ կը դարձնէ քեզ քո պաշտօնը, որ առաջուայ պէս փարաւոնի բաժակը իր ձեռքը տաս: Եւ երբ որ յաջողութեան մէջ լինիս, դու էլ ինձ յիշիր, ողորմութիւն արա և փարաւոնի առաջ բարեխօսիր, որ ինձ այս բանտից հանէ: Ինձ գողանալով բերին եբրայեցոց երկրից, այս տեղ էլ ոչինչ յանցանք չգործեցի, և վերջապէս բանտը ձգել են ինձ:»

Երբ մատակարարը տեսաւ որ լաւ մեկնութիւն տուեց, ասաց Յովսէփին. «Ես էլ երազ տեսայ, և թուեցաւ ինձ իբր թէ գլխիս երեք սպիտակ կողով ունէի և վերևի կողովում կային ամենայն տեսակ թխած բաներ փարաւոնի համար, և թռչուններն այդ ուտում էին գլխիս վրայ եղած կողովներից:»

Յովսէփը պատասխանեց և ասաց. «Այս է մեկնութիւնը. երեք կողովը երեք օր է. և երեք օրից յետոյ փարաւոնը քո գլուխը կը վերցնէ վրայից և կախ կը տայ քեզ փայտի վրայ, և թռչունները քո միսը կ'ուտեն:»

Եւ երրորդ օրը փարաւոնի ծննդեան օրն էր, նա իր բոլոր ծառաներին ուրախութեան հաց տուեց. և յիշեց իր ծառաների մէջ տակառապետի և մատակարարի իշխանութիւնը: Եւ տակառապետին յետ դարձրեց իր պաշտօնը, որ իրան բաժակ տայ, իսկ մատակարարին կախ տալ տուեց փայտի վրայ, ինչպէս որ Յովսէփը մեկնել էր:

Սակայն տակառապետը Յովսէփին էլ չյիշեց և մոռացաւ նորան:

3. Երկու տարուց յետոյ փարաւոնն էլ երազ տեսաւ. Նորան երևեցաւ իբր թէ կանգնած էր Նեղոս գետի ափին և ջրից դուրս էին գալիս եօթը գեղեցիկ, գէր, ընտիր երինջներ և գնացին ճահճի խոտի մէջ արածելու: Ապա այլ ևս եօթ երինջներ ջրից դուրս եկան, որ գէշ և վտիտ էին, և գնացին

գետի ափը առաջուայ երինջների մօտ: Գէշ և վտիտ երինջները կերան եօթը գեղեցիկ և գէր երինջներին: Այդ ժամանակ զարթեցաւ փարաւոնը:

Յետոյ դարձեալ քնեցաւ և դարձեալ երազ տեսաւ, և ահա եօթը լիք և խնկադոյն հասկեր աճում էին մէկ փնջի վրայ: Յետոյ տեսաւ որ եօթը բարակ և խորշակից (հարաւային տաք քամի) զարկուած հասկեր ծլում էին նոցա ետևից: Եւ եօթը բարակ և խորշակից զարկուած հասկերը կլանում էին եօթը լիք և խնկադոյն հասկերը: Եւ զարթեց փարաւոնը և տեսաւ որ երազ է:

Առաւօտուն նա շատ տրտում էր. մարդիկ ուղարկեց և կանչել տուեց Եգիպտոսի բոլոր երազահաններին և իմաստուններին և պատմեց նոցա իր երազը. բայց մարդ չգտնուեցաւ որ այդ մեկնէր իրան:

Այն ժամանակ յանկարծ տակառապետի միտքն ընկաւ Յովսէփը. խօսք բաց արաւ և ասաց թագաւորին. «Երբ որ փարաւոնը մեր վրայ բարկացաւ և ինձ մատակարարին հետ միասին բանտը ձգել տուեց դահճապետի տունը, այն ժամանակ մենք երկուսս միևնոյն գիշերը երազ տեսանք, և մեր երազները մեծ նշանակութիւն ունէին ամեն մէկիս համար: Բանտում մեզ հետ նաև մի եբրայեցի պատանի կար, նորան պատմեցինք, և նա մեր երազները մեկնեց մեզ, ամեն մէկի տեսածին համեմատ: Եւ ինչպէս որ մեկնեց, այնպէս էլ կատարուեցաւ. ես վերստին ստացայ իմ իշխանութիւնը, նա կախուեցաւ փայտի վրայ:»

Փարաւոնն ուղարկեց և Յովսէփին կանչել տուեց: Հանեցին նորան բանտից, մազերը խուզեցին, փոխեցին շորերը, և մտաւ փարաւոնի մօտ: Եւ փարաւոնն ասաց նորան. «Ես երազ տեսայ, բայց մարդ չկայ որ մեկնէ ինձ: Իսկ քեզ համար լսել եմ, որ դու գիտես երազ մեկնել:»

Յովսէփը պատասխանեց և ասաց. «Այդ ինձանից կախուած չէ: Աստուած կը պատասխանէ, թէ փարաւոնի փրկութիւն ինչ է:»

Փարաւոնն ասաց Յովսէփին. «Երազ տեսայ, իբր թէ Նեղոս գետի ափին էի կանգնած և ջրից ելնում էին եօթը գէր և գեղեցիկ երինջներ, և գնում էին ճահճի խոտի մէջ արածելու: Ապա այլ եօթը լղար, շատ գէշ և վտիտ երինջներ դուրս եկան. ամբողջ Եգիպտոսում այդքան գէշ կենդանիներ չէի տեսել: Եօթ լղար ու գէշ երինջները կերան առաջին եօթ գէր և գեղեցիկ երինջները և ուտելուց յետոյ էլ չէր երեւում նոցա փորից թէ բան են կերել և առաջուայ պէս էլի գէշ էին երեւում: Այդ ժամանակ զարթեցայ:—Յետոյ միւս անգամ երազ տեսայ, որպէս թէ եօթը լիք և գեղեցիկ հասկեր մի փնջի վրայ աճում էին: Յետոյ նոցա մօտ ծլում էին եօթն ապականած, նուազ և խորշակից զարկուած հասկեր: Եւ եօթը նուազ հասկերը կուլ տուին եօթն ատոք հասկերը: Այս բանը արդէն պատմեցի երազահաններին, բայց նոքա չեն կարողանում մեկնել:»

Յովսէփն ասաց. «Փարաւոնի երկու երազն էլ մէկ է: Ինչ որ Աստուած անելու է փարաւոնին ցոյց է տալիս: Եօթը գեղեցիկ երինջները եօթը տարի են, և եօթը գեղեցիկ հասկեր նոյնպէս եօթը տարի են: Երազը միևնոյն է: Եօթը տգեղ և վտիտ երինջները, որ նոցանից յետոյ դուրս եկան, և եօթը սին և խորշակահար հասկերը սովի եօթը տարի են: Ահա այս է իմ ասածը թէ՛ Աստուած փարաւոնին ցոյց է տալիս իր անելիքը: Ահա եօթը տարիներ կու գան, ուր ամենայն Եգիպտոսում մեծ լիութիւն կը լինի: Յետոյ կու գան եօթը սաստիկ սովի տարիներ, ուր լիութիւնը իսպառ կը մոռացուի և սովը տագնապի մէջ կը ձգէ երկիրը: Այլ թէ փարաւոնը երկու անգամ երազեց, այդ նշանակում է, թէ Աստուծոյ ցոյցը ճշմարիտ է և Նա շուտով կը կատարէ այդ: Իսկ այժմ թող թագաւորը իրան

խորհրդական ընտրէ մի իմաստուն մարդ և նորան վերակացու կարգէ Եգիպտացոց երկրի վրայ և գործակալներ նշանակէ երկրի վրայ և արմտիքների հինգերորդ մասը պահանջէ Եգիպտացոց երկրում եօթն լիութեան տարիների ժամանակ: Թող յաջողակ տարիների բոլոր պտուղները ժողովեն և ցորեանը լցնեն փարաւոնի շտեմարանները և պաշարները քաղաքներում պահեն, որպէս զի պաշարը պահուի եօթն սովի տարիների համար և որպէս զի երկիրը սովից չկորչի:»

Այս խօսքերին շատ հաւանեցան փարաւոնը և բոլոր նորա ծառաները: Եւ նա ասաց իր ծառաներին. «Միթէ կը գտնե՞նք սորա պէս մի մարդ, որ Աստուծոյ հոգի ունենայ իր անձի մէջ:»—Եւ ասաց Յովսէփին. «Որովհետև այդ բոլորը Աստուած քեզ ցոյց տուեց, ապա ուրեմն քեզանից աւելի իմաստուն, խոհական և հասկացող մարդ չկայ: Քեզ եմ կարգում իմ տան վրայ և քո խօսքիդ պէտք է հնազանդի իմ բոլոր ժողովուրդը: Ես քեզանից բարձր կը լինիմ միայն աթոռովս: Ահա ես քեզ այսօր կարգում եմ Եգիպտացոց երկրիս վրայ:» Եւ փարաւոնը մատանին հանելով իւր մատից, դրեց Յովսէփի մատը, հագցրեց նորան բեհեզեայ պատմուճան և ոսկեայ մանեակ կախեց նորա պարանոցը: Նստեցրեց նորան իր երկրորդ կառքի մէջ, և նորա առջևից քարոզը կանչում էր. «Երկրպագեցէք, սա է երկրի հայրը:» Եւ նորան կարգեց Եգիպտացոց երկրի վրայ:

Եւ թագաւորն ասաց Յովսէփին. «Ահաւասիկ ես փարաւոն. առանց քո հրամանիդ ոչ ոք ձեռք կամ ոտք պիտի չբարձրացնէ բոլոր Եգիպտացոց երկրի վրայ:» Եւ Յովսէփին պատուեց Կ ե ն ս ա տ ո ւ անունով, որ Եգիպտացոց լեզուով ասել է փսոմփթոմփանէ. և Արեգ քաղաքի քրմի դուստր Ասանէթին կնութեան տուեց նորան:

Այսպէս եղաւ Յովսէփ բոլոր Եգիպտոսը շրջելու: Երեսուն տարեկան էր Յովսէփը՝ երբ որ փարաւոնի առաջ եղաւ: Երկիրը

եօթը լիութեան տարիներին չափազանց բարեբեր եղաւ. և լիութեան եօթը տարիներում ժողովեց նա բոլոր պտուղները և համբարեց քաղաքներում. ինչ պտուղ որ ամեն քաղաքի շուրջը եղող դաշտերում բուսնում էր՝ բոլորը ժողովեց: Եւ Յովսէփը ցորենը ժողովեց ծովի աւազի պէս խիստ շատ, մինչև որ էլ դադարեց համարել, որովհետև թիւ չկար:

Եւ Յովսէփը ծնաւ երկու որդի, սովի ժամանակից առաջ, և կոչեց նոցա անունը՝ մէկինը Մանասէ և միւսինը Եփրեմ:

Եւ երբ որ եօթը լիութեան տարիները անցան Եգիպտացոց աշխարհից, սկսեցին եօթն սովի տարիները գալ, ինչպէս որ Յովսէփը գուշակեց: Եւ սովը տարածուեցաւ աշխարհքիս բոլոր երկիրները, բայց Եգիպտոսում ամբարուած հաց կար: Եւ որովհետև Եգիպտոսն էլ սովացաւ, ժողովուրդը աղաղակեց փարաւոնին հացի համար: Բայց փարաւոնը ամենայն Եգիպտացու ասում էր. «Գնացէք Յովսէփի մօտ և ինչ որ ասէ՝ այն արէք:» Յովսէփը բաց արեց ցորենի շտեմարանները և վաճառեց Եգիպտացիներին ցորեն, որովհետև սովն աւելի սաստկանում էր: Ամենայն աշխարհք գալիս էին Եգիպտոս Յովսէփից ցորեն գնելու, որովհետև ամենայն տեղ սովը զօրանում էր:

Սուրբ գրքից:

26. Երկրագործութիւն:

Որսորդը անտառներում թափառում է, հովիւը մէկ արօտից միւսն է քշվում, երկուսն էլ համարեա միշտ իրանց հանգստութեան տեղը փոխում են. այսպէս չէ երկրագործը: Սա երկար տարիներ բնակում է միևնոյն տեղը, ունի իր տունն ու արտը, մարգն ու այգին: Եւ ամենայն համբերութեամբ պէտք է աշխատէ, որպէս զի իր քրտնքի պտուղը վայելէ:

Տեսնենք մեր դրացի աշխարհների երկրագործի վաստակը տարուայ զանազան ժամանակներին: Գարնանը նա դաշտում վարուցանք է անում, որ փետրվարին է սկսվում, այսինքն աւելի վաղ քան թէ մեզանում: Մարտին առատ անձրևներով ցորենը արագ արագ բուսնում և շուտով հասնում է: Ամառը գրեթէ անձրև չէ գալիս, միայն գիշերուայ ցօղը պէտք է զովացնէ բոյսերը: Այս պատճառով Իսահակն էլ իր որդի Յակոբին այս խօսքերն ասելով՝ օրհնեց. «Աստուած տայ քեզ երկնքի ցօղից:» Ապրիլին և Մայիսի առաջին կիսին ցանքը հնձվում է: Մի կողմից գերանդաւորը քաղում թափում է որանը, հետևից փնջխաւորը փնջխում է, և միւս կողմից խրձնաւորը խուրձ կապում ու տանում, բարդում է: Քաղից յետոյ կալոցն է գալիս. որանի սայլերով բերում են ցորենը ու դիզում են կալերում: Նահապետների ժամանակ կամնելու համար ցորենը կամ ծեծում էին զաւազաններով կամ եզների ոտի տակ կոխոտում էին ու որան մանրում, ապա թեղում էին: Թեղն էլ էրնում էին (քամու էին տալիս), որպէս զի հատիկները յարդից բաժանուէին: Ցորենը աղացվում էր ձեռքի աղօրիքով, որ ծառաները կամ աղախինները պտտեցնում էին: Ձեռքի աղօրիքը շատ պարզ էր և նոյն էր՝ ինչով որ մենք այժմ աղ ենք աղում: Նա բաղկացած է մէկ բոլորակ քարից՝ ներքին երկանից, որ անշարժ կայ, և նորա նման՝ բայց մէջ տեղը ծակած մէկ ուրիշ քարից՝ վերին երկանից, որը վերին երեսի վրայ մէկ կողքին՝ չիտակ զարկուած կոթ ունի բռնելու և նորանով ներքին երկանի միջի ալքի վրայ հագցրած վերին երկանը պտտեցնելու համար: Ցորենը հնձելուց յետոյ քաղում են մրգեղէնը և ապա կթում են խաղողը: Սեպտեմբերին վերստին անձրև է գալիս և այդ ամսի սկզբին սկսվում է աշնան ցանքը: Ձմեռն երկրագործը հանգիստ է առնում աշխատանքից ու իր ոյժերը կազդուրում է գալ գարնան աշխատանքի համար. բայց եթէ արօրն ու միւս գործիքները կարկատելու են, նա ձմեռն էլ անգործ չէ մնում:

Այսպէս մենք տեսնում ենք որ երկրագործը անդադար պէտք է աշխատի, որպէս զի հաց ուտէ: Բայց նա գիտէ՝ որ իզուր են նորա աշխատանքները, եթէ Աստուած իր օրհնութիւնը չտայ: Ուստի ստէպ աղօթում է և գոհութիւն է մատուցանում նորան նորա ողորմութեանց համար: Նահապետ-

ները այս բանը ոչ միայն աղօթքով, այլ և զոհերով էին կատարում. «Երբ որ տարին վերջանում էր, դաշտի արմտիքիցը ընծայ էին մատուցանում Աստծուն:»

Մեր պատմածների մէջ հանդիսացող մարդիկն և ոչ միայն հովուութեամբ, այլ և երկրագործութեամբ պարապում էին: Արդէն Աբրահամը ագարակ ձեռք բերեց, բայց լոկ միայն իր ազգականներին թաղելու համար. իսկ Իսահակը ցանեց Գերարա երկրում և հարիւրապատիկ հնձեց: Երբ որ նա Յակոբին օրհնեց, ասաց. «Աստուած տայ քեզ երկնքի ցօղից և երկրի պարարտութիւնից և ցորենի ու գինու առատութիւնը:» Եսաւն որսորդ և երկրագործ էր:

Երկրագործութիւնը առելի ծաղկած էր Եգիպտոսում: Բայց այն տեղի բնակիչները հարկաւորութիւն չունէին այնքան աշխատել և չարչարուել, ինչպէս որ ուրիշ երկրներում: Երբ որ Նեղոսը իր յորդութիւնը պակասեցնում և մտնում է իր տաշտը, նոքա ցանում են ցորենը, և շուտով ամենայն տեղ ցանքը ծլում է: Կարճ միջոցում հասնում է արեգակի կիզող ճառագայթների տակ: Հունձն այնքան առատ է լինում՝ որ Եգիպտոսը ոչ միայն իրան, այլ և բոլոր շրջակայ երկիրները կերակրել կարող է: Նա եղել է և է արևելքի շտեմարանը:

27. Եգիպտոս:

Նեղոսի ներքին մասը կոչւում է Եգիպտոս: Պտղաւէտ է Նեղոսի հովիտը, որ միայն մի քանի ժամ լայնութիւն ունի: Այս հովիտը արևմուտքից և արևելքից պատուած է լեռնաշղթաներով: Արևմտեանը տարածւում է մինչև Աֆրիկէի մեծ անապատը. արևելեանը ձգւում է մինչև Կարմիր ծովը: Նեղոսի դելտայի մօտ լեռնաշղթաները միմեանցից շատ հեռացած են, և Եգիպտոսի պտղաւէտ երկիրը այստեղ մեծանում և դառնում է մի ընդարձակ դաշտավայր: Նեղոսի աջ ափի վրայ եղած մասը կոչւում էր Գեսեմ:

Եգիպտոսի բոլոր քաղաքները Նեղոսի ափերումն են շինած: Նոքա առելի բազմաթիւ և մեծ են քան Քանանացոց քաղաքները. ամեն մէկ քաղաքից մինչև միւս քաղաքը կան նաև մեծ քանակութեամբ գիւղեր: Բոլոր այս բնակու-

թեան տեղերը շինուած են բնական կամ արուեստական բարձրադիր բլուրների վրայ, որպէս զի ջրի յորդութեանց ժամանակ դարձեալ ջրից վեր մնան: Հին ժամանակներում շատ քաղաքներ միլիոնի չափ ժողովուրդ են ունեցել: Տները բազմայարկանի էին, քաղաքի պարսպներից վեր բարձրանում էին բարձր աշտարակներ: Տաճարները աղիւսից շինած որմեր ունէին: Որմի մէկ կողմը մուտքն էր, որի առաջ գրեթէ ամեն տեղ կանգնած էին հսկայական արձաններ, որ շատ անգամ մէկ ժայռի կտորից շինուած սիւներ էին, և որ օբելիսկ (կոթող) էին կոչւում: Մուտքի առաջ երկու կողմից ամբառնում էին աշտարակաձև շէնքեր: Գլխաւոր մուտքից (մեհենի դռնից) մինչև խնկական բագինը ճանապարհի երկու կողմից շարուած էին լինում սֆինքսներ, այսինքն արձաններ առիւծի մարմնով և մարդու գլխով: Բագինը զարդարուած էր լինում սիւներով, նկարներով և հիերօգլիֆով (Եգիպտացոց սրբագրերով): Նոյնպէս զարդարուած էին լինում ապառաժի շիրիմների պատերը: Այս շիրիմները ոչ թէ բնական այրեր էին, ինչպէս որ Քանանացոց երկրումն էին, այլ գերեզմաններ՝ շատ յարկերից բաղկացած, արուեստական ձեռքով շինուած: Շիրմի պատերի վրայ փորագրած պատկերները նկարագրում էին հանգուցեալների գործքերը: Թագաւորները թաղւում էին բրգերում: Սոքա լեռնաբերձ բարձրութեամբ կոփածոյ քարից էին շինվում: Ամենաբարձրը չորսհարիւր յիսուն ոտնաչափ բարձր էր (Տփխիսի Մթածմինդի բարձրութիւնը): Բրգերի ներս մի փոքր խուց կար, ուր դրվում էին թագաւորների դագաղները:

Եգիպտոսի օդը շատ տաք ու չոր է: Գրեթէ անձրև չէ գալիս: Խորշակները բոյսերը փչացնում են և շատ անգամ հետները են փչում բերում անապատի աւազը: Երկիրը բոլորովին անպտուղ կը լինէր, եթէ ամենայն տարի Նեղոսը չ'ուռչէր: Իսկ սա գետինը ջրում է և ծածկում է տղմով: Եւ որպէս զի նորա յորդութիւնը շատ տեղ տարածուի, շինուած էին արուեստական ջրանցքներ և աւազաններ: Երբ որ գետը յետ էր քաշվում՝ աճում և ծաղկում էին բոյսերը շատ և առատութեամբ: Ուստի Եգիպտոսը «նախ աւազի անապատ, ապա քաղցր ծով, և ապա բուրաստան» էր:

28. Սովի տառապանքը, եղբարց ճանաչումը, Եգիպտոս գաղթուիլը։

1. Եւ երբ որ Յակոբը լսեց թէ Եգիպտոսում ցորեն է վաճառւում, իր որդոց ասաց. «ի՞նչ էք ծանր շարժւում, ահա լսում եմ որ Եգիպտոսում ցորեն կայ. իջէք այն տեղ, գնեցէք մեզ կերակուր, որ ապրենք և չմեռնենք:» — Եւ իջան Յովսէփի տասը եղբայրները: Յակոբը Յովսէփի հարազատ եղբօր Բենիամինին չարձակեց որ նոցա հետ գնայ, երկիւղ ունենալով թէ մի գուցէ նորան մի փորձանք պատահի: Եւ այսպէս Իսրայէլի որդիքը եկան ուրիշ շատ եկողների հետ ցորեն գնելու, որովհետև Քանանացոց երկրում սով էր:

Յովսէփը երկրի իշխան էր, և նա էր ծախում ցորենը բոլոր ժողովրդին: Եւ երբ որ եղբայրներն էլ եկան ու խոնարհ երկրպագեցին նորան, Յովսէփը նոցա տեսաւ ու ճանաչեց: Բայց ծանօթութիւն չտուեց նոցա, խիստ խօսեց նոցա հետ և ասաց. «Ո՞ր տեղից էք գալիս:»

Նոքա պատասխանեցին. «Քանանացոց երկրից, կերակուր գնելու համար:» — Թէ և նա գիտէր թէ ովքեր են նոքա, բայց նոքա չճանաչեցին նորան: Եւ յիշեց Յովսէփն իր հին երազները թէ ինչպէս եղբայրներն իրան երկրպագութիւն պիտի անէին և ասաց նոցա. «Լրտես էք դուք և եկել էք միայն մեր աշխարհքի ել ու մուտքը իմանալու:»

Նոքա պատասխանեցին. «Ոչ, տէր, ծառաներս եկել ենք կերակուր գնելու: Մենք ամենքս մէկ մարդու որդիք ենք. մենք խաղաղութեան մարդիկ ենք և քո ծառաները լրտես չեն:»

Եւ ասաց նա նոցա. «Ոչ, դուք եկել էք երկրի ել ու մուտքը տեսնելու:»

Նոքա պատասխանեցին. «Մենք, քո ծառաները, տասներ-

կու եղբայր ենք, մէկ Քանանացի մարդու որդիք, և կրտսերը հօր մօտ մնաց, իսկ միւսը էլ չկայ:»

Յովսէփն ասաց նոցա. «Ինչպէս ասացի ձեզ, այնպէս է. լրտես էք դուք: Եւ ես պէտք է ձեզ փորձեմ. փարաւոնի արևով եմ երդվում, որ այս տեղից չէք գնալ, մինչև ձեր կրտսեր եղբօրը չբերէք: Ձեզանից մէկին ուղարկեցէք, որ նորան բերէ այս տեղ, իսկ դուք կացէք զնդանի մէջ, մինչև յայտնուի ճշմարի՞տ էք խօսում թէ սուտ: Եթէ ձեր ասածը սուտ լինի, ապա ուրեմն փարաւոնի արևով երդվում եմ՝ թէ դուք լրտեսներ էք:» — Եւ միասին բանտի մէջ պահել տուեց նոցա երեք օրով:

Երրորդ օրը ասաց նոցա. «Եթէ ապրել էք ուզում, այս արէք. որովհետև և ես Աստծուց երկիւղ ունիմ: — Եթէ դուք խաղաղ մարդիկ էք, ձեզանից մէկին թողէք այս տեղ բանտում, իսկ դուք գնացէք և տարէք ցորենը, որքան որ այժմ ձեր ազգի կարօտն է: Եւ ապա ձեր կրտսեր եղբօրը բերէք ինձ մօտ, որ ձեր խօսքը հաստատուի: Այն ժամանակ կը հաւատամ ձեր խօսքին, և դուք չէք մեռնի:»

Նոքա իրանց մէջ խօսեցան. «Ահա մեր մեղքը, որ մեղանչեցինք մեր եղբօրը, կատարվում է մեր վրայ: Մենք նորա հոգու նեղութիւնը տեսանք, երբ որ նա մեզ աղաչում էր, և մենք արհամարհեցինք ու չլսեցինք նորան: Այս է պատճառը, որ մենք այժմ նեղութիւն ենք կրում:

Ռուբէնը պատասխանեց նոցա և ասաց. «Ձասացի՞ ձեզ, թէ այդ մանուկի դէմ մեղք մի գործէք: Եւ դուք չուզեցաք լսել: Եւ ահա այժմ նորա արիւնն է պահանջվում:»

Բայց նոքա չգիտէին թէ Յովսէփը հասկանում է, որովհետև նա նոցա հետ թարգմանչի բերանով էր խօսում: Եւ նա երեսը միւս կողմը դարձրեց և լաց եղաւ. յետոյ դարձաւ նոցա մօտ միւս անգամ, խօսեց նոցա հետ և առաւ նոցանից

Շմաւոնին և կապեց նորան նոցա առաջ: Եւ Յովսէփը հրամայեց որ նոցա պարկերը ցորենով լցնեն և նոցա դրամը իրանց վերադարձնեն, ամեն մէկինը իր պարկի մէջ դնելով, և որ պաշար տան նոցա ճանապարհի համար: Եւ այդպէս կատարեցին:

Իսկ նոքա ցորենը էշերի վրայ բառնալով՝ գնացին: Նոցանից մէկը պարկը բաց արաւ իջեւանում՝ գրաստին կերակուր տալու համար և տեսաւ իր արծաթի ծրարը պարկի մէջ: Եւ ասաց եղբայրներին. «Իմ փողը դարձեալ այս տեղ գտնուեցաւ իմ պարկում:» Նոքա վախեցան և ասացին միմեանց. «Այս ի՞նչ փորձանք է բերում Աստուած մեր գլխին:»

Երբ որ եկան Քանանացոց երկիրը իրանց հօր մօտ, պատմեցին նորան բոլոր անցքը և ասացին. «Այն մարդը, որ երկրի իշխան է, խստութեամբ խօսեց մեզ հետ և մեզ բռնում պահեց որպէս լրտեսներ: Բայց մենք պատասխանեցինք. «Մենք խաղաղ մարդիկ ենք, մենք լրտեսներ չենք, այլ տասներկու եղբայրներ, մեր հօր որդիքը, մէկն այլեւս չկայ, իսկ կրտսերը այժմ մեր հօր մօտ է Քանանացոց աշխարհում:» Եւ երկրի իշխանն ասաց մեզ. «Սորանով կ'իմանամ թէ խաղաղ մարդիկ էք, եթէ ձեր մէկ եղբօրը ինձ մօտ թողնէք, ցորենը տանէք ձեր տան կարօտութեան համար և յետ գաք ձեր կրտսեր եղբօրը ինձ մօտ բերէք. այսպէս կ'իմանամ, թէ լրտես չէք, այլ խաղաղ մարդիկ էք: Այն ժամանակ այս ձեր եղբօրն էլ յետ կտամ ձեզ, և դուք կարող կը լինիք այս երկրում վաճառ անել:»

Եւ երբ որ իրանց պարկերը դատարկում էին, նոցանից ամեն մէկը իր արծաթի ծրարը իր պարկի մէջ գտաւ. այս տեսնելով, նոքա և հայրը շատ վախեցան: Եւ ասաց նոցա հայր Յակոբը. «Դուք ինձ անորդի էք անում. Յովսէփն էլ

չկայ, Շմաւոնը կորաւ և Բենիամինին էլ ուզում էք տանել. այս բոլորը իմ գլխին է թափվում:»

Պատասխանեց Ռուբենն և ասաց. «Իմ երկու որդկերանց սպանիր, եթէ դորան քեզ չդարձնեմ: Դու իմ ձեռքն յանձնիր դորան, և ես քեզ կը դարձնեմ:»

Նա ասաց. «Իմ որդին ձեզ հետ չի իջնի. որովհետև որա եղբայրը մեռաւ, և միայն սա է մնացել. եթէ սա ձեր գնացած ճանապարհին հիւանդանայ, դուք իմ ծերութիւնը տրամութեամբ մահուան կը հասցնէք:»

2. Բայց սովը աւելի և աւելի սաստկանում էր երկրի վրայ, և երբ որ Եգիպտոսից բերած ցորենը սպառեցաւ, հայրն ասաց նոցա. «Գնացէք դարձեալ կերակուր գնելու:»

Պատասխանեց Յուդան և ասաց. «Այն մարդը մի քանի անգամ սաստեց մեզ և ասաց.—չտեսնէք իմ երեսը, եթէ ձեր կրտսեր եղբայրը ձեզ հետ չլինի:—Արդ եթէ մեզ հետ կ'արձակես մեր կրտսեր եղբօրը, մենք կ'իջնենք և կերակուր կ'առնենք: Իսկ եթէ չես արձակի, մենք էլ չենք իջնի: Որովհետև այն մարդն ասաց. «Իմ երեսը չէք տեսնի, եթէ ձեր կրտսեր եղբայրը ձեզ հետ չլինի:»

Յակոբն ասաց. «Ինչո՞ւ իմ գլխի այս պատուհասը բերիք և այն մարդուն պատմեցիք թէ դուք էլի մէկ եղբայր ունիք:»

Նոքա պատասխանեցին. «Այն մարդը շատ էր հարցնում և տեղեկանում մեր մասին, մեր ազգի մասին և ասաց. «տակաւին կենդանի՞ է ձեր հայրը: Այլ ևս եղբայր ունի՞ք:» Մենք էլ պատմեցինք, ինչ որ նա հարցնում էր: Միթէ գիտէի՞նք թէ նա մեզ կ'ասէ «բերէք ձեզ հետ ձեր եղբօրը:»

Եւ ասաց Յուդան Յակոբին, իր հօրը. «Թո՛ղ պատանին մեզ հետ գայ, մենք էլ ճանապարհ ընկնենք որ ապրենք և չմեռնենք մենք ամենքս՝ և մենք, և դու և մեր մանուկները: Ես երաշխաւոր եմ նորա համար, և իմ ձեռից պահանջիր նո-

րան: Եթէ չդարձնեմ դորան և էլի քեզ չբերեմ, յաւիտեանս յանցաւոր մնամ: Եւ եթէ այսքան չուշացնէինք բանը, մենք արդէն երկու անգամ վերադարձած կը լինէինք:»

Եւ ասաց նոցա Իսրայէլ, նոցա հայրը. «Էհ, եթէ այդպէս հարկաւոր է, ուրեմն կատարեցէք. առէք մեր երկրի պտուղներից ձեր պարկերում և ընծաներ տարէք այն մարդուն. առէք ռետին, մեղր, խունկ, ստաշխ, պիստակ և նուշ: Դարձեալ արծաթ առէք հետներդ կրկնապատիկ. և այն արծաթը՝ որ դուք ձեր պարկերում գտաք, այն ևս յետ դարձրէք, գուցէ սխալմունք է պատահել: Առէք և ձեր եղբօրը հետներդ և ելէք Եգիպտոս այն մարդու մօտ: Աստուած տայ ձեզ շնորհ այն մարդու առաջև, որ ձեր միւս եղբօրը և Բենիամինին արձակէ: Բայց ես ինչպէս անզաւակեցայ՝ անզաւակեցայ:»

Նոքա առան ընծաները և կրկնապատիկ արծաթ և Բենիամինին, գնացին Եգիպտոս և Յովսէփին յանդիման կացան: Երբ որ Յովսէփը նոցա տեսաւ և նոցա հետ Բենիամինին, ասաց իր տան վերակացուին. «Տար այս մարդկերանց տունը, մորթիր անասուն և պատրաստիր, սոքա ինձ հետ հաց պէտք է ուտեն կէսօրին:

Եւ կատարեց մարդը, ինչ Յովսէփը պատուիրեց: Բայց նոքա վախեցան, որ Յովսէփի տունը պէտք է տարուին և ասացին. «Այն փողի համար, որ այն անգամ մեր պարկերում գտնուեցաւ, տանում են մեզ որ հարցափորձեն, մեղադրեն մեզ և մեզ ու մեր էշերն էլ իրանց ծառայեցնեն:» — Ուստի մօտեցան Յովսէփի վերակացուին, խօսեցան նորա հետ դրան առաջ՝ և ասացին. «Լսիր, Տէր, անցեալ անգամ եկանք կերակուր գնելու, և երբ հետ գնալիս իջևանն հասանք և մեր պարկերը բաց արինք, մէկ էլ տեսանք որ ամեն մէկիս փողը անպակաս կշռով պարկի բերանումն էր, ուստի մենք այժմ դարձեալ հետներս բերել ենք. և ուրիշ փող էլ բերել ենք որ

կերակուր գնենք: Բայց մենք չգիտենք, թէ ո՞վ դրել էր փողերը մեր պարկերը:»

Նա պատասխանեց. «Խաղաղեցէք. մի վախենաք: Ձեր և ձեր հայրերի Աստուածը ձեզ գանձ է տուել ձեր պարկերում: Իսկ ես պատկանելի վճարը ձեզանից ստացել եմ:» Եւ բերեց նոցա մօտ Շմաւոնին. և տարաւ նոցա Յովսէփի տունը, տուեց նոցա ջուր, որ ոտները լուանան, և նոցա գրաստներին կերակուր տուեց: Իսկ նոքա ընծաները պատրաստեցին, քանի որ Յովսէփը չէր եկել. որովհետև լսեցին, թէ նա այն տեղ պէտք է գայ ճաշելու:

Եւ երբ որ Յովսէփն եկաւ, մատուցին նորան իրանց ձեռքըն եղած ընծաները և խոնարհեցան նորա առաջ: Իսկ նա նոցա ողջութիւնը հարցրեց և ասաց. «Ձեր ծերունի հայրը ո՞ղջ է, որի մասին ինձ ասացիք թէ տակաւին կենդանի է:»

Նոքա պատասխանեցին. «Քո ծառան՝ մեր հայրը դեռ կենդանի է և ողջ է:» Եւ նոքա խոնարհեցան նորա առաջ: Նա բարձրացրեց իր աչքը և տեսաւ Բենիամինին, իր համամայր եղբօրը, և ասաց. «Սա՞ է ձեր կրտսեր եղբայրը, որի մասին ինձ առաջ ասացիք:» Եւ աւելացրեց. «Աստուած ողորմի քեզ, որդեակ:» Եւ հեռացաւ Յովսէփը, որովհետև նորա գութը շարժեցաւ իր եղբօր համար և լաց էր ուզում լինիլ. մըտաւ սենեակը և լաց եղաւ: Եւ յետոյ երեսը լուաց, դուրս եկաւ, պնդեց ինքն իրան և ասաց. «Հաց բերէք:» Եւ բերին նորան առանձին, նոցա էլ առանձին և Եգիպտացոց, որ նորա հետ էին ճաշում, նոյնպէս առանձին, որովհետև Եգիպտացիք չէին կարող Եբրայեցիների հետ միասին ուտել, որովհետև գարշելի էին սոքա նոցա: Եւ եղբայրները նստեցան Յովսէփի դիմաց. անդրանիկը՝ իր երիցութեան համեմատ, կրտսերը՝ իր կրտսերութեան համեմատ, և բոլորքեանք զարմանում էին իրանց եղբօր վրայ: Եւ նորա սեղանից բերում էին նոցա համար քաղցր

կերակուրներ, բայց Բենիամինի համար հինգ անգամ աւելի բերին, քան նոցա ամեն մէկի համար: Եւ նոքա կերան և խմեցին նորա հետ:

Եւ Յովսէփը հրամայեց իր վերակացուին և ասաց. «Սոցա պարկերը լցրու ցորենով որչափ որ կը տանեն, և ամեն մէկի փողը իր պարկի բերանը դիր. և իմ արծաթէ սկիհը դիր կրտսերի պարկի բերանը և նորա ցորենի գինը:—Եւ նա կատարեց, ինչպէս որ Յովսէփը պատուիրել էր: Եւ երբ որ առաւօտ եղաւ, արձակուեցան մարդիկը՝ իրանք և իրանց էշերը: Նոքա քաղաքից դեռ շատ հեռու չէին գնացել, երբ Յովսէփը վերակացուին ասաց. «Վեր կաց գնա, հասիր նոցա և ասա. ինչո՞ւ բարութեան փոխարէնը չարութեամբ հատուցիք: Ինչո՞ւ գողացաք արծաթէ սկիհը, որով իմ տէրը խմում և նորանով հմայում էր: Դուք չարութիւն գործեցիք:»

Եւ նա հասաւ նոցա և ասաց այս խօսքերը: Նոքա պատասխանեցին. «Ինչո՞ւ խօսում է տէրը այդպիսի բաներ. Աստուած ոչ անէ, որ քո ծառաները այդպիսի բան անեն: Եթէ այն փողը, որ մեր պարկերում գտանք, ձեզ դարձուցինք Քանանացոց երկրից, ի՞նչու պէտք է գողանայինք քո տիրոջ տնից արծաթ կամ ոսկի: Այժմ քո ծառաների որի մօտ որ այն սկիհը գտնուի, թող մեռնի նա, իսկ մենք թող ծառայ դառնանք մեր տիրոջը:»

Եւ իսկոյն ամեն մէկը իր բեռը իջեցրեց գետին և բաց արեց պարկը: Նա ման եկաւ բոլորը, սկսելով երեցի պարկից մինչև եկաւ կրտսերի պարկը և գտաւ սկիհը Բենիամինի պարկում:—Այս տեսնելով, նոքա պատառեցին իրանց հանդերձները և ամեն մէկը իր բեռը դրեց էշի վրայ և դարձան քաղաքը: Յուդան մտաւ իր եղբայրների հետ ի միասին Յովսէփի մօտ, որովհետև նա դեռ այն տեղ էր, և նոքա գետնի վրայ ընկան նորա առաջ: Եւ ասաց նոցա Յովսէփը. «Այս ի՞նչ է ձեր ա-

րածը: Չգիտէ՞ք որ ինձ պէս մարդը գուշակել կարող է ամենայն բան:»

Յուդան պատասխանեց. «Ի՞նչ պատասխան տանք իմ տիրոջ և ի՞նչպէս արդարանանք: Աստուած քո ծառաների յանցանքը գտաւ: Եւ ահա, մենք և նա, որի մօտ որ սկիհը գըտնուեցաւ, իմ տիրոջ ծառաներն ենք:»

Իսկ նա ասաց. «Աստուած ոչ անէ, որ այդպէս անեմ. միայն նա, ում մօտ որ սկիհը գտնուեցաւ, միայն նա պէտք է իմ ծառայ լինի. իսկ դուք խաղաղութեամբ դարձէք ձեր հօր մօտ:»

Առաջ եկաւ Յուդան և ասաց. «Աղաչեմ, տէր, թող քո ծառան մի խօսք ասէ քո առաջ, և չբարկանաս ծառայիդ վրայ. որովհետև փարաւոնից յետոյ դու ես տէրը: Դու քո ծառաներին հարցրեցիր և ասացիր. «Ունի՞ք դուք հայր և եղբայր:» Եւ մենք պատասխանեցինք. «Ծերացած հայր ունինք և կրտսեր եղբայր, և որովհետև նորա եղբայրը մեռած է, միայն նա է մնացել իր մօրից, և հայրը նորան շատ է սիրում:» Յետոյ դու ասացիր քո ծառաներին. «Բերէք նորան ինձ մօտ, ես ուզում եմ իմ աչօք նորան տեսնել:» Իսկ մենք իմ տիրոջ պատասխանեցինք. «Մանուկը չի կարող հօրը թողնել. եթէ թողնէ, նա կը մեռնի:» Դու ասացիր քո ծառաներին. «Եթէ ձեր կրտսեր եղբայրը ձեզ հետ չիջեցնէք, էլ իմ երեսը չ'տեսնէք:» Եւ երբ որ մենք գնացինք մեր հօր մօտ, պատմեցինք նորան բոլորը՝ ինչ որ իմ տէրը հրամայեց: Եւ մեր հայրն ասաց. «Գնացէք և դարձեալ ցորեն գնեցէք:» Իսկ մենք ասացինք. «Մենք չենք կարող գնալ, եթէ մեր կրտսեր եղբայրը մեզ հետ չը լինի:» Եւ ասաց մեր հայրը. «Դուք գիտէք, որ Ռաքէլը երկու որդի ծնաւ ինձ. մինը գնաց ինձանից և գազանակեր եղաւ և էլ չտեսայ նորան: Արդ եթէ սորան էլ ինձանից հեռացնէք, և սորան մի հիւանդութիւն պատահի, դուք իմ ծերութիւնը

տրտմութեամբ գերեզման կը տանէք»։ Ես, քո ծառադ, երաշխաւոր եղայ մանուկի համար, և ասացի հօրս. «Եթէ ես որդուդ չվերադարձնեմ, յաւիտեանս յանցաւոր մնամ»։ Ուրեմն թող որ մանուկի փոխարէն ես քեզ ծառայ մնամ, և թող նորան, որ եղբայրների հետ ի միասին տուն դառնայ։ Ապա թէ ոչ ի՞նչպէս դառնամ հօրս, եթէ մանուկը ինձ հետ չի լինի։ Ես ուրեմն այն թշուառութիւնը պէտք է տեսնեմ, որ իմ հօրս անշուշտ պատահելու է։»

3. Եւ չկարողացաւ Յովսէփը զիմանալ ուրիշների առաջ, որ նորա շուրջ կային, և ասաց. «Դուրս տարէք ամենուն այս տեղից։» Եւ երբ որ էլ ոչ ոք չմնաց այն տեղ, եղբայրներին ճանաչել տուեց իրան։ Եւ ինքը բարձրաձայն լաց եղաւ, մինչև որ Եգիպտացիքն ու փարաւոնի տունը լսեցին, և ասաց եղբայրներին. «Ես եմ Յովսէփ. արդարև տակաւին կենդանի՞ է հայրս»։

Եւ եղբայրները էլ չկարողացան պատասխանել, այնքան վախեցան նորանից։ Բայց նա ասաց եղբայրներին, «Մօտ եկէք ինձ։» Եւ նոքա մօտեցան։ Եւ նա ասաց. «Ես եմ Յովսէփ, ձեր եղբայրը, որին դուք Եգիպտոս վաճառեցիք։ Բայց այժմ մի վախենաք և չկարծէք թէ բարկանում եմ որ դուք ինձ ծախեցիք. որովհետև Աստուած ինձ ձեզանից առաջ Եգիպտոս ուղարկեց ձեր կեանքը փրկելու համար։ Այս միայն երկու տարի է, որ սով է երկրում և դեռ էլի հինգ տարի կայ, որ ոչ ցանք և ոչ հունձ լինելու չէ։ Եւ Աստուած ձեզանից առաջ ինձ ուղարկեց այս տեղ, որպէս զի այս երկրում ձեզ համար հիմք դնեմ, և որպէս զի ապրեմ ձեզ հրաշապէս փրկելու համար։ Եւ ոչ թէ դուք ինձ ուղարկեցիք այս տեղ, այլ Աստուած։ Այժմ շտապեցէք, գնացէք իմ հօր մօտ և ասացէք նորան. «Այս է ասում քո որդի Յովսէփը. «Աստուած ինձ տէր արաւ Եգիպտացոց բոլոր երկրի վրայ, եկ ինձ մօտ և մի՛ ուշանար։ Դու կը բնակես Գեսեմ երկրում, ինձ մօտ կը լինիս դու և քո որդիքը

և քո որդոց որդիքը, քո ոչխարները և արջառը և բոլորը, ինչ որ քոնն է։ Եւ ես քեզ կը կերակրեմ, որովհետև էլի հինգ տարի կայ սովին. և դու և քո տունը և ամենայն, ինչ որ քոնն է, կապրիք և նեղութիւն չէք կրի։» Ահա դուք ձեր աչքով էք տեսնում և իմ եղբայր Բենիամինն էլ տեսնում է, որ խօսողը ես եմ։ Պատմեցէք ուրեմն հօրս թէ ինչ փառքումն եմ Եգիպտոսում. պատմեցէք՝ ինչ որ տեսաք։ Շտապեցէք և բերէք հօրս ինձ մօտ։»—Եւ փաթաթուեցաւ Բենիամինի պարանոցին և լաց եղաւ, և Բենիամինն էլ լաց էր լինում նորա պարանոցի վրայ։ Յովսէփը համբուրեց իր բոլոր եղբայրներին և լաց եղաւ. ապա թէ վստահութիւն առան նոքա և խօսեցան նորա հետ։

Երբ որ համբաւը փարաւոնի պալատը հասաւ, թէ Յովսէփի եղբայրները եկել են, ուրախացան փարաւոնը և նորա ծառաները. և նա ասաց Յովսէփին. «Ասա եղբայրներիդ.—Այսպէս արէք, լցէք ձեր բեռները և գնացէք, և երբ որ Քանանացոց երկիրը հասնիք, առէք ձեր հօրը և ձեր ստացուածը և եկէք ինձ մօտ. ես ձեզ կու տամ Եգիպտացոց ամենայն բարութիւններից, որպէս զի երկրի ընտիր բարիքներով կերակրուիք։ Տարէք Եգիպտացոց աշխարհից սայլեր, ձեր որդոց և կանանց համար, և առէք ձեր հօրը և եկէք։ Եւ մի ագահանաք ձեր կահի վրայ, որովհետև Եգիպտացոց երկրի բոլոր բարութիւնները ձերը կը լինի։»

Յովսէփն այդպէս արեց. տուեց նոցա սայլեր փարաւոնի պատուիրանի համեմատ, տուեց և պաշար ճանապարհի համար։ Ամեն մէկին էլ մի մի պատմուճան ընծայեց, իսկ Բենիամինին տուեց երեք հարիւր դահեկան և հինգ պատմուճան։ Եւ հօրն ուղարկեց տասն էշ Եգիպտացոց բարութիւններով բեռնաւորած, տասն ջորի ցորենով, և հաց ու կերակուր հօրը ճանապարհի համար։ Եւ այսպէս գնացին նոքա Եգիպտոսից և եկան Քանանացոց երկիրը իրանց հօր Յակոբի մօտ և պատմեցին նորան բո-

լուրը և ասացին. «Յովսէփը դեռ կենդանի է և նա է իշխան ամբողջ Եգիպտոս աշխարհի:»

Իսկ նա այնպէս էր, որպէս թէ երազից է զարթնում, և չէր հաւատում նոցա: Բայց երբ որ նոքա Յովսէփի բոլոր խօսքերը պատմեցին, որ նոցա ասել էր, և երբ որ նա սայլերը տեսաւ, որ Յովսէփն էր ուղարկել նորան տանելու, զուարթացաւ իւր ոգին, և ասաց ծերունի հայրը. «Բաւական է, իմացայ որ կենդանի է իմ որդի Յովսէփը. գնամ տեսնեմ նորան քանի չեմ մեռել:»

4. Եւ վերկացաւ Իսրայէլը և առաւ հետը իր բոլոր կայքը, և եկաւ Բերսաբէէ և պատարագ մատոյց իր հօր Իսահակի Աստծուն: Եւ Աստուած գիշերուայ տեսիլքում խօսեց նորա հետ. «Յակոբ:» Նա ասաց. «Ահաւասիկ եմ:»

Եւ նա ասաց: «Ես եմ ամենակարող Աստուած, քո հօր Աստուածը. մի վախենար Եգիպտոս իջնել, որովհետև քեզ ուզում եմ մեծ ազգ անել այն տեղ: Ես քեզ հետ կ'իջնեմ Եգիպտոս, և ես դարձեալ կը հանեմ քեզ այն տեղից, և Յովսէփը կը փակէ քո աչքերը իր ձեռքով:»

Վեր կացաւ Յակոբը Բերսաբէից, և նորա որդիքն առան նորան և իրանց կանանց ու որդոց այն սայլերի վրայ, որ փարաւոնը ուղարկել էր, և հետը առնելով իրանց անասունը և ստացուածքը, որ Քանանացոց երկրում ստացան, եկան Եգիպտոս, Յակոբն ու նորա բոլոր ցեղը. այսինքն նորա որդիք, նորա որդոց որդիք, դուստրք, նորա դստերաց որդիք. և իր բոլոր զաւակներին բերեց Եգիպտոս, որ թուով վաթսուն ու վեց էին: Յովսէփին իր երկու որդով էլ հաշուելով, Յակոբի տան բոլոր ոգիք, որ Եգիպտոս մտան, եօթանասուն էր:

Եւ Յակոբը իրանց առաջ Յուդային ուղարկեց Յովսէփի մօտ, որ յայտնէ նորան իր գալուստը, իսկ ինքը եկաւ Գեսեմ: Յովսէփը կազմեց իր կառքը և եկաւ գնաց իր հօր Իսրայէլին

հանդիպելու, Գեսեմի կողմը: Եւ երբ որ նորան տեսաւ, փաթաթուեցաւ նորա պարանոցին և երկար լաց եղաւ նորա կուրծքի վրայ: Եւ Յակոբն ասաց Յովսէփին. «Թող այսուհետև մեռնեմ, երբ որ քո երեսը տեսայ, որ դու դեռ կենդանի ես:»

Յովսէփն ասաց իր հօրը և եղբայրներին. «Կ'իջնեմ և փարաւոնին կ'ասեմ. «Իմ եղբայրները և իմ հօր ազգատոհմը եկել են ինձ մօտ Քանանացոց երկրից. բայց դոքա հովիւներ են. և իրանց մեծ ու փոքր անասունները հետը բերել են: Արդ եթէ փարաւոնը ձեզ կանչէ և հարցնէ. «Ի՞նչ է ձեր գործը:» Դուք պատասխանեցէք. «Քո ծառաները խաշնարածներ ենք՝ սկսած մեր մանկութիւնից մինչև այս օր, և ոչ միայն մենք, այլև մեր հայրերն ու պապերը նոյնն են եղել:» Որպէս զի ձեզ Գեսեմի մէջ բնակեցնեն. որովհետև Եգիպտացիք զզւում են ոչխարների հովիւներից:

Եւ եկաւ Յովսէփը, պատմեց փարաւոնին և ասաց. «Իմ հայրը և իմ եղբայրները իրանց ոչխարներով և արջառով և բոլոր կայքով եկել են Քանանացոց երկրից և այժմ Գեսեմումն են:» — Եւ իր եղբայրներից առաւ հինգին և փարաւոնի առաջ կանգնեցրեց: Եւ ասաց փարաւոնը եղբայրներին. «Ի՞նչ է ձեր գործը:» — Նոքա պատասխանեցին. «Քո ծառաները ոչխարների հովիւներ են, ինչպէս և մեր հայրերն էլ եղել են, Եկել ենք այս տեղ պանդխտանալու. որովհետև քո ծառաները ճարակ չ'ունէին խաշների համար, այնքան սաստկացաւ սովը Քանանացոց երկրում. արդ թող քո ծառաներին, որ Գեսեմ երկրում բնակին:»

Փարաւոնն ասաց Յովսէփին. «Քո հայրը և քո եղբայրները եկել են քեզ մօտ, Եգիպտացոց աշխարհը բաց է քո առաջ, բնակեցրու նոցա երկրի ամենալաւ տեղը, թող Գեսեմում կենան, և եթէ գիտես, թէ նոցա մէջ զօրաւոր մարդիկ կան, թող վերակացութիւն անեն իմ խաշներին:»

Յովսէփը իր հօր Յակոբին էլ տուն բերեց և փարաւոնի առաջ կանգնեցրեց: Եւ Յակոբը օրհնեց Թագաւորին: Իսկ Թագաւորը հարցրեց. «Քո կենաց օրերը քանի՞ տարի են:»

Եւ Յակոբը պատասխանեց. «Իմ պանդխտութեան օրերը հարիւր և երեսուն տարի են: Սակաւ և դժուարին էին իմ կեանքի օրերը, և չհասան իմ նախահարց պանդխտութեան օրերին:»

Եւ Յակոբը օրհնեց փարաւոնին և դուրս գնաց նորից: Յովսէփը իր հօրը և եղբայրներին բնակութիւն տուեց և բնակեցրեց երկրի ամենալաւ տեղում, Գեսեմում, ինչպէս որ Թագաւորը հրամայեց: Եւ իր հօր տունը կերակրում էր հացով իւրաքանչիւրին առանձին խնամելով:

5. Բայց դեռ էլի հաց չկար բոլոր երկրներում և սովը սաստկացաւ, և սովից խիստ նուաղեցան Եգիպտացոց ու Քանանացոց երկիրները: Յովսէփը ժողովեց բոլոր արծաթը, որ գտնվում էր Եգիպտոսի և Քանանու մէջ այն ցորենի փոխարէն որ վաճառում էին, և Յովսէփը այս բոլոր արծաթը հաւաքեց Թագաւորի գանձի մէջ:

Եւ որովհետև Եգիպտոսում փողը պակասում էր, եկան Եգիպտացիք Յովսէփի մօտ և ասացին. «Տուր մեզ հաց: Ինչո՞ւ թողնում ես, որ աչքիդ առաջ մեռնենք, որովհետև մենք փող չունենք:»

Իսկ Յովսէփն ասաց. «Բերէք ձեր անասունները, և ես ձեզ հաց կու տամ նոցա փոխանակ:» Նոքա բերին իրանց անասունը, և դա նոցա հաց տուեց փոխանակ ձիերի, ոչխարների, արջառի և էշերի: Այսպէս կերակրեց նոցա մի տարի ևս նոցա անասունների փոխանակ:

Անցաւ այն տարին էլ, նոքա եկան նորա մօտ և ասացին. «Չենք ծածկի մեր տիրոջից թէ՝ ոչ թէ միայն փողը, այլ և անասունը սպառեցաւ. և էլ ոչինչ չունինք մեր տիրոջ տալու, բացի մեր անձինքներից և մեր դաշտերից: Արդ որպէս զի մենք չմեռնենք և մեր դաշտերը չաւերուին, գնիր մեզ հացի փոխարէն, և մենք և մեր երկիրը՝ Թագաւորի ծառաներ կը լինինք. տուր մեզ սերմ, որ սերմանենք, ապրենք և չմեռնենք և երկիրը չաւերուի.

Այսպէս Յովսէփը փարաւոնի համար գնեց բոլոր Եգիպտոսը, և Եգիպտացիք ծախեցին ամեն մէկը իր դաշտը, որովհետև սովը սաստիկ տիրում էր նոցա: Եւ այսպէս երկիրը փարաւոնի սեպհականութիւնը դարձաւ, և բաժանեց ժողովուրդը ուրիշ քաղաքներում Եգիպտոսի մէկ ծայրից սկսած մինչև միւս ծայրը: Միայն քուրմերի երկիրը չգնեց, որովհետև փարաւոնը այդ պարգևել էր քուրմերին, որ կերակրուեն. և միայն այդ տեղից պիտի կերակրուէին, ուստի իրաւունք չունէին ծախելու:—Ապա ասաց Յովսէփը ժողովրդեան. «Ահա այս օր ստացայ ձեզ և ձեր երկիրը Թագաւորի համար. առէք սերմը և սերմանեցէք հողը. և հնձելուց յետոյ արդիւնքի հինգերորդ մասը փարաւոնին պէտք է տաք. իսկ չորս մասը ձերը կը լինի սերմանելու և կերակրելու թէ ձեզ և թէ ձեր բոլոր տան համար:

Նոքա ասացին. «Դու մեզ ապրեցնում ես. և շնորհք գտանք մեր տիրոջ առաջ, ուստի ուրախութեամբ կը ծառայենք փարաւոնին:»

Եւ այսպէս Յովսէփը Եգիպտացիներին օրէնք դրեց մինչև այս օր, որ Եգիպտացիք արդիւնքի հինգերորդ մասը Թագաւորին են տալիս:

Այսպէս Յակոբի ազգատոհմը բնակեցաւ Եգիպտոսում, Գեսեմ երկրում, այնտեղ ժառանգութիւն ունեցաւ, աճեց և բազմացաւ: Եւ Յակոբը Եգիպտոսում կացաւ տասնուեօթը տարի, այնպէս որ նա հարիւր քառասուն և եօթը տարեկան դարձաւ: Եւ երբ որ նորա մահուան օրերը մերձեցան, կանչեց

Յովսէփ որդուն և ասաց նորան. «Եթէ շնորհ ունիմ քո առաջին, երդուիր՝ որ դու ինձ ողորմած և հաւատարիմ կը լինիս և Եգիպտոսում չես թաղի: Այլ ես կամենում եմ իմ հայրերի հետ ննջել. և դու պէտք է ինձ Եգիպտոսից տանես և նոցա գերեզմանում թաղես:» Յովսէփը պատասխանեց, «Ես կատարեմ խօսքդ:» Բայց նա ասաց. «Երդուիր ինձ:» Եւ նա երդուեց: Յակոբն էլ աղօթեց իր մահճում:

Յետոյ Յովսէփին իմացուցին. «Տես, հայրդ նեղութեան մէջ է:» Նա առաւ իր երկու որդոց, Մանասէին և Եփրեմին, և գնաց նորա մօտ: Յակոբին այս յայտնեցին, «Ահա, Յովսէփդ քեզ մօտ է գալիս:» Եւ Յակոբը զօրացաւ և նստեց մահճի վրայ և ասաց Յովսէփին. «Ամենակարող Աստուածը երևեցաւ ինձ Քանանացոց երկրում, օրհնեց ինձ և ասաց. «Ահա քեզ կաճեցնեմ և կը բազմացնեմ և մեծ ազգ կ'անեմ և կը տամ քեզ այս երկիրը ժառանգութիւն:» Արդ քո երկու որդիքդ, որ մինչև իմ գալը Եգիպտոսում ծնան, իմ որդիքն են՝ Եփրեմն ու Մանասէն, ինչպէս որ իմն են Ռուբէնն ու Շմաւոնը:»

Եւ Իսրայէլը Յովսէփի որդկերանցը տեսնելուն պէս, ասաց. «Ո՞վ են սոքա քեզ:» Յովսէփը պատասխանեց հօր. «Սոքա իմ որդիքս են, որ Աստուած ինձ այս տեղ պարգևեց:»

Նա ասաց «Մօտեցրու դոցա ինձ՝ որ օրհնեմ:» Իսրայէլի աչքերը ծերութիւնից մթնացել էին և լաւ չէր տեսնում: Յովսէփը մօտեցրեց իր որդոց Յակոբին. Նա նոցա համբուրեց, գրկեց, և ասաց Յովսէփին. «Ահա քո երեսի կարօտն առայ, և Աստուած քո զաւակներին ևս ցոյց տուեց ինձ:»

Եւ Յովսէփը առաւ նոցա նորա ծնկներից և նոքա նորա առաջ խոնարհեցան: Եւ Իսրայէլը մեկնեց իր ձեռքը, դրեց նոցա գլխին, օրհնեց նոցա և ասաց. «Աստուած, որին որ հաճոյ եղան Աբրահամ և Իսահակ իմ հայրերը, Աստուած՝ որ ինձ

մանկութիւնից մինչև այսօր կերակրում է, հրեշտակը՝ որ ինձ ամենայն չարիքներից փրկեց, օրհնէ այս մանուկներին:»

Եւ ասաց Յովսէփին «Ահաւասիկ ես մեռանում եմ, բայց Աստուած ձեզ հետ կը լինի, և վերստին կը դարձնէ ձեզ ձեր պապական երկիրը:»

Ապա կանչեց Յակոբը իր բոլոր որդոց և օրհնեց նոցա, ամեն մէկին առանձին օրհնութիւն տալով: Եւ Յուդային, չորրորդին, կարգեց գլուխ նոցա բոլորի վրայ, որովհետև Ռուբէնը և Շմաւոնը և Ղևին զանազան յանցաւորութիւններով երեցութեան արժանի չեղան:

Եւ պատուիրեց նոցա և ասաց. «Ես աւելանում եմ իմ պապերիս մէջ. թաղեցէք ինձ նոցա հետ կրկին այրում, որ յանդիման Մամբրէի է Քանանացոց երկրում, որ Աբրահամ գնեց ագարակի հետ ի միասին, ժառանգական շիրիմ լինելու համար: Այնտեղ թաղեցին Աբրահամին և նորա կնոջ Սառային, նմանապէս Իսահակին և նորա կնոջ Ռեբեկային. այնտեղ թաղեցի ես ևս Լիային:»

Եւ երբ որ Յակոբը վերջացրեց պատուէրը իր որդոցը, ժողովեց ոտերը մահճում և վախճանեց և աւելացաւ իր ժողովրդին: Յովսէփը ընկաւ նորա երեսի վրայ և ողբաց նրայ վրայ և համբուրեց նորան:

7. Եւ Յովսէփը հրամայեց բժիշկներին, որ իր հօրը զմռսեն. նոքա ևս այդ կատարեցին: Եւ անցաւ քառասուն օր, որովհետև այսքան է տևում զմռսելը: Եւ Եգիպտոսը սուգ արաւ նորա համար եօթանասուն օր: Եւ երբ որ սգի օրերը անցան խօսեց Յովսէփը փարաւոնի իշխանների հետ և ասաց. «Եթէ շնորհք գտայ ձեր առաջև՝ խօսեցէք փարաւոնի հետ և ասացէք նորան. իմ հայրը ինձ երդուել տուեց և ասաց. ահա ես մեռանում եմ, և թաղիր ինձ այն շիրմի մէջ, որ ես փորեցի Քա-

նանացոց երկրում:—Այժմ կամենում եմ գնալ և հօրս թաղել, և կը վերադառնամ:»

Փարաւոնն ասաց. «Գնա՛, թաղիր հօրդ, ինչպէս որ երդուել ես:»

Եւ գնաց Յովսէփը հօրը թաղելու. և նորա հետ գնացին փարաւոնի բոլոր ծառաները, իր տան ծերերը և Եգիպտացոց երկրի բոլոր ծերերը, նոյնպէս Յովսէփի համօրէն տունը, նորա եղբայրները և իր հօր ամբողջ տունը: Սակայն իրանց որդոց ոչխարներն և արջառը թողեցին Գեսեմ երկրում: Նորա հետ գնացին նաև կառքեր և ձիաւորներ, և այսպէս բանակը շատ մեծ էր: Երբ որ նոքա Ատադի կալն եկան, որ գետի այն կողմն է, մեծ լաց ու կոծ հանեցին ննջեցեալի համար. և նա իր հօր համար եօթն օր սուգ արեց: Ահա այսպէս կատարեցին Յակոբի որդիքը, ինչ որ նա պատուիրել էր, և տարան Քանանացոց երկիրը և թաղեցին կրկին այրի մէջ Մամբրէի ագարակում:

Երբ որ թաղեցին նորան, նոքա դարձան Եգիպտոս: Սակայն Յովսէփի եղբայրները վախենում էին, որովհետև հայրը վախճանել էր և ասում էին. «Գուցէ Յովսէփը ոխ է պահում մեր դէմ և կուզենայ այն չարութիւնները մեզ հատուցանել, որ մենք նորա դէմ գործեցինք:» Եւ ասացին նորան. «Քո հայրը, քանի չէր վախճանած, պատուիրեց և ասաց.—Ասացէք Յովսէփին. «Ներիր եղբայրներիդ յանցանքը և թող նոցա մեղքը, որ այնպէս չարութեամբ վարուեցան քեզ հետ:» Եւ դու ներիր մեզ մեր չարութիւնը, քո հօր Աստուծոյ ծառաների չարութիւնը ներիր:»

Բայց Յովսէփը լաց էր լինում երբ այս խօսքերը լսեց: Եղբայրները մօտեցան, գետնի վրայ ընկան նորա առաջ և ասացին. «Ահա քո ծառաներն ենք:» Յովսէփն ասաց նոցա. «Մի վախենաք, ես եւս Աստուծոյ կամքը պիտի կատարեմ: Դուք ուզեցաք ինձ չարութիւն անել, բայց Աստուած մտածեց այդ

ձեր գործով բարութիւն գործել. որովհետև ինձ ուղարկեց ժողովրդեան մեծ բազմութիւնը կերակրելու, ինչպէս այս այսօր արդէն կատարուել է: Ուրեմն մի վախենաք. ես կը կերակրեմ ձեզ և ձեր որդոց:» Եւ մխիթարեց նոցա և սփոփեց նոցա սիրտը:

Այսպէս բնակեց Յովսէփը Եգիպտոսում իր հօր ազգատոհմի հետ և ապրեց հարիւր և տասը տարի. և տեսաւ Եփրեմի զաւակների շառաւիղը մինչև երրորդ անդամը, նոյնպէս և Մանասէի որդոց շառաւիղը:

Եւ Յովսէփն ասաց իր եղբայրներին. «Ես մեռանում եմ և Աստուած ձեզ այցելութիւն կ'անէ և այս երկրից կը հանէ կը տանէ Աբրահամին, Իսահակին և Յակոբին խոստացած երկիրը:» Եւ Յովսէփը երդուեցրեց Իսրայէլի որդոց և ասաց. «Երբ որ Աստուած ձեզ այցելութիւն գայ, տարէք ձեզ հետ այս տեղից և իմ ոսկորները:

Եւ վախճանեցաւ Յովսէփ հարիւր տասը տարեկան հասակին. իսկ նոքա զմռսեցին նորան և տապանի մէջ պահեցին Եգիպտոսում:

Սուրբ գրքից.

29. Ազգատոհմ:

Ամենայն գերդաստանի մէջ հայրն է գլուխ: Նա է տան տէրը: Նորան պէտք է հնազանդեն ծառաներն ու սպասաւորները: Քանանացոց երկրի պանդուխտ հովիւների մէջ եւս այս սովորութիւնը կար. նոցա մէջ եւս հայրը իշխում էր ամբողջ գերդաստանի վրայ: Եթէ որդիքը մեծանում էին և մի նոր սեպհական ընտանիք էին հիմնում, նոքա չէին թողնում իրանց ծնողներին, այլ նոցա մօտ էին մնում իրանց կիներով և որդիներով: Բոլորեքեանք միասին կազմում էին մի ազգատոհմ

դամ ցեղի, ու շատ սերտ կապուած էին իրար հետ և ամեն մարդու, որ ազգատոհմի անդամ չէր, համարում էին որպէս մի օտար: Ազգատոհմի գլուխն էր հայրը, որ կոչվում էր նահապետ (ազգատոհմի հայր): Նորա անունով կոչվում էր և ամբողջ ազգատոհմը: Նա ամենայն բան կարգում և կառավարում էր:

Նա էր քահանայ, որովհետև մենք գիտենք, թէ ինչպէս Աբրահամը Աստծուն սեղան շինեց. աղօթեց և նորա անունը կանչեց:

Եթէ մի վէճ էր ծագում, դարձեալ նահապետն էր վճիռ տալիս: Բոլորեքեանք պէտք է նորան դիմէին եթէ միւսի դէմ գանգատ ունէին: Նա բանակի կարգ ու կանոնի պահապանն էր, նա էր դատաւոր:

Ուրիշ ազգատոհմի պետերի հետ կամ քաղաքների թագաւորների հետ նա կապում էր ուխտ և դաշինք, ինչպէս Իսահակը Աբիմելէքի հետ, Յակոբը Լաբանի հետ: Եթէ թշնամիները յարձակվում էին հովուի բանակի վրայ կամ նոքա որ և իցէ կերպով սպառնում էին ազգատոհմի բարեկամներին, այդ ժամանակ ազգատոհմին պատերազմ էր տանում դարձեալ նոյն նահապետը. նա նոյնպէս առաջնորդ և հրամանատար էր կռուի մէջ, ինչպէս թագաւորները քաղաքներում: «Երբ որ Աբրահամը լսեց, թէ իր եղբօրորդի Ղովտը գերի է առնուած, երեք հարիւր և տասնութ ընդոծիններին զինուորեց և ապստամբ թագաւորների ետևից վազեց մինչև Դանի կողմերը: Այս տեղ գիշերուայ ժամանակ հասաւ նոցա իր ծառաներով, որ երկու խումբ բաժանեց, յաղթեց և փախցրեց նոցա Դամասկոսից էլ հեռու:»

Եթէ նահապետը մահին էր մօտենում, կանչում էր իր որդոց և օրհնում էր նոցա. մեծաւ մասամբ երէցը ժառանգում էր նորան և առաջնորդում էր ազգատոհմին: Իսկ եթէ երիցութեան արժանի չէր, այն ժամանակ հայրը կարող էր մի ուրիշ որդուն գլուխ նշանակել իր տան վրայ: Վերջապէս երբ նա վախճանւում էր, մեծ լաց ու կոծ էր բարձրանում: Սուգը երկար տևում էր ամբողջ բանակում, և այդպիսով և երկար ժամանակ մեծ յարգանքով յիշում էին վախճանածին ու մինչև անգամ այն տեղը՝ ուր նա կենդանութեան ժամանակ աւելի երկար կացաւ: Թաղվում էր նա ժառանգական շիրմի մէջ, ուր

և ազգատոհմի ամենայն անդամների մարմինները ամփոփվում էին: «Աբրահամը Եփրոնից գնեց Քետի զաւակների աչքի առաջ Քեբրոն քաղաքի դաշտերի դիմաց մի ագարակ կրկին այրով:»

ՏՈՀՄԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ

- Թարա
  - Աբրահամ — Սառա
    - Իսահակ — Ռեբեկա
      - Եսաւ
      - Յակոբ
        - 1. Ռուբէն, Շմաւոն, Ղևի, Յուդա, Դան, Նեփթաղիմ, Գադ, Ասեր, Իսաքար, Զաբուղոն
        - 2. Բենիամին, Յովսէփ
          - Եփրեմ
          - Մանասէ
  - Նաքովր
    - Ռեբեկա
    - Լաբան
      - 1. Լիա
      - 2. Ռաքէլ
  - Հարան
    - Ղովտ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ։

2000 տարի Քրիս. առաջ

ԱԲՐԱՀԱՄ, Հրէից նահապետը, չուում է Միջագետքից Քանանացոց աշխարհը։

Իսահակ։ Յակոբ կամ Իսրայէլ։ Նորա տասներկու որդիք Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա, Դան, Նեփթաղիմ, Գադ, Ասեր, Իսաքար, Զաբուղոն, Յովսէփ, Բենիամին։

1800 տարի Քրիս. առաջ

ՅՈՎՍԷՓ Եգիպտոսում. Յակոբը չուում է իր ազգատոհմի հետ Եգիպտոս։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

Երես

Յառաջաբան երկրորդ տպագրութեան։ . . . . . . Ա.

Առաջին բաժին

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ։

1. Միջագետք 3
2. Աբրահամի Միջագետքից դուրս գալը (Ս. Գրքից.) . . 4
3. Յորդանանու դաշտը 5
4. Աբրահամի և Ղովտի բաժանուելը (Ս. Գրքից) . . —
5. Հովուական կեանք 6
6. Սենաար 9
7. Աբրահամի կռիւը չորս թագաւորների հետ (Ս. Գրքից) —
8. Զինուորական կեանք. 11
9. Մեռեալ ծով 12
10. Սոդոմի և Գոմորի կործանումը (Ս. Գրքից) . . . 13
11. Արաբիա 17
12. Աբրահամի զաւակները (Ս. Գրքից) . . . . . —
13. Քաղաք և տուն արևելքում 19
14. Կրկին այրի գնելն (Ս. Գրքից) 20
15. Բերրանից Խառան 22
16. Ռեբեկա (Ս. Գրքից) 23
17. Փղշտացոց աշխարհը. 28
18. Իսահակ (Ս. Գրքից) 29
19. Քանանացոց աշխարհը 30
20. Եսաւ և Յակոբ (Ս. Գրքից) 33
21. Որսորդական կեանք 46

22. Քանանացոց երկրից մինչև Եգիպտոս 47
23. Յովսէփի եղբայրները նորան ծախում են (Ս. Գրքից) . 48
24. Նեղոս 51
25. Յովսէփ Եգիպտոսում (Ս. Գրքից) . . . . . . —
26. Երկրագործութիւն 58
27. Եգիպտոս 60
28. Սովի տառապանքը, եղբարց ճանաչումը, Եգիպտոս գաղթելը (Ս. Գրքից) 62
29. Ազգատոհմ 79
30. Տոհմական աղիւսակ 81
31. Ժամանակագրական աղիւսակ 82

Երկրորդ բաժին

ՀԱՅՐԵՆԻՔ

Խայտառակութիւն է հայրենեաց մէջ օտար լինել։

Հռովմէական խօսք։

Ականջ արէք քոռ աշուղիս՝ ձեզ հրաշալի բան եմ ասում,
Ջահել տղէրք, լաւ ուշկ դրէք՝ զարմանալի բան եմ ասում,
Սիրուն կուսանք. լաւ միտք դրէք՝ արտասուելի բան եմ ասում,
Ցարդոյ ծերեր, ինձ լսեցէք՝ ձեր պապերու բանն եմ ասում։
Ուշկով միտքով ականջ դրէք՝ ձեզ ամենից բան եմ ասում։

Պատկանեան։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻՑ:

Ա. ԸՆՏԱՆԻՔ

1. Տան օրհնութիւնը:

Ահա նոր տունը պատրաստ, շինած, կանգնած է, բայց չէ ծածկուած և պարիսպ չունի, և վերևիցն ու չորս բոլորից անձրև ու արեգակի շողքը դեռ կարող են մէջը մտնել. ուստի քեզ ենք կանչում, ով աշխարհքի Արարիչ, այդ երկնքի խորանից օրհնութիւն և ողորմութիւն մայն թափիր այս բաց ու անպատսպար տան վրայ: Նախ պարգևիր մեր ամբարին և մառանին լիութիւն, մեր օթախին — աշխատութիւն և առաքինութիւն, մեր օձախին — չափաւորութիւն և մաքրութիւն, մեր ղոմին — քաջառողջութիւն, մեր շիրախանին — պատուական գինի. Տէ՛ր, մեր դռների ու պատուհանների պահապանը եղիր, որ չարութիւն չմտնէ այս տան շեմքից, և սորա օձախը վառ պահիր, որ սորա նոր դռնից առաքինի զաւակներ դուրս գան և աճին ու բազմանան մինչև յաւիտեանս: Դէ՛, ուստէք, հիմի ծածկեցէք ու պատ քաշեցէք, Աստուծոյ օրհնութիւնը տան մէջ է:

2. Հին տունը:

Ուստէն առոյգ քայլերով վեր է ելնում, որ քեզ քանդէ, իմ հին տուն, իսկ ինձ այնպէս է թւում, իբր թէ դու լեզու ես դարձել և իմ ականջիս ասում. «ի՞նձ ես ուզում ոչնչացնել,

և չես ափսոսում ինձ, որ այսքան տարի սիրով և խաղաղութեան փառքով եմ պարծեցել: Մի օր քո պապը ինձ շինեց և ապա ջերմեռանդութեամբ Աստուծոյ անունը տալով՝ իր դողեցիկ և պարկեշտ հարսի հետ իմ շեմքը կոխեց: Ես այժմ կարող եմ՝ մէկ մէկ պատմել բոլոր այն ուրախութիւններն ու տրտմութիւնները, որ նոցա գլխին պատահել են: Քո հայրը այս մխոտած օթախումն է ծնուել և իր առաջին հայեացքը ինձ պարգեւել՝ մանուկ երեխան նախ այն հրեշտակներին ժպտով նայեց, որ պատուհանի լուսի մէջն են խաղում, և ապա թէ իր մօրը նկատեց: Քո տան օճախը քիչ քիչ հանգաւ, դու ես նորա վերջին վառ լոյսը. մի՞թէ քո երակների տաք արիւնը այնքան սառել է, որ կը քանդես և հողին կը հաւասարեցնես այն փլչատակը, ուր հայրդ իր հոգին աւանդելու ժամանակ պառկած էր, ուր մայրդ իր աչքերը վերջին անգամ փակեց:»

Հերիք է, լռիր, իմ հին տուն: Ինձ այնպէս է երեւում, իբր թէ գերեզմանից մէկ մէկ վեր են կենում իմ նախահայրերը և աղաչում են, որ խնայեմ իրանց կացած տանը. կարծես իմ սրտի մէջն ես էլ լսւում է առաջուայ փափագս. «Թող, թող, որ տունդ իր տեղը մնայ:»

Բայց ուստէն արդէն տանիքն է ելել, ուժով սկսում է քանդել քլունգով՝ քար, աղուս մէկ մէկ գետինը գլորելով: «Կանգնիր, ուստա՛, հերիք է, ձեռդ քաշի՛ր և մի՛ քանդիր տունս. սիրով կը վճարեմ ես քո վարձը, բայց թող որ տունս մնայ կանգուն:»

3. Աչքի տակից եղածը հեռու մի ման գար:

Աշտարակում գեարանենց օճախը երեւելի էր, նորա փլչատակը էս օր էլ էնտեղ մնացել է: Գեարանենց մեծ ու պստիկը, արու և էգը իրանց աշխատաւոր ձեռքով տան պարծանքն էին: Նրանց հօր բաղդաւորութիւնն ու ուրախութիւնը պէտք է տեսնէիր, որ զմայլէիր: Ինքը ոնց որ մէկ վիթխարի կաղնու ծառի բուն, իր որդիքը, թոռնքը, մինչև անգամ թոռանց որդիքն ու թոռնքը սիրուն ճղների պէս տան հաստատութիւնն էին պահում: Գեարանենց 70 տարեկան Յակոբ պապին ով չէր ճանաչում: Գեղցիք քու չէին, տեսնում էին, ինչպէս

դրա տունը ճոխանում, հարստանում է: Ամէնքը զարմանում և երեխութենից մէկ մէկու կըպատմէին, թէ գեարանենք ոսկի գութան ունին, թէ ոսկի գութանն է, որ դրանց տունը շինում է:

Բայց Աշտարակը փուչ մարդիկ էլ շատ է ունեցել: Մատնիչ Ղևոնդն էլ բոլորեցունց յայտնի էր: Սա վաղուց մաքումը դրել էր Երեւանու խանին յայտնի գեարանենց ոսկէ գութանը. ու ասաց, թէ ինքը իր աչքով տեսել է: Խանն էլ իսկոյն սարվազներ ուղարկեց Աշտարակ, որ տակն ու վրայ անեն գեղը, և որ տեղից ըլի ոսկի գութանը գտնեն, բերեն իրան տան: — Պարսից սարվազներն էլ ամեն փողոցով վազեվազ են անում ու հոտառու շների նման ամեն մի դռան առաջին կանգ առնում, խանի մէկ հրամանը հազարով կատարելու համար. էլ ոչ մի դուռ դրանց առաջին փակ չի մնում, մի քանի քացի խփելումը դուռը տեղահան են անում ու տուն թափվում. էլ քունջ ու պուճախ չի մնում, էլ գոմերի մսուրքներ, պատերի խոռոչակներ, սանդուղների տակեր չեն թողնում, որս պտտող թազիների նման ամէն տեղ քըքըրում են: Մի տանից՝ տեսնում ես՝ պղնձեղէն են դուրս քաշում, միւս տանից՝ կճուճ բժուժներ, մի ուրիշ մառանից՝ ծիրանի չրով լիքը քթոցներ. ինչ որ պէտքական գտան, ձեռից չեն թողում: Մի խօսքով ամէն բան կոտրատեցին, քանդեցին, շուռ տուեցին: Գեղի ժողովուրդն էլ հեռուից նայում է, վա՜յ է տալիս գլխին, դաղվում ու կրակվում է, բայց ինչ անես, զօրութիւն չունին, որ դէմ տան: Չար Ղևոնդը տանու գողի պէս պարսիկներին տանում է դէպ գեարանենց բակը: գեարանենց քունջ ու պուճախը քըքըրեցին, էս տեղ էլ ծակ տեղ չմնաց տակն ու վրայ արին, ոսկի գութանը չկար: Ղևոնդն իր միսն էր ուտում; նա երեխութենից լսել էր, բոլոր Աշտարակեցիք էլ նրա հետ հաստատ հաւատացած էին, որ գեարանենք ոսկի գութան ունին, հապա ո՞ւր է: Էլի ման եկան, էլի քըքըրեցին, չկայ, չկայ ու չկայ. իսկ Ղևոնդը հաւատացնում ա, թէ կայ: Յակոբ պապը հեռուից նայում ու լսում ա: Ոնց որ մի կանգնած ջուր, որ եղանակը հանդարտ ժամանակ չես էլ իմանալ, շարժվում է թէ ոչ, այդպէս ոչինչ ազդեցութիւն չէին կարողանում անել ծերունու վերայ ոչ տունը քըքըրելը, ոչ Ղևոնդի խօսքերը: Ամենևին այնմ էլ չէր քցում. երեւում էր, որ պարզ ծիծաղում էր մարդկանց արարքի վերայ:

«Յիմար Ղևոնդ», վերջապէս բեղի տակին ծիծաղելով

տեսաց Յակոբ պապը, «ոսկէ գուլթանը ձեր առաջին ընկած ա, ու դուք ձեր քոռ աչքովը չէք տեսնում: Գիտէք ինչ կայ, — յետ դարձաւ նա հետաքրքրութեամբ ականջները սրած իւր չորս կողմը հաւաքուածներին, — Գեւորանենց տունը նախնուց պարծեցել ա իր ոսկի գուլթանովը, համա ընչանք էս օր ձեզանից մինը տեսել չի. ընենց չի՞: Ա՛յ, ասեմ ձեզ. մենք ունենք ոսկի գուլթան. տեսնում էք բակումը պատի տակին ընկած փէտէ գուլթանը. տեսնում էք ծերի ժանգոտած երկաթէ խափը, հէնց էն ա, որ մեզ համար ոսկի ա բերում. պապ ու տատից մենք լսել ենք մանկուց, որ գուլթանի անունը Ոսկի պտի տուած, նա որ չլնի՝ բոլորեքեանքս էլ սոված կը կոտորուինք:» Աշտարակեցիք բերանը բաց՝ զարմացած մնացին:

Պռօշեանց:

4. Հայի գերդաստանը:

Դ.... գեղի վերի թաղումը մի տուն կար բոլորովին հեռու միւս տներից: Այդ տան չորս կողմովը բաւականին բարձր չափար էր քաշած, որ պարսպի ամրութիւն ունէր, և ինչպէս ասում են հէքիաթներումը, ղուշն իրան թեւովը, օձն իրան փորովը չէր կարող դորա վերայով ներս թափանցել: Ժամանակով մեծ տուն էր այդ տունը: Մի անգամից ութ ինը օրօրոց էր օրօրվում այդ տանը, չորս հինգ թոնր հաց էր թխվում Աստծու օրը: Երկու գութան էր դուրս գալիս այդ տանիցը, վաթսուն գլուխ կով ու գոմէշ էր կթվում. սուրուով ոչխարներ, բոլուկներով խոզեր, իլխիներով ձիաներ էին պահվում: Այդքան ապրանքի կառավարութեան համար ոչ մի վարձկան ծառայ չունէին: Տան աղպէր էին որդոց ու թոռանց տէր, որոց թիւը համնում էր եօթանասունի: Բայց երբէք չէր պատահում, որ դոքա ամէնքը երբ և իցէ ի միասին մի սուփրի վերայ ճաշէին, ի միասին իրանց նահապետի չորս կողմը ժողովուէին: Քանի մի հոգի տարուայ մեծ մասը սարերումն էին անց կացնում, ըստ որում ոչխարներ էին պահում, մի քանիսը որպէս տաւարած գոմերումն էին մնում, որ մի աւուր չափ հեռու էր գիւղիցը, մնացածներն էլ հեռաւոր դաշտերում վարուցանքով էին պա-

րապում: Թէպէտ դոքա այսպէս միշտ տանից հեռու էին մնում, այնու ամենայնիւ իրարու կարօտ էին քաշում և իրարու հետ սիրով մնում:

Ահագին մեծութիւն ունէր այդ տան շինութիւնը, և եթէ այդպէս շէն չլինէր, մտնողի վերայ սարսափ կը բերէր, ինչպէս որ հէքիաթներում ամայի տունը սարսափ է բերում մտնողի վերայ, մանաւանդ նախապաշարեալ գիւղացու վերայ: Հարիւր երեսուն տարեկան էր որ մեռաւ այս տան վերջին նահապետը և ինքն ականատես էր իւր բոլոր ժառանգների և հարստութեան կարճ միջոցում ոչնչանալուն, բայց Աստուծոյ փառքը իւր բերնից չպակսեցրեց մինչեւ մահը: Յակոբը էր նորա անունը և միշտ միտս էր ձգում Հրէից Յակոբը նահապետին: Շատ անգամ եմ համբուրել նորա ձեռքը և նա ինձ օրհնել է: Դորա օրհնութիւնը մեծ տպաւորութիւն էր գործում իմ մանկական սրտի վերայ: Սուրբ էր համարվում դորանց օջախը և սովորութիւն կար գիւղի մէջ, որ նորապսակ հարս ու փեսաներին, եկեղեցուց դուրս բերելուց յետոյ, կը բերէին դորանց օջախ համբուրելու: Չոքում էին նորապսակները և ծերունազարդ Յակոբի օրհնութիւնը ստանալով գնում էին իրանց մուրազին համնում:

Աղայեանց:

5. Մեծ նանը:

Գերդաստանի մէջ ամէնքից աւելի նախապատիւ է համարվում և ամէնքի վերայ իշխում է հ ա յ ր ը: Նորա վերայ է բոլոր տան բեռը, հոգսը, մնուցանելու և հագցնելու ծանրութիւնը:

Տան երկրորդ սիւնն է մ ա յ ր ը: Քանի հայրը կենդանի է, մայրը նորա աջու ձեռքն է ամէն բանի մէջ, նորան օգնում է ինչով որ կարող է: Տան մէջ Աստուծոյ երկիւղ, սէր, պատկառանք պահպանողը մայրն է, աղքատի աղաչանքի լսողը, ղարիբին և զօնաղին օթեւան տուողը դա է, ամենայն բան տնտեսողը, մեծ ու պստիկի վերայ հոգ տանողը դա է, ամէնի մխիթարիչ, ուրախակից և ցաւակիցը դա է: Հօր մահուանից յետոյ,

տան գլուխը մայրն է դառնում, նա առնում է իւր վրայ ամբողջ գերդաստանի սանձը և վայելում է ընդհանուր յարգանք:

Այս այրի կինը այնուհետև կոչվում է նանի, ազի կամ մեծ նանի յարգելի անունով, և ունի մեծ իշխանութիւն ամենու վերայ: Այն օրուանից առանց նրա տնօրէնութեան և խորհուրդի ոչինչ բան չի կատարուիլ: Ոչ միայն աղջիկները, ոչ միայն տան փոքրիկները, այլ և նրա կատարելահասակ որդիքն էլ առանց նանի, կամ մեծ նանի ոչինչ գործ չեն բռնիլ: Եթէ եղբայրները անբաժան են, նոքա բոլորեքեանք ամեն երեկոյ մանրամասնօրէն հաշիւ կը տան իւրեանց մօրը բոլոր կատարած գործողութեանց համար, — իսկ եթէ բաժանուած են, նոքա և առանձնապէս իւրեանց մօրը կը հաղորդեն իւրեանց գործելքը, և կը լսեն նրա տուած բարի խորհրդին:

— Գնամ նանիս հարցնեմ, օրհնի էս իմ նոր գործը, որ Աստուած էլ յաջողի:

Եթէ որդիքը բաժանուած են, նանն ապրում է մէկի մօտ, որն աւելի կարօտ է հսկողութիւնների, որի երեխայքը մանր են, կամ որի կինը աւելի պատանի և անփորձ է: Բայց և այնպէս իւր բոլոր որդոց տները իւր սեպհականութիւնն է. ժամանակ անժամանակ մնում է նոցա մօտ, այն տեղ կարգադրում է, կերակուր է եփում ու առանց իւր հարսին հարցնելու՝ բաժիններ է ուղարկում իւր մէկէլ որդուցը կամ ամուսնացած աղջիկներին ու մօտիկ չքաւոր հարևաններին: Հարսն էլ պէտք է անպայման հնազանդի իւր սկեսօր հրամաններին և ինքնագլուխ ոչինչ չկատարի: Այսօր նա մեծ նանն է, քանի որդի ունի՝ էնքան էլ տուն ու օճախ ունի, էնքան էլ շերեփ կայ ձեռին:

Մեծ նանին ոչ թէ միայն հարազատ որդիքն են լսել. երեք չորս հօրեղբօր որդիք զաւակներով, թոռներով և ծոռներով նայել են մի ժամանակ մի ժրաջան տանտիկնոջ ձեռին. քառասուն, յիսուն, վաթսուն, մինչև անգամ 80 հոգի մի ընտանիք են կազմել և այդ փոքրիկ գիւղի ամբողջութիւնը, պետակազմութիւնը մեծ նանն է եղել, նա է իւր ձեռքովն ամենքին իւր արժանաւորութեան համեմատ բաժին տուել ու նրա արածի վրայ ոչ ոք չի տրտնջացել: Նանի ահուց ո՞նց կը համարձակուին տեգերակնանիքը իրար հետ կռուել կամ իւրեանց երեխեքանցը կեղտոտ պահել: Ամենայն տեղ հասնում է նանի սուր աչքը:

Այսպիսի մեծ նաները ոչ միայն իւրեանց ընտանեկան շրջանի մէջ, նոքա դուրսը գիւղի մէջ յարգ և պատիւ ունին, հարսանիքներում ու մահենիքներում միշտ վերի կողմն են բազմում: Օտարները նոցա խորհուրդ են հարցնում: Գիւղի միջովն անց կենալիս երիտասարդ տղայ մարդիկ նրա առաջին ոտք կը կանգնին և համեստութեամբ կը պատասխանեն մեծ նանի բարևին: Ջահել կանայքը տանն էլ, քուչումն էլ պարտական են մեծ նաների ձեռքը պաչել. թէ կուզ կուժն ուսին էլ լինի, պէտք է մօտենայ մեծ նանին գլուխ տայ ու այնպէս անց կենայ:

Պռօշեանց

6. Մայր և որդի:

Մի մայր մի պստիկ երեխայ ունէր. նա այնպէս գեղեցիկ և խելօք էր, որ ով որ տեսնէր պէտք է ակամայ սիրէր նորան, և ամենքն էլ շատ սիրում էին նորան: Մէկ անգամ յանկարծ հիւանդացաւ, և Աստուած նորան իւր մօտ կանչեց. խեղճ մայրը մնաց անմխիթար և օր ու գիշեր լաց էր լինում: Մի քանի ժամանակ նորան թաղելուց յետոյ, մանուկը երևեցաւ գիշերը այն տեղ, ուր կենդանութեան ժամանակ սովորաբար նստած ու խաղում էր. մայրը արտասուք էր թափում, մանուկն էլ լաց էր լինում և առաւօտեան լոյսը բացուելու պէս՝ անյայտանում էր: Բայց որովհետև մայրը չէր դադարում լաց լինելուց, եկաւ նա մի գիշեր իր սպիտակ շապկով, որով որ դագաղն էր դրուած, նստեց նորա ոտի տակին անկողնու վրայ և ասաց. «Մայրիկ, էլ լաց մի՛ ըլի, թէ չէ ես իմ դագաղումս չեմ կարողանում քնել, որովհետև իմ շապիկը չի չորանում քո արտասունքներից, որ բոլորը նորա վրայ են թափվում:» Այս լսելով մայրը՝ մեղքացաւ իր որդուն և էլ լաց չեղաւ: Եւ ահա միւս գիշերը մանուկը դարձեալ եկաւ, ունէր ձեռին մի ճրագ և ասաց. «Տեսնում ես, մայրիկ, շապիկս չորացել է, և ես գերեզմանիս մէջ հանգիստ եմ:» Մայրն այնուհետև Աստուծուն յանձնեց իր վիշտը, համբերութեամբ ու անխռով տարաւ իր ցաւը. իսկ մանուկն այլ ևս չերևեցաւ և հանգիստ հանգչում էր գետնի տակի հողէ անկողնու մէջ:

7. Հայր և երեք որդի:

Շատ տարի առաջ արևելքումը ապրում էր մի մարդ, որ մի թանկագին մատանի ընծայ ստացել էր իրան սիրելի անձից: Քարն էր մի գոհար, որ բիւր գեղեցիկ գոյներով խաղում, և ունէր իւր մէջ ծածուկ զօրութիւն՝ Աստծուն և մարդկանը հաճելի անել, ով որ այդ յուսով կրում էր մատին: Ուրեմն ինչ զարմանք, որ այդ պատճառով արևելքեան այն մարդը երբէք մատից հեռացնում չէր այն մատանին, և կարգադրութիւն արեց յաւիտեան պահել իւր տան մէջ: Ահա այս կերպով մատանին թողեց նա իւր ամենից սիրելի որդուն և կըտակ արեց, որ սա էլ նոյնպէս յանձնէ այն որդուն, որին աւելի սիրում կը լինի. և միշտ ամենից սիրելի որդին, առանց նայելու նորա հասակին, միայն մատանու զօրութեամբ՝ լինի տան տէրն ու մեծը:

Եւ այսպէս որդոց որդի անցնելով՝ վերջապէս հասաւ մատանին մի հօր, որ ունէր երեք որդի: Երեքն էլ հաւասար հնազանդ էին միշտ նորան, և հետևաբար ինքն էլ հաւասար սիրում էր նոցա: Միայն երբեմն սա, երբեմն նա, երբեմն երրորդը թւում էր նորան աւելի, քան թէ միւս երկու որդին, արժանի ստանալ այն թանկ մատանին, որ և առանձին խոստանում էր նա իւրաքանչիւրին: Այդ բանը այսպէս շարունակուեցաւ — մինչև մեռնելու ժամանակն եկաւ, և բարի հայրը տարակուեցաւ: Նա շատ ցաւում է, որ պէտք է զրկէ իւր երկու որդուն, որոնք իւր խոստմանը հաւատացին: — Ի՞նչ պէտք է անէր: — Ծածուկ կանչում է իւր մօտ մի վարպետ, որին յանձնում է իւր մատանու պէս երկուսը շինել, և պատուիրում է չը խնայել ոչինչ ծախս և աշխատանք, որ բոլորովին նման լինեն իւրին: Այդ յաջողում է վարպետին: Երբ որ մատանիները բերում է հօր մօտ, ինքը հայրն անգամ չէ կարողանում որոշել, ո՞րն է իւր իսկականը: Ուրախ կանչում է իւր որդկերանցը իւրաքանչիւրին առանձին իւր մօտ. իւրաքանչիւրին առանձին տալիս իւր օրհնութիւնը և իւր մատանին, — ապա մեռնում է:

Հազիւ թէ հայրը հոգին աւանդեց, որ ամեն մէկը ահա գալիս է իւր մատանիով և ուզում է տան իշխանը լինել: —

Սկսում են քննել, վիճել, գանգատել: Ի զո՜ւր. ոչ մէկը չէ կարողանում ապացուցանել, թէ իւր մատանին է իսկականը: Ինչպէս ասացինք, որդիքն իրար դէմ գանգատ յայտնեցին և ամեն մէկը երդմամբ հաստատում էր դատաւորին, թէ անմիջապէս հօրիցն է ստացել նա իւր մատանին և պիտի վայելէր նա այն մատանու արտօնութիւնը:

Դատաւորն ասաց. «թէ տեղն ու տեղը չէք բերիլ իսկոյն
« ինձ մօտ ձեր հօրը, ապա կարտաքսեմ ձեզ իմ ատեանից:
« ...Բայց կացէք: Չէ՞ որ լսեցի ձեզնից, որ այն մատանին
« ունի հրաշալի զօրութիւն իւր մէջ, Աստուծոյ և մարդկանց
« առաջ սիրելի անել իւր տիրոջ: Այդ պէտք է վճռէ, որով-
« հետև սուտ մատանիները չունին իրանց մէջ այդ զօրու-
« թիւնը: — Դէհ այժմ ասացէք, ձեզնից երկուսը որի՞ն աւելի
« սրտով սիրում էք: — Դէհ, ասացէք, է: Ինչի՞ էք լռում...:
« Մատանիներ ազդում են միայն տէրերի՞... և ո՞չ ուրիշների
« վրայ...: Եւ ամեն մէկը ձեզանից միայն ինքը իւր անձն է
« սիրում: — Ապա ուրեմն երեքդ էլ խաբուած խաբեբաներ էք.
« և ձեր երեքի մատանիներն էլ իսկականը չեն: Անշուշտ իս-
« կական մատանին կորաւ, և այդ կորուստը ծածկելու համար
« նորա փոխարէն հայրը շինել տուեց ուրիշ երեքը:»

« Ուրեմն եթէ», այսպէս դատաւորը շարունակեց, «վճռիս
« փոխանակ չէք ուզում լսել դուք իմ խորհուրդը, գնացէք
« այս տեղից: — Իսկ խորհուրդս այս է: Դուք ամեն մէկդ
« բաւականացէք ձեր ունեցածով, եթէ ձեր հօրից էք
« ստացել դուք ձեր մատանիները. թող ամեն մէկը ձեզնից
« հաւատայ, թէ իւր մատանին է իսկականը: — Գուցէ՞ ուզում էր
« հայրն այն մատանու բռնութիւնը իւր տանից վերացնել: —
« Անշուշտ սիրում էր նա երեքիդ էլ հաւասար
« սիրով, որ չէր կամենում թոյլ տալ, որ մէկը ճնշէ եր-
« կուսին: — Ուրեմն ձեզնից թող ամեն մէկը աշխատի
« սիրել անկեղծ և առանց նախապաշարման մնացած եր-
« կուսին: Թող ամեն մէկը ձեզանից ձգտի, որ իւր մատանու
« բարի զօրութիւնն երևան հանէ, և այդ զօրութեան օգնա-
« կան լինի նա իւր հեզութեամբ, խաղաղսիրութեամբ, ան-
« կեղծ, ջերմեռանդ անձնուիրութեամբ առ Աստուած:» Ահա
ինչ ասաց դատաւորն համեստ:

Թարգ. Բարխուդարեանց:

8. Երկու քոյր:

Մեզնից շատ առաջ կար մի Թագաւոր,
Հոգւով դեռ արի, գլխով ալեւոր,
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
Ոսկի ասացին գիտունք այն դարը:
Ունէր նա երկու մատղահաս աղջիկ՝
Մինը խիստ տգեղ, միւսը գեղեցիկ:
Մի օր տգեղը ասաց միւսին.
«Երթանք ծովի ափ, քուրի՛կ, միասին:»
Սիրունը գնաց առաջից տրտում,
Տգեղը ետնից ոխ պահած սրտում:
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,
Իւր սիրուն քրոջ գլորեց նա ցած:
Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.
«Քուրի՛կ իմ, քուրի՛կ, փրկէ՛ ինձ մահից.
«Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
«Ա՛ռ, էն քեզ լինի, պարգեւէ՛ ինձ կեանք...»
—Էն առանց քեզ էլ կարող եմ առնել,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:—
«Քուրի՛կ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,
«Կու տամ քեզ ոսկի պըսակ պատուական:»
—Էն առանց քեզ էլ կարող եմ առնել,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:—
«Քուրի՛կ, մի թողնիլ դու ինձ անտէրունջ,
«Քեզ սիրուն փեսաս կու տամ անտրտունջ:»
Տգեղի սիրտը դառել էր ժեռ քար,
Քրոջ խնդիրքը թողեց անկատար:

*

Ձկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
Բռնեց մարմինը սիրուն աղջկան.
Ջրից հանեց, դրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ:
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջըկան,

Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան.
Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,
Ջորացուց նորա մարմնու դիփ հիւթը:
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից:
Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,
Գնաց արքունիք տաւիղը ձեռքին:
Երբ մտաւ դահլիճ շքեղ զարդարած,
Տեսաւ տգեղին փեսի մօտ կայնած.
Բացեց բերանը, լարերին խփեց,
Հիւրերի առջեւ քաղցրաձայն երգեց.
«Հնչէ՛, իմ տաւիղ, հնչէ՛ համարձակ,
«Հարազատ քոյրըս խըլեց իմ պսակ,
«Լըսէ՛, իմ ծնող, լըսէ՛, սիրական,
«Հարազատ քոյրս խըլեց իմ փեսան:
«Լսէ՛, ժողովուրդ, լսէ՛ անխռով,
«Հարազատ քոյրս գլորեց ինձ ծով:»

*

Միւս օրը դահիճք խարոյկ շինեցին,
Մահապարտ քրոջ մէջը գլորեցին:
Հուրը պըլպըլաց, աղջիկը կանչեց.
—Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց:—

Ռ. Պատկանեան:

9. Եօթն ագռաւներ:

Մի մարդ ունէր եօթը տղայ եւ ոչ մէկ աղջիկ, թէպէտ եւ շատ էր ցանկանում մէկն ունենալ. վերջապէս Աստուած մէկ աղջիկ էլ բաշխեց նորան: Այդ աղջիկը շատ սիրուն էր. բայց ծնուեցաւ խիստ թուլակազմ, ուստի եւ հարկաւոր էր ժամ առաջ կնքել նորան, որովհետեւ երեւում էր որ չպէտք է ապրի: Հայրը փութով ուղարկեց իր որդիներանցից մէկին աղբիւրը՝ կնունքի համար ջուր բերելու, եւ մնացած վեց որդիքն

էլ հետը փախցին: Բայց նոցանից ամեն մէկը ուզում էր, որ ինքը առաջինը ջուր հանէ, և ամանը միմեանց ձեռքից խլելով՝ անզգուշաբար ջրհորը ձգեցին: Խեղճերը մնացին շուարած և չգիտէին, թէ ինչ անեն: Իսկ հայրը անհամբեր ու երկիւղով սպասում էր, չլինի թէ, աղջիկը չկնքած մեռնի, և չէր իմանում, թէ ի՞նչու տղերքն ուշացան: «Անշուշտ», ասաց նա, «խաղի եռանդից ընկնելով մոռացան նոքա իմ պատուէրս:» Եւ որովհետև սպասելուն վերջ չկար, բարկանալով անիծեց. «Ագռաւի պէս սևանաք, որդիք:» Այս ասելն ու իր գլխի բոլորքը օդի մէջ թևերի խշշոց լսելը մէկ եղաւ, վերև նայեց և եօթն ագռաւ տեսաւ դէս ու դէն թռչելիս:

Տարակուսած ծնողները հնար չունէին կապած անէծք յետ առնել և շատ տրտում էին իրանց եօթը տղերանց կորստեան համար. նոցա միակ մխիթարիչը իրանց չքնաղ աղջիկն էր, որ քիչ ոյժ առացաւ և օրէցօր աւելի գեղեցկացաւ: Աղջիկը երկար ժամանակ չգիտէր, թէ եղբայրներ է ունեցել, որովհետև ծնողները աշխատում էին ամենևին չխօսել այդ մասին, մինչև որ մի օր պատահաբար լսեց, ինչպէս մարդիկ իրար մէջ խօսում էին, թէ աղջիկը արդարև գեղեցիկ է, բայց և այնպէս դա է իր եօթը եղբայրների դժբախտութեան իսկական պատճառը: Սաստիկ տխրեցաւ և գնաց հօրն ու մօր մօտ և հարցուց, թէ արդեօք եօթը եղբայրներ ունեցե՞լ է երբևիցէ և ո՞ւր են նոքա: Ծնողները չէին կարող այլ ևս գաղտնիքը ծածկել, բայց ասացին, թէ երկնքի տնօրէնութիւնը այդ էր եղել, իսկ աղջկայ ծնունդը միայն մի անմեղ առիթ էր: Բայց աղջիկն ամենայն օր խղճահարվում էր և ասում էր, թէ ինչպէս ինքը նոցա կորստեան պատճառ դառաւ, այնպէս էլ պէտք է ազատէ նոցա: Եւ հանգիստ և խաղաղութիւն չունեցաւ, մինչև որ մի օր ելաւ և գնաց հեռու երկիրներ եղբայրների հետքը գտնելու և նոցա փրկելու համար, յանձն առնելով ամենայն տեսակ դժուարութիւններն ու չարչարանքները: Հետն առաւ միայն իր ծնողաց մատանին յիշատակի համար, քիչ հաց և ջուր:

Այս աղջիկը գնաց, գնաց մինչև աշխարհքի վերջը: Եկաւ արեգակի մօտ, բայց նա շատ տաք և սարսափելի էր և փոքր երեխէքին լափում էր: Փութով հեռացաւ այդ տեղից և գնաց լուսնեակի մօտ, բայց նա էլ շատ ցուրտ էր և խիստ ու չար, և երբ որ եկողին նկատեց, ասաց. «մարդու հոտ եմ առ-

նում:» Արագ հեռացաւ դորանից էլ և եկաւ աստղերի մօտ, սոքա ուրախ սրտով ընդունեցին նորան: Ամէն մէկ աստղը իւր աթոռի վերայ առանձին նստած էր: Իսկ աղօթարանը վեր կացաւ տեղից, տուեց նորան մի փոքր բանալի և ասաց. «եթէ այս բանալին չունենաս՝ դու չես կարող սպիտակ աղահանքի լեռը բաց անել, իսկ այդ լեռան մէջն են եղբայրներդ:»

Աղջիկը առաւ բանալին, փաթաթեց շորի մէջ և գնաց շարունակեց ճանապարհը, մինչև որ աղահանքի լեռը հասաւ, որի դուռը կողպած էր: Ուզեց բանալին հանել, բայց երբ որ շորը բաց արաւ, տեսաւ որ դատարկ է և բարի աստղի ընծան կորել է: Ի՞նչ պէտք է անէր. ուզում էր եղբայրներին ազատել, բայց աղահանքի լեռան բանալին չունէր: Բարի քուրիկը վեր առաւ դանակը, կտրեց իր փոքրիկ մատը, դրեց դռան մէջ և յաջողութեամբ բաց արեց: Երբ որ մտաւ մէջը, նորա առաջ դուրս եկաւ մէկ թզուկ և ասաց. «Որդի, ի՞նչ ես ուզում:» — «Ես իմ եղբայրներին եմ ման գալիս, եօթը ագռաւներին», պատասխանեց նա: Թզուկն ասաց. «Ագռաւ պարոնները տանը չեն, բայց եթէ կը համբերես մինչև նոցա գալը, մտիր այս տեղ և սպասիր:» Յետոյ թզուկը ագռաւների ճաշը բերեց եօթը լաւաշի վրայ, և եօթը բադիայով. իւրաքանչիւր լաւաշից աղջիկը մի պտղի կերաւ և իւրաքանչիւր բադիայից մի կում խմեց, բայց վերջին բադիայի մէջ մատանին ձգեց, որ իր հետը բերել էր:

Յանկարծ օդի մէջ լսուեցաւ թևերի խշշոցը, այն ժամանակ թզուկն ասաց. «Ահա գալիս են ագռաւ պարոնները:» Եկան նոքա, ուզեցին ուտել և խմել, և սկսեցին որոնել իւրեանց բաժինն ու բադիան: Եւ մէկ մէկու ետևից ամենքն ասացին. «Իմ լաւաշից ո՞վ է կերել, իմ բադիայից ո՞վ է խմել... մի մարդու բերան է այս արել:» Եւ երբ որ եօթներորդը բադիայի տակը հասաւ, մատանին չըչխկալով ընկաւ նորա բերանը: Նա ձեռքն առաւ իսկոյն մատանին, նայեց և ճանաչեց, որ իւր հօրն ու մօրն է, և ասաց. «Աստուած տայ, որ մեր քոյրը այս տեղ եկած լինի, մենք այն ժամանակ կը փրկուէինք:» Հէնց որ աղջիկը այս փափագը լսեց, դուրս եկաւ դրան ետևից, ուր թաքս էր կացել ականջ դնելու, և իսկոյն բոլոր ագռաւները վերստին իրանց մարդկային կերպարանքն առան: Եւ ինչ խնդում և ուրախութիւն էր, ինչպէս համբուրում էին միմեանց, որ կարող են տուն դառնալ նոր աշխարհք տեսածի պէս:

10. Երգ պանդուխտ պատանեկի:

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա,
Թռչում ես, այդպէս արագ:

Ախ, թռիր, ծիծեռնակ,
Ծնած տեղս Աշտարակ,
Այնտեղ շինիր քո բոյնը,
Հայրենի կտուրի տակ:

Այնտեղ հեռու աւեր
Հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ ցօր:

Երբ տեսնես դու նորան՝
Ինձանից շատ բարեւ արա,
Ասա, թող նստի լայ
Իւր անբախտ որդու վրայ:

Դու պատմէ, թէ ինչպէս
Այս անտէր ու խեղճ եմ ես.
Միշտ լալով, ողբալով
Կեանքս մաշուել, եղել է կէս:

Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս:

Շուտով սառ հողի տակ
Կը պառկիմ այստեղ մենակ,
Թողնելով հօրս սրտում
Ցաւալի յիշատակ:

Գնա՛, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր գնա արագ,
Դէ՛պ Հայոց աշխարհը
Ծընած տեղս — Աշտարակ:

Դոդոխեանց.

11. Ամուսնական հաւատարմութիւն:

I.

Մէկ աշխարհքում կենում էր իշխան Նալան, մէկ ուրիշ աշխարհքում — թագաւորի աղջիկ Դամայեանտին: Մէկ օր մէկ սպիտակ կարապ, որի թեւերը ոսկուց պեծպծի էին տալիս, ասաց Նալային. «Կերթամ Դամայեանտի թագուհու մօտ քեզ էնպէս կը գովեմ, որ նա իւր օրումն էլ ուրիշ թագաւորի որդու վրայ չմտածէ, բայց միայն քեզ վրայ: Նալա՛յ, գիտես թէ ինչ է Դամայեանտին: Դամայեանտին, ա՛խ, ինչ ասեմ — աշխարհքի աչքն է Դամայեանտին. երկնքի տակին, գետնի երեսին անթա-

ռամ ծաղիկ է Դամայեանտին. վարդ մանուշակ, անգին, անհատ է Դամայեանտին. ինչ լեզու պէտք է լինի, որ նրա գեղեցկութիւնը պատմէ, ինչ աչք, որ նրա տեսքը ու կերպարանքը մէկ բանի նմանեցնէ: Ո՞րն ասեմ, Նալա՛յ, ո՞րը. նրա նմանը ո՛չ եղել է էս երկրի վրայ, ոչ էլ կը լինի: Դու ես մարդկերանց զարդը, նա աղջկերանց զարդը, բայց ի՞նչ է քու բախտաւորութիւնը, երբ դու նրան չունիս՝ երբ նա քեզ չէ սիրում:» Էս ու հազար էսպիսի բան ասաց էս ոսկեփետուր կարապը: Նալայի սիրտը կրակ ընկաւ ու ասաց. «Գնա՛ ինձ համար էլ էդպէս խօսիր Դամայեանտու առաջ:» Թռչունը գնաց ամպերը պատռեց և եկաւ կանգնեց Դամայեանտու առաջ: Հիմա էլ նորա հետ սկսեց էսպէս խօսել.

«Սիրո՛ւն Դամայեանտի, թո՛ղ քեզ Նալայ թագաւորի վրայ պատմեմ, որի ձեռից յօրէս թռել եմ, քեզ մօտ եմ եկել: Ա՜խ թագուհի, ինչպէ՜ս սկսեմ — նրա գեղեցկութիւնը աննման է. նրա աննման գեղեցիկ պատկերը, նրա անուշ լեզուն, քաղցր ձէնը մարդի խելք են տանում: Քարին, փէտին — շունչ հոգի է տալիս: Նա որ ծիծաղում է, հենց իմանաս վարդ է բաց լինում, երեսիցը լոյս վեր թափում: Թագուհի՛, որ տեղ ես գնացել եմ, ոչ մի տեղ չեմ տեսել նրա պէս գեղեցիկ, նրա պէս առաքինի: Չնայելով որ թագաւորի որդի է, նրա մէջ հպարտութենի նշոյլ չկայ — նա մեծի հետ մեծ է, փոքրի հետ փոքր: Ա՜խ Նալան, Նալա՛ն, երկրիս պարծանքը, աշխարհքիս զարդը, մարդկերանց աչքը, թագաւորներու թագաւորը, որբերու հայրը, այրիներու և աղքատներու պաշտպանը, ամենի սիրեկանը, որի անունով ողջ աշխարհ երդվում է և արևով խնդում: Էս Նալան պէտք է քու փեսան լինի, որ դու ամենաբախտաւոր կին լինիս աշխարհի վրայ. քեզ հիմի, Դամայեանտի՛, ուրիշ բան չէ պակաս էդ զարդից աւելի: Դու գիտես, Դամայեանտի՛, որ սէրից լաւ բան չկայ երկրիս վրայ, բայց թէ սէրը երկու ձեզ պէս հրեշտակներու մէջ լինի, էն ժամանակ ձեր արքունիքը կը դառնայ դրախտ՝ երանելիների բնակարան:» Էստոնք ասելուց ետոյ, թռաւ կարապը Դամայեանտու ձեռիցը: Սա երկար ժամանակ անշարժ նստած, կարծես էլի մի բանի ականջ լինէր դնում: Վերջապէս ուշքի եկաւ, տեսաւ, որ կարապը թռել է ու ասաց. «Ա՜խ, ինչ կը լինէր, որ էն ոսկեթեւ կարապը ինձ համար էլ էդպէս խօսէր Նալայի մօտ:»

Էս օրուանից սկսած Դամայեանտին գիշեր ցերեկ Նալայի

վրայ էր մտածում. էլ ոչ քուն ունէր, ոչ հանգստութիւն, նրա թշերու վարդը կամաց կամաց սկսեց թառամել, աչքերի պէծը պակասել: Ոչ ոք չէր իմանում նրա տխրութեան պատճառը: Հայրը, որ նրան աչքի լոյս պէս էր սիրում, մտքումը դրեց նրան մարդու տալ: Ամէն տեղից թագաւորներ ու իշխաններ իր մօտ հրաւիրեց, որ Գամայեանուհին կարողանայ նրանց միջից իրան փեսայ ընտրել: Էս համբաւը լսւեցաւ թէ չէ՝ ամէն կողմից թագաւորներ ու իշխաններ ճանապարհ ընկան, զարդարուած գեղեցիկ շորերով, թանկագին քարերով, մարգարիտներով ու զանազան պսակներով: Բայց Գամայեանուհին ամենու միջից ընտրեց Նալային: Էս տեսնելով՝ ամէնքը ուրախացան և օրհնեցին ընտրութիւնը: Նալան չոքեց իր հարսի առաջևը և երդում տուեց, որ նրան հաւատարիմ կը մնայ և կը սիրի մինչև որ շունչը բերնումը կունենայ:

II.

Սոքա էսպէս բախտաւոր ապրում էին, բայց չար դևը նախանձում էր դոցա բախտաւորութեան վրայ. Նա գիշեր ու ցերեկ այն էր մտածում, որ մէկ կերպ Նալայի սիրտը մտնի, որ նորան փչացնել կարողանայ: Բայց չարը չէր կարողանում Նալային մօտենալ, ինչու որ սա միշտ Աստուծու հրամանները կատարում էր, բարի և արդարադատ էր, իր հպատակներու հայրն էր, չէ թէ թագաւորը: Վերջապէս եօթն տարուց ետոյ՝ մէկ գիշեր Նալան շատ դադրած լինելով, քնեց առանց աղօթք անելու ու առանց լուացուելու, և որովհետև նրա մարմինը մաքուր չէր՝ չար ոգին ճանապարհ գտաւ նրա մարմնու մէջ:

Այս օրուանից Նալան սկսեց խաղալ և ամէն զար գլորելիս Նալայի ոսկին, արծաթը, ապարանքներն ու քաղաքներն էլ հետն էին գլորվում: Նալան անդադար տանուլ էր տալիս ու էդ պատճառով աւելի տաքանում էր խաղի մէջ: Գամայեանուհին տեսաւ, որ Նալան պիտի իր ունեցած չունեցածը ողջ տանուլ տայ, սկսեց խնդրել Նալային, որ խաղից ձեռք վերցնի, բայց ի զուր: Նալան մինչև էս օր մէկ օր նրա խօսքից չէր դուրս եկել—միշտ աչք ու ականջ սրած ունէր՝ որ իմանայ թէ իր սիրելի Գամայեանուու կամքն ինչ է, ու գլուխը մահու էր տալիս, որ նրա կամքը կատարէ. հիմիկ ոչ նրա խնդիրքն է

լսում և ոչ նրա աչքի արտասունքին էր մտիկ անում: Նալայի ունեցած չունեցածը խաղի մէջ գնաց. վրայից հանեց իր թագաւորական զարդերը, ունեցած ոսկին ու մարգարիտը ու մի հասարակ զգեստով դուրս եկաւ իր թագաւորական պալատից: Գամայեանուհին էլ մի միակ զգեստով դուրս եկաւ նրա հետ: Սրանք էսպէս տանից տեղից զրկուած երեք օր և երեք գիշեր երկնքի տակը անցկացնելից ու պտուղներով կերակրուելից ետոյ՝ մէկ փոքրիկ թփի վրայ երկու թռչուն տեսան: Նալան շատ ու շատ ուրախացաւ սրանց տեսնելով ու իր մտքումը ասաց. «Սրանք լաւ խորովածացու են:» Էս ասելը, իր զգեստը վրայից հանելն ու ցանցի պէս թռչուններու վրայ գցելը մէկ եղաւ, բայց ափսոս որ սրանք էն թռչուններից չէին, որ Նալային համով խորոված ուտեցնէին: Գործ է, զգեստը նրանց վրայ մնաց, բայց նրանք էլի վեր թռան ու զգեստն էլ հետը տարան ու Նալային վերևից ձէն տուին.

«Ա՛յ անխելք, մենք էն զարերն ենք, որ քու հարստութիւնը ուրիշին տուեցինք, եկանք որ քու վերջին զգեստն էլ տանենք, որ քու թագաւորութիւնից ամենևին տկլոր դուրս գնաս:»

Նալան տարակուսած մնացել էր կանգնած, տեսնում էր ինչպէս իր զգեստը օդումը փռփռում էր, բայց ոչ թռչուններուն կանգնեցնել կարող էր, ոչ իր շորին հասնել: Խոր ախ քաշեց ու աչքերը արինով լիքը դէպի Գամայեանուհին շուռ եկաւ.

«Տես, աչքի լոյս, ասաց նրան, ահա էս տեղ ճանապարհը երկու է բաժանվում, մէկը տանում է, ուր միայն ցաւ և քաղց է, միւսը, ուր քու ազնիւ հայրն ու մայրնեն բնակվում: Լաւ մտածիր, սիրուն Գամայեանուհի և մէկնումէկը ընտրիր քեզ համար:» Գամայեանուհին երկար ժամանակ չէր կարողացել լացը բռնել: Վերջապէս ասաց.

—Սիրելի՛ Նալայ, սիրտս կրակ է ընկնում, երբ որ մտածում եմ, որ ես քեզ էդպէս տարաբախտութենի մէջ մենակ պիտի թողնեմ. բայց ինչպէս թողնեմ քեզ էն ժամանակ, երբ դու քու թագաւորութենից, փողից զրկուել, անտուն, անփող, անհագուստ մնացել ես և սովից ու ծարաւից նեղացել ես: Չէ՛, իմ աննման Նալայ, կը բաժանեմ ես քեզ հետ քու ցաւը, քաղցն ու տխրութիւնը. ընկեր կը դառնամ ես քեզ ամեն բանի մէջ և քո մխիթարողը կը լինիմ:—

Գամայեանին աչքերը արտասուքով լցուած՝ փաթա-
թեց իր մարդուն զգեստով ու էսպէս երկուսը մի զգեստով
ծածկուած՝ յոգնած, թուլացած, քաղցած, ու ծարաւ գնացին
իրանք էլ չիմանալով թէ ուր, մինչև որ անտառում մի փոք-
րիկ խրճիթ տեսան: Էս տեղ գլուխները մի քարի դրին ու
խոնաւ գետնի վրայ պառկեցան մի քիչ հանգստանալու, բայց
Նալայի տխուր սիրտը երկար ժամանակ հանգիստ չմնաց: Նա
ողջ էնդուր վրայ էր մտածում, թէ իր աղէկ Գամայեանին
ինչպէս պէտք է տանէր էն դժուարութիւններն ու պակասու-
թիւնները, որ նրանք պէտք է քաշէին: Մէկ էլ մտածեց նո-
րան մէնակ թողնի, որ ստիպուած լինի իր հօր տունը գնալու,
իսկ ինքը հեռանայ սարէ սար ընկնի: Էսպէս էր մտածում, որով-
հետև չար ոգին դեռ էլի նրա սրտումն էր: Բայց երբ որ միտն
եկաւ, թէ Գամայեանին զգեստ ունի ու ինքը չունի՝ վճռեց
կէսը կտրել մի սուր թրով, որն որ նա խրճթի մօտ գտաւ:
Էս բանն անելուց յետոյ, ընկաւ գժի պէս անտառն ու հեռա-
ցաւ իր սիրեկան Գամայեանուց:

III.

Գամայեանին որ զարթեց տեսաւ որ մէնակ է, լեղին
պատռուեցաւ: Ով կարող է նկարագրել նրա վախը, նրա ահ
ու դողը: Եւ սկսեց նրան կանչել.

«Ա՜խ, իմ սիրելի, ասում էր, իմ թագաւոր, իմ աչքի
լոյս, իմ ուրախութիւն, ո՞ւր ես, դուրս եկ. ես վախում եմ էս
մութը անտառում առանց քեզ, արի, իմ աչքի լոյս. ես
մեռնում եմ վախից, ախ, մի՞թէ դու էլ չես սիրում ինձ:» Էս
խօսքերից յետոյ ձայնը կորցրած հաւի պէս՝ էս կողմ, էն կողմ
ընկաւ դողալով—մէկ էս թուփը քրքրեց, մէկ էն ծառի ետև
մտիկ արաւ: Վերջապէս երբ տեսաւ որ Նալան զորդ գնացել
ու նրան թողել էր, էլ իր անմխիթար վիճակի վրայ չէր լաց
լինում ու գանգատում, իր ուշք ու միտքը Նալայի կողմն էր:
Նալան մէնակ, քաղցած, ծարաւ, միայն կիսով չափ ծածկած,
առանց մխիթարողի ինչ պիտի անէր: Գամայեանին էս մտա-
քերով չարչարուած՝ անտառի մէջ մէկ դէս էր գնում՝ մէկ
դէն. անտառն էլ քանի գնում էր խտանում ու մթնանում
էր: Էս անտառը լիքն էր պատառական թռչուններով ու ամեն

տեսակ վայրենի գազաններով, բայց նա անահ, անվախ ա-
ռաջ էր գնում, մինչև մի բարձր սար նրա ճանապարհը կա-
պեց: Գամայեանին էս սարի հետ սկսեց էսպէս խօսել.

—Դու, որ գլուխդ մինչև ամպերը բարձրացրել ես ու
ծառերով, ծաղիկներով զարդարուել, մէջդ հազար տեսակ
թանկագին մետալներով ու քարերով լցրել. դու, որից դըր-
դչան ջրեր են ներքև վազում. դու, որ հազարաւոր կենդանինե-
րու պատսպարան ու բնակարան ես, որի մէջ թզուկներ, վիթ-
խարիներ ու վիշապներ են բնակվում. դու, անյաղթելի, ան-
հասանելի թագաւոր սարերի, կարո՞ղ ես արդեօք ինձ ասել,
թէ ո՞ւր է իմ մարդը:—Բայց սարը ոչինչ նշան չտուեց ո
անմխիթար Գամայեանին իր ճանապարհը շարունակեց: Այս
պէս ումը պատահեց, ամենուց հարցրեց, տեսե՞լ են արդեօ
իր մարդուն, թէ չէ: Երբ որ ճգնաւորներին էլ հարցրեց, նոք
ասեցին նրան.

—Գեղեցի՛կ Գամայեանի, մեզ տուած է ապագան գու-
շակելու զօրութիւն, ինչ որ ուրիշ մահկանացու չունի: Իմա-
ցիր, որ քու ապագան էնպէս պայծառ ու պարզ է, ինչպէս քու
երեսը. դու Նալային էլի կըտեսնես՝ եթէ դու կըհամբերես, ու
նրան հաւատարիմ կըմնաս. նա էլի իր երկրի տէր ու թա-
գաւոր կըդառնայ:—

Էս խօսքերից յետոյ յանկարծ թռան Գամայեանուս աչ-
քից ճգնաւորները: Խեղճը միտք անելով էլի իր ճանապարհը
շարունակեց: Էսպէս տխուր շատ սար ու ձոր անցկացաւ Գա-
մայեանին, ինչ ծառ, ինչ թուփ, ինչ աղբիւր ու ջուր տես-
նում էր, ամենին հարցնում էր լալով ու աղաչելով, որ ասեն,
Նալային հօ չե՞ն տեսել, կամ ո՞ր կողմը պիտի գնայ, որ նրան
գտնի: Վերջապէս հասաւ իր նպատակին և գտաւ Նալային, որ
իր սրտի ցաւը և Գամայեանու կէս շորը հետը տարել էր:
Նրանք ոչ միայն մոռացան իրանց կրած չարչարանքները, այլ և
աւելի բախտաւոր համարեցին իրանց, որ ոչ սար, ոչ ձոր, ոչ
ցաւ, ոչ տանջանք չկարողացան նոցա բաժանել իրարից:

Թարգ. Աբիխեանցի:

12. Ուսումնածարաւ մանուկը։

Մեր գիւղում չկար ուսումնարան. ով որ ուսում առնել էր ուզում, պէտք է գնար Ախալքալաք, որ մեր գիւղից հեռու չէ։ Ես շատ նախանձում էի մեր քահանի որդուն, Սարգսին, երբ նա շաբաթ երեկոներին «Լոյս զուարթն» էր երգում։ Նա շատ յաջողակ ձայն ունէր և երբ նա եկեղեցում սկսում էր «Լոյս զուարթը»՝ բոլոր ժամաւորները զարմացած նրան էին մտիկ տալիս։ Եկեղեցուց դուրս գալուց յետոյ գաւթում խումբ խումբ հաւաքւում էին գիւղացիք և չէին դադարում նրան զա-նազան գովեստներ տալուց։ Նրան գիւղացիների կողմից տուած անվերջ գովեստներն ինձ տեղիք էին տալիս անդադար խնդրել իմ մօրից, որ միջնորդէր իմ հօրս մօտ ինձ Ախալքալակ ու-ղարկել կարդալու համար, բայց խնդիրներս միշտ անկատար էին մնում և ես շարունակում էի իմ հօտաղութիւնս։ Մի անգամ Ծննդեան տօնի, Ճրագալոյցի երեկոյին, եկեղեցում ասեղ ձգելու տեղ չկար։ Երբ սովորական աղօթքները ասում էին ու տիրա-ցուներն շատ գրքեր էին կարդում, յանկարծ տեսնեմ սեղանի վարագուրի մի կողմը բացուեցաւ և Սարգիսը դեղին ղէնէվիւ-զէ շապիկ հագած երկու փոքր տղաների հետ, որոնք վառած մոմեր ունէին բռնած ձեռքերին, սեղանից դուրս եկաւ և վա-րագուրի այս կողմում կանգնելով սկսաւ բերանացի Դանիէլի գիրքը կարդալ։ Նա շատ լաւ և առանց սխալանքի սկզբից մինչև վերջը անգիր ասաց այդ գիրքը։ Նրա կարդացած ժամանակ ա-ղօթողների գովասանաց ձայները արդէն հասնում էին ականջիս և ես դասից շատ լաւ տեսնում էի, թէ ինչպէս ետևից կա-նայք իրանց գլուխները վեր էին բարձրացնում տիրացու Սարգսին տեսնելու։ Եւ այդ բաները նկատելով իմ նախանձը հետզհետէ գրգռւում էր և ես ուզում էի անպատճառ Ախալ-քալաք գնալ և այն տեղի ուսումնարանը կարդալ և Սարգսի նման Լոյս զուարթ երգել և Դանիէլի գիրքը կարդալ։ Իմ մէջ այդ ցանկութիւնը առաւել շատացաւ հենց միևնոյն Ճրագա-լոյցի երեկոյին, երբ մի քանի դրացի մանուկների հետ տներում «Աւետիս» ման եկած ժամանակ, տեսնում էի որ այդ երեկոյեան ամեն մինի խօսակցութեան նիւթը տիրացու Սարգիսն էր։ Այդ

բաները լսելուց և աւելի ու աւելի բորբոքուելուց յետոյ՝ ես որոշեցի — Ծննդեան կիւրակէները վերջանալից յետոյ — ծնողներիցս ծածուկ գնալ Ախալքալաք և այն տեղի ուսումնարանումը սո-վորել։ Վերջապէս մի երեկոյ տրեխներս թրջեցի, խոտեցի, սրըմ-ները քաշեցի և պատրաստուեցայ։ Ու մի երեկոյ այնպէս ջեր-մեռանդութեամբ Աստծուն աղօթք չէի արել, անկողին մտած ժամանակս, ինչպէս այդ երեկոյին։ Երեք անգամ կրկնեցի իմ սովորական երեկոյեան աղօթքը, որ մի ընդհանուր աղօթք էր ինչպէս մեր ընտանիքի նոյնպէս և բոլոր գիւղացիների համար։ Տիրացու Սարգսի «Լոյս զուարթով», նրա կարդացած «Դանիէլի գրքով», նրա «դեղին ղէնէվիւզի շապկով» յափշտակուած և Ախալքալաքի ուսումնարանով ոգևորուած, ես անկողնիս մէջ անդադար երեսս խաչակնքում էի և լուռ ու մունջ կրկնում.

Հրակը մարեցաւ,
Ջարը խափանաւ,
Քրիստոս քօղն երեսին,
Հրեշտակները չորս դին,
Երկնքէն իջաւ,
Խաչապաշտից տները մտաւ։
— Տէր իմ, ո՞ւր կերթաս։
— Հուր ունիմ հրեղէն,
Բուրվառ ունիմ բոցեղէն,
Ամեն թել է լուսեղէն,
Գընացի խանձարուրքիս,
Երթամ հանիմ պատարագի։
— Էս գիշերին դուրս ելայ,
Ծնծաւորխ խաչը տեսայ,
Աղաչեցի. Տէր, դու ո՞վ ես։
— Յիսուս Քրիստոսն եմ ես։

Առաւօտեան արշալուսի ծէգը բացուելուն պէս՝ մայրս ըստ սովորութեան ինձ ձայն տուեց վեր կենալու և հորթերը ջրել տանելու։ Առաւօտեան աղօթք անելուց յետոյ հորթերը քշեցի առաջս՝ քայլերս դէպի ձորի ճանապարհը ուղղելով. բայց հա-զիւ ձորի գլուխն էի հասել և մօրս տեսութիւնից ծածկուել, թողի իսկոյն հորթերը ձորի գլխին ճանապարհի վրայ և գիւղի ետևի կողմով ընկայ Ախալքալաքայ ճանապարհը։ Շարունակ վազ տալով և անդադար ձեան մէջ խրուելով՝ վերջապէս ըն-կայ ուղիղ ճանապարհի մէջ։ Տեսայ Սարգիսն էլ է գալիս ձիով Ախալքալաքի ճանապարհով։

— Սագօ, ինչ գլլի ինձի դաւակդ առնես, այս եղաւ իմ առաջին խօսքը Սարգսին։ — «Տօ, Օվակ, ո՞ւր։» — Ախրքէլէկ կարդալու։ — «Հարրդ ու մարրդ գիտե՞ն։» — Չէ, Սագօ ջան. Սագօ, ինչ գլլի ինձի դաւակդ առնես։ — «Իմ ձիս խրտան է։» — Տէ քիչմ կամաց գնա, ես հետդ կուգամ, ճամփան մենակ

չէտիմ:—«Տօ, դու ձիուն հետ չես կրնայ գայ, աչէ ճամփան կը մնաս, գայլերը կուգան քեզի կուտեն:»

— Մագօ ջան, Մագօ.... դեռ չէի վերջացրած իմ խօսքերը, երբ տեսայ, որ Սարգիսը իւր ձիու գլուխը դարձրեց դէպի գիւղ և մի քանի մտրակ խփելով թռաւ: Ես հասկացայ, որ նա գնումէր հօրս իմ փախուստը իմաց անելու. ուստի ուղիղ Ախալքալաքի ճանապարհը բռնելով, ոյժ տուի իմ ոտքերին և սկսեցի վազ տալ, անդադար կրկնելով իմ գիտեցած «գայլ-կապի» աղօթքը.

Գայլը կապեմ երկու բթով.
Աստուածածնայ քաղցր կաթով,
Սուրբ Սարգսայ ձիուն ձարով,
Տէր Մովսէսին գաւազանով,
Լուսաւորչայ սուրբ հաւատով.
Լեզուն կապուի, ակռան թափի,
Եկած ճամփան գայ մոլորի,
Իմ տիրոջս խաչը տեսնի,
Դիւանքի պէս թող սատկի:

Բայց ահա տեսնումեմ ետևեցս ձիերով գալիս են հայրս և Սարգիսը: Նոքա շուտով հասան ինձ, հայրս վրաս յարձակուեցաւ. ես ճանապարհից շեղուեցայ ընկայ ձիւների մէջ, բայց իմ գլխին և կողքերին եկած հարուածներից հազիւ ազատեց ինձ մայրս, որ գիւղի ծայրում ինձ վայր իջեցրեց հօրս զաւակից և գուրգուրելով ձեռքերիցս բռնած տուն տարաւ: Այսպէսով իմ Ախալքալաք գնալս չյաջողեցաւ:

Գ. Եղամեանց.

13. Աղ ու հաց:

Սոխ ու հաց՝ սիրտը բաց,—այս առօրական առածի ասողը իմացնումէ, թէ ինքը քչով բաւականանալ գիտէ. գոհ է, ինչ որ նորան Աստուած պարգևել է, անտրտունջ, ուրախ է և սիրտը բաց ունի իր չափաւորութեան մէջ: Ում սիրտը բաց է, նորա տան դուռն էլ բաց է ընկերի համար: Եւ արդարև հայի

տունը միայն դերդաստանի տունը չէ, այլ և հիւրի տուն է: Հայի սեղանը շատ երկայն է ձգուած. նորա բոլորքը ոչ միայն տան մարդիկն են նստում, այլ և գլխին ք ա հ ա ն ա ն, մէջ տեղը ա շ ու ղ ը, աջ կուռը ղ ա ր ի բ ը: Բայց սեղանի վրայ դեռ էլի շատ տեղ կայ, եթէ ղ ո ն ա ղ գայ, Աստուծոյ փայ է, տանտիրոջ աչքի լոյսն է: Հայի մօտ հ ի ւ ր ը գ ա լ ի ս է, հ ի ւ ր ը գ ն ու մ է, տ ե ղ ը դ ա ր տ ա կ չի մ ն ու մ: Բայց մէկ անգամ ա ղ ու հ ա ց կերածը, թրով կտրած է, ամօթ ու խայտառակութիւն այն մարդուն, որ մի անգամ կերած աղուհացը մոռանումէ և անհաւատարիմէ մնում: Ա ն ա ղ ու հ ա ց ք ր դ ի շ ու ն կասեն նորան, ով որ աղուհացի սրբութիւնը չի պահի:

14. Կարեկից:

Երբ մենք սև օրուան ունինք կարեկից,
Ասումեն, կէսն է պակասում մեր ցաւից.
Թշուառին թշուառն է միշտ մխիթար,
Ո՞րտեղ կը գտնես դու քանց ես թշուառ:
Քեզ պէս մտատանջ, քեզ պէս անտէրունջ,
Սրտումս գաղտնիք, բայց լուռ, անմռունչ
Անցնումեմ օրերս, վայ գլխուս տալով,
Մարդկանց մէջ ուրախ, միայնակ լալով:
Ամեն շնչաւոր ունի մի ընկեր,
Միայն ինձընից պէտք է պակսի սէր,
Եթէ դու էլ ես թշուառ ինձ նման,
Իմ քաղցր խօսքը կըլինի քեզ դարման.
Սրտիդ խորհուրդը բաց ինձ անկասկած...
Սէրը նըմանից պէտք է պահանջել:

Ռ. Պատկանեանց.

15. Վահանայ:

Այն ո՞վ է կանգնած ամբիոնի վրայ,
Դողդոջուն ձեռքերն երկինք ամբարձած,

Գըլխաւոր աչերն լի արտասունքով,
Բազմութեան ուշքը դէպի նա դարձած.
Որին ամէնը Հ ա յ ր են անուանում,
Ծանօթ, անծանօթ՝ հաւասար յարգում,
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա,
Սրտի գաղտնիքը նորան են յայտնում:

Քահանայ է նա, քաւող մեղքերու,
Միջնորդ Աստուծոյ մարդկան ազգի հետ,
Հովիւ է անխոնջ Քրիստոսի հօտին,
Երկնաբեր գանձին նա է արթուն դէտ:

Երբ մենք թաթախուած Ադամայ մեղօք
Եկանք այս աշխարհ լացեալ ցաւերով.
Ո՞վ սրբեց մաքրեց մեր հին մեղքերը,
Ո՞վ մեզ սփոփեց իւր սուրբ խօսքերով,
Կամ՝ երբ ժանտախտած, ընկած մահճումը՝
Մրտատանջ, անյոյս մահ էինք խնդրում,
Պանդըխտի նըման ամէնից թողած՝
Ո՞վ մեզ առաջին հասաւ օգնութիւն,
Կամ՝ երբ մոլորուած գառներու նման
Կոյր վազում էինք դէպի խորխորատ՝
Ո՞վ արդեօք այն օր փրկեց մեզ մահից,
Դիւական գըրքէն հանեց անարատ.
Կամ՝ երբ մեղաւոր աչքերըս բընաւ
Չենք համարձակում երկինք ամբառնալ՝
Որի՞ն կանչում ենք միջնորդ հաշտութեան,
Ո՞ւմով յոյս ունինք թողութիւն ստանալ.
Եւ կամ՝ պղծացած ունայն գործերով,
Մոռցել ենք Աստուած, կրօն, սուրբ հաւատ,
Ո՞վ է մեր տեղը մեր մեղաց համար
Արտասունք թափում աչքէն յորդառատ:

Քահանան է այն և միշտ քահանան,
Մեր միջնորդ, հովիւ քաջ և աղօթիչ,
Որբոց հայր, եղբայր աղքատ մուրացկին,
Արտասուաց սրբող, յանցանաց քաւիչ:

Ե՛կ պատուենք, եղբա՛րք, այդ սուրբ քահանան,
Սիրենք միշտ նորան մանկական սիրով,
Որ ամբողջ գիշեր իւր որդոց վերայ
Պատրաստ է հսկել անքուն աչքերով.
Նա բոլոր կեանքը զոհեց մեզ համար,
Զուգեց փառք, պատիւ, զբօսանք աշխարհիս:
Քանց սուրբ քահանան էլ ո՞վ է կարող
Արդեօք մեզ համար լինել Հ ա յ ր բարի:

Ռ. Պատկանեանց.

16. Տէր Մարգարը:

Մեր գիւղի քահանայ տէր Մարգարը մի պատկառելի կերպարանքով աշխատասէր մարդ էր: Ջնայելով իւր սպիտակ ալէքներին, նա իւր ընտանիքի հետ միշտ մասնակցում էր դաշտային պարապմունքներին: Փարաջէն մի կողմ ձգած, թևերը վեր քաշած, գութանի մաճը իւր ջղոտ ձեռքերում բռնած, նա արտ էր հերկում, հունձքի ժամանակ հունձք անում, կալսին կալ կալսում: Բացի այդ իւր առանձին պարապմունքներից և քահանայական պաշտամունքներից՝ նա մի և նոյն ժամանակ դատաւորի պաշտօն էր վարում մեր գիւղում: Գիւղացիներն ամէն տեսակ վէճերն ու բողոքները նորան էին յայտնում և տէր հայրը իւր անաչառ բնաւորութեամբ քննում էր այդ ամէնը և նրանց մի վերջ դնում: Նա խօսում էր միշտ ծանր կերպով և նրա ամէն մէկ խօսքը, ամէն մէկ վճիռը, պատգամի նման ընդունվում էր գիւղացիներից: Վէճերը մաքրելուց յետոյ տէր Մարգարը վիճողներին չէր արձակում առանց նախապէս նրանց միմեանց հետ հաշտեցնելու և «պահպանիչ» աղօթքով իւր վճիռը կնքելու և վերահաստատելու: Տէր Մարգարի կարծիքով խաչապաշտ չէ, այլ անհաւատ է այն քրիստոնեան, որ իւր կեանքում եօթանասուն և եօթն անգամ ներողամիտ չէ գտնուել դէպի իւր քրիստոնեայ եղբայրը և նրան իրան դէմ գործած յանցանքները չէ ներել: Ձմեռուայ երկար երեկոներում երբ գիւղացիները սովորաբար հաւաքվում էին գիւղի այս կամ այն

քէհի գոմը, խօսակցութեամբ ժամանակ անցկացնելու, Տէր Մարգարի յաճախակի ներկայութիւնը այդ ժողովներին մի առանձին նշանակութիւն էր տալիս: Երբ տէր հայրը գոմը ներս էր մըտնում, բոլոր ժողովականք իսկոյն ոտքի էին կանգնում և տէր հօր «ողջոյն ձեզ սիրելիք» բառերին՝ «օրհնեա տէր» որդիական ամենաջերմ համակրութեամբ պատասխանելով, գիւղացիներից մէկը գնում էր տէր հօր գաւազանը ձեռքից առնելու, միւսը նրա ոտնամանները հանելու, մի երրորդը գնում էր բարձեր բերելու և տէր հօր նստելիք տեղում դարսելու և այլն: Տէր հայրը սովորաբար նստում էր սէքիւի (բազմոց ախոռներում) վերի գլխում օճախի մօտ: Մինչև նրա նստելը ժողովականք բոլորն էլ ոտքի վրայ կանգնած մնում էին ու չէին նստում, մինչև տէր հայրը չհրաւիրէր: Այդ հրաւէրը ստանալուց յետոյ գիւղացիք նախ և առաջ գնում էին և առանձին առանձին տէր հօր «սուրբ աջը» առնում, ապա կարգով նստում էին տէր հօր երկու կողմում նախ ծերերը, ապա չափահասները և յետոյ երիտասարդները: Տան կանայք, հարսները, աղջիկները թէպէտ գալիս էին և տէր հօր աջը նոյնպէս համբուրում, բայց նրանցից միմիայն տան մեծ նանը, հարսների սկեսուրը կարող էր տէր հօր մօտ այդ մարդկանց մէջ նստել, իսկ միւսները քաշվում էին դէպի գոմը և սէքիւի չորս բոլորքը շարուելով՝ լուռ ու մունջ հանդիսատես էին լինում: Մինչև տէր հօր խօսք բաց անելը՝ խորին լռութիւնը տիրում էր գոմի մէջ և ուրիշ ոչինչ չէր լսվում, եթէ ոչ գոմում մսուրքների վրայ կապուած կովերի, եզների, մատակների, գոմէշների մըշմըշոցը և նրանց հորթերի և քուռակների իրանց մայրերի ստինքները ծըծած ժամանակ բարձրացրած չփչփոցը: Տէր Մարգարը ընդհատում էր այդ լռութիւնը՝ նախապէս գիւղացիներին զանազան հարց ու փորձեր անելով վարուցանքի մասին, և մինչև ղէհվէ եփելն և փոքրիկ Ֆինջաններով հիւրերին թաւաղայ անելն՝ խօսակցութիւնը սովորաբար առանին բաներու վրայ էր լինում: Հիւրերին ղէհվէյով մեծարելու սովորութիւնը տէրտէրի ներկայութեանը պէտք է վերագրել, ուրիշ ժամանակ տանտէրը իւր հիւրերին բացի քաղցր ընդունելութիւնից սովորաբար ուրիշ ոչինչ չէ տալիս: Ղէհվէն վերջացնելուց յետոյ ժողովականների խնդրանօք տէր Մարգարը պատմում էր նրանց զանազան պատմութիւններ Սուրբ Գրքից և Հարանց վարքից.

նրա պատմութիւնն իւր հասկանալի բառերով, դարձուածքներով և գրաւիչ բովանդակութեամբ՝ մի այնպիսի ազդեցութիւն էր անում ժողովականների վրայ, որ նրանցից ոմանց աչքերից արտասունքի կաթիլներ էին թափվում: Զոր օրինակ Տէր Մարգարը առանձին ոգևորութեամբ նկարագրում էր Մարկոս Ճըգնաւորի 70—ամեայ խիստ ճգնութիւնը և 30—ամեայ չարչարանքը սատանաների ձեռքով, և նրա մեծ հաւատը ցոյց տալու համար այս էլ էր աւելացնում. Թէ մէկ անգամ Մարկոս ճգնաւորը մէկի հետ մարդկանց հաւատի մասին խօսելու ժամանակ հարցրեց նորան. «Աշխարհքում այնպիսի հաւատով մարդիկ կա՞ն, որոնք եթէ լեռներին ասէին գնացէք և ծովն ընկէք—նրանք լսէին:» Եւ այդ խօսքերի վրայ իսկոյն շրջակայ լեռները իրանց տեղերից շարժ եկան և ուզում էին ծովը թափուել: Բայց Մարկոս ճգնաւորը կանգնեցրեց նրանց ասելով. «Ես ձեզ համար չեմ ասում, դուք տեղերումդ կացէք:»

Երբ որ այս լսում էին ժողովականները—«վա՜յ ինձ, վա՜յ ինձ»—գոռոց էին հանում և ամենքը խղճահարվում էին իրանց թուլութեան և մեղքերի մասին: Ուշ գիշերով մեկնում էր Տէր Մարկոսը գիւղական այդ ժողովարաններից, իւր սրտաշարժ պատմութիւններով ամենապինդ կերպով կապելով գիւղացիների ուշքն ու միտքը, սիրտն ու հոգին քրիստոնէական հաւատի հետ:

Գ. Եղիամեանց.

17. Պանդուխտ առ կռունկ:

Կռո՛ւնկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս.
Մի վազեր՝ երամիդ շուտով կըհասնիս.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:
Թողեր եմ ու եկեր մլքերս ու այգիս.
Քանի որ ա՜խ կանեմ, կուքաղուի հոգիս.
Կռո՛ւնկ, պահ մի կացիր, ձայնիկդ ի հոգիս.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:
Սրտերնիս կամեցաւ, ելանք գընացինք,
Այս սուտ աստըւորիս դարդերն իմացանք,

Աղուհացկեր մարդկանց կարօտ մնացանք:
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս,
Աստուրոխս բաներն կամաց կամաց է.
Ղարիպլին սիրտն է խոց, ջիգարն է վարամ,
Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ:
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:
Ու՜ ըլլուր օրն գիտեմ ոչ ըղկիրակին,
Զարկած է գլխ շամփուրն, բըռնած կըրակին,
Այրիլս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ:
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:
Աշունն է մօտեցեր, գնալու ես թեպդիր.
Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր.
Ինձ պատասխան չտուիր, ելար գնացիր.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն գընա հեռացիր:

Ժողովրդական բանաստեղծութիւն.

18. Պսականարօտ.

Գուցէ ոչ մէկ հայոց քաղաքի մէջ այնքան մեծ ու պստիկ մանուկներ չկան, ինչպէս Վանում: Այս մասին Վանը օրհնուած է. բայց ո՞ւր են նոցա մեծերը:

Պատմում են, թէ երբեմն Էջմիածնի մէկ նուիրակ բոլոր քաղաքները շրջելով ուր որ Հայեր կան՝ ամեն տեղ Վանցիներ է գտել. Հնդկաստանի էն վերջին ծայրը հասնելով, լսեց թէ մէկ կաղ Հայ կայ, երբ հարցրեց. «Ո՞ր տեղացի ես», այն տեղ էլ «Վանցի եմ»—պատասխան տուացաւ: Ուստի առած է դառել՝ թէ Վանեցոց կաղը մինչև Չինաստան է հասել:

Վանից բազմաթիւ Հայեր պանդխտել են մանաւանդ Պոլիս և ուրիշ մեծ քաղաքներ. և զարմանալին այն է, որ այդ բոլոր պանդուխտները անշուշտ կնոջ տէր և որդոց հայրեր են: Որովհետև երբ որ հարկը ստիպում է մէկին, որ պարտքերի կամ ուրիշ ծանր կարօտութեան պատճառով պանդխտէ, նորա մայրը կամ ազգականները շտապում են «Աստուծոյ կամօք» մի աղջիկ են պատրաստում, նշանում են, և նորա հարսանիքի համար էլ մէկ պարտք անում են, պսակում են. «Ոտը կապենք, որ դառնայ» ասելով: Արդարև որքան դժուարութեամբ այնուհետև պսակուածը իր տնից հեռանում է, և թէպէտ նորա ոտքը գնում է, բայց սիրտը կապուած է մնում պսականարօտի կապով: Այնուհետև պանդխտութեան մէջ նորա միակ կարօտը մի նամակ ստանալն է, որ գրեթէ միշտ այսպէս է սկսվում. «Ցիսուսի Քրիստոսի ծառայ քո տան անդիւորից (ամուսնից) շատ սիրով և յոյժ կարօտով բարև իմ երկու աչաց լոյս գլխաւորին:» Եթէ որդի էլ ծնուել է նորա նոր պանդխտութեան ժամանակ, սիրտը խշխշացնող այս բառերն էլ կարդում է նա. «Եւ քո նորաբոյս ծաղիկ, քո սիրոյ պտուղ, անուշահոտ վարդ Վարդանից, կամ Մանուշակից:» Իսկ եթէ տարիներ անցել են, նամակն աւելացնում է. «Որ բուլբուլի պէս կըխօսի, որ հրեղէն հրեշտակի աչքեր ունի. որ արեգակի պէս կըփեղկտայ. որ սարեկի պէս կըճխայ, կըթռվռայ. որ կաքվու պէս կըգվգվայ. ախ, կ՚ասի, երբ կուգայ իմ խէրիկ...» և այլն: Ճշմարիտ է ծնող մայր, ծերունի հայր, դրացիներ, բարեկամներ, քոյրեր, եղբայրներ, այգի, ջուր, ծառ, տուն, տեղ, և այլն, սոքա ամենքն էլ յիշատակվում են պանդխտի թղթի մէջ. և իւրաքանչիւրն իւր խորին ազդեցութիւնն է անում կարդացողի սրտի վրայ, բայց նոցա բուն կապը, որ նոցա քաշում և վերադարձնում է հայրենիքը. բուն բոցն ու կրակը, որ գիշեր ցերեկ նոցա ջ ի գ ա ր ը խորովում է—տան Անդիւորն է և նոցա սիրոյ անուշահոտ Պտուղը: Ա՛յս միայն է, որ այն զարհուրելի Սև ծովի ալիքները և սարերի սառնամանիքը, զանազան վտանգներն և տագնապները համբերութեամբ տանել և քաղցրացնել է տալիս մեր հայրենակիցների սրտին, որպէս զի նոցա համար ապրուստ ճարեն և նոցա կեանքը երկարացնեն. այս միայն է, որ մեր պանդուխտ հայրենակիցները առոչինչ են համարում Պօլսի փափկութիւնը, բարեկեցութիւնն ու ազատութիւնը, և չարքաշ կեանք են վարում, որպէս զի եթէ հարկը պահանջէ՝ հինգ, վեց, եօթն և էլի աւելի անգամ երթան Պօլիս նժդեհեն, բայց դարձեալ նորից վերադառնան իրանց տունը և այդքան մանուկներին հոգատար հայր դառնան:

Օրհնուի՛ն հարսները, օրհնուի՛ն մանուկները, որ այս կապը հնարել և յօրինել են, և բուն կապն են եղել. ապա թէ ոչ, Վանի այն գեղեցկազարդ այգեստանի փողոցները այժմ կամ թափուր կամ անհայ կըգտնէինք:

Սրուանձտեան:

19. Սայեաթ-Նովա։

Վատ է աշխարհը, ամենի համար լուս է ու պայծառ,
Միայն աշուղին ցերեկուայ մէջն էլ մութ է ու խաւար։
Մութն է աչքերը, բայց լուս է հոգին, սիրտն է բոցավառ.
Քանց գրագիտէն լեզու ունի նա անուշ ու ճարտար։

Ռ. Պատկանեանց։

Մօտ երկու հարիւր տարի առաջ մէկ խեղճ հայ մշակ Հայաստանից գալիս է Թիֆլիզ։ Նրան բերում է տղայ, անունը տալիս է Արութին։ Պստիկ Արութինին տալիս են աշակերտ մէկ ջուլհակի մօտ. խիստ աչքաբաց ըլելով՝ կարճ ժամանակ Արութինը լաւ վարպետ է դառնում։ Մեր վարպետ ջուլհակը ուրիշ շնորհք էլ ունէր, կտաւ գործելու հետ սազ էլ էր ածում. պստիկուց սազ պահելով գլուխ է գնում ամենայն խաղին, ու սուրբ Կարապետի կարողութիւնով սովորում է քամանչէն ու չօնգուրը։ Առաջ հորում նստած բանելիս առաւօտեան հանած խաղն գիշերն քաղցր ձայնով իշխաններու բարձր ու լէն դարբասում ասում է էլել։ Վերջը համարձակ դուրս է եկել մէյդան աշուղութիւն անելու Սայեաթ-Նովա անունով. Նրան ժողովուրդը մինչև էս օր էլ միայն աշուղական անունով է ճանաչում ու էլ չգիտէ թէ ջուլհակ Արութինն ով էր։

Վաղ ժամանակը հայ աշուղները ինչ որ երգել են՝ Թուրքերէն են ասել, Սայեաթ-Նովէն Թուրքերէն ու վրացերէն է ասել։ Մէկ օր էլ սրտումն ասել է, հիմի գուզիմ թէ հայեվար ասեմ, ու էն է հայերէն է երգել էս անուանի աշուղը՝ ամենքին զմայլեցնելով։ Սայեաթ-Նովէն Երեկլէ Թագաւորի ու ազգի խրախճանններու պատուական ու անհրաժեշտ մարդն էր. ով որ ուրախութիւն էր ուզում տեսնել, գնում էր Սայեաթ-Նովին լսելու։ Ոնց որ իրան սիրում էին, էնպէս էլ տխրում էր, երբ որ ինքը իր սազով նրանց մէջը չէր և ասում էր. Թէ մէկ շաբաթ քեզ չեմ տեսնի, կուկտրիմ քամանչի սիմն։ Մէջլիսի մէջ նստած ժամանակ ինքը

խալխի նօքար էր, ժողովուրդին ուզում էր համով ղուլուղ անել անուշ խօսքով, սազի ձէնով, դրուստն էր ասում ամենի բանին, ինքը ոնց որ դուրգեար, իր խաղի հունարով դրըստում էր ինչ որ խալխի սրտումը ծուռն էր. և եթէ նրան լեղի էին պարգևում, նա շաքարով էր ուզում պատասխանել, գիտէր որ շատ մարդուն դրուստ բանը հասկացնիլը դժար բան է, համբերութիւն է հարկաւոր. մարիփաթով քաղցր լեզուն դիփունի վրայ անգին է։ Օրուցերեկ նրա քարոզած բանն էր բարի գործն, որն որ դասում էր բարձր ամեն իմաստութեան ու գիտութեան վրայ, ասելով. Թէգուզ իմանաս, գիտենաս աստղերու համբարքըն սիրուն, անբարի գործըն կորած է՝ կարթա՛ հարացն վարքըն սիրուն։ Էնպէս նա մէկ մէկ խրատեց ու քարոզեց Աստուած, հոգի, սէր, պարկեշտութիւն, գիր, համբերութիւն, աղքատ, ղոնաղ, օտար։

Բայց Սայեաթ-Նովի առաջուայ ցնծութիւնը չէ քաշում շատ ժամանակ և սկսում է գանգատել, թէ ղուրթն ճամփայ չէ գտնում, էնպէս որ շատացել է խալխի սուտն։ Նրա հոգին սկսում է ձանձրանալ կեանքից, աշխարհքից, երգերից և. Էրեգ լաւ էր կանց վուր էս օր,— վաղերումէն բեզարիլ իմ. մարդ համաշա մէկ չի ըլի,— խաղերումէն բեզարիլ իմ։ Վերջապէս ձանձրացած էս երազական կեանքի փայլըութիւններից Սայեաթ-Նովէն ասում է. կու հագնիմ մազեղէն, կու հագնիմ շալն, կ՚երթամ ու ման կու գամ վանքերն մէմէկ, և գնում է Հաղպատու վանքը և ձեռնադրվում է աբեղայ։ Չիմի ժողովուրդը իմացաւ, թէ Սայեաթ Նովի կորուստը ինչ կորուստ էր նրա համար ու դիփ էն կօսէր, թէ վա՜յ քի Սայեաթ-Նովա, ինչ ուրախութիւննիր իս շանց տուիր, ու երբ նա վարդապետ ժամանակ Հաղբէն մէկ անգամ գալիս է էլել Թիֆլիս, երեխէքըն նրա էղնէն վազելիս՝ մատով մէկ մէկու շանց են էլել տալիս, ասելով. Տօ՛, դիդի՛ս Սայեաթ-Նովէն է։ Թիֆլիսեցիների աչքում էլ ոչ մէկ աշուղ Սայեաթ-Նովի հասը չէ էլի։ Պատմում են, թէ մէկ անգամ Թիֆլիս եկել է մէկ երևելի աշուղ, որ Թիֆլիսի բոլոր աշուղների հետ բաս է բռնել, այսինքն ով որ խաղով հաղթունք է

տուել, ինչը համդով ջուղար է տուել, բայց իրան ջուղար տուող ոչ ով չէ եղել, ուստի և նրանից ձեւից սաղն արել է ու հրամայել է նրանց, որ էլ չհամարձակուեն յաղթողի առջեն, ինչ տեղ կ'ուզէ ըլի, խաղ անին: Քաղաքցիք խիստ սիրել են, որ իրանց աշուղների պատիւը էդպէս գետինը գլորուեցաւ: Հիմն էլ Թիֆլիսու խաղ սիրող տղերքն դարսել են զրոյցը, իբր թէ Սայեաթ-Նովի ականջն ընկնում է էդ երեւելի օտարական աշուղի Թիֆլիս գալն ու քաղքի յաղթուիլը: Սատին ձեռին մուկ չտուած՝ շտապով գալիս է Հաղպատից Թիֆլիս: Ոչ մին բան չասած աշխարհականի շորեր հագնում է. մէնակ իր հին ընկերներու ու բարեկամներու մէջ՝ կամրջի տակն սառած քարի վրայ նստած, քամանչէն ձեռին՝ բաց է անում նոր եկած աշուղի հետ բաս (վէճ) և յաղթում է նրան՝ քաղքի պատիւը էլի հաստատելով: Էս զրոյցը էն բանի նշան է, թէ որքան Սայեաթ-Նովէն անուանի և սիրելի էր թիֆլիսցիներու համար:

Սայեաթ-Նովի հաստատ հաւատն էլ շատ գովածէ: Ջէր առաջ երգել էր, թէ Սայեաթ-Նովէն հաւատն չի ուրանալ, Հայ է: Էս հաստատել, երբ որ Աղա Մահմէդ-խանը եկաւ Թիֆլիսը կոտրելու ու քանդելու: Էդ ժամանակ Սայեաթ-Նովէն Թիֆլիսումն էր բերդի եկեղեցում: Թշնամիքը տուն են ընկնում եկեղեցու գաւիթն ու կցում են կոտրելն ու կողոպտելն: Սայեաթ-Նովուն վրայ են հանում աղօթք անելիս: Սրանից պահանջում են դուս գալն ու հաւատն ուրանալը. բայց կրօնաւորն Պարսից թրերու տակն աւանդում է հոգին՝ ասելով.

(Չըլմանամ քլիսադան, դօնմանամ խաչդան:)

Եկեղեցուց չեմ դուրս գալ, չեմ ուրանալ Խաչովին:

Ախվերդեանց.

20. Նախապաշարմունք և սնոտիապաշտութիւն:

Ով որ Աստծու հաւատ չունի, նա շատ աւելորդ բաներին է պաշտում, ով որ գիր չգիտէ, ուսում չունի, չտեսած բաներին է հաւատում: Լսենք այս պառաւների խօսակցութիւնը

և տեսնենք, թէ ինչ ծիծաղելի բաներ են պատմում, այնպէս որ միամիտ մարդիկ գուցէ և հաւատան: Բայց մենք ոչ միայն պէտք է ծիծաղենք դոցա վրայ, այլ պէտք է խղճանք այդ ողորմելի մարդկանց վրայ, որովհետև այդ պատմածներին հաւատ ընծայելով, նոքա միշտ երկիւղի մէջ են, միշտ ահուդողի մէջ են և ուրիշներին էլ պատմելով, նոցա էլ սարսափի մէջ են ձգում: Բայց եթէ մենք ուզենանք իմանալ, թէ ինչո՞ւ համար նոքա այդպէս տանջվում և չարչարվում են, մինչև անգամ երեխան էլ կարող է ասել, թէ ոչինչ պատճառով. որովհետև ինչ որ պատմում են, այն բոլորը սուտ է, նախապաշարմունք է և սնոտիապաշտութիւն է: Ահա լսենք օրինակի համար այս պառաւական զրուցատրութիւնը:

— Շողեր խաթուն, ուրբաթ գիշեր հաւախօսին շները գարշելի կերպով ոռնում էին. մեր գրացի Նարգիզ խաթունը հիւանդ էր, և շների ոռնալուց իմացանք, որ Գրողը եկել է նորա արևը հանգցնելու: Իմ անգէրկինս հիւանդպահ էր գնացել այն գիշեր: Գրողի գալու ժամանակին պառկած է եղել, աչքին երևացել է Գրողը, և զարհուրել է: Գրողն ու հիւանդը շատ կռուել են, բայց հոգին չէ տուել, երեք օր հոգեվարք է մնացել: Տէգէրակնկան լեզուն կապուել, կապկպուել էր, խելքը թուլացել էր. ոչ կարողացել է նստել, ոչ պառկել, ոչ կանգնել, ոչ ուտել խմել: Ասում են հրեշտակակոխ է եղել, էլ սրբերից սուրբ չմնաց՝ կանչեցինք, խաչ աւետարան հանել տուեցինք. էս օր էլ եկայ թուղթ բաց անել տուեցի, թուղթ բաց անողն էլ ասաց. «Գրողին տեսել վախացել է. սուրբ Աստուածածնին ուխտ տարէք:»

— Թառիկ խաթուն, հաւատա որ այդպէս է: Աշխարհ գիտէ, որ Նարգիզ խաթունը միշտ գրողների հետ է: Քանի քանի անգամ նորա բերանից լսել եմ, որ ասում էր. «Գիշերս գրողների գլխաւորը կանչել էր, գնացինք խորհրդի, երբ որ ձեռքի հրեղէն կանաչ ճպոտը երեք անգամ գետնին խփեց, հազար հազար գրողներ ժողովեցան մէկ ակնթարթի մէջ:» Գրողների գլուխը ամպերի մէջն է, ոտները գետնի տակ անդունդն է հանում. նոցա երեսները սև՝ քան Ադամայ մուրը, նոցա պինչը կախուած է մինչև իրանց ծունկը. բերաններ ունին Վանայ ծովի պէս. լեզուներ — ոնց որ Վանայ բերդը. քիթ — ոնց որ Սիփանայ սար: Նոցա լէշը խոզի պէս է, ամեն մազից բոց է դուրս գալի,

կրակ է թափվում: Հաւի պէս թև ունին թռչում են, խանի պէս ման են գալիս, մէկ ոտը Բաղդատում են դնում, մէկ ոտը Սև ծով. մէկ ձեռքը Չինմաչին է հասնում, մէկ ձեռը — Ֆրանգստան: Ուզեն կըպստիկանան լուի պէս, ուզեն երկինք գետին պատռ ամպ կը դառնան: Ամէն գրողը իր սինօրն ունի, պտտում է, ռաստ եկածին խփում է. չես տեսել, մեռնողների մէկի ոտը, մէկի թևը, մէկի քամակը, մէկի երեսը, մէկէլի մի ուրիշ տեղ կապուտանում է, գրողի խփած ճիպոտի տեղն է: Յանկարծ մէկը հիւանդանում է, մեռնում է. էն ինչի՞. — Գրողի խփածն է: Մէնակ ինչ տան մէջ որ աղօթք անող կայ, ով որ օրը քանիչորս ծունր է դնում, կիրակամուտ գիշերը մոմ է վառում, ով որ թլիսմա ունի, նորա տնից գրողը փախչում է: — Ինչ տեղ որ սով, մահ, հիւանդութիւն է պատահում, Գրողների գլխաւորն իմանում է որ Աստուած իր ձեռքը էն տեղից էն մարդուց քաշել է. նորա անունը գրում է գրողի դաւթարի մէջ. գրողներին ժողովում, ուղարկում է այն տեղեր, որոնք գնում են արտերը փչացնում են, հանողին խփում են և հոգին առնում են: Ծննդկան կնկայ շատ թշնամի են. թէ որ նոցա բարձի տակ թլիսմ, Նարեկ, Սաղմոս, Աւետարան, աղօթագիրք չտեսնեն, իսկոյն կը խփեն: Մարդ որ որոշտայ և բերանի վրայ խաչ չհանէ, գրողները կը մտնեն նորա փորը և կը դիւահարեն: Մութ ժամանակ ծառերի մէջ, ջրի ակների մօտ, ջրի հորերի մէջ, քանդուած տների մէջ են բնակվում. ով որ այդ տեղերից անցնի «Յիսուս Քրիստոս» չասի, կը խփեն: Գօռերի (գերեզմանի) մէջ են մտնում, որ մեռելի վրայ որ «փառք ի բարձունս» չեն ասել, այն մեռելին գօռնաղար են անում:»

Շողեր խաթունը այս գօռնաղաբների պատմութիւններ էլ արաւ, իբրև թէ մեռելները վեր են կենում և գիշերները փողոցէ փողոց թափառում են: Շատ խաբեբաները գիշերները այդպէս թափառում են և միամիտներին վախեցնում են, ուստի Վանայ մէջ շատ անգամ պատահել է, որ մինչև այդ գօռնաղաբների գլուխները բահով կամ փայտատով չեն կտրել, չեն անհետացել:

Բայց Շողեր խաթունը այսպիսի բաներին հաւատալով և երեսը խաչակնքելով, շարունակում է.

—Գիշերուայ մայրեր կան, որ պառաւի կերպարանք ունին. դոքա ցերեկները մտնում են քանդած ջաղացները, ցամաք հո-

րերը, այն տեղից ճանապարհ են շինում և իջնում են մինչև գետնի տակ, ծովի տակը աշխարհ երկիր կայ, գնում են այն տեղ շրջում են, իրիկունները սարերի տակից դուրս են գալիս մեր աշխարհը: Դոքա Աստծուց անիծած, Աստծու երեսից ընկածներ են, դրանք թէ որ արեգակի երեսը տեսնեն, հողի երեսին մարդ չի մնայ՝ ամենին էլ կը փչացնեն, օձերով կը լցնեն: Ադամի օրից սկսած Արեգակի ետևից վազում են. Արեգակը գնում է, նրանք էլ ետևից գնում են, բայց չեն կարողանում հասնել. իրիկունները հասնում են մեր աշխարհ, տեսնում են որ արևը մտել է, մեռելի արևն է մնացել (վերջալոյս), մէկ բերան փչում են, մութ խաւար արարած բռնում է. սար, քար, տուն, տեղ, գիւղ, քաղաք, ամենայն տեղ մտնում դուրս են գալիս, կարծելով թէ Արեգակը մի տեղ պահուել է, չեն գըտնում, մտնում են գետնի տակ պտրտելու. նրանց մտնել ու չըմտնելու պէս՝ աղօթարանը (արշալոյսը) ճաճանչել է սկսում, արեգակը գետնի տակից դուրս է գալիս: Այսպէս նոքա չեն հասնում սրան, և գիշերուայ բոլոր չարութիւնները նոքա են բերում մարդու գլխին: —

Ահա այսպիսի բաներ էին Շողեր խաթունի պատմածները. ուրիշ բան չէր իմացել, ուրիշ բան չգիտէր, ուստի և հաւատում էր այս բաներին: Երանի՜ նրան ով որ գիր է սովորել, ուսում է ստացել և պառաւի պէս այսպիսի անմիտ բաներին չէ հաւատում. նա ոչ չարից կը վախենայ, ոչ վատից կը սարսափի, եթէ ինքը չար և վատ չէ:

Սրուանձտեան:

21. Նախապատրաստութիւն:

Ես լռեմ. Մայր Հայաստան խօսի ընդ ձեզ ողջունելով
Եւ գրկախառն համբուրել տացէ զվերջին օրհնէնք՝ աւանդ.
Ցուչ, լուռ կացէք և ունկն դիք. լուարուք, որդիք, զՄօր հառաչանս.
«Յիս, ով իմ մանկունք, յիս դարձ առէք յերկրէ օտար,
«Թէ դժուար է տամբք և զարմօք, գոնէ միայն սրտին սիրով
«Զհամասեռ Հայկեան սերունդս յոր վայր իցեն՝ թէ սփիւռքիք,
«Անդ եմ ես Հայրենիս, և զայն անշուշտ ինձ վարկանիմ.
«Չէ այն ոք հայրենասէր, որ կայ առ իս, այլ ոչ սիրէ.
«Հուպ կացեալ՝ բայց ոչ հայի յողորմ տեսիլ մերձաւորիս,
«Զաչս յինէն ամփոփեալ՝ զիւրն միայն դարձուցանէ.

« Հեռացելոյ սիրողին՝ լերինք բարձունք չեն խոչընդակն,
« Քաջ կարէ նա և անդուստ ըղձեռացեալս նշմարել,
« Եւ զերդ արև ի բացուստ շող արձակել մըթագնելոյս․
« Գնասջիք բարեաւ արդ, մանկունք, և զիս այսպէս
դուք սիրեցէք․»

Խրիմեան Հայրիկ․

Բ. ՊԱՐԱՊՄՈՒՆՔ․

I. ՀՈՎԻՒ․

1. Հովուի սրինգը։

Ծառի հովանին, տերևի շշուկն,
Տխուր ողբերգակ աղբիւրի շաչիւն,
Հաճելի դիրքը զմրուխտ կանաչով,
Մի ըսքանչելի գեղեցկութիւնով,—
Միշտ ասում են քեզ․ «Ո՛վ դու անցաւոր,
« Ով ինքնահաւան դու ճանապարհորդ,
« Ինչու չես գալի այս հազարաւոր
« Բարութեան լինել մասնակից, կցորդ։»
Եւ ահա հովտից մի քաղցր քամի
Բերում է իր հետ աննշան ձայներ․․․
Լա՛ւ ականջ դի՛ր դու․․․․ այն խաշնարածի
Սրընգի երգն է։—Եկել է գիշեր․
Կանչում գառներին հանգչել խաղերից,
Եւ պատսպարուիլ պատառող գայլից։

Ս. Շահազիզեան․

Եւ ասէ Յիսուս․ „Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց։“

Աւետարան․

2. Մարգի փերին։

Մի մանուկ իր հօր կովերն էր արածում նեղ ձորի մարգերի վրայ, որ տեղից հին բերդի աւերակներ են երևում։ Մի օր նորա ետևից մի փափուկ ձեռք խփեց նորա երեսի ծնօտին մեղմ կերպով, և երբ որ նա երեսը դարձրեց,—ինչ է տեսնում,—մի զարմանալի գեղեցիկ աղջիկ ոտից մինչև գլուխ սպիտակ լուսով հագնուած՝ կանգնած էր նորա առաջ։ Սա բերանը բաց արաւ, որ խօսի, բայց մանուկը քանի ոյժ ունէր վազեց փախաւ գիւղը։ Այսպէս այս օր, վաղը ինչ պէտք է անէր։ Նորա հայրը ունէր միայն այդ մէկ մարգը, ուրեմն մանուկը ուզէր չուզէր միւս օրը դարձեալ պէտք է կովերն այդ տեղ բերէր արածելու։ Անց կացաւ մի քանի ժամանակ, երեխան այդ տեսիլքը արդէն մոռացել էր, յանկարծ ամառուայ մէկ շոգ օրին խոտի միջից մի խշշոց լսուեցաւ, և նա տեսաւ մի փոքրիկ օձ սողալիս, որ բերանին կապոյտ ծաղիկ ունէր և սկսեց այսպէս խօսել․ «Լսի՛ր, մանկիկ, դու ինձ անէծքից կ'ազատէիր, եթէ իմ բերանից այս ծաղիկն առնես, և այդ ծաղիկն է վերևի բերդի մէջ եղած իմ պալատի բանալին, ուր ոսկու ամբարներ կան, ու և քեզ լինի։» Բայց հովուի որդին օձի խօսելը լսելով վախեցաւ, և դարձեալ վազեց տունը։ Եւ աշունքի վերջին օրերին մէկ անգամ նա դարձեալ արածում էր այդ մարգի վրայ, յանկարծ փերին երևեցաւ նորան երրորդ անգամ նոյն առաջին սպիտակ աղջկայ կերպարանքով և դարձեալ ծնօտին խփեց, աղի արտասունքով խնդրեց, որ փրկէ նորան, փոխարէնը ամեն տեսակ բարութիւն խոստանալով։ Ոչինչ աղաչանք չազդեց մանուկի վրայ, որովհետև նա շատ էր վախեցած, և խաչակնքում ու աղօթում էր միայն, որ ազատուի տեսիլքից։ Ա՛խ քաշեց լուսաւոր աղջիկը և ասաց․ «Ափսոս, որ քեզ ճանաչեցի իմ յոյս ու ապաւէնս․ այժմ ես դարձեալ պէտք է նոր մէկից համբերեմ և սպասեմ, մինչև որ մարգի վրայ բարտի ծառ դուրս գայ և բարտի ծառից օրօրոց շինուի։ Միայն այն մանուկը կարող է ինձ փրկել, որ այդ օրօրոցի մէջ կ'օրօրուի։ Այս ասելուց նա անյայտացաւ, բայց մանուկը շատ ափսոսեց և՝ ինչպէս պատմում են՝ շատ օր ու արև էլ չտեսաւ․ իսկ թէ ինչից մեռաւ նա, ոչ ոք չգիտէ։

3. Հովուի ցուպը:

Մէկ հովիւ խաշինք էր արածացնում Նիմրութ սարի լճի ափերին. մի օր երբ ուզում էր որ ոչխարը յետ դառնայ՝ ըստ սովորութեան իւր ձեռքի ցուպը ձգում է: Ոչխարը դառնում է, բայց հովուի գաւազանը լճի մէջն է ընկնում և ջրի պըտոյտքի մէջ կորչում է: Անցնում է մի քանի ժամանակ, մէկ օր էլ այդ հովիւը իւր ցուպը տեսնում է ուրիշ հովուի ձեռքին, պահանջում է, բայց պատասխան է ստանում, թէ հաստատիր որ ցուպի տէրը դու ես: Գնում են գիւղի դատաւորի մօտ. և ցուպի բուն տէրը սկսում է իւր ապացոյցը առաջ բերել և ասում է. «Ես քսան տարի է հովուութիւն եմ անում, ամենայն տարի մէկ ոսկի վարձ եմ ստացել, և իմ ցուպը փորելով՝ ոսկիքս մէջը լցրել եմ:» Ցուպը տալիս են իրան, և նա իր փայտի քակի բերանը բաց է անում, իսկոյն 50 ոսկի գետինն է թափվում. և այսպէս դարձեալ տէր է դառնում իւր ցուպին:

Գտնող հովուից էլ հարցնում են, թէ այս գաւազանը ո՞ր տեղից է ձեռքը անցել. նա էլ պատասխանում է. «Նիմրութ սարի տակը Մեղրագետը որ վազում է, նրա ական բերանին արածեցնում էի ոչխարներս, մէկ էլ տեսայ ջուրը իւր փորից հանեց այդ գաւազանը:»

Սրուանձտեան.

4. Ծաղկասար:

Անունը Ծաղկասար է, բայց վրէն էլ ծաղիկ չկայ, այլ ինքը մի ձիւնապատ ապառաժ սար է: Երբեմն այս տեղի արօտը այնպէս պերճ ու առատ էր, որ անասունը աճելով աճում էր, ամեն մէկ կովը օրն երեք անգամ կթվում էր և ամեն անգամ երկու կուժ կաթ էր տալիս: Այն ժամանակ սարի տակին կենում էր մէկ հարուստ ունևոր հովիւ, որ հետզհետէ հպարտացաւ և սկսեց անարգել հայրենական հին պարզ սովորութիւնները: Հրամայեց, որ վերև իր խրճիթը խիստ զարդարեն,

և գոռոզութեամբ այդ տան սանդուղը իր պանրից շինեց, պանիրները մէկ մէկու վրայ դարսեց և շաղախեց անարատ կարագով և սանդուղը մաքուր լուաց կաթնով: Այս սանդուղով դար ու վեր ման էր գալիս իր կինը, կովն ու շունը:

Նրա միամիտ պառաւական մայրը դեռ չէր իմացել թէ իր որդին ինչ սրբապղծութիւն է արել սարի գլխին. և ամառը մի օր ուզեց այցելութիւն անել նրան: Երբ որ բարձրացաւ, շատ խոնջացաւ և խնդրեց որ զովանալու համար մի բան խմեցնեն: Հովուին իր կինը խրատեց, և նա մի ամանի մէջ թթուած կաթ ածեց, մէջն էլ աւազ ցանեց, և տարաւ տուեց մօրը: Բայց մայրը զարմանալով այս անասելի չարութեան վրայ, շուտով իջաւ սարից և ներքև գալուն պէս երեսը դարձրեց սարին, լուռ կանգնեց և անաստուածներին անիծեց, որ Աստուած հատուցանէ փոխարէնը:

Յանկարծ քամի ու փոթորիկ բարձրացաւ և քար ապառաժ դարձրեց պառաւական հողը: Իսկ հովիւը իր տնով տեղով անիծուեցաւ, որ միշտ սարի գլխին պտտի, մինչև որ անէծքից ազատուի. «Ես և իմ շունը, կովն ու կինը յաւիտեանս սարի գլխին պէտք է մնանք:» Նա կարող է ազատուել անէծքից, եթէ մի կին չարչարանքի ուրբաթ օրը գայ այն կովի կաթը լուռ ու մունջ կթէ, որի պտուկները սուր սուր փշով են ծածկուած: Բայց այդ դժուար է, որովհետև կովը շատ կատաղի է իր ծակծկող փշերի պատճառով:

Մէկ անգամ մի կին արդէն բաւական կթել էր, երբ յանկարծ հարևանը ուսին խփելով հարցրեց. «Հա՛, բանդ աջող, ո՞նց է կթվում:» Բայց կթողը մոռացաւ ու ձայն հանեց. «փա՜ռք Աստուծոյ:» Այս ասելն ու կովի անյայտանալը մէկ եղաւ. հովիւը մինչև այս օր էլ սառ սարի գլխին է թափառում, և յոգնած իր անթառամ կեանքն է վարում:

5. Նախրչի Մանուկը:

Նախրչի Մանուկը մի բարձրահասակ մարդ էր, երկար սրած բեղերով, խոշոր ու սուր սև աչքերով, ահարկու ձայնով և յաղթանդամ մարմնով: Եթէ նա իւր հեզ բնաւորու-

թիւնովը բոլորի աչքին սիրելի էր եղել, իր հսկայական ուժովը գրաւել էր բոլոր գիւղի յարգանքը: Շրջակայ գիւղերի պարտիզներից շատերը նրա բռնցքի ուժը փորձել էին, երբ որ կամեցել էին մի կով կամ մի արջառ նախրից փախցնել: Ոչինչ սուր չէր բանացնում Մանուկը, նրա զէնքը իր կոմբալագլուխ հոնի մխտած գաւազանն էր: Քանի՛ քրդերի ու պարսիկների սրերի բերաններ էդ գաւազանի վրայ փշրուել էին: Պարսիկները մին մինին անիծելուս առած էին շինել ասում. «Նախրչի Մանուկի գաւազանին հանդիպես դու:» Էս էլ պէտք է ասել, որ էս ահարկու մարդը ոչ մէկին վնաս չէր տուած· տաւարագող եկողին մի քանի լաւ զօրս դու պատուիրեցեր բռնցքեր հասցնելուց յետոյ, գլխին էլ մի քանի գայլի աւետարան կըկարդար ու բաց կըթողնէր: Էլ ե՞րբ էր գժուել էն մարդ Մանուկի նախրին խէթ աչքով մօտիկ տալ, խելքը հացի հետ հօ չէ՞ր կերել:

Ահա հէնց այս էր պատճառը, որ Մանուկը 15 տարի էր նախրչութիւնը իրան սեպհականացրել էր· նրա միւս ընկերները տարէնը մին, համարեա, փոխվում էին, իսկ ինքը կար ու կար, և ինչպէս միշտ պարծենալով կրկնում էր, քանի կենդանի էր պէտք է ըլնէր:

Առաւօտը վաղ վեր էր կենում տեղից անցեալ օրուան դադրածութիւնից խոնջացած անդամներով նախրչի Մանուկը, գնում էր առուի վրայ երեսին մի քանի չոփ էր տալիս, փէշով սրբում էր ու դէպի աղօթարանը դարձած՝ մի քանի անգամ խաչ էր հանում. իր նախաճաշիկը՝ ինչ որ իր կինը պատրաստել էր, փաթաթում էր մի կակուղ հացի մէջ, դուրում էր անում ու կծելով դուրս էր գալիս, փայտը ձեռին կանգնում գեղի գլխին: Նախրի տուտը գեղիցը կտրուելուց յետոյ տուն էր մտնում, հացը շալակը կապում, մի մեծ դաւաթ գինի էլ կոնծում ու գնում իր բանին:

Երեկոյները երբ նախրչին նախրիցը յետ էր դառնում, ողջ գեղի տաւարը տեղաւորում, տէրէց տէր էր անում, գալիս էր իր տունը համբուրում էր իր երեխին և փառք էր տալիս իր արարչին ու նստում էին սեղան, մի կտոր հալալ հաց ուտելու:

Շատ անգամ էլ, սրտի ուրախ-չաղ ժամանակը՝ հանդումը պատահած անցքերը հպարտ, քաղցր քաղցր պատմում

էր իր կնոջ, մանաւանդ, եթէ գայլի ձեռքիցը մի արջառ էր խլել, կամ նախրիցը փախս արած մի կով էր գտել, մի սարսափելի ձորից հանել վերև:

Առհասարակ նա գոհ էր իր վիճակից և իրաւունք ունէր գոհ լինելու: Նրա տան ուտելիքից ոչ մի բան փողով չէր առացվում· ինչպէս նախրարած՝ նա ամեն շաբաթ հացը տաւարատիրոջ տներիցն էր հաւաքում—ամէն տանից մի մի լաւաշ: Իւղ պանիրը նրա համար ինքն իրան էր ընծայ գալիս հարևանների տանից, տարեկան կողակն ու գինին, ինչպէս նախրչի, իրաւունք ունէր իր ժամանակին հաւաքել· պատուց աղը դրած խորակները կինն էր գնում քաղում, կամ թէ ինքը նախիրն արածացնելիս ժողովում էր դաշտիցը, երեկոյեան հացի սփռոցի մէջ կապած՝ շալակին տուն բերում· ամեն բարութիւն նրա տանն անպակաս էր: Ամեն Աստուծոյ տուած օրը այգետէրերից Մանուկին զանազան բերքերից բաժին կուգար· ոչ մի բանից չտես չէր մնում նա:

Միով բանիւ այս ընտանիքը ոչինչ բանից պակասութիւն չէր քաշում: Հագնելիքն էլ իւրեանց տանիցն էր դուրս գալիս· կինը իրանց համար բաժին եկած մրգեղէնները միշտ փոխում էր գիւղի կողքով իրանց տան առաջից ոչխար անց կացնող քրդի կամ չօբանքեարի հետ բրդի վերայ, լուանում, գզում, մանում ու մարդու և որդու համար չուխայ գործում, կարում հագցնում, բամբակեղէնն էլ ինքն էր մանում՝ էլի մի հարևանի տղի ձեռքով դաշտեցու վրայ մրգով փոխելով:

Նրանց միակ հոգսը իրանց որդի չունենալն էր մի ժամանակ, էն էլ Աստուած երեք տարի էր մի որդի իրանց բաշխել էր, էլ ի՞նչն էր պակաս,—և ոչինչ:

Նրանց մէջ թագաւորած էր ընտանեկան սէրն ու խաղաղութիւնը, չափաւորութիւնը նրանց առաջին կանոնն էր:

Պռօշեանց:

6. Մարգար Մառնիկեցի

Մշոյ լեռան ստորոտը գտնվում է Մառնիկ գիւղը· այդ տեղացի էր Մարգարը: Հարիւր յիսուն տարեկան էր նա, բայց

ջղերը պինդ ունէր, իր ատամները երկու անգամ էին նորոգուել. և դեռ այդ հասակում տեսնում էր քաջ, լսում, խօսում, ուտում էր առողջ երիտասարդի պէս: Ամեն առաւօտ ձիւն օրերը սարի մացառներից չոր փայտ էր կտրում, շալկում էր և բերում էր Մուշ ծախելու: Ունէր որդի 80 տարեկան ալեւով ծածկուած. այն ինչ Մարգարի մօրուքը շատ քիչ էր սպիտակացել: Ինքը պարծենալով կ'ասէր. «փառք Աստուծոյ, մինչև այսօր գլուխս բարձի վրայ չէ դրուած, և բերանս վա՜յ չէ կանչել — ուզում է ասել, թէ հիւանդութիւն չէ տեսել — իմ օրերը սարերի վրայ ու իմ գործը հովուութիւն է եղել:»

Բայց Մարգարը շատ անգամ տէգէլք էր գնում, այսինքն ժամանակ ժամանակ հոգւով յափշտակվում էր ու կարծես, թէ օդերի կամ անդունդների մէջ ման էր գալիս, այնտեղ զանազան տեսիլներ էր տեսնում, իսկ մարմինը մնում էր անշշունչ. և ինչ որ տէգէլքը գնացած ժամանակը տեսնում էր, այն պահում էր մտքում և յետոյ պատմում էր ուրիշներին: Սասնեցի Մարգարի համբաւը մեծ էր և ահա ինչ էին պատմում նորա երկար կեցութեան համար:

Մէկ օր նա տեսաւ, որ աղբիւրի մէջ մի ցաւագար և վիրաւոր օձ եկաւ լողացաւ. երեք թուփ ունեցող ծաղկից կտրեց կերաւ, նորոգուեցաւ գնաց: Մարգարը նկատեց այդ ծաղիկը, եկաւ կտրեց կերաւ, նոյն ջուրը խմեց և լողացաւ. և ինչ զարմանք... աչքերը լուսաւորեցան, մարդը ուրիշ կերպ դարձաւ: Նա հովիւ էր և թողեց ոչխարներին անտէր. երբ որ կթելու ժամանակին եկաւ, նա ոչխարներին չտարաւ գիւղ: Ոչխարները ցրուեցան, գիւղի աղջիկները վեր ելան սարը, ժողովեցին ոչխարներին, կթեցին, բայց նորան էլ չգտան: Գիւղացիք ուրիշ հովուի յանձնեցին ոչխարներին, իսկ իրանք մի քանի մարդ հաց պատ հետն առած՝ սարէսար են ընկել նորան գտնելու: Ո՞ւր էր Մարգարը: Նա մի քանի օր ու գիշեր երկնքի բերդերումն էր, ոչ մութ էր տեսել, ոչ էլ սով է իմացել: Նա որ էն ջուրը խմեց ու էն ծաղիկը բերանը դրեց, տեսաւ որ առջևը բացուեցաւ մի լուսաւոր մարմար կամարաշէն պալատ. աշխարհքից ու մարդու խելքից դուրս էր այն պալատի շէնքն ու միջի փառքն ու բարիքը, անմահութեան տուն տեղ էր, բերանով չի պատմուի, ինչ որ նա տեսաւ:

Այս երջանկութեան մէջն էր, որ մէկ էլ ի՞նչ է տեսնում.

գեղի կողմից կանչում, աղաղակում էին նրա անունը. ականջը ձայն ընկաւ, տեղից վեր կացաւ, բայց շատ զղջաց: Նեղացաւ թէ ինչի՞ կանչեցին իրան: Հարցրեցին, նա էլ պատմեց իր արածն ու տեսածները: Շատ աղաչեցին, որ էդ ծաղիկը, էդ աղբիւրը ու էդ պալատի դուռը ցոյց տայ իրանց, բայց հնար չեղաւ, որ Մարգարը նորից տեսնէր: Այսպէս զրկուեց Աստուծոյ շնորհքից. շատ լաց եղաւ ու մէկ էլ գեղը չիջաւ սարից: Իր հացն ու ջուրը իրան կը բերէին, իսկ նա իր ոչխարներով սարի վերայ էր մնում:

Ահա գեղցիք այսպէս էին պատմում և հաւատում:

Սրուանձտեանց.

7. Սար երթալը:

Դ... գիւղի ժողովուրդը սովորութիւն ունէր ամեն ամառ սար երթալու: Գեղամայ լճի հիւսիսային ծայրից սկսեալ, ուր ընկած են Դիլիջանու սարերը, մինչև Փարվանայ լիճը, որ Ախալքալաքու և Ալէքսանդրօպօլու մէջ տեղն է գտնվում, բազմաթիւ լերանց գօտիներ և խումբեր կան, որոնց մէջ թէև չկայ երեւելի մեծութեան մի սար, որ գրաւած լինի ճանապարհորդների ուշադրութիւնը, բայց իրանց ծաղկափթիթ գագաթներովը և ականակիտ աղբիւրներովը երևելի են ամենամեծ լեռներէն անգամ:

Ահա այս սարերը, որ ձմեռ ժամանակ անմարդաբնակ են լինում և անհիւրընկալ, դորա փոխանակ ամառ ժամանակը իրանց ստորոտներումը և գօշերի վրայ անթիւ ոչխարներ և տաւարներ են պահպանում: Որքան որ երևելի է Արագածը իւր պատուական արօտատեղիներովը և անմահական աղբիւրներովը, որոյ համար իսկ Թարաքամէքը Ա լ ա - ե ա զ անուն են տալիս, նոյնպէս երևելի են և Լալվարը, Լօքը, Ղարախաչը, Ագրի-Դաղը, Թէլլի-Դաղը, և ուրիշ որ մէկն ասեմ, որ մին քան զմիւսը պատուական են համարվում: Այս սարերի շատերի ստորոտում անտառներ էլ կան և այս կողմանէ երևելի են մանաւանդ Լալվարայ և Լօքի հիւսիսային ստորոտները, որոնց շատ տեղերը

իրանց անթափանցելի և դժուարամատչելի լինելովը, կացնի ձայն չի լսուած դեռ ևս: Այս անտառների մէջ որսերի առատութիւն էլ կայ: Այստեղ բօլուկներով խոզեր, թաբունով եղջերուներ են մանգալիս՝ ժամանակ ժամանակ իրանց գոռոցով դղրդացնում են այդ ձորերը: Այս սարերումը կան և անմատչելի ձորեր ու հովիտներ, որոնք միայն աւազակաց են լինում պատըսպարան, այն է Գիւլի-Մամմադ, Գարանլու-Գարա, Շէյթանլի և այլն: Այսպէս աւազակները նոյնպէս մաս ունին այս ամառանոցներէն և ամառ ժամանակ սոցա բախտը աւելի է յաջողում:

Սարեցիք ամբողջ ամառը մի տեղ չեն մնում, այլ երկու կամ երեք շաբաթը մի անգամ տեղերը փոխում են, որ տաւարների համար խամ արօտատեղներ լինին: Այս տեղափոխութիւնը մի առանձին անյարմարութիւն չի պատճառում, որովհետև դժուար չէ իրանց շարժական տները, որոնք կամ վրան են լինում, կամ ա լ ա չ ո ւ խ ի ք ե չ ա, հիւսած եղեգնապատովը, հաւաքել մէկ տեղից և մի ուրիշ տեղ տանել: Այդ բնակարաններին մեր հայերն ասում են դ ա գ ա, իսկ ղարաբաղցիք՝ կ օ կ ա լ: Իրանց բնակելու տեղերին ասում են ո ւ ր դ, որ ասել է բանակ: Հայերի ուրդերը բոլորն էլ մի մի յատուկ անուն ունեն, որոնցմէ երևելիներն են՝ Քամի-ուրդ, Լանջիվեր-ուրդ, Ներքի-ուրդ, Վերի-ուրդ, Միջի-ուրդ, Ցեխի-ուրդ, Մելիք-Ապովի-ուրդ, Պետի (Պետրոս), Պօղի (Պօղոս):

Այն ուրդերը, որոնք մարդկանց անուններ են կրում իրանց վրայ, այդ յառաջ է եկած պատմական աղէտալի անցքերից, երբ Դաղստանի լեզգիքը արշաւելիս են եղել դէպի այս կողմերը և մարդիկ գերելիս: Այսպէս պատմում են, որ Պօղոսն ու իր նշանածը (հարսնացուն) իրարու կուռ բռնած էդ ուրդովը անց կենալիս են եղել, որ գնան Սարուեալ, իրանց դադեքը: Յանկարծ լեզգիքը շրջապատում են և ուզում են իրա նշանածը ձեռքիցը խլեն: Քաջասիրտ Պօղոսը խանչալը տալիս է իր նշանածին, ինքը թուրը հանում է ընկնում նրանց մէջը. վեցի գլուխն է կտրում, չորսի միջիցն է կիսում, բայց լեզգիքը շատ ժամանակ չեն տալիս՝ ութը ինը հրացան մէկէն արձակելով գլորում են անում արի երիտասարդին: Իր սիրելու մահը տեսնելով Պօղոսի նշանածը՝ Ջաւին՝ ընկնում է խանչալի վրայ և այսպէս երկու անբախտ հոգիք անթառամ պսակին են արժանանում: Այսպիսի պատմութիւնները շատ խորը տպաւորվում են ջահիլների սրտի մէջ:

Վարդավառից յետոյ սարեցիք ծաղկավէթիթ լեռներից վեր են գալիս և իջնում են ստորոտներում մի անտառոտ հովտում: Մինչև այս ուրդը տեղափոխուելը գիւղացոց մեծ մասը դեռ ևս ա ր ա ն ո ւ մ ն են, բայց հիմայ որ արդէն հունձն աւարտել ու խուրձը կրել են կալերի մօտ դիզել, բոլորեքեանք գալիս են սար, որ մի քանի շաբաթ սառը ջրերի վրայ հովանան: Գեղացոց այս սովորութիւնը ամենայն տարի կրկնվում է: Մայիսին ուղարկում են տաւարը և նոցա հետ տաւարածներին, կանանց և երեխայոցը, իսկ տղամարդիք մի քանի պառաւների հետ սպասում են մինչև հունձի աւարտը:

Արանի մարդիկը երբ որ հաւաքվում են այստեղ, որպէս թէ մի քանի խաղաղ և հանգիստ օրեր անցկացնելու մտօք, բայց նոցանից շատ քիչերն են վայելում այդ ցանկութիւնը. նոքա մեծ մասամբ անդադար աշխատում են և իրանց գործածական փայտեայ հ ա ջ ա թ ն ե ր ը՝ օրինակ՝ սայլ, գութան, կամն, լուծ, հորսելի, թի, խնոցի, մղան, խոնչայ, տաշտ, տաշտակ, խփի, բոռին, զանազան կոթեր, գդալներ, չերեփներ և ուրիշ բաներ այս տեղ են շինում:

Ադայեանց.

8. Եայլաղ:

Գարունքը բացուեց ու թուրք ու հայ եայլաղ դուրս եկան: Աղբրների գլխին, ծաղկների վրայ օբէքը իրանց չադրները տուին ու մայն արին էն անմահական դրախտը: Առաւօտը որ տեղէցդ վեր էիր կենում, հազար սարի ծէրից ամպն ու ծուխը իրար հետ խառը երկինքն էին վերանում ու շաղն ու ցօղը անձրևի հետ նրանց չօրերի, երեսների վրայ դնում: Կնանիքը կթի տաւարի հետ էին ըլում, կաթը հաւաքում, եղ ու պանիր շինում. մարդիքը տաւարը սարը տանում կամ բուրդ ու եղ բազարը բերում, ծախում, իրանց տան պակասութիւնը հոգում: Մէնակ էս չէր կնանոնց գործը. ցերեկը ջահրայ էին մանում, շալ ու խալիչայ կամ կարպետ գործում ու իրանց օրը ուրախ, միամիտ անց կացնում: Էլ ինչ ասել կուզի, որ տան

պէս՝ աղջիկ ու հարս էատեղ կուչ ու ձիգ անելով չէին ման գալիս կամ երեսները կախում: Մէկ տան պէս ում օբէն մանէիր, թւում էր՝ որ վարդի պէս փայլում էր, աչք էր՝ որ մարդի խելք տանում էր. էն օդի ու ջրի, էն ծաղկի ու կանաչի հոտն ու համն առնողի հոգին ու ունքն ի՞նչ կըլինէր բաս: Յայտնի բան է, որ հորսի ու շատ անգամ գողի ու հարամու հետ շարթով էին ման գալիս ջահել տղէրքը ու սպանած կամ բռնած բերած ժամանակը մէկ հարսանիք էր ընում բոլոր օբէքանց միջին: Գոնաղ պատահէր էատեղ պատահէր. շաբթով, ամսով էլ չէին թողալ հեռանալ. ու աղբրների քչքչոցը, ջրերի խշշոցը, ծառերի սլլոցը, ղշերի ծլվլոցը, չոբանի թութակը, զուռան, ոչխարի ու տաւարի ձէնն ու բառանչը՝ ամէն մարդի ուզումէին տանն. թէ դրախտ ես կամենում, էատեղ կայ, էապէս կայ, սիրտդ անմեղ, միտքդ յստակ:

Աբովեանց.

9. Վազանի բաժինը:

Մի սարի երկու դօշին գեղեր կային, որոնք ամենայն Աստուծու օր չարաչար կռվում, անպատվում և վնասում էին իրար հողի սահմանի (սինօրի) համար: Վերջապէս երկու գեղի ծերերը արդար սրտով վճռեցին, որ աշնանամուտ հասարակածին սարի երկու դօշիցն էլ առաւօտեան վաղ ծեգին, հէնց որ աքլորը կանչէ, մէկ մէկ վազան փահլեւաններ ուղարկեն, դրանցից ամէն մէկը դէպի սարի միւս երեսը վազէ և ուր որ այդ փահլեւանները ռաստ գան, այն լինի երկու գեղի սահմանն, ու այնուհետեւ հարեւանների մէջ կարճ ու երկարի վրայ կռիւ ու խռովութիւն էլ չըլինի: Այսպէս ընտրեցին իրանց միջից լաւ լաւ վազաններ. մէկէլ աշխատում էին այնպիսի աքլոր պահել, որ չը խայտառակուի և առաւօտեան ժամ կանգնեցնելը չուշացնէ: Սարի էս դօշին մի աքլոր ջոկեցին, քթոցի մէջ դրին և շատ քիչ ջուր ու կերակուր էին տալիս, կարծելով, թէ սով ու ծարաւից վաղ ձայն կը հանէ: Սարի էն դօշին ընդհակառակն լաւ չաղացնում ու կշտացնում էին իրանց աքլորին, որպէս զի ու-

րախ ու զուարթ առաւօտեան բ ա ր ի - լ ո ւ ս ն ասէ, և լաւ գիտէին, որ սա իրանց չի ամաչեցնի: Ահա աշունքն եկաւ և նշանակած օրին—մէ՛յ հրաշք—մէկ էլ տեսնես առաջ ու առաջ, դեռ մութն ու լուսը իրարից չէին էլ բաժանուել, քաղցած աքլորը կանչեց, և սարի էս դօշի վազանը ուրախ ուրախ գնաց դէպի սարի գլուխը: Սա էապէս գնում էր: Իսկ սարի էն դօշը դեռ լռութիւն էր. երկնքի վարդի վարագոյրը արդէն պայծառ քրքումի գոյն էր առացել, աստղերը վաղուց արդէն հանգել էին, բայց չաղ աքլորը դեռ իր գիշերուայ անվրդով հանգիստն էր կատարում: Նրա բոլորքը տխուր կանգնած էին խեղճ գեղցիքը, անհամբեր սպասելով նրա փրկարար «կիկլուկուին», սակայն Աստուծոյ անունով դրած ուխտը սրբութեամբ պահելով՝ ոչ ոք չէր համարձակվում նրան զարթեցնել. վերջապէս բանը բանից անցնելուց յետոյ՝ նա իր թեւերը թափ տուեց և կանչեց: Բայց շատ էլ որ լաւ վազան լինի, հիմի ի՞նչ կարող է օգնել փահլեւանը: Երեսը սփրթնած վեր կացաւ տեղից և նայեց սարի գլխին. վա՛յ իր գլխին…: Քարափի ծէրից մի մարդ երեւեցաւ, որ արդէն սկսեց զարիվեր իջնել. բայց ներքեւի վազան փահլեւանը քանի կարող էր իր ոտերին էլի ույժ տուեց, որ Աստուծոյ յաջողութեամբ իր գեղի գետինը, որչափ դեռ կարելի է, յետ կորզէ: Շուտով փահլեւանները դէմուդէմ եկան և քաղցած աքլորի տէրը գոռաց. «էս է սահմանի գիծը:» «Հարեւա՛ն», ասաց վշտացած հակառակորդը, «խղճալթ ունեցիր, էն արօտներից մի կտոր էլ տուր ինձ, որ դու ինձնից տարար:» Տանողը ի հարկէ չէր համաձայնում, բայց տանուլ տուողը հանգիստ չթողեց նրան, մինչեւ որ նրա զուլթը չշարժեց: Նա էլ ասաց. «Ա՛ռ, ինձ մէջքիդ նստեցրու, և որքան որ զարիվեր վազելով ինձ տանես, էն կտորն էլ քեզ եմ բաշխում:» Ջարէն կորած յաղթուածը շալակեց նրան և հոգին տալով մի կտոր էլ բարձրացաւ, մի երկու ոտ էլ առաջ քաշեց, բայց յանկարծ շունչը սպառած, անշունչ գետինը փռուեցաւ: Մինչեւ այս օր էլ կայ սահմանի առուն, ուր շունչը կորած գեղցին իր հարեւանին շալակած հասցրեց: Էն ժամանակից ասուեցաւ՝ Հ ա ն դ ը լ բ ա ժ ա ն ո վ ի ա, և ոչ ոք միւսի բաժինը չպէտք է վարէր ու արածեցնէր: Մէկ գեղը խնդում և ուրախանում է իր տարած առատ բաժնի համար, բայց և մէկէլ գեղն էլ իր հովուի անձնուիրութիւնը յիշատակում է և անմոռաց որդէ ցորդի պատմում է:

10. Հովուի դարձը սարից:

Մնաք բարով, մարգեր,
Արօտներ փայլուն.
Ամառն անցկացաւ,
Հօտը գնում է տուն:
Մենք էլի կը գանք, կբարձրանանք սարը,
Երբ թռչունների կզարթեն երգերը,
Երբ ծաղիկները կծածկեն երկիրը,
Անոյշ մայիսին կվազեն ջրերը:
Մնաք բարով, մարգեր,
Արօտներ փայլուն.
Ամառն անցկացաւ,
Հօտը գնում է տուն:

Թարգ. Բարխուդարեանցի.

11. Նախապատրաստութիւն:

Առ հովտիւք ծաղկաբոյս և ընդ մարմանդս հովաչունչ
Ջեմ առեալ նէք, մանկունք, արդ ի լերինս Այրարատայ,
Յորս հովուացըն երջանիկ փաղցր է ճեմել հօտն ի յարօտ
Ի վերայ նորաբացիկ պէսպէս ծաղկանցդ անուշաբոյր,
Որ ի վերուստ գիշերի ցօղ ընդունին ի գլուխս իւրեանց.
Եւ ընդ այգ մինչ արեւուն ցայտի զդողոք չառագոյն շող
Ի թերթիցըն չաղանիստ փայլք հարկանեն ոսկեճաճանչ.
Վա՜չ յայնժամ քանի՛ ախորժ արօտ հօտին դալարասէր,
Զոր ճարակէր չաղախառն և որոճայր բերանածուփ.
Եւ հովուին խաշնասէր որչափ հեշտանք կրէին ի սիրտ,
Մինչ ըզհօտին տեսանէր խայտալ խաղալ ի դալարիս.
Ինքն անդէն առնոյր յայնժամ ըզհովուական փողն ի ձեռին
Եւ նստեալ առ աղբերօք ընդ թաւաթուփս ինչ հովանեաւ
Մեղմաձայն հնչէր անոյշ և տայր հրաման հօտին իւրոյ
Արածել ուր և կամին ի մէջ հովտաց դալարաբոյս.
Եւ պահ կթոյն երբ լինէր առեալ բերէր ի պէրատեղն.
Կում ի յուս գնայլն յայնժամ կոյսք և կանայք գեղաստանեայց

Եւ կըթէր մէն մի զիւր հօտ լըցեալ զամանս մաքեաց կաթամբ՝
Տարեալ ի տուն խընդալից և ի պանիր մակարդելով
Տայլն առն ածել վաճառ ի ճոխ քաղաքըս Հայկազանց,
Եւ այնու զինչ պէտ լինէր անդուստ ղընել բերել ի գեղ.
Տեսէք և այժմ, ով մանկունք, զի կան դատարկ լերինք և բլուրք,
Զորս խաշանցըն ծածկէին հօտք բիւրաւոր իբրու զմարախ,
Եւ նոցին անոյշ բըչիւն զխորաձորս լընոյր լերանց.
Ո՛հ, աւասիկ լըռեցին ընդ հօտին ձայն և փողք հովուացն.
Ա՛յս դալարիք ծաղկախառն, քընքուշ գառանց փափկիկ արօտ
Այսպէս ոչ ճարակեալ՝ վայր թօթափին թառամելով.
Ցայս վտակօք զովարար. ոչ գայ ի ջուր հօտըն հազար.
Ուր ի տապոյ արեւուն չունչ առնէին ի աչինք յորոճ.
Այս լերանց մարմանդավայրք և ամարան մակաղատեղք
Ի հօտից դատարկացեալ լեալ են տիղիք էրէվայրից.
Ոչ ևս հովւին՝ կենսաւէտ յայդ վըտակունս յըստակաջուր
Լըւանայ զհօտն ասրաբեր, գեղմն փայլէ ձիւնակերպիկ,
Կամ խաշին տէրն ի կըտուրս գայ ի խուզել ըզգեղմնաբարձս
Եւ կանանց ոստայնագործ նիւթ ընծայել ասրեղինաց,
Այց մատանց ճարտարութիւնք ցարդ տեսանին ի Հայաստան՝
Նարօտ նարօտ հիւսք ի գորգս և ի պէսպէս գործըս մատանց.

Խրիմեան Հայրիկ.

II. ԵՐԿՐԱԳՈՐԾ

1. Երգ շինականաց:

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Շինականի քունն անուշ.
Ծագեց լուսնակն երկընուց,
Հովւի փողն էր անուշ:
Հօտաղն եզներ կարածայ,
Մաճկալ պառկեր, քունն անուշ:
Զըրգըղուն քամին կը փչէ,
Ծովային հովն էր անուշ:
Դաշտեր, ձորեր մընջեր են,
Ջրեր գըլգըլան, ձէնն անուշ:

Ճուտեր թռան ուրենց բուն,
Բլբուլի տաղն էր անուշ,
Անմահական հոտ բուրէր,
Քամին վարդի հոտն անուշ:

Ժողովրդական երգ:

2. Հսկաների խաղալիք:

Հայաստանում ամրոցների աւերակներ շատ կան: Մի այդպիսի ամրոց, որ շինած է բարձր սարի վրայ և մէկ ջրվէժի գլխին, երբեմն հսկայ դևերի բնակարան էր: Մէկ անգամ դևի աղջիկը բերդից իջաւ ձորը, որ տեսնի թէ ներքևն ինչ կայ, և գնալով գնալով տեսաւ մէկ անտառ, իսկ անտառի առաջ արտեր, որ հոտաղները նոր վարել էին: Զարմացած մնաց և սկսեց ուշադրութեամբ զննել գութանը, լուծքերն ու մարդկերանց, այդպիսի բան իր օրումը չէր տեսել: «Ահ», ասաց նա, «տանեմ այս բաները տուն, հօրս ցոյց տամ:» Կռացաւ, գոգնոցն առաջ քաշեց, ձեռքը քսեց արտերի երեսին, հաւաքեց բոլորն ու գոգնոցի մէջ ածեց: Այս անելուց յետոյ, ուրախ ուրախ վազեց տուն, ժպտելով թռչկոտելով. այս զառիվայրի վրայ, ուր մարդը հազիւ հազ տնքալով բարձրանալ կարող է, նա երկու երեք քայլ միայն արեց և սարի գլուխը հասաւ:

Հսկան սուփրի վրայ նստած էր, երբ աղջիկը տուն մտաւ: «Որդիս,» ասաց նա, «այդ ինչ ես բերել հետդ, որ այդպէս ուրախ ու զուարթ փայլում են աչքերդ:» Աղջիկն իսկոյն սկսեց զգուշութեամբ գոգնոցը բաց անել, որ ցոյց տայ բերածը: «Ի՞նչ ունիս գոգնոցի մէջ, աղջիկ, որ այդպէս շարժվում է:» «Ահ, հայրիկ, գեղեցիկ խաղալիքներ եմ բերել. այսպէս սիրուն բան երբէք չէի տեսել:» Եւ մէկ մէկ հանեց գոգնոցից ու թախտի վրայ շարեց՝ գութան, հօտաղներ ու եզներ. սկսեց նոցա չորս կողմը վազել, մէկ նայում էր նոցա վրայ հիացած, մէկ ծիծաղում էր, և ուրախութիւնից ծափ էր տալիս, երբ որ տեսնում էր, որ իր խաղալիքները տեղից շարժվում են: Բայց հայրն ասաց. «Աղջի՛, այդ խաղալիք չէ, դու մեր տունը քանդում ես: Շուտ

արա գնա և դոցա դարձեալ տար ձորը:» Աղջիկն սկսեց լաց լինել, բայց ի զուր: «Երկրագործը խաղալիք չէ ինձ համար», ասաց հսկան առանց հանաքի, «ի զուր է լացդ ու կոծդ. շուտով հաւաքիր բոլորը և տար այն տեղ, որտեղից որ բերել ես: Եթէ ներքև երկրագործը իր արտը չվարէ, մենք հսկաներս մեր սարի գլխին նստած՝ ապրել չենք կարող:»

3. Ցորենի հասկը:

Այն երանելի ժամանակին, երբ Աստուած դեռ երկրի վրայ էր մանգալիս և նորա աչքը քաղցր էր մեզ վրայ, գետինը անհամեմատ աւելի պտղաբեր էր, քան այժմ: Այն ժամանակ ցորենի հասկը ոչ թէ յիսուն կամ վաթսուն պատիկ էր բերում, այլ չորս կամ հինգհարիւր պատիկ. ծղօտի վրայ ցորենը բուսնում էր գետնից մինչև կատարը. ինչ չափով որ ծղօտն էր բարձրանում, այն բարձրութեամբ էր և հասկը: Բայց յայտնի է, որ մարդիկ առատութեան ժամանակը էլ չեն նկատում Աստուծոյ ողորմութիւնն ու օրհնութիւնը և անհոգ ու թեթևամիտ են դառնում:

Մի օր մի կին արտերի կշտին էր անց կենում: Նորա փոքր երեխան թռչկոտելով հետը գնում էր, յանկարծ ցեխի մէջ ընկաւ և շորերը կեղտոտեց: Իսկոյն մայրը մի բուռը լիք հասկեր գետնից պոկեց և սկսեց նորա շորերը սրբել: Մեր Տէր Աստուածը անց էր կենում այդ կողմը, և տեսաւ կնոջ արարմունքը: Բարկացաւ և ասաց. «Թող այսուհետև ցորենի ծղօտը հասկ էլ չունենայ. մարդիկ արժանի չեն երկնային ողորմութեան:» Աշտին եղած մարդիկ, հէնց որ այս լսեցին, սարսափեցան, ծնկան վրայ չոքեցան և աղաչեցին, որ ծղօտի վրայ գոնէ փոքր ինչ էլի բան թողնէ. թէպէտ իրանք այս ողորմութեան էլ արժանի չեն, բայց մեղքացաւ գոնէ անմեղ հաւերին, որ սովից կարող են սատակել: Եւ Աստուած նորանց արդարև մեղքացաւ, գիտէր որ մեծ թշուառութեան մէջ պէտք է ընկնեն, ուստի լսեց նոցա աղաչանքը: Այսպէս ծղօտի գլխին մնաց մինչև այս օր հասկի այն մասը, որքան որ այժմ բուսնում է:

4. Ճգնաւորի հացը։

Մի քարափի այրի մէջ բնակւում էին մի ճգնաւոր, նորա հաւատարիմ ծառան և պահապան շունը։ Տէր Աստուածը ուզեց այդ ճգնաւորի հաւատը փորձել և աղքատի կերպարանք առնելով կանգնեց դռան առաջ և հաց խնդրեց։ «Տուր», ասաց ճգնաւորը ծառային, «տուր աղքատին իր մասը։»

—Տէ՛ր, ասաց ծառան, միայն մէկ հաց է մնացել. էլ ի՞նչ կուտենայ քեզ, ինձ և մեր շանը։—

«Տուր», ասաց ճգնաւորը, «մի՛ վախենար, Աստուած կը հոգայ։» Ծառան առաւ դանակը, չափեց ու չորս հաւասար կտոր բաժանեց այն մէկ հացը. մէկ կտորը աղքատին տալով փնթփնթալով ու դժգոհութեամբ ասաց. «Մէկը քեզ, մէկն ինձ, մէկը ճգնաւորին, մէկն էլ մեր շանը։»

Շատ չանցաւ և Տէրը աւելի թշուառ կերպով եկաւ ու հաց խնդրեց։ «Տո՛ւր», ասաց ճգնաւորը, «իմ կտորը աղքատին. Աստուած ողորմած է։» Ծառան տուեց։

Շատ չանցաւ և աւելի սոված երեսով եկաւ Տէրը երրորդ անգամ և հաց խնդրեց։ «Տուր», ասաց ճգնաւորը, «տուր քո մասը։ Աստուած ողորմած է։» Ծառան այս էլ տուեց։

Քիչ էլ քաշեց,—և Տէրը կաղ, կոյր, մերկ և ողորմելի կերպարանք առած՝ եկաւ չորրորդ անգամ և ողորմութիւն խնդրեց։ Ճգնաւորն ասաց. «Տուր իրան շան համար պահած բաժինը, մեղք է. Աստուած կը հոգայ մեզ համար, որ ագռաւներին էլ կերակրում է։» Ծառան կատարեց հրամանը։

Աղքատը որ գնաց՝ մէկ էլ այս ձայնը լսուեցաւ. «Մեծ է քո հաւատը, ո՛վ երկնային Վարդապետի հաւատարիմ աշակերտ, և ինչ որ դու այդպէս ջերմեռանդութեամբ հաւատում ես՝ այն կատարուի։»

Ծառան գնաց դուրս և ինչ է տեսնում. չորս քարաւան էր գալիս՝ հաց, պտուղ և գինի բեռնաւորուած։ Ուրախ ուրախ վազեց ծառան առաջը, մարդ չտեսաւ քարաւանների հետ, այլ նոցա փոխարէն ամեն մէկ քարաւանի մէջքին մի մի դրօշակ տեսաւ, որոնց վրայ ոսկէ տառերով այս էր գրած. «Նա, որ ագռաւներին կերակրում է՝ չորս քարաւան է առաքում ճգնաւորին, որը նորան այս օր չորս անգամ կերակրեց. մէկը լինի ճգնաւորին, մէկը ծառային, մէկը շանը, իսկ չորրորդը թող մնայ Առաքողի աղքատ որդոցը։»

5. Շեղջայ դար։

Սովորութիւն է մինչև այսօր, որ կալի ժամանակ տէրտէրները ու վանականները գեղէգեղ շրջում են և ցորեն են ժողովում, նոյնպէս և ամենայն կարգի աղքատներն ու չունեցողները, մշակներն ու վարձկանները կալմաս են տանում կալատէրներից. այդ ժամանակ մրջիւնների քարաւանն և ճնճղուկների երամը թիւ ու համար չունին, որոնք կրում և կրում են իրանց պաշարն ու բաժինը։

Վանի քաղաքի հիւսիսային կողմը Դուլաշէն գիւղում մէկ հարուստ կալուածատէր կար և շատ ցորենի շեղջ է ունեցել, բայց ինքը շատ ագահ էր։ Այդ ագահ տանուտէրը ամենայն խստութեամբ հսկում էր իւր ցորենի շեղջին և ամենևին ողորմութիւն չէր տալիս. մինչև անգամ խեղճ սարեկներին ու արտուտներին էլ քարոտում էր։ Աստուած բարկացաւ նորա վրայ և պատժեց նորա խստասրտութիւնը. բոլոր այն ցորենը տեղն ու տեղը հողի շեղջակոյտ դարձաւ։ Այս այն հողային բլուրն է, որ այսօր էլ Դուլաշէն գիւղի մօտ է և կոչւում է Շ ե ղ ջ ա յ դ ա ր։ Նորա շուրջը ցոյց են տալիս այն խստասիրտ մարդու սայլը իր սայլորդներով և սայլի մէջ լծուած գոմէշներով. երբ որ սայլը գալիս էր այս ճանապարհով որաչներ բարձած՝ քար կտրուեցաւ կալուածատիրոջ հետ ի միասին, որի սիրտն արդէն կենդանի ժամանակ քար էր։

Սրուանձտեան։

6. Բանուոր մշակ։

Բանուոր մշակը ուրախ ու զուարթ բանում էր իր տիրոջ տան, պարտիզի և դաշտի մէջ առաւօտեան ծէգից մինչև երեկոյեան ժամի զանգակ տալը։ Իսկ այդ ժամանակ գնում էր Աստծուն համբուրելու։ Նորա սովորութիւն էր, որ մինչև ժամի տալը պիտի բանէր, թէ չէ ժամից յետոյ որ բանէր, հաւկուր կլյէր, աչքերը բան չէր տեսնիլ իրիկնապահից բռնած։ Մի օր

հունձի ժամանակ ցորենը հնձում էր և այնպէս էր աշխատում, որ քրտինքը անձրևի պէս երեսից թափվում էր: Բայց հէնց որ զանգակի ձայնը հնչեց, թողեց բանը ու ուզում էր աղօթելու գնալ: Տէրն եկաւ նրա ճանապարհը կտրեց և ասաց. «ի՞նչ աղօթելու ժամանակ է. չես տեսնում, որ սև ամպեր են հաւաքուել երկնքում: Բանդ մի՛ թողնիր ու աշխատի՛ր որ այսօր ցորենը հաւաքես: Աղօթելու համար յետոյ կը գտնես ժամանակ:» Մշակը պատասխանեց. «Աղա՛, ես մեր եկեղեցու պատուէրը սրբութեամբ կատարում եմ. բայց որպէս զի գիտենաս, որ ես չեմ ուզում՝ քո կամքի դէմ յամառել, ես կը ձգեմ մանգաղը վերև. եթէ վեր ընկնի, ես իսկոյն կը շարունակեմ հունձը, իսկ եթէ վերև մնայ, այն ժամանակ էլ ինձանից անկարելին մի պահանջիր:»

Մշակը ձգեց վերև մանգաղը և — ա՛յ հրաշք — էլ գետինը չընկաւ: Սարսափեց տէրը, երբ իմացաւ, որ մշակի արարմունքը Աստուծոյ կամքով է եղել: Այնուհետև էլ նորանից Աստուծոյ հակառակ բան չէր պահանջում, և վարվում էր նորա հետ ոչ թէ որպէս ծառայի, այլ որպէս իր հարազատ որդու հետ:

7. Հալիլ Բաբա և քառասուն ակունք:

Մի տէրտէր իւր լոյս հաւատքը ուրացել և քառասուն հարամ անօրէն ընկերներով շատ տարի աւազակութիւն է արել. նորան կոչում էին Հալիլ Բաբա: Մէկ օր, ճիշդ Զատկի օրը, այդ ուրացողն իր ընկերներով գալիս է գիւղը, որ եկեղեցին պաշարէ, տաճարը թալանէ և մարդիկ գերի առնէ տանէ: Այդ ժամանակ գիւղի երէցը պատարագ էր մատուցանում և ժողովուրդն էլ տաճարումն էր: Աւազակների գլխաւորը, ուրացող քահանան, հրամայեց ընկերներին, որ քիչ հեռու կանգնեն, իսկ ինքը զգուշութեամբ տաճարի լուսամուտից ներս է նայում, որ տեսնէ, թէ ինչպէս պէտք է գլուխ բերէ մտադրութիւնը: Այս այն միջոցն էր, երբ ժամարարը կարդաց. «Առէք կերէք.... ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց», և ժողովուրդը մէկ բերան աղաղակեց. «Մեղաւոր եմ քո առաջ, Աստուած, խոստովանիմ և հաւատամ», և ծնկների վրայ գետինն ընկան երկրպագութիւն անելու: Այս ձայներից ու արարողութիւններից

զգացուեցաւ ուրացողը, յիշեց առաջուայ իր ունեցած Քրիստոսի կարգն ու հրեշտակի կրօնը, Աստուած բացեց նորա սիրտը, զղջացաւ և արտասունք թափելով մտաւ ժամը. մեղայ ասեց, խոստովանեց, սրբութիւն առաւ, դուրս եկաւ, իւր դարձն ու արածը ընկերներին պատմեց, և չթողեց որ վնաս տան գեղացուն և եկեղեցուն: Ամենքը ձի են հեծնում, գնում են. ընկերները որչափ աշխատեցին, էլ չկարողացան նորան ուրանալ տալ ճանապարհին: Հասան Խըրթայ գիւղը ու քառասուն ընկերներն այնտեղ նահատակեցին նորան: Եւ նորա վերայ լոյս ծագեցաւ, շրջակայ գեղերի հայ երէցները եկան թաղեցին:

Աստուած նորա գերեզմանի ու թափած արեան տեղ մի զարմանալի ջուր պարգևեց այդ գեղերին, որ առաջ չունէին, և որ քառասուն մանկունք կամ և քառասուն ակունք է կոչվում: Սա Խըրթ գիւղի մօտ լեռնապատ հովտի մէջ ջրի մեծ ակն է, որ բղխում է տարուայ երեք ամսուայ մէջ միայն՝ մայիսին, յունիսին և յուլիսին: Ջրի ակը կոնքաձև աւազանի պէս է. աւազանի մէջ տեղն է Հալիլ Բաբայի գերեզմանը վարդի թփերով ծածկուած: Երբ որ ջուրը դուրս է գալիս՝ գերեզմանը լճակաձև շրջապատվում է և շիրիմը նորա մէջ դառնում է մի կղզի: Այդ ջուրը առատ, վճիտ և ցուրտ է, տասն ու չորս առուի բաժանվում է, և գնում ջրում է Խնուսի դաշտի զանազան գեղերի արտերն ու մարգերը: Ուրիշ ամիսներին բոլորովին ցամաք է ակը. տեսնողին միայն առուները կարող են ծնզիւ հաւատացնել գեղացու պատմածը, թէ այդ ցամաք աւազանից յորդառատ ջուր է բղխում գարնան վերջը և ամառուայ սկզբին: Ամենայն տարի համբարձման տօնին Խնուսի գեղերի բնակիչները, մանաւանդ այս ջրի շնորհքը վայելողները, մէկ մէկ գառն առնում են գալիս են այս ական վրայ և մատաղ են անում, խընդում, պարում, Աստուած փառաբանում և գնում են: Պատմում են, թէ բուն համբարձման օրը սկսում է բղխել այդ ջուրը և որ տարին որ պատահի չբղխել կամ սակաւ բղխել, այն տարուայ Խնուսի բերքը նուազ է. միով բանիւ՝ Խնուսի Նեղոսն է այս ջուրը, և համբարձման տօնը՝ Ամանորակի տօն:

Սրուանձտեան.

8. Գեղցու երջանկութիւնը:

Շատի հաքին սրեխ է, գիւղըայ էլ չունի, որ ոտը ծածկի. շատի չուխի վրայ հարիւր կարկատան կայ, էն էլ ռանգ ռանգ կտորներով, որը կարմիր, որը դեղին, որը գօլ գօլ. շատի ձեռներին, երեսին, միրքի վրայ տասը տարուան աղտ, կեխտ, թող ու մող կայ,—ամա ինչ կանես, որ տունն ու չիրախանէն հազար բարութիւններով լիքը՝ տրաքում է ու Աստծոյ հոգին կայ մէջըներումը. մէկ օձի ձուն է պակաս նրանց տանիցը: Գինին կարասներով շարած, ամբարը հացով լիքը, կթի կովն ու գոմէշները հորթ ու ձագը տակներին՝ գոմումը պահած, քեահլան ձին թավլումը, գութանը դուռը լծած, մառանը եղիշով, կախանով տանձ ու խնձորով խլթխլթում և մնողին հոտը տեղն ու տեղը բռնում, շշմացնում է: Որը երկու, որը երեք բաղ ունի, վարելու և սրածելու հող ու հանդ ունի: Կարասներով կոզակ, կճճներով ղավուրմայ, աքաշներով գօխ, բոխ, ողորմակոթ, բզզներով եղ ու կարագ, մօթալներով պանիր—ծով, ինչ տուն: Մէկ փարի բան բազարից տուն չի գայ, բացի իրանց հագնելու շորերիցը. էն էլ կտաւ, շապկացու, չուխացու շատը հարսներն ու աղջկերքն են նրանց համար մանում, գործում, կարում: Շատը չորս, հինգ հարս ունի տանը, որ մէկ տեղը ցաւելիս՝ ուզումեն գլուխը պտիտ դան ու աչքը կթած ունին, որ տեսնին, թէ իրանց տէրը կամ ղօնաղը ինչ կհրամայի՝ որ կատարեն: Մեծ ու պստիկ աշխատումեն, մեծի պատիւը գիտեն, նրա հրամանը ոչ ով գետնովը չի տայ, էնքան հնազանդ են:

«Բախտ. բախտ էս ա», շատ անգամ ասում է գեղցին. «փողն ինչ է, էս օր ջէբդ լցնես, էգուց պէտք է մաղդ լպստես: Փողը որ կայ ժանգ ա, ձեռի կեխտ՝ էս օր կայ, էգուց Աստուծով մխիթարիս: Թէկուզ փողի համն առած՝ թէկուզ իր միսը կերած, հէսաբը մէկ ա: Սարդարն էլ ա մեր դուռը գալիս, փողատէրն էլ: Օջախս լիք ըլի, տանս բարաքեաթ, որդիքս սաղ սալամաթ, թող օրը հազար մարդ մտնի, հազար մարդ դուրս գայ, ինչ եմ հոգում, հացն Աստուծունն ա, ես էլ հետը, ով հասնի թող ուտի. Տէրին փառք՝ տեղը հլայ շատ կայ, տղէքս սաղ ըլին, ջանս ապրի: Ով թամբալ ա, թող նա դարդ անի:

Իր տնկած ծառի տակին քնիլը, իր բհամ բերած պտուղն ուտիլը՝ աշխարհք աժի: Նոր չեմ հագնիլ, հին կը հագնեմ, ձեռս ո՞վ ա բռնում, ո՞վ ա գլխիս ծեծում. ես չեմ իմ գլխիս տէ՞րը:»

«Քաղաքը որ մտնումեմ, հէնց իմանաս, թէ աշխարհք սով ա ընկել. էլ ոչ խեր կայ, ոչ բարաքեաթ: Հացն ու ջուրն էլ որ փողովն ըլին ծախում ու առնում, էլ ո՞ւմ դուռը գնաս, ո՞ւմ ձեռք դէմ անես: Բազի վախտ փողատէրը իր կիտուկ կիտուկ մանէթները համարելիս, էնպէս գիտես, հոգին հետն ա դուրս գալիս: Հէնց իմանաս, թէ խաղնէն առաջներիցը թև կառնի, կթռչի: Մէկ ձեռք դէմ արա, մէկ ծիղ էլ չեն տալ, որ աչքդ կոխես: Թուհ, մարդ իրան հոգին պէտք է ծախի, որ փողի թամահ անի՞: Հազար տարի էլ որ քո աղեղ սիրելու դռանն էլ շլինքդ ծռես, կանգնիս, սովու մեռնիս, մէկն էլա քեզ տուն չի կանչիլ, մէկ սառը ջուր խմացնիլ: Էն մարդն էլ, որ քո տանը կերել, խմել, ամսով, տարով քո աղ ու հացի վրայ ա էլել, աչքը աչքիդ առնելիս՝ հէնց գիտես՝ թէ գիւղով խփեցին: Ետևն ա քեզ դէմ անում, ու աչքը քամակը քցում: Տօ, ասենք ինձ չես ուզում որ ճանաչես կամ սուփրիդ ղրաղը նշանց տաս, տօ, մէկ բարով Աստծու բարին էլ մոռացել ես, որ դունչդ ցցումես ու ետ փախչում: Ասենք թէ չուխէս մահուտ չի, հին, մաշուած, բրդից ա, քոնը նոր, կանանչ մահուտ՝ ձեռիցդ հօ չեմ խլում: Քեզ պէս հազար մահուդամարդ իմ էս աղքատ չուխիս ղուրբան ըլի, որ առանց ղօնաղի հաց չի ուտում: Մարդ ինքը պէտք է լաւութիւն անի, որ Աստուած էլ նրա բանն յաջողի: Էլի Աստուած օրհնի մեր հողը, մեր ջուրը, էլի թէ հոգի կայ, հաւատ, մեզանումն է.»

Աբովեանց.

9. Պարտիզպանների աւանդական սովորութիւնները:

Զրօրհնէքի թաթախման քշերը ջուրը մի սհաթ ոտը կը լնի, չի գնալ. ոչ ով տեսնիլ չի, թէ երբ: Արշաւիրը իր մօրիցը ինչ լսել էր, էն էլ արեց. մի բահ վեր կալաւ, գնաց շո-

բերը հանեց, էն ցրտին լողացաւ ու բահը դրուց ջրի մէջը, միալար ասեց. «բահս ոսկի, բահս ոսկի:» Խեղճ տղէն էն ցրտի միջին խելքն էլ քիչ մնաց կորցնի. փողասիրութիւնը էնքան յաղթել էր, որ թէկուզ մեռնէր էլ հեռանալ չէր, Թաք ըլի բահը ոսկի դառնայ: Նեղու մեղուն կպել էր, չէր իմանում ինչ ա ասում: Հէնց էն ջրի կանգնած վախտը քուաղաքինայ, որ պտի ուզածը կատարուէր, ոսկին մտիցն ընկել էր, ասում էր. «բահս թի, բահս թի:» Ախը բացուելուն մոռացել էր, որ հանեց տեսաւ, բահը թի ա դառել. քոռ փոշման գլխին տալով յետ դարձաւ: Թէ ընչանքայ հիմի էրկաթ էր, մի բան էլ կաժէր, հիմի օխտը չուռուկ շահուց (10 կոպ.) աւելի ոչինչ չի աժիլ. էն էլ թէ որ սաղ ըլէր՝ գլուխը քարը, բահի ծէրը կոտրած էր, թին էլ ընենց դուրս էկաւ, որ ըսկի ոչ մի բանի պէտք չեկաւ,

***

Զորեքշաբթի քշերը լոյս Աւագ հինգշաբթի, դեռ Աղամայ մութը չէր կոխել՝ մէրը ծրագը վառեց ու որդուն անուշ քնից վեր կացրեց: «Վեր կաց, ասեց, առ կացինդ, անխօս գնա մեր խնձորենու, ծիրանու ու տանձենու քօքերին երեք հետ կացնով տուր: Էս օր Աւագ հինգշաբթի ա, ասա. բար (պտուղ) ես տալի, տուր, թէ չէ կտրում եմ:—Էս տասը տարի ա էրեքն էլ, չեմ գիտում, աչք ա դիպել, թէ ընչի՞ցն ա, որ մի պտուղ չեն տալի: Ողորմածիկ հէրդ ձեր պէս աշխատաւոր էր ա՛, անխօս էս օր վեր կըկենար՝ կերթար ծառ չէր թողալ, կըտար կացնով: Քանի լիսահոգին սաղ էր, ամեն բարութիւններս էլ կար. ինքը մեռաւ՝ էլած չէլածն էլ հետը տարաւ:»

Պռօշեանց:

10. Երաշտութիւն:

Արեւը բարձրացաւ. եղանակը շոգ է.
Մարդիկ տապալուած դեռ աշխատում են.
Իսկ դաշտի օդը ինչպէս բորբոքուած՝
Բոլոր կանաչիք անջուր այրւում են...

Երկիրը ծարաւ՝ բոյսերը դեղնած.
Երկինքը կապուած անձրեւ չէր բերում.
Այնտեղ աշխատանք—վաստակ չքացած՝
Գիւղացին ոչինչ գործ չէր կատարում..
Տէր-հայրը շուրջառ առած ուսի վրայ,
Ծերունի մանդերով ծընկչոք դաշտի մէջ.
Տէր Աստուած, ինչպէս կանչում են հարա.
Խնդրում են անձրեւ սուրբ թափօրներով..
Գիւղամիջերումն էլ պառաւ կանայք
Տեսէք, թէ ինչպէս լաց—արտասունքով,
«Սուրբ խաչի սէրը» շըջում են արագ,
Մատաղներ մորթում—մեղայ գոչելով
Այս, այն խաչերին,—այս, այն սրբերին,
Որ բարեխօսեն կապուած երկնքին...
Նորահաս աղջկերքը նոյնպէս զարդարած
Գնացկան ջրերում մին մինից լծուած,
Ջուլթ էին վարում—զարովում էին
Դէպի երկինքը ու անձրեւ խնդրում..
Երկու մարդիկ էլ ուղարկուած հեռու
Դէպի Արթինը—սուրբ նահատակից
Քար պէտք է բերէին անխօս—անլեզու,
Որ քիչ հովութիւն լինէր երկնքից..
Իսկ խալիֆայքը նոյնպէս վեղոված՝
Էֆէմերդեկայով էին որոնում
Անձրեւի օրը,—բայց պելացած
Երկնքի երեսին ամպ չէր նկատվում..
«Ի զուր է, ի զուր, սիրելի Տէրտէր,
Արեւիս ականջը էլի—քոր եկաւ.
Սա փորձած բան է, անփորձ եղբայրներ,
Երկար ժամանակ դեռ անձրեւ չի գալ,
Աստուած մեր մեղքից մեզ բարի չի տալ...»
Ասաց ծերունին ականջը քորեց.
Գնացին շուաքը յուսահատ խալխը...
—Կէս օր էր արդէն. յուսահատ խալխը
Դադարած, յոգնած զովանում էին
Թփերի տակին, եւ չորսկ հացը
Նոքա համ ուտում՝ համ խօսում էին.

«Ափսոս հին ժամանակ, ափսոս քեզ...
Ո՞վ է տեսել չորութիւն էսպէս.
Աշխարհքի մեղքը շատացել է,
Աստուած էլ ահա մեզ պատժում է:»

Արարատեանց.

11. Նուրին:

Գարունքը քանի գնաց, տաքացաւ. մայիսի մէկին կասէիր, օգոստոսի ամիսն ըլէր. երկինքը ամէն օր հէնց պարզ ա ընում, որ գեղապետի համար ամպի նշան չես գտնիլ. արևի թէժութիւնը քաշալի գլուխն էրում ա: Էն յլքանիքը, որ մի քիչ ջրգլխին են, էլի կանանչի ծեղ երևում ա ափերումը՝ շուրջ տեղերումը. Թէ չէ, ինչ որ ներքևի յլքանոնց հալն ա, Աստուած հեռու անի. կասես, թէ ամպի չօլ ընին. չիման տեղ երազում չես տեսնիլ: Երեխէքը նուրին (լազարէ) շինեցին ու ման ածեցին, երկուսը կռնիցը բռնեցին, մինն էլ տոպրակ ա վեր կալել. մէկէլն էլ մի պատի բժուժ ու ման են գալի տները: Որ դրան առաջին կանգնում են, ասում են:

Նուրին նուրին էկել ա,
Աջըա հուրին էկել ա.
Շիլա շապիկ հաքել ա,
Կարմիր գօտիկ կապել ա:
Եղ բերէք պորտը քսենք.
Ջուր բերէք գլխին ածենք.
Մեր նուրինի փայը տուէք.
Ուտենք, խմենք, քէֆ անենք:

Կնանիքը մի աման ջուր բերում են լցնում էգ նուրինի գլխին ու երեխէքանցը բրինձ, կամ եղ, կամ ձու տալի, որ տանեն քէֆ անեն:

Պռօշեանց.

12. Սուրբ Ականատես:

Աշտարակ գիւղի առաջին լաւութիւնը անողը Ս. Ականատեսն ա: Կարբու ներքևիցը գետիցը գաւազանն առել ա, աղօթք անելով ընկել առաջ ու քաշ տալով գնացել Փարպի ներքև: Որտեղ գաւազանը խաղ ա արել, լէն առու ա դառել, ջուրը հետն էլ էկել, մինչ որ շողքը մարդու քամակիցը: Որ տեղ ապառաժ քարափ ա էլել, գաւազանով տուել ա, երկու կտոր արել, կամ միջիցը ծակել, ջուրը անց կացրել, ընչանք բերել ա գեղատեղը հանել: Նոր կամաց կամաց մարդիկ են էկել, տեսել ջուր կայ, գեղ են շինել, որ հիմի էն աննման Աշտարակն ա:

Պռօշեանց.

13. Երկու ճանապարհորդ:

Պատանին պանդուխտ,
Վտակն իւր երկրում,
Խոր ձորերի մէջ
Առաջ են գնում:

Անցան լեռները.
Վտակն ու տղան
Ընդարձակ դաշտով
Ցրտի անց կենան:

Միայն պատանին
Դանդաղ է քայլում,
Այն ինչ վտակը
Վազում, թռչկոտում:

Ուրախ վտակը,
Տխուր պատանին—
Նրանց դերերը
Այստեղ փոխեցին:

Պատանու բերնից
Մի ձայն չէ լսւում,
Սակայն վտակը
Երգում, կարկաչում:

Լռեց վտակը,
Հանդարտ է գլորւում.
Շտապեց պատանին
Եւ ուրախ երգում:

Վտակն հեռացաւ
Հայրենի երկրից.
Տեսաւ հայրենիք
Պատանին նորից:

Թարգ. Բարխուդարեանցի.

14 Ջրի հերթը։

Մեր գիւղացիք թէև առհասարակ կոպիտ մարդիկ են, բայց այսու ամենայնիւ նոցա մէջ էլ կայ սէր, բարեկամութիւն, հաւատարմութիւն, մեծահոգութիւն և այսպիսի գովանի յատկութիւնք։ Միայն երկու բանի համար խաթրապահութիւն չկայ, այդ երկու բանն է հ ո ղ ը և ջ ո ւ ր ը. նոցա համար սաստիկ կռիւներ է լինում և շատ յաճախ գործը հասնում է մարդասպանութեան։ Ահա մեր հեղինակներից մէկը մի այդպիսի պատմութիւն է աւանդում մեզ ջրի մասին, ուր թէպէտ և ոչ կռիւ և ոչ մարդասպանութիւն չի երևում, բայց տեսնէք թէ հարևանը հարևանին որքան անիրաւութիւն կարող է անել, եթէ տէրը իր մալին տիրութիւն չանէ։

Համբարձմանից յետոյ մին օր առաւօտեան խեր ու շառը նոր էր կտրել, Հէթումը տեղից վեր կացաւ, երեսը լուաց, երեսին մի քանի խաչ հանեց, մտածեց, որ դեռ իրանց քեքանոց (այգիների) պատերը չափարած չի, մարդ ու մուրդը չորացել ա, մի քիչ լօբի ունի ցանած, ոչ բար ա դրած (ամբացնել արմատները հողով), ոչ ջախած (նեցուկ տուած), ծառերին պատրիս (պատուաստ) չէ դրած։ Ընենց մի քանի խօսք ասելով՝ գնաց տաշտից մի կտոր հաց վեր կալաւ, դրուց գոտկածալը, էտոցն էլ խրեց մէջքը, բահն էլ դրուց ուսին, հալևոր հալևոր ճամփայ ընկաւ դէպի քեքին։ Գնաց քեքին, տեսաւ, որ ջրի հերթը իրանց հարևանինն ա։ Բահով կաւառի (ջրի մուտքը) տակից հէնց բաց արուց, որ ոչ ով չիմացաւ, թէ ջուր ա կապել։ Հէնց շինեց մարդերը, որ թէ տեսնէին, կասէր. «Էս խաբար չեմ, ջուրն ա ծակել։» Յետոյ էտոցը հանեց մի քանի բաղամարգի, աղջանաբաթ, ղայսի, գեառագեառ (ծիրանների տեսակներն են) ու ուրիշ լաւ ծիրանի շիւեր կտրեց, տարաւ ինչ կնտոտած փիս ծիրանիք, դամբուլիք, շորեք ունէր՝ նրանց նոր դուս քցած շիւերի վրայ պատրիս դրուց։ Գնաց մարդերի ջուրը կտրեց լօբու վրայ արուց, էն էլ ջրեց ու բաց թողուց ափան վրայ ու ինքը քաշուեց, գնաց քեքու ներքև, ծառերի որ ճուղքն աւելորդ էր կտրատեց չափար շինելու համար ու մի կանանչ տեղ նստեց, քթինքը սրբելով ինքն մտածում էր իր արարմունքի համար...։ Ընենց Հէթումը իր մտքերի

հետ էր, որ ջրատէրը բահը ձեռին վերև կաւառը կտրելով՝ ձէն տուեց. «այ ջուր կապող, ձեզ ամօթ չի՞։» Հէթումը որ լսեց, թէք ընկաւ, համա ջրատէրը փաղուց տեսել էր, մին էլ ձէն տուեց. «Հէթում ափէր, ախար էս ինչ էք անում։» Սա տեսաւ, որ չի կարայ տափ կենալ, վեր կացաւ ու գուաց. «Որդի, քու արևը, ես խաբար չեմ. կը լինի, որ ջուրն ինքն ա ծակել. ես հէնց որ ներքև էկայ, զատ չի կար. քշերս էլ ջուրը շատ վարար էք տարել, աւուր թմբերովը քցել ա, գնացել մարգերը, լօբին ջրել. հէնց թայ էր, մէկել օրն էի ջրել քուրս տղի ջրովը. սաքի էկայ, թէ բար գնեմ, տեսայ որ ջրուել ա։ Կարլի սար, աղպէր ջան, քու ջուրն իմ ընչի՞ն ա պէտքը. էքուց, էլօր էլ մեր ջրի հերթն ա, քեզ սաղն ասեմ, ուզում եմ բոկի ջուր չի կապեմ։» Սաքի ջրատէրն էլ գիտէր, որ սուտ ա ասում, համա ինչ, արուուխյն ամանչեց, ջուր կտրեց, գնաց, աղաչանք անելով. «Հէթում ափէր, քեզ արքայութիւն ըլի կտրես ոչ. ինչ ունինք, չունինք, չորացել ա։» Հէթումը ընչանք կացաւ, որ ջրատէրը տըլ քեքուցը դուս դրուց, էլ յետ գնաց ջուրը քանդեց ու էկաւ ներքև, բահը դրուց գլխատակին ու թէք ընկաւ, որ աչքը մի քիչ կպցնի։

Պռօշեանց։

15. Աստուած որ բանն աջողի ոչ, մարդ հազար էլ աշխատի, ոչինչ չի շինիլ։

Աշտարակցի քաշալ Ադամը մի անգամ մի անձրևային տարի տեսնում ա, որ Երևանու ճանապարհին երկու կողմանէջ կոչուած հովիտը շատ սիրուն կանաչել է։ — Տօ, չօլի խոտը որ ընենց սիրուն դուս կըգայ, ցնծին կըտայ, էս տեղը որ վարուի, ցորեն ցանուի, լաւ մասիլ (բերք) չի տա՞լ, — մտածում է Ադամը և միւս տարին եօթն օրավար տեղ սկսում գութան ձգում, մշակ բանացնում, վարում ու ցանում։

Դու ոչ մեռնիս, նրա բաղդից էդ տարին անձրև չի գալիս, տարին երաշտ է լինում, Ադամի աշխատանքը ջուր է կորչում։ Հնձի ժամանակ մի ջվալ վերցնում է նա, գնում տեղ

տեղ մի մին հատ բուսած ցորենները պոկոտում, ողջ արտը մի ջվալի մէջ տեղաւորում ու յետ դառնում: Օրը շատ պարզ է լինում, հէնց որ մտնում է ձորը, կամրջին մօտենում, որ տեղից որ տեղ, մի պստիկ ամպ յառաջ է գալիս ու Աղուէսի ոտը կամրջին դնելն ու երկնքից հեղեղ թափուելը մին է լինում: Կամաց շալակը վեր է դնում մեր խեղճը, քաչալ գլուխը բաց անում ու ասում. «Օխտն օրավար կոլոլել, ջվալս մէջն եմ կոխել, հիմիկէնց դէնը արի էս իմ կօնդալ (քաչալ) գլխիս:»

Պռօշեանց.

16. Փոթորիկ:

Հաւաքուել են մայլ մութ ամպեր,
Կապոյտ երկինք ծածկել են.
Որոտում է. Հրեղէն նետեր
Թռչտում են դէս ու դէն.
Կատաղութեամբ, շառաչներով
Սաստիկ մրրիկն անցնում է.
Կոտրտելով և գոռալով
Անտառը դղրդում է.
Հեղեղներով հոսում է վայր
Անձրևը մութ ամպերից.
Թնդիւն, ճայթիւն և կայծակներ
Շարժում են լեռներ տեղից.
Ծովը շփոթուած եփ է գալիս,
Լեռան-ալիք է բարձրացնում,
Նա լեռան-ալիք բարձրացնելիս
Անդունդներ է բաց անում:
Բոլոր բնութիւնը կարծես, թէ
Տակն ի վեր է լինում.
Երկինք, գետին, ծով և անտառ
Ծանր հեծում, տառապում.
Մարդ, թէ թռչուն, թէ անասուն
Յուսահատուած լռվին՝
Սարսափելով սպասում են
Իրանց կեանքի վախճանին:—
(կարճ.)
Բայց տես, անձրեն յանկարծ
Պայծառ երկինքը տեղ տեղ
Ամպերի միջից դուրս նայեց.
Ծագեց արև հրաշագեղ:
(քունմ)
—Այսպէս, եղբարք, մեր կեան-
Շատ կըտեսնենք մրրիկներ.
Չըվհատենք, մրրիկներին
Կըհետևեն պարզ օրեր:

Բախուդարեանց.

17. Փոխարայ բանողներ:

Մի երիտասարդ առաւօտենց բահը բերուց առեց, ձըռուէ կոթը քցեց վըզն, ծիրանի թափչակն էլ անց կացրուց, լափչինները վեր դրուց տանը, տրեխները հագաւ, էտոցն էլ խրեց մէջքը ու գնաց փոխարայ բանատեղ իրանց հարևանի յիքին փորելու, որ նրանք էլ գան իրանցը փորեն: Հարևանը հալևոր մարդ էր՝ համա հէնց ոտերը թեթև էր, որ կասէիր, թէ քառսուն հինգ տարեկան տղայ ըլնէր. բանուորներից յառաջ գնացել էր յիքումը նստել: Հէնց որ տղէրքը բան ընկան, կանչեց գըլխավրեններն ու սիրտ տալով նրանց ասեց. «Դէ՛, տղէրք ջան, ապրէ՛ք, ձեր ջանին մատաղ, աշխատեցէ՛ք, լաւ բահի տուէ՛ք. ես ձեր վախտը հէնց փոր էի անում, որ բահը ձեռիս դողում էր.» ու հանաքներով նրանց էշխի քցելու համար, ասում ա, «Տօ՛, ձեր ադամարդութիւնին ի՞նչ ասեմ, ձեր վախտին ես քարեն հուփ էի տալիս, ջուր էր դուրս գալի կամ հող էր դառնում բռնումս, մածունն անփչել էի ուտում, օխտը հացը մի աման կերակրով էի խփշտում, եղը ջրի պէս էի խմում. հիմի ա որ ոչ ով ինձ մարդատեղ չի քցում. ախտօս ժամանակ, ինչքան էլ ոտ ու ձեռից ընկած ըլիմ, բանի միջին ձեր պէս օխտը տղին հում հում կուտեմ. դէ, ապրեն իմ տղէքը, հա՛, տօ՛, չնեղանաք, էս ասում եմ՝ ձեր սիրտը ուրախացնելու. զորթ ա, ասած ա, թէ հիմիկուան տղէքը անբան են, ծոյլ են, համա ձեզպէսների համար չի ասած, ապրեն իմ տղէքը, մաշալահ, կասես ասլան են, բահը ձեռներին դողում ա, ինչ կասես բանից տղին, հալալ ա սրանց հացը:» Այսպէս հանաքներով մէկին քաջալերելով, միւսին շտապացնելով, երրորդին գովելով ժամանակն անցկացրեց, մինչև որ հացը բերին: Հալևորը ձէն տուեց. «Յետ դառէ՛ք, տղէք ջան, ձեր արևն ապրի, հալալ ա ձեր հացը.» Նրանք մտիկ չտուին ու էշխին ընկած ուզում էին էլի փորի: Համա հալևորը չթողուց. «Եկէք, ասաց, հաց կերէ՛ք, առանց էն էլ ձեր աշխատանքն ինձ հասաւ, բանն ո՞վ անի, ես ու դուն, հացն ո՞վ ուտի, ես ու դուն. հացը հացարարին տուր, մինն էլ աւելի:» Տղէքը նստեցին հաց կերան յետոյ էլի բանեցին ընչանք իրիկուան ժամը ու յիքին պրծան: «Յետ դառէ՛ք,

ձէն տուող հաւքերը, կանաչ դաշտը, օրհնեալ է Աստուած:»
«Խեղճ փունջ, ձէն տուող բանւորները չեն թողնում ափէր (ծեր մարդոյ պատուանունն), դու գնա չորացիր պատրաստիլ սուրբ»; ասին ու ամէնքն իրանց բաժին կոտրով քերեցին, դրին ուսին, եկան տուն:

Ժամից յետոյ ամէն մարդ հաւաքեց իրանց բանւորներին տարաւ հացի: Չեխթումն էլ թօփ արեց իրա բանւորներին տարաւ տուն: Հացը քաշեցին ու թանով ապուր լցրին երկու մեծ քեղանի մէջ ու կերան: Հացից յետոյ աղէքը ձէն տուին. «Ափէր, խեղճ փունջ:» Էն ահաւթը մէն էլ տեսնենք, աչքդ բարին տեսնի, շուրջուխ կանաչ, ալանի, կապած ու անկապել դեղձի չիր, փշատ, մի կախան էլ հաւող՝ սափրի մէջը լցրած, դրին մէջ տեղ: Էս էր խեղճ փունջը: Բայց այս սովորութիւնը արտերի բաների ժամանակից է մնացել: Խեղճ փունջ ասում են այն վերջած հասկին, որ երբ արտը քաղում են վերջացնում, ցորենը խաչաձև կապում են մշակները ու բերում տիրոջը նուիրում, նրանից միրդ առնում բաժայ:

Պռօշեանց.

18. Լօռցի և Քուրդստանցի Հայ

Մի օր մի քանի Լօռցիք հաւաքուած իրար պատմում էին իրանց ցաւերը, թէ ինչպէս դրացի հարևանները անիրաւութեամբ Լօռեցոց հողերին տիրացել են, և սրանք էլ ազխատութեամբ անհոգ թողել են իրանց կալուածները ուրիշի ձեռքին: Քէօխվէն էլ այս պատմութիւնն արեց:

— Սրանից մի քանի տարի առաջ մի խեղճ մարդ եկաւ մեր գիւղը անունը Շաքարօ, ինքը հայ, ոչ բարով... Էս խեղճ Շաքարօն առաջ սեպականութիւն էր անում Լօռւ. մի ձեռ ալափ չունէր, թէ եզները պահէր, գիւղ էլ սարկաւեցին, որն էլ ծախեց, եկաւ մեր մեծ լրեցին բաղմանչի դառաւ: Լաւ: Մի քանի տարի որ անց կացաւ, մի բոստանի տեղ ուզեց մեր մարդկերանցից, նրանք էլ տուեցին, թէ խեղճ մարդ է, տանի իրա համար մի քանի բան սերմի, տանի իրա օղլուշաղը պահի:

Շաքարօն դարձաւ բոստանչի. լաւ: Ձմերուկ, սեխ (սեխ); սոխ, սխտոր, թամբաքու, տակ, գազար, խիար, դդում, քալամ (կաղամբ), ուրիշ ինչ կանանչի որ ասես ցանեց: Բոստանի կշտին մի դաշի պէս բան էր շինել, ինքն էլ էդ տեղ էր կենում գիշեր ցերեկ: Մի երկու տարի որ անցկացաւ, մի քանի շահու տէր դարձաւ, Տէր Վանէսի հետ ընկերացաւ, ու նրա հետ մի ջաղաց շինեց, բոստանը չափարեց, բաղ շինեց, հիմի սրանք երկուսով համ բաղ ունեցան համ ջաղաց: Լաւ: Սրա վրայ երկու տարի քաշեց, Տէր Վանէսը մեռաւ. տղայ զաւակ չունէր, բաղն էլ, ջաղացն էլ մնաց Շաքարօին, էլ ոչով դաւի չարաւ: Շաքարօն երբ որ փողը բոլացրեց, օձի նման խորխորհան էլաւ, ձէն գցեց թէ ես ազնիւ եմ: Սուտ չէր ասում, գնացել էր մի ազնուականի փող տուել, նրան ազգական դառել: Բայց ցաւն էս է, որ ազնիւ դառաւ թէ չէ բաղն ու ջաղացը, թագաւորական տեղը, իրան վրայ հաստատեց, թէ էս իմ պապական տեղն է: Գեղցիք նոր աչք բաց արին, տուր ու թմփոցը գցեցին, Շաքարօին դուրս արին, բայց էլ ինչ կօգտէր: Նա իրա բանը լաւ էր բռնել: Գնաց քաղաքից հողաչափներ բերեց, գեմլեմերները եկան թէ չէ, նա թէ առաջ մի բաղատեղ ունէր, սրանք հարիւր բաղատեղ խլեցին մեզանից տուին նրան: Մի վկայ պէտք էր, թէ էդ տեղերը նրանն էր, վկան էլ հազիր էր փողով կաշառած մէկը: Հարա՞մ մտք կանէր, որ աղքատ Շաքարօն վերջը մեր գլխին էսպէս օյին պիտի դնի: —Հը՜, ինչ կասես, ափո, ձեր երկրումն էլ էսպէս բաներ կա՞ն,—հարցրեց քեօխվէն մի ծերունի մարդու, որ ինչպէս երևում էր հագուստից և խօսելուց ուրիշ երկրացի էր:

—Մեր երկի՞ր... Է՜, է՛ֆ... Ախպար, մեր երկիր էդ ման բաներ չկան, ըմա գողութիւն, աւազակութիւն շատ կեղնի:

—Գողութի՞ւն, գողերի մազանը, նրանց փաթանը, բուն մեր երկրումն է: Դուք հէնց իմանում էք մեզանում գողութիւն չի՞ ըլում, մեզանից քիչ են գողանում: Որ մէկ մէկու վրայ հէսաբ անեմ, տարին էն քիչը մի տասը-քսան դամշ, մի էզ-քան էլ եզը, մի երեսուն քառասուն մաքիան, հէնց մենակ մեր գեղեցն են առնում: Էսկի թողո՞ւմ են, որ եզներդ ջուխտ մնան, եա ձիուդ մէկը երկու դառնայ, մի խօսքով էնպէս են արել, էն տեղն են հասցրել, որ էլ ապրանք չենք պահում: Բօրչալուի թուրքերն էլ մի ուրիշ փեշակ չունին, դրանցը դո-

ղութիւն է: Դրանց մէջ ով որ գող չի՝ նա տղամարդ չի: Ով որ ուզում է իրա ապրանքը չգողանան, պիտի ինքն էլ գողութիւն անի, գողերի ընկեր դառնայ, գողերին պահպանի, պաշտպանի: Դրանց մէջ հարևան հարևանի տուն կտրում է, ցորենի դէզերը կրակ է տալիս: Դրանք թարաքամա խալխ են, խուրձը դիզում են թէ չէ՝ դիփ էլ քոչում են գնում սար: Որ օխտը գեղ մտնիս, մի մարդ, մի կատու չես գտնի: Նոր սկսել են ղարավուլ բանիլ գեղերի վրայ, որ դէզը կրակ չտան: Էս դէզ կրակ տալն էլ նոր են սովորել: Հիմի դէզերի կրակը սաղ երկինքն է կարմրացնում:—

Խեղճ ախուն, որ միտք ունէր տեղափոխուելու այս գեղերը, քեօխվի պատմութիւնը լսելով՝ իւր Քուրդստանի բարբարոսութիւնը մոռացաւ:

Աղայեանց.

19. Հայաստանու հող:

Հայաստանի հողը էն հողն է, էն հիանալի աշխարհն է, ուր տեղ որ դրախտն էր եդեմական, ուր Աստուած՝ բոլոր աշխարհը ջրհեղեղովը երբ որ կործանեց, Հայոց սուրբ Մասսայ սարը միայն արժան տեսաւ, որ Նոյեան տապանը նստի ու Հայոց երկրիցը էլ էդ մարդիկ բազմանան ու ուրիշ երկրներ էլ շինութիւն գցեն. էն սուրբ հողն է, ուր որ անպարտելին Հայկ իր մզրախը ցցեց ու իր սուրբ անունովը Հայաստան կանչեց: Էն ընտիր հողը շատ ուրախութիւն տեսաւ, շատ գեղեցկութիւններով զարդարուեցաւ, շատ թշնամուն նախանձելի դառաւ: Դա էն սուրբ հողն է, ուր Բագրատունեանք, Ռուբինեանք՝ իրանց հազար թշնամու ձեռքի անտէր մնացած հայրենիքն էլ էդ գերեզմանից հանեցին, էլ էդ նոր հոգի տուին. էն օրհնեալ հողն է, ուր Ասորիք, Պարսիկք, Հոնք, Ալանացիք, Մակեդոնացիք, Հռովմացիք, Արաբք, Օսմանցիք՝ ջրհեղեղի պէս վրայ եկան, հարիւրաւոր ազգ ու աշխարհ ոտնակոխ արին, ջնջեցին, սրբեցին,—թրի, կրակի մատաղ արին. ուր տեղ որ սար չի մնացել՝ որ արին չտեսնի, քար չի մնացել՝ որ մարդ տակով

չանի ու հարիր մեր հարևան ազգեր էնպէս են հողի հետ հաւասարուել, կորել՝ որ էս օր ո՛չ նրանց շունչը կայ, ո՛չ անունը,—բայց սուրբ Հայոց ազգը, անյաղթելի Հայկայ որդիքը, իրանց կեանքը, թագաւորութիւնը, մեծութիւնը, փառքը, իշխանութիւնը, զօրքը կորցնելէն ետև, որ տեսան՝ թէ էս աշխարհակործան ջրհեղեղին, էս գազան ազգերին չեն կարող դիմանալ, աչքերը երկինքը գցեցին, գլխները գոգները դրին ու հազար թրի տակից, հազար կրակի միջից, սիրտը սրտի տուած, հոգի հոգու կպցրած, մինչև էս օր էլ՝ իրանց գլուխը, իրանց սուրբ հաւատը, իրանց սուրբ օրէնքը՝ էն վեհանձնութիւնովը պահպանեցին, որի օրինակը աշխարհքում ո՛չ էլել ա, ո՛չ կըլի: Նոյեան դէսը վեց հազար տարի Հայոց խեղճ ազգը հեթանոսի, կռապաշտի, մահմեդականի, անօրէնի ձեռին էր աչք բաց անում, նրանց հետ քեալլայ տալիս, ու շատին շատ անգամ իր ոտի տակին գցում.....բայց կարո՞ղ է վարդը ծովի միջում զօրանալ, կարո՞ղ է մանուշակը կրակի առաջ դիմանալ. կարո՞ղ է կակող ցորնի հասկը էն կայծակին ու կարկտին համբերել, որ մեր ազգը իր թշնամուն համբերել ա, եա դիմացել:

Հայոց ազգ, Հայոց ազգ, ձեր ջանին մեռնեմ. Հայոց ազգ, Հայոց աշխարհ, էն ո՞ր կաթը դուք ծծեցիք, որ դուք էս հոգին ունեցաք, էս սիրտը ձեր միջում պահեցիք, էս հրաշքը աշխարհքին ցոյց տուիք. էն ի՞նչ քարացած սիրտ պէտք է ըլի, որ ձեզ չսիրի, ձեր փառքը չգովի: Դուք իրար պահեցէք, ձեր հողն ու ազգը պաշտեցէք, ո՛վ Հայ տղերք,—բայց աչքս ճամփի ա, ականջս ձէնի՝ ձեր ջանին ղուրբան՝ չթողաք, որ էս մուրազը հետս գերեզմանս տանիմ ու հողումն մարմինս քրքրուի, երկրնքումը հոգիս տանջուի, երբ իմանամ՝ թէ ձեր սէրը պակսել ա, ձեր բարեկամութիւնը ցամաքել:

Աբովեանց.

20. Տարուայ սկիզբը Հայաստանում:

Ահաւասիկ մարտ ամիս, որին շատ ցուրտ և երկայն ամիսներ սպասեցինք. բոլոր բնութիւնը հառաչում և կանչում էր

մարտին՝ ոչ թէ իբրև տարուայ գեղեցկագոյն ամիսը, այլ իբրև պատճառ մերձաւոր գեղեցկութեանց, ոչ իբրև գալար ապրիլ, կամ գունաւոր իբրև մայիս, ծաղկազարդ և պտղաշատ իբրև յունիս, այլ այդ ամենայն շնորհների նշան տուող, և տարուայ մանկագոյն և զուարթագոյն եղանակի ծնող, այսինքն — գարնան:
Առաւօտն սկսում է կանխել, իրիկունն ուշանալ: Ցերեկն աճելով՝ իր թագաւորի (արեգակի) ճառագայթներով զարդարվում է. օդը զգում և պահում է տաքութիւն, նոյնն զգում ջուրն ու հողը. ցամաքած, պնդացած երկիրը հալեցնում է ձմեռուայ ձիւնն ու եղեամը և կակղանում է. և ահա հինգ վեց ամիս նորա ծոցի մէջ թողած թաղած սերմերը, թմրած թռուցած տունկերը ծլում են, սկսում է կանաչել, կարմրել, ծաղիկ երևալ:

Թէպէտ դեռ մեր Հայոց բարձրադիր աշխարհի ամեն սարերն էլ իրանց կերպարանքը չեն փոխել, և նոցա ամենի վրայ այս շնորհքները չեն երևում. դեռ ձիւնն ու սառը յամառութեամբ սարեր և ձորեր բռնում են, բայց բոլորովին անզգայ էլ չեն. ալևոր ժայռերն սկսում են սև չերմեր տանալ. հողը թէ և ոչ գալար, գոնէ յայտնի երևում է քօղի տակից և աշխատում է հանել իրանից սպիտակ թանձրութիւնը: Մեր հիւսիսային խորահովիտները, ես առաւել արևելեան և հարաւեգերքը՝ բարեխառն կլիմաներին հաւասար առնում են գարնան առաջին գոյնն և շնորհքը. այն ինչ արդէն մեր դրացիների և մեր դէպի հարաւ գաղթական եղբայրների երկիրների վրայ գարունը համարձակ փայլում է, և զուարթացած բնակիչներին գործի և զբօսանքի է հրաւիրում: Ահա մեր Թաթօսի երգաձայնն էլ Երուսաղէմից գալիս է, որ Հայաստանի շատ գաւառներից առաջ տեսնում էր գարնան բերքը.

Հա՛ մտանք յամիս մարտին.
Ծառերն ամենայն ծաղկին.
Հոտն գայր գարնանային.
Լցան ելնէ Հայոց դաշտին......

Արդ անտարակոյս բնութիւնը նորոգվում է, ծերացեալ տարին վերջանում է, կամ նորից մանկանում է. եղանակների և ժամանակների սկիզբն եկել է: Լաւ կը լինէր որ բնութեան այս նորոգութեան եղանակին՝ ժողովուրդները սկսէին իրանց քաղաքական տարին, և գարնան գիշերահաւասարին կարգէին իրանց կաղանդը կամ խնդարար նուիրամակը: Հին ժողովուրդները այս

մասումը մեզանից աւելի խելօք և իրաւամբ գործում էին, որոնց առաջև մենք ծաղկած նոր ժողովուրդներս՝ նոր տարին շատ անտեղութեամբ և անյարմար միջոցին ենք սկսում, (ձմեռուայ արևադարձից 10 կամ 20 օր վերջը, յունվարի 1-ին): Այն հին ազգերից քիչ շատ անփոփոխ մնացած մենակ Հրէայն մինչև այս օր իր սրբազան տարին գարնան հետ է սկսում. բայց որովհետև ամիսները լուսնի հետ է համեմատում և չէ թէ արեգակի հետ, ուստի միշտ ճիշդ գարնան հետ չէ սկսում տարին: Բարեբախտաբար այս բանի մէջ նորա հետ և նորանից էլ հին մի ազգ կայ՝ որ նոյնպէս իր հին սրբազան տարեմուտը ճշդիւ նշանակում է իր օրացուցի մէջ, և մինչև այս օր արժանապէս սկսում է այդ տարին՝ երբ արևը խոյ աստեղատունը մտնում է, որ գարնանամտի օրն է, (մարտի 9 կամ 21 նոր տոմարով): Այս ազգը՝ Հայ ազգն է, որ իր ճիշդ տոմարով ուրիշների առաջ պարծենալ կարող է: Ասում են թէ Հայկն է մեզ աւանդել այդ տոմարը, որ Աստծուց ստացաւ առաջ, քան Մովսէսը Հրէից տումարը: Հայոց քաղաքական տարին՝ նահանջ չունենալով շարժական և փոփոխական էր. իսկ սրբազան տարին՝ հաստատուն է. որի սկիզբը ոչ թէ քաղաքական տարու պէս ն ա ւ ա ս ա ր դ ն (օգոստոս) է, այլ բուն ա ր ե ւ ի ա մ ի ս ը՝ ԱՐԵԳ: Օրացոյցդ տես և կիմանաս որ Արեգ ամիսը խոյի տանուտէրութեան հետ է սկսվում, որ գարնանային գիշերահաւասարի կէտն է, և ուրախութեամբ պարծեցիր նախնեացդ վրայ, որ այս գեղեցիկ բնական ճշմարտութիւնը ջրհեղեղի օրերից անփոփոխ պահելով՝ մինչև մեզ հասցրել են, իրանց դեռ բաղիւցացն նախահայր Հայկից առնելով, որ ոչ միայն աղեղի ճարտար շարժիչ էր, այլ և թուերի և չափերի:

Գ. Վ. Ալիշանեան

21. Նաւասարդի տօները:

Հայք ունեցել են երկու տարեգլուխ՝ սրբազան և քաղաքական: Սրբազան տարեգլխին բնութիւնը ծաղկափթիթ ծիծաղով կենդանացնում էր մարդկանց. իսկ քաղաքական տարե-

գլխին, որ Նաւասարդն (օգոստոս) է, կիսով չափ այրուած բնութիւնը ինքը կենդանանում էր մարդկանց հաստատած տօներով և հանդէսներով: Տարուայ ամենատաք ամիսը՝ Հայոց բարեկենդանն էր, կաղանդն էր. կրօնական, զինուորական և աշխարհախումբ հանդէսներով Հայոց աշխարհը գարնանանման գեղեցկանում էր: Նաւասարդի տօները՝ պաշտպան աստուածների տօներ էին, նախնեաց քաջերի յիշատակներ էին, կտրիճների մրցանք էին, հասարակ ժողովրդեան խաղեր և վայելքներ էին. որ 300 տարուայ չափ մեր երջանիկ նախնիքը կատարեցին, թնդացին, գոփեցին Բագրեւանդայ տափերի և բլուրների վրայ, մինչև նոցա տակ ծածկուեցան: Այդ հանդէսները կատարում էին քրմապետները, նոցա փոխանակեցին խաչապաշտ քահանայապետները, որոնք մեհեանների տեղ եկեղեցիներ շինեցին: Բայց դուրսը բնութիւնը իր կերպարանքը չփոխեց, ազգը իր հանդէսները չփոխեց. այլ տօները սրբեց, և աստուածներին նուիրելու փոխանակ՝ ճշմարիտ Աստծուն և նորա նահատակներին նուիրեց: Դրեթէ անկարելի էր՝ որ Ս. Գրիգոր Հայերին հեթանոսութիւնից քրիստոնէութեան դարձնելով, այն հին մեծահանդէս աշխարհաժողով զբօսանքի օրերը անհանդէս անյիշատակ թողնէր:

Նաւասարդի քանի մի օր առաջ կատարվում էր Վարդածդի Վարդանման Աստղիկ դիցուհւոյ տօնը, որի փոխանակ Հայոց առաջին հայրապետը կարգեց Վարդավառ, Քրիստոսի պայծառակերպութեան տօնը, որ և Հայերը մինչև այս օր պայծառապէս տօնում են: Իսկ Նաւասարդի առաջին օրը (օգոստոսի 11), որ Հայոց տարեգլուխն է, ազգային ամենից մեծ, պանծալի, սրբազան օրն էր, և հանդէսները շատ օրեր տեւում էին՝ զանազան յիշատակներով, որոնք մի անունով Ամանորայ ասվում էին կամ աշխարհաժողով: Այս վերջին անունը ցոյց է տալիս, թէ այդ տօնին Բագրեւանդայ բարձրաւանդակների հանդիսականները միշտ մեծ բազմութեամբ էին ժողովվում. Թագաւորն իր արքայական չորս բիւր զընդովը, նախարարները ութ բիւր գումարտակներով, 600 գաւառատերք և 400 գահակալ իշխաններ, բազմութիւն քրմերի իրանց պաշտօնեաներով, և ուրիշ հազարաւոր հանդիսականներ այս տօնը զարդարում էին:

Ինչ էր այս Հայոց համաշխարհական տօնի պատ-

ճառը. նախ՝ ինչպէս գիտենք՝ հին տարեմուտն էր, որովհետև Նաւասարդ նշանակում է նոր տարի: Երկրորդ՝ Նաւասարդը ջրհեղեղի յիշատակն էր, ուստի և այդ օրերը զանազան ջրախաղեր էին կատարվում տապանով Արարատի սարի վրայ մարդկանց փրկութեան տօնը յիշատակելու համար: Իսկ մենք հիմայ, ինչպէս յայտնի է, ջրի այս հանդէսը վարդավառի օրն ենք կատարում: Երրորդ՝ տօն էր Ամանորայ ամենաբեր դիցը, ինչպէս առաջ յիշեցինք, որը որ երևի բերքի և առատութեան չաստուած էր համարվում: Ուրիշ շատ պատճառների հետ մէկն էլ այն էր, իբրև թէ Մասիսի վհի մէջ Արտաւազդի շղթան շների կրծելուց տարուայ վերջին օրը մազի բարակութեան և կտրելու հասնում է, և հազիւ թէ Արտաւազդ սպառնում է տարուայ հետ բոլոր աշխարհքը վերջացնել և աշխարհախումբ տօնը համաշխարհական սուգ դարձնել՝ Նաւասարդի օրը դարբինները իրանց սալը ծեծում են, և այդ ձայնից աշխարհքը Արտաւազդի աւերմունքից ազատվում է: Այժմ ոչ միայն Նաւասարդի օրը, այլ և ուրիշ օրերին դարբինները սովորութեամբ սալը ծեծում են, զոր օր. ամենայն կիրակի օրերը կամ չարչարանքի ուրբաթ օրը: Այս ամենայն յիշատակներից վերագոյն և հնագոյն և տօնելի յիշատակ այս օրուանն էր՝ ՀԱՅԿԸ, մեր ազգի նախահայրը, և նորանով մեր ազգի ձևանալը, որ մեծ յաղթութեամբ ազատեց Բէլի բռնութիւնից: Այս տօնի սկզբնաւորութիւնը համարվում է 2492 տարի Քրիստոսի թուականից առաջ օգոստոսի 11-ին կամ Աբրահամից մօտ 500 տարի առաջ: Այս տօնը բուն Օր հայկական և Տօն ազգային է: Հայկայ մեծ քաջութեան և անուան համար էր՝ որ նորա յաջորդները Նաւասարդի օրերում իրանց ազգի ոյժը ներկայացնող կտրիճ զօրքերի աշխարհագումար հանդէսներ էին անում, և այն մեծ անձի անունը աւելի անմոռանալի արեցին երկնքի համաստեղութեանց մէջ դրոշմելով, որովհետև այն համաստեղութիւնը, որ ուրիշ ազգերը Օրիոն են կոչում, մենք անուանում ենք Հայկ: Եւ այսպէս ահա 44 դար է, որ Հայկայ աստղի բարձրանալու օրերը՝ անխափան յիշեցնում են մեր ազգային և հայկական օրը, որ և մենք՝ ինչ վիճակի մէջ որ լինենք՝ պէտք է նորա յարմար յիշենք, տօնենք և անմոռաց հանդիսացնենք, քանի որ Հայ ազգի անուն և լեզու պահում ենք: Այս տօնն էլ քրիստոնեայ Հայերի մէջ ան-

մահվանելու համար, մեր Հայր Լուսաւորիչը այս օրը նուիրեց Ս. Կարապետ Յովհաննուն, որ մեր աշուղների յայտնի մուրազատու Մշու սուլթանի տօնն է:

Նաւասարդից երկու շաբաթ յետոյ՝ Հայերը մէկ աշխարհախումբ տօն էլ ունէին Հայաստանի ամենից սիրելի և ամենից մեծ խնամակալ պահապանի անունը յարգելու համար, որ է Անահիտ դիցուհին, որին Հայերը շատ պատւում և պաշտում էին և ոսկի արձաններ էին կանգնեցնում: Մեր Տրդատ թագաւորի թղթից իմանում ենք, որ այդ Անահիտն է մեր ազգի փառքն ու կեցուցիչը, որին ամենայն թագաւորները պատւում էին, նա է մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան, նորանով կայ և կենդանութիւն է կրում Հայոց երկիրը, Հայերի խնամակալն է..., Ս. Գրիգոր Լուսաւորիչը Անահտին իջեցրեց Հայոց տիկնութիւնից և տեղը բարձրացրեց Ս. Կոյս Աստուածածնին:

Այս բոլոր եկեղեցական տօները այժմ շարժական տօներ են, ուստի և ճշդութեամբ նոյն օրերին չեն կատարւում, բայց և այնպէս յիշեցնում են հին նաւասարդի տօները:

Ղ. Վ. Ալիշանեան.

22. Երկրագործութիւն:

Հացաբոյսերը մարդու գլխաւոր կերակուրն են: Նոցա ծղօտները գետնի վրայ բուսնում են շատ մօտ միմեանց, և նոքա ալերով լիք հասկեր ունին: Սակայն ինչ ծանր աշխատանք է հարկաւոր, մինչև որ ցորենը մշակուի և նորա պտուղը մեզ համար յարմար կերակուր դառնայ: Հողը պէտք է հերկուի, տափանուի, հասկը պէտք է հնձուի, կամնուի, ցորենի հատիկները պէտք է թեփից և կճեպից մաքրուին: Յետոյ ցորենը գնում է ջաղացք, որը այժմ արդէն մի արուեստական մեքենայի կազմութիւն ունի և ցորենը տրորում, աղում և ալիւր է դարձնում, իսկ յետոյ ալիւրը հացթուխի ձեռքով ջրով շաղախվում ու խմորվում է և ապա թխվում է, դառնում է հաց, նկանակ, գաթայ կամ նազուք:

Ո՞վ կարող է մեզանից անգամ մտածել, թէ ցորենը հում հում կարելի է ուտել: Փորձենք այս և մենք կըտեսնենք, թէ թէպէտ և կարելի է հում հում ուտել, սակայն շատ դժուարութեամբ է ուտվում և նա այնպէս համեղ չէ, ինչպէս հացը կամ նազուքը: Բայց և այնպէս մենք պէտք է ընդունենք, թէ ամենահին ժամանակներում ցորենի հատիկները հում հում ուտվում էին, գուցէ լոկ միայն փափկացրած, խաշած կամ եփած, և թէ աղացումն ու թխելը հետզհետէ հնարուեցաւ և կատարելագործուեցաւ: Ինչ ասել կուզէ, որ առաջին աղօրիքները շատ պարզ կազմութիւն ունէին, նոքա մէկ քարից էին բաղկացած, որ անշարժ էր, և նորա նման մէկ ուրիշ մէջ տեղը ծակ քարից, որ մի փայտէ կոթով պտըտվում էր: Ցորենը թափվում էր ծակի մէջ, և ալիւրը քարերի ափերից դուրս էր շաղվում, երբ որ մէկը միւսի վրայ պտտվում էր: Այս պարզագոյն աղօրիքը ձեռքի աղօրիք էր և նորա պտուտ տալը ստրուկի գործ էր: Կամնելն էլ այսպէս պարզաձև էր: Ցորենը գետնի վրայ փռվում էր և մարդկանց ու կենդանիների ոտքով կամ կամնասայլով կոխոտվում: Ս. Գրքումն ասած է, դու չպէտք է կապես կալումն աշխատող եզի դունչը: Շատ տեղերում գաւազաններով են ծեծում ցորենի արմտիքը, մինչև անգամ մեծամեծ մեքենաներ են գործածում շուտ և մաքուր կամնելու համար: Բայց մինչև որ մարդիկ չսովորէին ցորենը ցանել՝ այն էլ մեծ քանակութեամբ, նոքա չէին կարող հնարել կամնելու և աղալու գործիքները: Եւ ինչպէս սովորեցին նոքա ցորեն ցանելը: Այն մարդիկ, որ հում արմտիք էին ուտում, երևի այս անում էին սովից ստիպուած, երբ որ իրանց պակասում էր միս կամ հիւթալից պտուղ: Եւ այս մարդիկը, որ իրանց կերակուրը շատ հեշտութեամբ որսով էին գտնում, մի՞թէ կարող էին մտածել ցորեն ցանելու հնարքի մասին; որ ինչպէս մեր փորձերից գիտենք՝ մեծ նախատեսութիւն և աշխատութիւն է պահանջում և պէսպէս գործիքների կարօտ է:

Գիտնական մարդիկ ասում են, թէ երկրագործութիւնը նախ Ասիայի տաք դաշտավայրերումն է ծագել, որ մեծ գետերի յորդութիւններով կանոնաւոր կերպով ոռոգվում են, ուրեմն Հայաստանից ոչ հեռու. ապա նաև Եգիպտոսում, որ նոյնպէս տարեցտարի Նեղոսի միջնորդութեամբ ջրով ծածկվում է: Ուր ջրի այսպիսի առատութիւն կայ, այն տեղ ի հարկէ հեշտ էր

ցորեն ստանալը և շատ արուեստ ու հմտութիւն գործ դնել հարկաւոր չէր. բաւական էր որ, երբ յորդացած ջուրը յետ քաշուէր կամ շոգիանար, գետնի երեսին նստած տղմի վրայ ցորենի հատիկներ ցրուէին, և անշուշտ կարճ միջոցում խոնաւ ու ջերմ հողի վրայ կըստանէին առատաբեր և արագ աճեցող հասած արտ, ուր և առատ հունձը քիչ աշխատող մշակի վարձը կըլինէր: Այլ է ուրիշ երկրներում: Մինչև որ այնպիսի երկիրները, որ ճահճային բոյսերով ծածկուած էին և ճահճային կենդանիների բոյն էին դառել, — չմշակուէին մարդու ձեռքով և մանաւանդ ջրանցքերի միջնորդութեամբ այդ ճահիճները չչորանային՝ նոքա շատ անբնակ և սակաւ տեղեր պէտք է լինէին: Եւ ի հարկէ նոցա առաջին բնակիչները յօժար կամօք չէին գաղթի այն տեղ, եթէ, ինչպէս հաւանական է՝ ուրիշներից հալածուած՝ բռնի չստիպուէին այն կողմերը քաշուել ապաստարան գտնելու համար: Մենք պէտք է կարծենք, թէ դոքա մեծ դժուարութիւններ և չարչարանքներ կրեցին իրանց բնակութիւնը հաստատելու և սովամահից ազատուելու համար, մինչև որ կերակրի պակասութիւնը էլ զգալի չէր լինում այն ժամանակից, երբ որ մի հնարով իմացան, թէ վայրենի բուսած սննդարար արմտիքը աճեցնել և բազմացնել կարելի է: Բայց մի անգամ կերակրի հոգսերից ազատ լինելով, այնուհետև պէտք է աշխատէին իրանց հաստատ բնակարանները ջրի հեղեղներից ազատ պահել և առհասարակ իրանց բնակութիւնը մէկ մէկու օգնութեամբ և ձեռնտուութեամբ բարեկարգել: Ահա այսպէս բնութիւնն ինքը իր յաջող և անյաջող հանգամանքներով ներգործեց, որ հէնց այս աշխարհներում երկրագործութիւնը ծագեցաւ և այս տեղ միմեանց խիտ բնակուած մարդիկ տեսակ տեսակ արուեստներ հնարեցին և կազմակերպած ընդարձակ պետութիւններ հիմնեցին:

Այս երկիրների ժողովրդից միւս ազգերն էլ սովորեցին երկրագործութիւնը, որ և շատ տեղերում տարածուեցաւ: Եւ ի հարկէ ուրիշ երկիրներում երկրագործութիւնն աւելի դժար պարապմունք էր, որովհետև մի և նոյն յաջողակ պայմանները ամենայն տեղ չկային: Միայն այս պէտք է գիտենալ, թէ ուր որ երկրագործ մարդիկ բնակութիւն էին հաստատում, այն տեղ էլ ծագում էին քաղաքներ ու թագաւորութիւններ:

Թէպէտ Ասիան է երկրագործութեան մայրը, այն տեղ

երկրագործութիւնը շատ քիչ տեղերումն է ամփոփուած. այն ինչ ահագին տարածութիւններ կան, ուր այժմ՝ ինչպէս և հին ժամանակներում՝ միայն թափառական հովիւներ են լինում: Իսկ Եւրոպայում ընդհակառակ շատ քիչ տեղեր կան, որ մէջը երկրագործութիւնը հաստատուած չլինի:

Այսպէս ուրեմն, եթէ մի հովտի մէջ ջրաղաց կամ մի բլրակի վրայ հողմաղաց է երևում, այս ոչ միայն գեղեցիկ տեսարան է մեր աչքի բերկրութեան համար, այլ և նշան է մեզ համար, թէ այդ երկիրը բարօրութեան մէջ է:

23. Հացաբոյս:

Հացաբոյսը Աստուծոյ մեծ շնորհքներից մէկն է, և այն մարդը, որ առաջին անգամ հացաբոյսի մշակութիւնը հաստատեց, աւելի մեծ ներգործութիւն ունեցաւ աշխարհքիս վրայ, քան զօրեղագոյն իշխանները: — Մութ անտառները ոչնչացան, տեղը բռնեցին զուարթածիծաղ հասկալից արտերը. օդը փոխուեցաւ, մեծաւ մասամբ մեղմացաւ. հարաւային բոյսերը այժմ փոքր ինչ հիւսիսումն էլ աճել կարող են. ճահիճները չորացան. վայրենի և վնասակար կենդանիները այն կողմերը քաշուեցան, ուր աւելի ազնիւ բան էլ չի բուսնում: Եւ ինչո՞ւ: — Որպէս զի ալրապարունակ խոտերին տեղ տան:

Սակայն հացաբոյսերի մշակութեան հետևանքը միայն այն չեղաւ, որ աշխարհները և երկրի մասերը իրանց դէմքն ու կերպարանքը փոխեցին. աւելի մեծ փոփոխութիւն կրեց ինքը մարդը, — նա կապուեցաւ հաստատ բնակութեան մէջ: Շրջմոլի և աստանդական կեանք է վարում որսորդը. նա ամենայն տեղ գտնում է անտառ, ջուր և պատսպարան, լինի այս վերջինը ճիւղերից շինած կամ քարածայռերի տակ՝ մի և նոյն է նորա համար: Սակաւապէտ է նա, ուստի և սակաւարուեստ է: Վրանաբնակը իր հօտերով և խաշներով շարժվում է տեղից և ուրիշ կողմն է թափառում, եթէ արօտը պակասում է, կամ եթէ տեղը էլ չի հաւանում: Վրանաբնակի պէտքերն ու արուեստը աւելի պարզ են, քան որսորդինը: Իսկ երկրագործը պէտք է հաստատ մնայ այն գետնի վրայ,

որ նա մշակել է, որ տեղից որ կերակուրը իր կենդանի պէտքերը առնում է, ապա թէ ոչ, ուրիշ տեղ քաշուելով, նա ամենայն տեղ նոր նոր դժուարութիւններ և ուժ փորձ կը ստանայ: Նա շինում է մի հաստատ բնակարան, նորա բերքը բազմանում է, նա պէտք է այդ ուրիշ բաների փոխէ կամ ծախէ. նորա պէտքերը աւելի բազմաթիւ են, և այսպէս ծագում են առեւտուր, ձեռագործութիւն, արուեստներ, ուսում, քաղաքական կարգեր: Երկրագործութեամբ է սկսվում մարդկութեան ամենայն տեսակ յառաջադիմութիւնն ու քաղաքակրթութիւնը. ինչպէս որ նա հողը պատրաստեց և մշակեց մարմնի և ֆիզիքական կեանքի սննդեան համար, այնպէս էլ նա տարածեց բարեբարոյութեան և հոգեւոր կեանքի առաջին սերմերը:

Մեզ յայտնի չէ, թէ մարդս իր քաղաքակրթութիւնը հացաբոյսի ո՞ր տեսակով սկսեց. բայց այսքան յայտնի է, որ առաջին քաղաքակիրթ ազգերին բոլորին էլ յայտնի էր ցորենը. միայն յայտնի չէ թէ դա առաջին անգամ ո՞ր տեղ մշակուեցաւ:

Մեր հացաբոյսերի հայրենիքը ճշդութեամբ յայտնի չէ: Արժանահաւատ ճանապարհորդները վկայում են, թէ Միջագետքում Եփրատի ափերի մօտ վայրենի կերպով բուսնում են ցորեն, կարմրացորեն և գարի: Եւրոպայում առհասարակ նոքա վայրի չեն բսնում և ոչ էլ վայրենանում են, նոքա նման են ընտանի կենդանիներին, այսինքն ոչխարներին, շներին և այլն, որոնք նոյնպէս այլ ևս վայրի չեն երեւում: Նոքա կարծես սանու բոյսեր են քաղաքակիրթ մարդու համար, որ միայն նորա կշտին և նորա խնամակալ ձեռքով են աճում:

Մեր կողմերում և առհասարակ տաք երկիրներում բացի ցորենից՝ կորեկ, սիմինդր, կարմրացորեն, բրինձ էլ են ցանում, միւս տեսակները, այսինքն գարի, հաճար, վարսակ թէպէտ մեզանում ցանում են, բայց աւելի նշանակութիւն ունին ցուրտ երկիրների համար. դոքա աւելի կարողանում են ցրտին դիմանալ, քան քնքոյշ ցորենը, ուստի հիւսիսում միայն այն վերջին տեսակներից են ցանում:

24. Նախապատրաստութիւն:

Ցափանց գետոյս, ով մանկունք, դարձէք այժմիկ ի դաշտորայս
Ի մէջ խոտոց ուռճացալոց ճեմ առէք դուք զուարճանալով,
Տեսէք զի զեղ դալարօք և այլ բուսովք ամենազան
Զարդարեալ են գեղեցիկ երեսք դաշտաց Այրարատայ։
Աստանօր բուսանին արմատք բուսոց եղեգնասեր,
Ցոյց ազնիւ կարմիր որդան ծնանին որդունք մանմատեան.
Միայնում գաւառիս այս ձեր սեփհական արարչատուր՝
Պարգեւեալ մանկտւոյն Հայոց զարդ ըզգեստուց ծիրանեգոյն։
Տեսանէք և ըզրանջարս մատաղագոյն և մեղրահամ,
Զոր եկեալ երամ երամ գեղջուկ կուսանքըն դաշտասէր
Ժողովեալ կեր կազմէին չուտամարսիկ ՚ւ առողջարար.
Սիրելի զոլ հիւանդին և ժուժկալող ողւոյն ի պահս։
Անդէորդ երամակօք ցընծայր ի մարգս այս խոտաբուխ....
Այսօրիկ աւաղ, մանկունք, զուրկ և ոչ մի տեսանեն,
Ոչ աղջկունք բանջարաքաղ, ոչ անդէորդք և երամակք.
Այդ բոլոր դաշտք ի սոցունց կան աւասիկ Թափուրացեալ.
Կարօտեն ժողովրդի այդ քաղցրահամ դալար բանջարք
Եւ պաճարաց բերանւոյ պարարտարօտ մարգագետինքդ։
Դարձարուք ի դաշտաց և յարտորայս Այրարատու,
Ցորս յաւէտ բերկրէր ի սիրտ յարդիւնս արդար հողավաստակն։
Ցայդ անդեայս բեղմնաբեր մինչ արկանէր մըշակն ըզսերմն
Ցուսալից էր ընդ միոյն գհարիւրաւորըն ժողովել.
Աւաղ. այդպէս այժմիկ խոպանացեալ կան բընաւին,
Հասկաթուռ ընդ ցորենոյն փուշք մոլախոտք են արդ բուսեալ։
Ցայս երկիր պարարտահող ոչ եզնամոլք ձըգեն զարօր,
Ոչ ի հերկ սերմանահան զրուցըն լնու յուսով ի ցան,
Ոչ հընձողք զգերանդին առեալ ուրախ գան յանդաստան,
Եւ ոչ սայլքն որայիւք բարձեալ զընան ճըռընչելով,
Կամ օրանք ի կալատեղս դէզ հարկանին լեռնահանգէտ,
Կամ ատօք ցորենոյն Թեղ չեղջակուտի բլրատեսակ
Ժողովեալ ի շտեմարան ցընծայ մըշակն ի ձմերայն.
Եւ զի հունձք և հողագործք յերկրէս յուռթի պակասեցան,
Որ չունէր Թիզ մի տեղի ընաւ երբեմն անմշակեալ,
Այսօր համայն իւր գետին կայ կորդացեալ և անարօր.
Զի կորոյս Հայոց աշխարհ զմեծ Արտաշէսն մըշակող։

Խրիմեան Հայրիկ.

III. ՈՐՍՈՐԴ.

1. Որսորդի երգ։

Սար ու ձոր չափում
Առաւօտը վաղ՝
Նետ ու աղեղ ձեռին՝
Որսորդը անվախ։

Արծիւը օդի մէջ
Թագաւորում է,—
Սար ու ձորի մէջ
Որսորդն իշխում է։

Մինչև ուր հասնում է
Նորա նետը սուր՝
Բոլորը նորանն է—
Գազան, թեւաւոր։

Թարգ. Բարխուդարեանցի.

2. Որսի հանդէս։

Առաւօտեան, այն ինչ լոյսն սկսում էր ծագել, դուրս գալով իմ բնակարանից՝ մեծ բազմութիւն մարդկանց տեսայ, որ քաղաքից գնում էին. և ինձ շատ հիացնում էր, ոչ միայն նոցա միաբանական գնացքը, այլ և մասնակցող խմբերի գեղեցիկ կազմութիւնը, մանաւանդ ձիականների և հետևակների զարդն ու կարգը։ Նոցանից ոմանք տիգաւոր և սուսերաւոր էին, և ոմանք աղեղնաւոր. կային և խմբեր, որոնցից կէսը բարձած ունէին թակարդներ և ցանցեր, իսկ միւսները բազմաթիւ շներ էին տանում կապերից բռնած. գնալու ժամանակ ամենքը կարծես մի տեսակ ուրախութիւն էին զգում և յարմարական ձևով առաջ ընթանալով՝ խորին խաղաղութիւն էին պահպանում։ Նոքա գնում էին այնպէս, ինչպէս որ նոցա գլխաւորը առաջնորդում էր, և մեծ պատրաստութեամբ վերջապէս հասան մի անտառախիտ և ծառազարդ տեղ, ուր որսի կենդանիների բոյներ շատ կային՝ իւրաքանչիւրը մի ապահով տեղում դադարած։ Սոցա չորս կողմը գումարուեցան որսորդների խմբերը և այլ ևս հեռու չգնացին։ Առաջին նուագին բոլորեքեանք լռութիւն պահելով՝ այնքան ձայն չհանեցին, մինչև որ թակարդներով, շների խմբերով և այլ պէսպէս հնարներով պաշարեցին տեղը, որսի առաջ բոլոր ճանապարհները փակելու

համար։ Ապա այս բոլոր նախազգուշութիւնների վրայ վստահանալով, բոլորեքեանք միասին յանկարծօրէն այնպէս աղաղակ հանեցին, գոչելով օդը թնդացրին, որ մինչև անգամ գետնի տակից, իրանց որջերից կենդանիները սարսափած դուրս վազեցին, և շփոթուած սկսան խոյսն փախչել, և ցրուելով թաւս կացան և աներևութացան այս այն կողմը խիտ անտառի մէջ. իսկ որսորդները վազում էին դէպի անտառների ապաստանած տեղերը, յարձակելով նոցա ետևից շների խմբերը։ Հալածուած կենդանիները հնարք գտնելուն պէս՝ կրկին իրանց դարաններից դուրս էին ընկնում և այնպիսի արագութեամբ փախչում էին, որ կարծես թէ էլ ետևներից հասնելը անկարելի էր։ Իսկ նոքա ամենքը այս տեսնելով՝ շտապում էին միասին չորս կողմից վրայ տալով՝ իրանց քաջութիւնը ցոյց տալու, ով որքան որ կարող էր. և մանաւանդ աշխատում էին կարողութիւններից էլ վեր իրանց արագութիւնը աւելացնել։ Ես նոցա մէկ մէկից աւելի գերազանցելը տեսնելով, այնքան հիացած ափշած էի, որ չէի կարող այնքան քաջագործութիւնների հանդէսը մանր դիտել։ Ես տեսնում էի միայն, թէ ինչպէս ձիանքը մարդիկներից առաջ էին վազում, շները ձիերից, իսկ նետերը սրանց երկուսիցն էլ արագ սլանում։ Վերջապէս աղեղն յաղթանակեց՝ վայր ձգելով ու սատկացնելով էրէների անբաւ բազմութիւնը. իսկ շատերին չարաչար վիրաւորելով և շատերին էլ վերջին հնարներով թուլացնելով՝ գրեթէ իսպառ սպառեցին որսորդները։ Բայց շատ քիչ մնացածներն ևս գնում ու յանկարծակի ցանցերի մէջն էին ընկնում, իսկ եթէ այդ տեղիցն էլ ազատուէին՝ բռնվում էին թակարդների մէջ՝ բոլորովին անզերծանելի մնալով։

Եւ երբ որ բոլոր որսը բռնուեցաւ՝ ահա սկսուեցաւ որսորդական գործի հանդէսն ևս զուարճալի խնդութեամբ։ Հանդիսականները մէկտեղ ժողովուելով՝ յաղթող քաջութեան պար պարեցին, նուագաւոր ձայնով երգեցին, իսկ ապա բաժանեցին որսը իրար մէջ ամենայն արդարութեամբ։ Ահա այսպէս Աստծուն ևս գոհութիւն տալով՝ ուրախ ուրախ դարձան տուն, ոչ թէ այն պատճառով որ աւար էին բերում, այլ որ ամենայն կողմից գովութեան յաղթանակ էին բերում իրանց հետ։

Մովսէս Խորենացի.

3. Արտաւազդ։

Հայոց թագաւոր Արտաշէսի մահին ժողովրդեան մեծ մասը ինքն իրան նահատակեց, որովհետև նորան սիրում էին, և այդպէս էր հայոց սովորութիւնը իրանց տէր թագաւորի մահուան ժամանակ։ Հանգուցեալի որդին, Արտաւազդը, իր հպատակների այս սարսափելի կոտորածքը և մահը տեսնելով՝ նախանձելով կանչեց մեռած հօր քամակից. «Երբ որ դու գնացիր և բոլոր երկիրը քեզ հետ տարար, ես ինչպէս թագաւորեմ աւերակներին։» Բարկացաւ հանգուցեալը, նորա ուրուականը գլուխը շարժեց և վրէժխնդրութեամբ անիծեց Արտաւազդին. «Որս գնալու ժամանակ թող բռնեն քաջերը և տանեն քեզ Մասիս սարի վրայ, այնտեղ մնաս միշտ և երբեք լոյս չտեսնես։»

Արտաւազդը մանկութիւնից սովոր էր կատաղի կեանքին, և աւանդութեամբ ասում են, իբրև թէ վիշապները նորան կախարդել էին։ Նա մի օր որսի էր գնացել և ձիու վրայ նստած վարազների ետևից վազելով՝ խոր վհի մէջ ընկաւ։ Եւ որովհետև դա ժողովրդեան ատելի էր, դորա անակնկալ կորուստը այնպէս մեկնեցին, իբր թէ հօր անէծքը որդու վրայ կատարուեցաւ, թէ Մասեաց քաջերը հասան, բռնեցին և երկաթի շղթաներով կապկպելով, մի այրի մէջ փակեցին նորան։ Միայն նորա երկու հաւատարիմ շները չուզեցան նորանից բաժանուել, այլ անդադար կրծում են նորա շղթաները, որ նա ազատուի և վախճան տայ աշխարհին, որը նա սաստիկ ատում է, բայց դարբինների երկաթ ծեծելու ձայներից դարձեալ զօրանում են շղթաները։ Ահա այդ պատճառով մինչև այսօր մեր դարբինները Աւագ ուրբաթ օրը ժամից յետոյ՝ գնում են դարբնանոց և սալի վրայ մի քանի անգամ մուրճը ծեծում են, որ անիծեալ ժառանգը լոյս չտեսնէ։

Ազգային աւանդ.

4. Բազէ։

Մի գերմանացի ճանապարհորդ Հայաստանի մէջ ման գալով շատ զարմանում էր, երբոր տեսնում էր ազնիւ բազէ, որն

որ արծաթի զաւազանի վրայ կացած՝ սուր ու դիտող աչքերով նայում էր։ Մի օր, ասում է նա, բազէով որսորդութեան տեսարանին ներկայ գտնուեցայ, թէ և նոյն անգամին բազէն այնչափ քաջութիւններ չարեց, որովհետև այս թռչունները օր և ժամ ունին, երբեմն անխոնջ են լինում և որսի վրայ մոլեգին խոյանում են, երբեմն էլ թոյլ, ծոյլ և անյօժար կենում մնում են, և նոյն իսկ պարարտ լորամարգի տեսքը նոցա արիւնռուշտ բարքը չի զարթուցանում։ Իսկ երբեմն էլ ազատութիւնը յիշելով, թռչում և փախչում են, բայց շատ անգամ վերստին բռնվում են։ Որսորդը բազէն արձակեց մի կաքաւի վրայ. խեղճ կաքաւը տեսնելով որ թռչելու մէջ իր սոսկալի թշնամու հետ չպէտք է կարողանայ մրցել, յանկարծակի իջաւ, որ թփերի մէջ պահուի. բայց բազէական աչքերից չկարողացաւ փախչել։ Քիչ ժամանակից յետոյ նորա սուր մագիլների և կտուցի տակ արիւնլուայ եղած մեռած էր։ Տէրը երկրորդ անգամ ուրիշ թռչունների խմբի վրայ ուղարկեց, բայց նա բոլորովին հակառակ կողմը փախաւ և յետոյ իջաւ գետինը, և եթէ մօտ կանգնած ձիաւորները բոլոր ուժով չվազէին և չբռնէին նորան, գուցէ բոլորովին անյայտանար։

Բազէով որսորդութիւնը առաջ շատ ծախքերով կատարվում էր, իսկ այժմ աւելի համեստ կերպով, բայց դեռ մեծ ու պզտիկի գլխաւոր զբօսանքներից մէկն է։ Աշնան և գարնան երբ որ բազէները ճամբորդ թռչունների ետևից ընկնում են, տեղի բնակիչները վարմ (որս բռնելու գործիք) են ձգում, մէջը կապում են փասեան կամ լորամարգ կամ կաքաւ և կամ այնպիսի թռչուն, որի վրայ բազէն յօժարութեամբ յարձակվում է։ Իրանք չուանները բռնած պահում են, և բազէն վարմի մէջ գալուն մտնելուն պէս՝ չուանը քաշում են և բազէն մնում է վարմի մէջ։ Յետոյ սկսում են կրթել. նախ նայում են, որ բազէն սեւաչեայ չլինի, որովհետև, ինչպէս տեղացիք ասում են, նոքա այնպէս սրատես չեն, ուստի և միայն խարտեաշ աչքերով բազէները որսորդութեան յարմար են գտնվում։ Այս ընտրութիւնը անելուց յետոյ, բազէի աչքերի կոպերը մածուցիկ նիւթով իրարու կպցնում են, և կամ աւելի յաճախ՝ մէկ երկու անգամ ասեղ անցնելով՝ իրարու հետ կարում են, և երեք օր այդպէս թողնում են, և ասում են, որ այս կերպով բազէն ընտանենում է կամ իր վայրենութիւնը մոռանում է. վերջապէս

սղանգ (զրավանդ) խոտի եփաջրովը լուանում են, որպէս զի վրայի տիզերն ու ոջիլները սատակեն: Բայց բազէն պիտանի անելու համար գլխաւոր պայմանն այն է, որ նորան քիչ ուտելիք տան: Ոտներին շղթայ, այսինքն երկաթէ օղակներ են անցնում և կաշիով կապում են մէկ երկաթէ ձողի վրայ, որ գետնի մէջ խրուած է: Այս անելուց յետոյ բազէվարժը կենդանու աչքերը բաց է անում, և ձողի վրայ երկայն չուան կապելով բազէն ծառի վրայ թողնում է, և ղայ-իւ, ղայ-իւ բղաւելով նորան կանչում է իր ձեռին ունեցած հաւի վրայ և իջեցնում է: Վերջապէս ձեռքը մսի կտոր է առնում, և շարժելով բազէին հրաւիրում է և այդպէս վարժեցնում է նորան, որ գայ և բազէակալի ձեռքի վրայ նստէ. յետոյ փորձում են և վարժեցնում են նաև առանց մսի:

Երբ որ բազէն կատարեալ կրթվում է, նորան սկսում են որսորդութեան գործ ածել. բայց որսից առաջ պէտք է որ անօթի մնայ: Բազէակիրը կաշու հաստ ձեռնոց է հագնում և բազէն առնում է ձեռքին: Բազէով որսորդութիւն անողները հասարակօրէն ձիով՝ թփուտ և մացառուտ տեղեր գնում են, իրանց հետը մի խումբ թազի շուն առնելով. ամեն մէկ շան վրայ թաղիք է կապուած, որ փշերու մէջ անցնելու ժամանակ չվնասուին: Որսորդները շարունակ շներին գրգռում են, որ թռչունների տեղը գտնեն, և անօթի բազէն միօրինակ չորս կողմը նայում է: Հենց որ մի թռչուն է երևում, որսորդը բազէն արձակում է, որը կամ անմիջապէս թռչունը բռնում է, կամ անդադար նորա ետևից ընկնում է, մինչև որ խեղճ թռչունը մի թփի մէջ գնայ պահուի, բազէն էլ իջնում է և նոյն թփի վրայ նստում է: Շները վեր են կենում և թռչունները նորից դուրս են հանում, եթէ բազէն յարձակուի և բռնէ, վարձատրութեան համար՝ որսի ուղեղն ու աչքերը ստանում է: Բայց բազէի բռնած թռչունը ամբողջ և անարատ չի մնում, որովհետև նորան շատ է չարչարում: Թռչունը բռնելուց յետոյ միշտ բազէի և որսկան շների մէջ սաստիկ կռիւ է բացվում, երբեմն բազէն շատ է կատղում, այն ժամանակ բազէակիրը մի մսի կտոր շարժեցնելով սկսում է ղայ-իւ բղաւել և կանչել նորան: Եթէ բազէն քաջակիրթ է, նաև մէկ վերստ հեռու տեղից դառնում և բազէակալի ձեռքի վրայ կանգնում է:

Վագներ.

5. Ողբ կաքաւու:

Նստեալ կայր ու լայր կաքաւն
Ի վերայ քարին. ա՜յ հաւեր.
Ու գանգատ կանէր ձագերուն.
Թռչունք, ա՜յ հաւեր:

Ի բարձր լերունք ելայ,
Ի կանաչ մարգեր նայեցայ.
Թռչունք, ա՜յ հաւեր:
Իջի որոգայթ ընկայ
Ի վարմին մէջ ի ծովակին.
Թռչունք, ա՜յ հաւեր:
Եկին զիս ի վեր առին,
Զահարեկ սուրբն ցրցուցին.
Զայս իմ կարկջուն վզեկս
Յականջէ ականջ զենեցին.
Զայս իմ կարմրուկ արիւնս
Ի գետին ի վար վաթեցին.
Զայս իմ կարմրած կրծոնուցս
Երակին կածը հասուցին.
Զայս իմ մանտրուքայլ ոտկունքս
Ի ծընկացս ի վար կտրեցին.
Զայս իմ գունզգուն փետուրս
Մէկն ի սար արին մէկն ի ձոր.
Զայն որ ի սարն էր ընկեր
Զայն իջեր քամեկն ու տարեր,
Զայն որ ի ձորն էր ընկեր
Զայն ելեր հեղեղն ու տարեր:

Եւ սուրբ Գրիգորի նման
Զիս ի խոր վիրապն իջուցին.
Եկին զիս ի վեր առին
Մէծլիս հաւասարացուցին.
Եւ սուրբ Յակովբայ նման
Մասըն մասըն կտրտեցին.

Ձլաւաշն ինձ պատանք դըրին
Ու կարմիր գինով գլս թաղեցին:
Ես ձայն զնրեմեայն ածի
Նախահօրն ու մօրն Նւայի:

Ժողովրդական երգ.

6. Չարսանիքի մի արարողութիւն:

Տղէքն իրանց սրտի ուզած մի եալլի խաղացին: Հէնց են թռչում, որ կասես ոտները գետինը չի առնում: Ընչանք եալլու պրծնիլն էլ բարեկամների տանիցը մի մին հաւ էկաւ: Եալլին որ վերջացրին, զուռնաչին էս հաւերը մի մին ձեռն առաւ ու բարձրացնելով կանչեց. «Թագաւորի մակարներ.» քօմմա ձէն տուին. «Հրամմէ՛.» — Աստուած ձեզ բարի կամէ, ասաց զուռնաչին, շէն կենայ խնչախպէրը, էս օրս իրան ըլի, Աստուած իր կեանքը երկար անի, որ բերել ա մեր թագաւորին մի լաւ հորս, մի լաւ խալաթ, մի լաւ խօնչայ (թէև մի հաւից սաւահի ոչինչ չկայ), տունը շէն, շէն կենայ: — Մէկէլ հաւերն էլ ընենց անում անում կանչեց, զուռնէն ածեց: Էկան տան երթկի վրայ թուրը դնիցը հանեցին ու դնի հետ խաչաձև դրին. Թագաւորը էս թրի վրայ երեք հետ ծունր դըրեց ու թուրը համբուրեց, աղօթք արուց Աստծուն, որ էն խաչի միջնորդութիւնովը իր թուրը կտրուկ անի ու վեր կացաւ: Բայց թուրը վեր կալան երկու մարդ, երթկի վրայ բռնեցին. յառաջ մի մենծ ապլոր թագաւորը հորս տուուց, ապլորի շլինքը թռցրուց թրի վրայ ու քցեց երթկովը ներքև, յետոյ խաչախպէրը, յետոյ մէկն էլ, համա չէ թէ թրի վրայ, մի մասը բռնեց ու ապլորի շլինքը մտով թռցրուց, քցեց ներքև. յետոյ ամեն չալըսակուածները իրանց տանիցն էկած հորսը տուին ու ներքև ածեցին, որ եփեն իրիկունս հորսի մէս ուտեն: Էս որսի սովորութիւնը հարսանեաց ժամանակ՝ նախնի ժամանակներից մնացել է:

Պռօշեանց.

7. Քաջ որսկաններ:

Երկու գեղցիք, հալալ ախպոր նման,
Թուր ու թւանք կապած սար ու ձոր ընկան,
Որ իրանց համար որս անեն բերեն,
Իրանց օղլուշաղն էնդով կերակրեն:
Հէնց մտան մէշէն, մէկ ծառի վրայ
Ցեսան, որ մէկ չաղ չալ աղաւնի կայ:
Ընկերի մէկը միւսին ասեց.
«Ցեղս կաց, գընամ, տանիցըն աղ բերեմ,
Հլէ էս սհաթին, ես քը մտաղ եմ,
Ատամ, մեր տղայ, մեր բաղդը բանեց,
Շուտով յետ կըգամ, էս թեւաւորին
Լաւ աչքը բանի, մնայ էս ծառին:
Մէկ քաբաբ անենք, ուտենք լաւ բաբաթ:
Հիմի գընումեմ, դու գիտես լաւ վատ:»
Նա ուշացաւ միւսն էլ չհամբերեց,
Ցրեխը հանեց, մաքումը դրեց,
Որ ծառը վեր ըլի ու ձեռով բռնի:
Անմիտ որսկանը դեռ կխաճամբի,
Աղաւնին թռաւ, գնաց իր քէֆին:
Գեղցու աչքը բաց մնաց, հոգին
Էլ չի համբերեց, ասեց բարկացած.
«Ցօ՛ չառլամիշ ղուշ, դու որ քու հունարն
Բանեցնիլ գիտես, ես եմ հլէ՛ նաչա՞րն:
Որ դու էտ պստիկ տեղովդ կըթռչես,
Ջեռս մ՚է բռնել, որ ղօլէս փախչես:» —
Ասեց ու զըռնկ—ծառի ծէրիցը
Էնպէս գըլմփաց, ու իր ջանիցը
Ջեռք վերցնիլն ու հոգին տալը մէկ էլաւ,
Ու զուռնայ մէյդն էնտեղ ձգուեցաւ:
Ինչպէս պատահեց, աղաւնու թեւիցն
Մէկ բմբուլ էկաւ ընկաւ վերևիցն
Գեղցու բերանն, որ ընկերն եկաւ,
Իշտահը գլած՝ մօտին կանգնեցաւ:

«Ատա՛ քու փորը խոզի Թափան էր,
Ի՞նչ էիր ճաքում, ու էս խեղճն անտէր
Ղշին սաղ սաղ ես դու փորդ քաշել.
Գլխիդ խռով ըլի իշտահդ, փորդ էլ:»
Ասեց, ընկերին տեղն ու տեղ Թողաց,
Քամի կուլ տալով իր բանը գնաց:
Աստուած ողորմի գեղըցու հոգուն,
Էն որսն, ընկերն ո՛չ ես տեսնիմ, ո՛չ դուն:

Աբովեանց:

8. Որսի սէրը:

Մի որսորդ սարի վրայ ելաւ և մի այնպիսի բարձր ցցի հասաւ, ուր իր օրումը չէր հասել: Յանկարծ իր առաջին տեսաւ մի տգեղ Թզուկ, որ բարկութեամբ ասաց. «Դու ի՞նչպէս ես համարձակում այսքան ժամանակ իմ սիրուն այծեամներին կոտորել և իմ երամը օրըստօրէ պակասացնել: Դէ, պատրաստուի՛ր, դու պէտք է քո հոգին տաս:» Սարսափից որսորդը և հազիւ Թէ սարի ցցից չգլորուեցաւ անդունդը. բայց փոքր ինչ սիրտը պնդացրեց և խնդրեց Թզուկից ողորմութիւն, հաւատացնելով, Թէ ինքը այծեամների տիրոջը մինչև այսօր բնաւ չէր ճանաչում: Թզուկն ասաց. «Լաւ, բայց այլ ևս այս կողմերը չերևաս: Ես քեզ խոստանում եմ, որ դու ամենայն կիրակի առաւօտեան քո խրճԹի առջև մի մորԹած այծեամն կըգտնես. բայց վա՜յ քեզ, եԹէ միւսներին ձեռք տաս և չխնայես:»

Թզուկն անյայտացաւ, իսկ որսորդը իր մտքի մէջ խորասուզուած դարձաւ տուն: Այս օրուանից յետոյ իր վարած հանգիստ խաղաղ կեանքը նորան չէր զուարճացնում: ՅօԹներորդ օրը առաւօտեան մի գերացած այծեամն կախ էր ընկած ծառի ճիւղի վրայ իր խրճԹի առաջ, որ և կերաւ նա մեծ ախորժանօք: Միւս շաբաԹն էլ այսպէս: Վերջապէս վհատեցաւ որսորդը իր ծուլուԹիւնից. նա ուզեց աւելի սիրով անձամբ որսալ այծեամները, մինչև անգամ ամենայն տեսակ փորձանք յանձն առնելով, քան Թէ ուրիշի ձեռքով կերակրուիլը: Բարձ-

րացաւ սարի վրայ, շուտով նկատեց մի այծեամն և սկսեց զէնքը քաշել: Եւ երբ որ չորս կողմը նայելով Թզուկին ոչ մէկ տեղ չնկատեց, ուզեց հրացանը արձակել, բայց Թզուկը մտաւ նորա ոտի տակ և բռնեց նորա ոտի կոճակը, ցած քաշեց նորան և հազար կտոր արեց, ջախջախեց անդնդի սեպացած ժայռերի վրայ:

9. Եղնիկի որսը:

Եղնիկի որսը բախտի խաղ է. և ով որ այդ բանով զբաղւում է, նա հետզհետէ ստանում է այն բոլոր յատկուԹիւնները, բարքն ու սովորուԹիւնը, ինչ որ ունի ամենայն խաղացող: ԵԹէ որսողը մի քանի ժամանակ շարունակ յաջողուԹեամբ եղնիկներ է գետինը ձգում, նա այսպէս հեշտ ձեռք բերած ստացուածքը այնպէս շուտ շռայլում է, ինչպէս որ շուտ ստացաւ, որովհետև նա յոյս ունի, Թէ բախտը ապագայում ևս նորան կը յաջողի: Բայց եԹէ այս յոյսը ի դերև է ելանում, նորա զօրուԹիւնները սպառւում են և սարսափելի յուսահատուԹիւնը սկսում է նորան ընկճել. բայց և այնպէս նորա զգուշուԹիւնը չի աւելանում, որովհետև նա, որպէս և ամենայն մարդ, որ երբեմն մի անգամից առատուԹեամբ վաստակում է, իսկ երբեմն բոլորովին զուրկ է մնում մի չնչին վարձից անգամ,—շատ սակաւ է մտածում տնտեսուԹիւն անել, այլ միշտ այն յուսով է ապրում, Թէ իր բարի հրեշտակը մի օր դարձեալ կը ժպտէ նորան և կ'օգնէ:

Անհաւատալի բաներ են պատմում եղնիկ որսող որսորդների արիական համարձակուԹեան մասին, բայց և այնպէս բոլորը ճշմարիտ է. Ահա մի որսորդ վազում է սիգաքայլ և արագավազ եղնիկի ետևից մի այնպիսի լեռան լանջով, որ մի քանի հազար ոտնաչափ գրեԹէ ուղղահայեաց զառիվերուԹեամբ ամբառնում է և գլխի կատարին ունի միայն մի քանի դուրս ցցուած սուր քարեր, ուր կարծես հազիւ կը համարձակուի Թռչունն անգամ նստել, ևս առաւել մարդ չի կարողանայ կանգնել: Տաքացած որսորդը վերջապէս այնքան բարձր գնաց, որ էլ ոչ առաջ և ոչ յետ քաշուել չի կարող և այն սուր քարից ուր նա մի նուագ կանգնել յանդգնեցաւ, սայԹաքեցաւ և ներ-

քև սահեց: Այս սայթաքած քայլը անշուշտ նորա կեանքին վերջ պէտք է դնէր, եթէ բարեբախտաբար մէկ ձեռքով պինդ չբռնէր ժայռի ծայրը: Այստեղ կախ ընկաւ նա սարսափելի անդնդի առաջ բոլորովին անյոյս՝ թէ որևիցէ մարդ օգնութեան ձեռք կարող է կարկառել նորան: Նորա ընկերները այս նշմարելով և իրանց անձեռնահասութիւնը տեսնելով, վկայ պէտք է լինէին նորա անդառնալի կորստեան: Բայց նա դեռ օգնութեան ապաւինելով՝ ամենայն խոհեմ միջոց փորձեց, որ վտանգից ազատուի: Նա իր ոտը աջուձախ տարուբերելով այնքան ճօճեց, մինչև որ ձեռքերով փոքր ինչ վեր մագլցեց, ապա հաստատ հաւասարակշռութիւն պահպանելով՝ վերջապէս վտանգաւոր տեղից ապահովութեամբ, հաստատութեամբ և զգուշութեամբ սահեց և իջաւ:

Որսորդները իրանց ճարպկութեամբ և բախտի բերմամբ շարունակաբար զանազան փորձանքներից ազատուելով՝ երբեմն այնքան վստահութիւն են ստանում, որ նոքա այնպիսի վտանգաւոր փորձանքների մէջ ևս գլխապատառ ընկնում են, ուր վերջապէս մահ և կորուստ են գտնում: Երկու որսորդ մի առաւօտ այնպիսի տեղ բարձրացան, որի միակ ապահով ոտի ճանապարհը սառուցով պատած սահուն էր դառել: Նոքա վերջապէս հասան զառիվայր նուրբ շաւիղը, որի մի կողմը անելանելի քարափի պատն էր ցցուած, միւս կողմը բաց էր մի ամեհի վիհ: Այս շաւղով բախտախնդիրներից մէկը սահեց և անդառնալի ընկաւ խոր վիհի մէջ: Գժբախտը այնպէս ջարդուեցաւ սառցի բազմաթիւ սուր սուր ցցերի վրայ, որ նորա գլխի վրայ մարդու կերպարանք էլ չէր երևում: Գլուխը մահու տուած մի քանի յանդուգն մարդիկ այս ակնյայտնի վտանգը արհամարհելով իջան փոսը և այն զարհուրելի խորքից հանեցին թշուառի գլխը· և ինչ էր նոցա վարձը—մի ճաշ, որ դժբախտի հայրը իր որդու գլխը գտնողներին պատրաստեց, այդ վտանգաւորներին կազդուրելու համար:

Սխրանաց սարը այդպիսի բաներ շատ է տեսել, որի համար և շատ երգեր են ասւում:

10 Որսորդի երգ:

Թնդում են լեռները, շաւիղը դողում,
Միայն քաջ որսորդի սիրտը չէ դողում,
Համարձակ քայլում է
Սառած դաշտերի վրայ,
Ուր չէ ծաղկում գարունը,
Կանաչ թուփ չը կայ:
Եւ նորա ոտների տակ ծովանման մէգը
Ծածկում է նորանից գիւղ ու քաղաքը:
Ամպերի ճեղքուածքից
Հազիւ է տեսնում,
Ինչպէս խոր ձորի մէջ
Դաշտը կանաչում:

Թարգ. Բարխուդարեանցի.

11. Մի գիշատիչ կենդանի անտառի մէջ ձմեռուայ ժամանակ:

Հեռու խոր անտառի մէջ շինած է անտառապետի խրճիթը: Մի գազաչափ ձիւնը ամբողջ աշխարհքի երեսը ծածկել է. անտառապետը միայն մի նեղ ոտի ճանապարհ է բաց արել՝ կոխոտելով իր դռնից: Բայց սպիտակ սփռոցի վրայ ուրիշ հետքեր էլ են երևում, որոնց ձևերից հաւաստեօք երևում է, թէ այդ դրոշմել են զանազան կենդանիները իրանց ոտներով:

Գիշերուայ պահին, երբ երեսը բաց լրացած լուսինը անվրդով երևում է անտառի ծառերի միջից և արծաթէ գետնի վրայ միայն վայ կանչող բուերի ստուերն է նկարագրում, այն ժամանակ կարելի է տեսնել մի քանի սոված կենդանիներին մօտենալ անտառապետի մեկուսի կացած տանը: Այսպէս զոր օրինակ ա ղ ու է ս ը իր կարմիր մուշտակով առաջ առաջ սողում է՝ աչքերն ամենայն ուշադրութեամբ բոլորի շուրջը դարձ-

նելով: Նա գիտէ որ բակի մէջ հաւեր և երթիկի գլխին աղաւնիներ կան, և երկուսի ախորժակով էլ նորա բերանի ջուրը վազում է: Ամեն կողմից պտտում է նա խաղաղ բնակարանի շուրջը, բայց ոչ մէկ տեղ մի բաց տեղ չի գտնում, որ կարողանայ փառաւորապէս մէջը մտնել, այն ինչ տարաբախտաբար շներն էլ նորա հոտը առան: Սոքա գիշերուայ ցրտին գլուխը բարձրացրած՝ սկսում են ոխամտ և առանց դադարելու վնգվնգալով և կլկաձայն հաչել և մեր աղուէս պարոնը պէտք է սուս ու փուս դատարկ հեռանայ, ինչպէս էլ որ եկել էր: Բայց ի՞նչ անէ նա իր սովը յագեցնելու համար: Այս ձմեռուայ ժամանակին խաղող և կեռաս էլ չկան, թռչունները բուն չունին երկրի վրայ, իսկ մկները վաղուց հանգստանում են ձիւնի տակ խոր տեղերում: Մնում է միայն որ ճագար որսայ, ուստի և գնում է այն բլրակի կողմը, որի չորս կողմը ծառեր չկան և ուր բազմաթիւ ճագարներ են բնակվում: Խորամանկութեամբ քննում է սուր թարմ հետքերի ձևը և առաւօտեան վաղ թփի տակ դարան է մտնում: Եթէ իր մօտովը մի կենդանի անցնէ, իսկոյն նորա բնակարանի ճանապարհը կտրում է և քշում է դաշտը, որ անպատճառ գերի առնէ նորան:

Բայց անտառապետն էլ սիրում է ճագարին և վաղուց ձանձրացել է նորա թշնամուց, ուստի և ասում է. «Ինչպէս բռնեմ այս աղուէսին:» Տնից առնում է մի թակարդ, մորթում է մի կատու և նորանից հիանալի և անուշաբոյր խորոված է շինում: Թակարդը ձիւնի տակ խոր փոսի մէջ է դնում, իսկ վրէն պինդ կապում է ամենից համեղ թիքէն. Մնացած կտորները մի քանի հեռաւորութեամբ ցիրուցան դարսում է քաղցր ճաշի հրաւիրելու համար: Աղուէս եղբայրը խորովածի պատուական հոտն առնում է և աչքերը ջուր կտրած թռնթռելով առաջ է գալիս, բայց այս խորամանկը շատ լաւ հասկանում է, որ կատուի խորովածը դաշտի վրայ չի բուսնում, ուստի և վերին աստիճանի զգոյշ է: Առաջ ճաշակում է մանր փշրանքները և կարգով վերջապէս հասնում է ամենից մեծ և ամենից համեղ կտորին: Դրախտի հոտը նորա քթի մէջ մտնելով՝ գրաւում է նորան,—բայց նա վստահ չէ այդ համադամ կերակուրի վրայ, նա չէ ուզում որևիցէ փորձանքի մէջ ընկնել. ուստի մեծ և հեռաւոր շրջաններով պտտում է այն գայթակղեցուցիչ տեղի չորս կողմը և միշտ աչքերը անհամբերութեամբ այն կողմն

է թարթում: Ահա հետզհետէ նպատակին մերձենում է—ահա այժմ մի պահ փորի վրայ պարկեց, որպէս զի իր մեկնած թաթով մսը բռնէ, և քաշէ բերանը. ահա քիչ էլ առաջ է քսվում, և վերջապէս ուզում է մէկ ոստիւն անելով հասնել և թիքէն տիրել և ապա փախչել այն տեղից: Բայց աւա՜ղ, դաւաճան թակարդը արձակուեցաւ և բռնեց նորա վիզը պինդ,—իսկ սա որքան էլ մտածեց, փորձեց, գլխին վայ տուեց—ոչինչ չօգնեց. պէտք է համբերէ, մինչև որ անտառապետը գայ, նենգ աղուէսին սպանէ և քերթէ նորանից փափուկ մորթին:

12. Նախապատրաստութիւն:

Այլ զի՞ քեզ, ո՛վ ողբերգու. զգոցունց ողբալ թողեալ զմեծն.
Ըզլերինս Հայոց թափուր յորսականաց տեսանես դու,
Այն չէ քեզ ցաւ և կսկիծ, ըզմէ՞ ոչ լաս զայն առաւել.
Ո՞ւր են արդ այն պատանիք նախարարացն և ազատացն
Բազէիւ ելեալք ի յորս որսալ այնու զմանրիկ թռչունս,
Ո՞վ սերողք ի ձմերանի առապարացն արեգնաջեր
Կարկաչաձայն կարմրակտուց մանրաքայլիկ, ո՛վ կաքաւունք,
Եւ դուք ես մացառաղող և թըփամուտ պարարտ աքարք,
Ելէք ի դուրս աներկիւղ և ճեմեցէք կարկաչելով.
Այլ ոչ ես պընդղին ըղհետ ձեր այն որսատենչ նոր պատանիք.
Իջէք և դուք ի բարձանց, ո՛վ լեռնաստան էրէվայրիք.
Ցանմարդի լերինս Հայոց արձակ արձակ շրջեցարուք.
Արդ ոչ այն կորովաձիգ սուսերաւոր երիտասարդք
Զխախրոխտ յարձակմամբ հարեալ գլորեն ըզձեզ ի վայր.
Արի՛ ծն, որպէս յայնժամ ի մէջ քարուտ լերանց Մոկաց
Շրջէիր, և անդ առ այս ճարագրէիր արտասուալից.
Եկ և շրջեաց այսր ընդ իս, ես ողբակից լինիմ քեզ արդ,
Եւ նըստեալ առցուք ի յողբ զողջ ըզլերինս Արարատայ,
Զի սպառեցան որսականքն արքունեաց և ամենայն,
Եւ խըցեալ կուրացան և արշաւանքըն որսորդաց.

Խրիմեան Հայրիկ.

IV. ԶՕՐԱԿԱՆ

1. Զօրս հսկայ:

Ամէն գիշեր մէջ գիշերին՝ Միայն արթուն են լինում:

Այն ինչ խորին լռութիւն
ցած է իջնում, տիրում երկրին
եւ ննջում է բնութիւն,—
Արարատի սարի վրայ
խորհրդաւոր այդ ժամին՝
բազմած սպիտակ ամպերի վրայ—
գալիս են չորս Հայկազուն:
Նոցա հասակն է վայելուչ,
Լայն ու պինդ թիկունքները,
Դէմքերը զուարթ և աչալուրջ,
հաստաբազուկ կռները,
Աչքերը կրակոտ և վառվռուն՝
կարծես թէ կրակ են ցայտում՝
Մազը սպիտակ, ինչպէս այն ձիւն
Որ Մասեաց գլուխն է ծածկում:
Զօրականի պէս հագած են,
կուրծքը ծածկած զրահով,
Սուրը մէջքին կապած ունին,
Աջը զինած նիզակով.
Եւ լուսափայլ սաղաւարտներ
ճակատներ են զարդարում,
գեղեցկածալ վերարկուներ
Լայն թիկունքներ են ծածկում:
Ովքե՞ր են այդ հսկաները,
Եւ ինչի՞—մէջ գիշերին,
Անցնելով երկնից օդերը,
գալիս են սարի ծայրին.
Ովքե՞ր են այդ հսկաները,
Այնտեղ ի՞նչ են կամենում.
—Այդ միջօցին ոգիները

———

—Առաջինն է մեր քաջ Հայկը,
Մեծ պաշտպան ազատութեան,
Որ պահպանեց Հայոց ազգը
Անարգ լծից ստրկութեան,
Որ առաջինը ախոյեան
Բռնութեան դէմ դուրս եկաւ,
Որի բազկից ամբարտաւան
Բէլը անշունչ վեր ընկաւ:
Պակաս չէ փառքով յաղթութեան
Երկրորդ հսկան նորանից.
Դա որպէս աստուած քաջութեան
Պաշտվում էր մեր պապերից.
Դա է Արամն անպարտելի
Մեծ նահապետ Արամը,
Որից ստացան սարսափելի
Մահ Նիւքարն ու Բարշամը:
Տիգրան ասում ենք երրորդին.
Նոյնպէս մի քաջ տղամարդ.
Արշակունեաց մեծ տան որդին
Կռուել է շատ կռիւ ու մարտ.
Միշտ աներկիւղ դէմ է արել
Իւր քաջ կուրծքը թշնամուն
Եւ շատ անգամ յաղթել, ջարդել
Մեծամիտ Հռովմայեցուն:
Եւ պերճապսակ Տրդատ արքան
Է չորրորդը նոցանից.

Եւ կրակապաշտ Շապուհ դաժան
Սարսափեցաւ նորանից.
Նա որբացած հայրենիքը
Պարսկի ձեռից ազատեց
Եւ Քրիստոսի սուրբ օրէնքը
Հայաստանում հաստատեց:
Ամէն գիշեր մէջ գիշերին՝
Այն ինչ խորին լռութիւն
Ցած է իջնում, տիրում երկրին
Եւ ննջում է բնութիւն,—
Արարատի սարի վրայ
Խորհրդաւոր այդ ժամին՝
Բազմած սպիտակ ամպերի վրայ
—Գալիս են չորս Հայկազուն:

———

Կորագլուխ և լի մտածմամբ
Յետ ու առաջ են քայլում
Եւ երբեմն կարեկցութեամբ
Ծանր հոգւոց են հանում:
Բայց սեւ, յանկարծ Հայկը կանգնեց
Եւ աղեղը շարժելով՝
Տրտմած սրտով այսպէս խօսեց
Ցաւալի և տխուր ձայնով.
«Ո՛վ դուք, որդիք իմ սիրելիք,
Այդ ի՞նչ վիճակումն էք դուք.
Երանի ազատ մեռնէիք,
Քան ապրում էք այդպէս ստրուկ:
Իմ ձեզ տուած ազատութիւն
Ինչի՞ հաստատ չպահեցիք,
Այն եղբայրական միութիւն
Ինչի՞ այդպէս քանդեցիք:»
Եւ պատուական ալեւորը
Աչքերն ուղղած դէպի ցած՝
Ասում էր նա այս խօսքերը,
Իսկ Հայոց ազգն էր քնած:
Յետոյ լսեց նա և նստեց
Ծալկով փռած գետնի վրայ:
Արամն հիմայ խօսել սկսեց
Ձեռը դնելով սրտի վրայ.
«Այս իմ սիրտը, որ ջերմ սիրով
Միշտ ձեզ համար զարկում էր,
Ձեր տխուր վիճակը տեսնելով
Սաստիկ ստացել է վէրքեր:
Իմ մեծամեծ աշխատանքներն
Դուք ունայն տեղ անցկացրիք
Եւ մարդաշատ շէն քաղաքներն
Օտարի ձեռքը տուիք:»
Ալս այդ ազնիւ տղամարդը
Զուր էր, զուր էր դանդատում,
Պատճառ նորա այդ դանդատը
Ցածում ոչ ոք չէր լսում:
Բայց Տիգրանը մօտ գնալով
Բռնեց նորա աջ ձեռը,
Սպիտակ մազերը ցոյց տալով
Ասաց նա այս խօսքերը.
«Խօսքդ իրաւ է, պատուական Հայր,
Տես իմ սպիտակ մազերը.
Ես էլ քեզ պէս մինչ կեանքիս ծայր
Զուր չանցկացրի օրերը.
Բոլոր ուժով աշխատեցի
Իմ ազգը առաջ տանել,
Եւ որքան որ միայն կարացի
Ամենևին չեմ խնայել:»
Թաց աչքերով, կոտրած սրտով,
Կարեկցութիւնից շարժած՝
Հայոց ազգի վրայ ողբալով
Եւ Տրդատը այժմ ասաց.
«Ով խեղճուկ ազգ, դու Հայոց ազգ,

Ո՛հ ինչպէս խիստ փոխուել ես.
(Թագ.
Ո՞ւր է քո փառք, աշխարհք ու
Ախ էլ ոչ մէկը չունիս:
Ափսոս դու ինքդ ստեղծեցիր
Քո բոլոր դժբախտութիւն.
Դու քեզանից ինձ հեռացրիր
Տալով ինձ անհարեր թոյն:
Ի՞նչ օգուտ [illegible] քաջութիւնը,
Երբ որ սրտերը մին չեն.
Դժբախտ է այն տէրութիւնը
Որի թշնամիքը մէջըն են:»
Ասաց ազնիւ արքայն արդար,
Ջեռով աչքերը ծածկեց

Եւ նոցանից մի զոյգ գոհար
Արտասուք ցած գլորուեց:
Բայց Հայոց ազգը քնած էր.
Նա չէր տեսնում, չէր լսում,
Հին փառքն անցած ու կորած էր
Նրա համար չէր ափսոսում:
Ամէն գիշեր մէջ գիշերին՝
Այն ինչ խորին լռութիւն
Ցած է իջնում, տիրում երկրին
Եւ ննջում է բնութիւն,—
Արարատի սարի վրայ,
Խորհրդաւոր այդ ժամուն՝
Բազմած սպիտակ ամպերի վրայ—
Գալիս են չորս Հայկազուն:

Բարխուդարեանց.

2. Ո՞վ է վայելում քրտնքի պտուղը:

(Թում

Վալտէր: Հայր, ճշմարի՞տ է, որ այն սարի վրայ արեւն է կա-
Ծառերից, եթէ մի մարդ կացնով տայ:
Տէլլ: Այդ ո՞վ է ասում:
Վալտէր: Հովիւն է պատմում:—
Նա ասում է, թէ ծառերը այնտեղ
Ողջ կախարդուած են, և ով որ նոցա
Մի վնաս կըտայ, երբ որ կըմեռնի,
Ձեռը դուրս կըգայ գերեզմանից:
Տէլլ. Հա՛, կախարդուած են ծառերը. սուտ չէ:
—Տեսնո՞ւմ ես սպիտակ այն գագաթները,
Որոնք համարեա երկինքն են հասնում:
Վալտէր: Այդ սառուցներն են, որոնք գիշերը
Այդպէս գոռում են և ցած են գլորում
Ձիւնի զանգուածներ:
Տէլլ: Այդպէս է: Եւ այն

ցած գլորուող ձիւնը վաղուց կըթաղէր
իւր ծանրութեան տակ այն մեր քաղաքը,
թէ այն անտառը կանգնած չլինէր
վերեւը նորա դէմ ամուր պատի պէս:
Վալտէր: (Մի փոքր մտածելուց յետոյ).
Հայր, կա՞ն երկիրներ, ուր չկան սարեր:
Տէլլ: Եթէ ցած գընանք մեր բարձր սարերից
իջնենք ձորերը և, հետեւելով
գետերի գնացքին, միշտ առաջ գնանք,
կըհասնենք մի մեծ ու տափակ երկիր,
ինչ տեղ ջրերը էլ չեն փրփրում,
գետերը հանդարտ ու հանդարտ հոսում.
Այն տեղ կարող ենք մենք ազատ նայել
Դէպի աշխարհի բոլոր կողմերը.
Մեծ դաշտերի վրայ փռած են արտերը,
կարծես այգի է բոլոր երկիրը:
Վալտէր: Հայր, ինչո՞ ապա չենք իջնում շուտով
Դէպ' այն գեղեցիկ երկիրները, քան թէ
Ահ ու դողի մէջ տանջվում ենք այստեղ:
Տէլլ: Երկիրը բարի ու գեղեցիկ է,
Ինչպէս երկինքը, բայց նոքա որոնք
Մշակում են նորան, նոքա կարող չեն
Վայելել իրանց քրտնքի պտուղը:
Վալտէր: Մի՞թէ նոքա էլ ազատ չեն ապրում
Քեզ պէս սեփհական իրանց հողի վրայ:
Տէլլ: Հողի տէրերն են եպիսկոպոսը
Եւ թագաւորը:
Վալտէր: Բայց անտառներում
կարո՞ղ են նոքա ազատ որս անել:
Տէլլ: Անտառի որսն էլ իւր տէրը ունի:
Վալտէր: Բայց ձուկ կարո՞ղ են բռնել գետերում:
Տէլլ: Գետն էլ ու ծովն էլ թագաւորինն են:
Վալտէր: Թագաւորն ո՞վ է, որ վախենում են
Բոլորն էլ նորանից:
Տէլլ: Դա նա է, ով որ
Պաշտպանում է և կերակրում է նոցա:
Վալտէր: Մի՞թէ կարող չեն նոքա քաջութեամբ

իրանց պաշտպանել:

Տէլլ: Այն տեղ հաւատալ
կարող չեն միմեանց հարեւանները:

Վալտեր: Հայր, ինձ նեղ է թվում այն արձակ երկրում,
Լաւ է կը մնամ սառուցների տակ:

Տէլլ: Ի հարկէ, որդեակ, լաւ է սառուցներ
Լինին քամակում, քան թէ չար մարդիկ:

Թարգ. Բարխուդարեանցի.

3. Երիտասարդների զուարճութիւնները:

Արեգակն էկել՝ երկնքի մէջ տեղը բռնել էր, օրուան փուշը մի քիչ կոտրվել, տաքացել էր: Սար ու ձոր երծաթի պէս պլպլում էր: Էս հաղաղին ով որ Քանաքեռ մտնէր, հէնց կիմանար՝ թէ երկնքից մէկ աւետաց ձէն ա էկել, աշխարքս արքայութիւն ա դառել. ինքան տղամարդ, ջահել տղէրք, երեխէք էին տներիցը դուրս էկել, քուչէքումն ու կտրներին քէֆ անում: Օտար մարդը հէնց կիմանար՝ թէ էս գեղըցիք աշխարքի տէր են, դարդ չունին եւ ամէն մէկը հազար թումանի տէր է: Ուհամ խաղը՝ որը ձեռնարռնուկ էին արել, պար գալիս, որը բոլորեշուրջ նստել՝ քէֆ էին անում, որը խաղ էր ասում, որը դամ քաշում: Էստեղ զուռնէն էր փչում, էնտեղ ճժալախտի էին խաղում, միւս տեղը փահլեւաններ էին կռիս պրծնում, եա զարաչիքը Փալ բաց անում. մանր տղէքն էլ՝ եա ձնաթօփի էին խաղում, եա աչքակապուկ, եա զօրականի պէս կռվում: Դափի, զուռնի ձէնն ու հարայ հրոցը աշխարք էին վեր կալել:

Աղասին քէֆն արել, պրծել՝ իր դաստէն եաւլին քցած՝ էկաւ մէկ տասը ձիաւորով գեղի միջովն անց կացաւ, որ գնայ՝ կալերի դզումը իր հունարը նշանց տայ, ջիրիդ խաղայ: Հէնց իմանաս մէկ թագաւորի որդի ա գալիս: Նարաղ ասպարը կապած, թուանքն ուսին, թուրը, կոնքերը կախ, ջուխտ փշտովն ու ղամէն գօտկումը, կանաչ մով շալվարը, զառ կաբէն հագին, գիւլըմնդի ապուխը ճտին, նուղայի թուխ գտակը գլխին կոտրել աջու անկանջի վրայ էր քցել: Գեղըցիք հէնց նրան տե-

սան թէ չէ, ծափ տուին, պար էկան, ձէն ձէնի տուին ու սկսեցին նրա խաղն ասիլ, նրա գովքն անիլ: «Աղասի՛ ջան՝ գլխիդ ղուրբան՝ էս թասը խմենք քո արեւադաղին, մեր գլխիցը ոչ պակսիս, գնա՛ս, մենք էս ա կգանք.» ամէն կողմից ձէն տուին, ու Աղասու թասը խմեցին: Ամէն երիտասարդն էլ՝ ով որ իրան էսպէս պատիւ էր տալիս, գտակով էր անում, քաղցր երեսով գլուխը տալիս ու անց կենում:

Հեռուանց երեւում էր՝ թէ ինչ ղիամաթ էր անում իգիթը: Ձիու անկածը մնած՝ էնպէս էր քշում, կրակին տալիս՝ որ հէնց իմանաս՝ թեւաւոր ղուշ ըլի: Շատ անգամ ջիրիդը հեռու տեղից շպրտում, ձին չափ էր քցում, ու գետնիցը ծուլ ըլելիս ձիու վըիցը բռնում էր, էլ եդ քցում: Շատ անգամ հէնց էնպէս դուզ շպրտում էր, որ կրակի պէս եդեւիցը հասնում, կպնում, էլ եդ ծուլ անում: Գետնին վեր ընկած տուղլսն էլ՝ էնպէս էր թամքի միջիցը կռանում, բարձրացնում, որ ջիրիդն առաջին դողում էր. ընկերտանց վրայ էլ որ վախտ վախտ ջիրիդ չէր քցում, էնպէս էր նշանում, որ գդակների ծէրին էր դիպչում, կամ գդակը հետը տանում, որ իմանան՝ թէ նա նրանց զիմիշ չի անում: Շատ անգամ թամքի միջին ջուխտ ոտի վրայ կանգնում, էնպէս էր ձին չափ քցում: Աչք պէտք է ըլէր, որ նրա ռաշըդութիւնը, տղամարդութիւնը, հունարը տեսնէր ու զարմանար: «Ջանմ սան, ջանմ: Աղասի՝ մէրդ մէկ հատ ա քեզանից բերել, հազար տարի անց կենայ, քեզ նման մէկն էլ ա չի՛ բհամ գալ», ասում էին թամաշաւորքն ու խնդում, ուրախանում, ծափ տալիս:

Արովեանց.

4. Թուանքչի:

Էջմիածնի խաղաղ միաբանութեան մէջ, ուր բոլոր զէնքը աղօթք ու սաղմոսերգութիւններն են, զինակիրներ ինքն ըստ ինքեան աւելորդ են երեւում արտաքուստ. բայց ոչ, մենք սխալվում ենք, դրանք հարկաւոր են եւ կան: Դրանց անունն է թուանքչի, որ հրացանակիր ասել է:

Եկէք մտնենք վեհարանի տակի մութը սենեակները և կը գտնենք մի քանի եափունջաւոր, վիզերը հաստ, առողջակազմ աշխարհական մարդիկ՝ դաշոյնները կապած, տորճանակը կողքին խրած, վառօդամանն ու գնդակամանն աջ ու ձախ կռնատակներումն անցկացրած: Մի երկայն թախտի վրայ մի կարպետ է փռած և էս մարդիկը էդ տեղ ուտում են, քնում, վերկենում. ոչ անկողին են մտնում նրանք, ոչ շոր են հանում, ոչ զէնք են վերցնում վրայից և ոչ բարձ ունին գլխատակներին: Նրանց կռներն են իրանց բարձերը, նրանց եափունջիքն են իրանց վերմակն ու մահիճը: Տան բոլոր զարդարանքն ու կահ կարասիքը պատերի վրայի կախած հրացաններն ու թրերն են, որ փայլում են. մի անկիւնումն էլ մի քանի խուրջիններն են թափուած և ձիանց սանձեր ու թամբեր. մի երկու գաւ էլ մի գաւաթի հետ պատուհաններից մէկի մէջն է դրած: Շատ ուրախ մարդիկ են սրանք, տանն եղած ժամանակը միշտ ասում, խօսում ու բարձր բարձր ծիծաղում են:

Եթէ լսելու լինիս սրանց պատմութիւնները, մազերդ ցից ցից կը լինին. այնպիսի անցքեր են պատմում իրանց կեանքից, կամ իրանց նախորդների գործերից, որ երբէք չես հաւատալ և կը շփոթուիս. բայց իրանց համար դրանք շատ սովորական բաներ են: Նոքա շատ լաւ գիտեն վանքի բոլոր անցքերն ու գաղտնիքները: Նոքա այս բոլոր գիտեցածները, լսածները իրաւունք չունին միմեանցից պահելու. ով ինչ տեսաւ, ինչ լսեց, ինչ գործողութիւն կատարեց, պէտք է յետ գայ ու իրանց գլխաւորի առաջին բոլոր ընկերների ներկայութեամբը բարձր բարձր մի առ մի պատմի և իւր արած որ և իցէ ծառայութեան համար ստացած վարձատրութիւնը լիովին դնի իւր ընկերների առաջը՝ վերջումը հաւասար բաժին անելու համար:

Սոցա պատմածը օտար մարդ իրաւունք չունի լսելու, իրանցից ոչ մինն էլ իրաւունք չունի մի չնչին լուր ևս դուրս տանելու. եղբայրը, որդին, կինը չպէտք է իմանայ թուանքչու արածը:

— Ինչ որ անես, տեսնես, լսես՝ պէտք է գաս էս չորս պատի միջին սրտիդ թափ տաս, պատմես ու քարը վերցնես, քարի տակը դնես, խրատում է թուանքչիբաշին մի նոր մտնողին: Էս տան ամեն մինը մեր աղէն ա, մեզ կարող ա հրամայել, ջրի, թրի, կրակի առաջ ղրկել, ամենին էլ պտի լսենք, պտի

գնանք, չէ ասել չկայ: Հասկացա՞ր, աղէ՛ր, որդի՛, հոգի՛ — ցուցամատը ծանր ծանր շարժում է գլխաւորը. դու քեզ չափ ու ձև արա. թէ որ էս բաները չես կարող տանիլ, թէ որ լեզուիդ սանձ չես կարող դնիլ, հէնց էս սհաթը վեր կաց, սուս ու փուս քաշուի գնա. թուանքչին սիրտ չունի, իր հօրն ու որդուն էլ չի խնայիլ՝ եթէ նրան մէկը խաբէ ու խօսքին հաստատ չմնայ:

Երբ որ նորանից խօսք է առնում՝ գլխաւորը մի թուանքչու հրամայում է. «Ա՛յ տղայ, վեր կաց էն գաւն էստեղ բե՛ր.» և գաւով լիքը գինին մէջ տեղ է գալիս:

— Էս մեր նորընծայ աղբօր կենացը, տղէ՛ք ջան, լցնում է Սարօն գաւաթը, սրա ոտնամուտը շնորհաւոր ըլի, իգիթ ըլի, վանքի ու վանքցոնց ուղուրին (սիրոյն) գլուխը յետ դրած ըլի, մեր աղբէրութիւնի մէջ էլ երկարատև ըլի:

Համբուրում է գլխաւորը նորեկին, նա էլ նրա ձեռքն է պաչում, ճակատին դնում, և գաւաթը բոլոր ընկերների մէջ կարգով պտտվում է:

Թուանքչիբաշին ընկերներից մէկին հրամայում է, որ ցոյց տայ նորեկին իւրեանց բոլոր նշանաբանները ու ծանօթացնի իւրեանց կանոնների հետ:

Երկու երեք օրի մէջ նորընծան քաջ գիտէ շան պէս ոռնալ, կատուի պէս մլաւել, ուլի պէս կլկչալ, խոզի նման մռթմռթացնել, ծտի նման ծուծուայնել. գիտէ, թէ աջ ձեռով ձախ ականջի դմակը քորելը, ճկոյթով աչքը մաքրելը, մտրակի կոթը բերանը դնելը և այլ այսպիսի նշաններն ինչ կը նշանակեն. մի խօսքով նա կարճ միջոցում տեղեկանում է թուանքչիական բոլոր գաղտնիքներին: Դրանից յետոյ մի առ մի պատմում են նորեկին ամեն անցեալները, էլ նրանից հարիւր տարուան եղածը անյայտ չի:

Այժմուս այս թուանքչիների թիւը շատ փոքրացել է. իսկ յառաջ, պարսից բռնակալութեան ժամանակը՝ շատ շատ էին, երբ նրանց պարտականութիւնն էր գիշերներն էլ հսկել պարսպի գլխից վանքը: Այժմ նրանք պարապած են Էջմիածնի արտաքին հասարակական ծառայութիւնները կատարելով: Նրանք են նամակատարները, պատժուելու հոգևորականների քամակից գնացողը, գիւղերում վարդապետների հետ պտղի ասած տուրքը ժողովողը, կալաչափի օգնականը, և այլն:

Պռօշեանց:

5. Արանչիք:

Հայաստանի վանքերը ոչ միայն ինչպէս աղօթարան են ծառայել ջերմեռանդ հայ-քրիստոնեաներին, սրանք բերդ ու պաշտպան են եղել թշնամու յարձակմունքների դէմ, սրանք պահարան են եղել նուիրական աւանդների ու գիւղերի թանկագին իրերի: Օտարը երբէք չի կարծիլ, թէ այս վանքերի պատերի մէջը մի նշանակեալ տեղ դատարկ է. թշնամին ամենեւին չէր կարող մտածիլ, թէ իւր հալածած հայերի այս աղօթատունը, որ հիմի իւր աչքին մի դատարկ տուն է ներկայացնում՝ մի քանի պատերի վրայ քաշած նկարներով, պէտք է թագցրած ունենայ իւր մէջ շատ՝ իւր ագահութեան կերակուր՝ գանձ: Հմուտ ճարտարապետը այնպէս չի շինել պահարանների մուտքը, որ անտեղեակ օտարը կարողանայ ծիծաղել իւր վերայ: Եթէ պատահել է, որ բռնաւոր տիրապետողը իւր շահամոլութիւնը լցնելու համար չուեցնելու հրաման է տուել, մեր քաջ պապերը մի կողմից իւրեանց դուրս գնալու պատրաստութիւնն են տեսել, միւս կողմից գիւղի հաղուագիւտ բաներն այս ամուր պահարանների մէջն են ածել. մի քանիսն էլ վանքի կտերն են ամրացել, կռիւ են տուել և պահապան կացել: Ո՞վ կերեւակայէ, թէ այդ միապաղաղ չորս պատը երկու եկեղեցի ու ժամատուն է իւր մէջ պարունակում. կտեր բաժնումն էլ կայ սեղան ու ժամատուն. երբ կարող է թշնամին մտքովն անց կացնել, թէ իւր մտած տեղը մարդաբնակ է. դա կարծես մի դատարկ և դռները բաց մի եկեղեցի է, բայց այնու ամենայնիւ իւր գլխին գիւղի ժողովրդեան մէկ մասը նստած՝ դիտում է թշնամու ամեն մի քայլուածքը, դոքա են ա ր ա ն չ ի ք:

Երկիւղի ժամանակ քթոցը կախ է ընկնում եկեղեցու կտրիցը պարանով, և ծերեր, հիւանդ կանայք բարուրը գիրկն առած և ուրիշ կարիք ունեցողները՝ մէջը նստում են և քթոցի հետ վերև համբարձում են:

«Ձեզ տեսնեմ, ձեր ջանին մեռնեմ, իմ կորիճներս», խրախուսում է ներքևից գեղապետը արանչիներին, «օյաղ կացէք, գեղն ու յիքանիքը լաւ պահեցէք, ընչանք լաւ մթնի ոչ,

ընտեղից ցած չը գաք, հալալութիւնով, հերթով յիքանիքը ջրեցէք, ընչանք շատ կարիք չը լինիք, թուանք չի ժաժ տաք, աշխատեցէք տեղներդ թաքուն պահել, երբ որ տեսաք թէ էլ ճար չըկայ, արիւններդ էլ մի՛ խնայէք:»

— Մեր աչքի, մեր գլխի վերայ, պատասխանում են արանչիք:

Բայց յանկարծ, երբ որ արանչիք էլ ոչ ոքին չեն սպասում, ներքևից լսվում է երկու անգամ ծանր և երեք միմեանցից շուտ շուտ դռան թղթկոց. սրանից յետոյ էլ երկու անգամ ծանր և երեք շուտ շուտ հազի ձայն. այս նշան տալու ձայն է:

Մեր տղէքը չեն վստահանում քթոցը կախ անել, վայ թէ մի օյին են ուզում դալ, ասում են նոքա իրանց մէջ:

— Որդի՛ք, գիտէք ի՞նչ կայ, ասում է մէկ ծերը. Աստուանումը տուէ՛ք, քթոցը կախ արէք, դուք արանչի էք. դուք գիտէք, թէ արանչու պարտքն ինչ ա, դուք որ կաք, էս սըհաթս գեղի տէրն ու պահապանն էք, դուք ձեր ընտանիքիցը յետ էք ընկել, արինն աչքներիդ տակն էք առել, գլխներիցդ ձեռք էք վեր կալել, որ գեղը պահէք, ըստեղ մնացած անկեալ-ունկիւներիս համար ջրի ու ապրուստի թադարիք քաշէք, ի՞նչ երկարացնեմ. սաղ գիւղը էս օր ձեր ումուտին ա, տեսէ՛ք, վըրներդ մոխկ ես տալիս, մարդի աչք ա ծակում ձեր թուր ու ասպալի պսպղոցը, էլ ի՞նչ էք շատ միտք անում, ումնից պտի վախենաք, վերև եկողը մի մարդ պտի ըլի, որ կրակ էլ դառնայ, էրիլ չի կարող, գիւլլախորով կանէք. վերև քաշեցէք այդ մարդին, բալքի հէնց մեզնից ա, անիրաւ թուրքերի ձեռքից փախստական մեզ ա հասել:»

Արանչիքը կարմրեցին ու ձեռաց պարանով մի քթոց ներքև թողին: Խորհրդական անձը նստեց քթոցի մէջ և երկու անգամ պինդ ձգեց պարանը: Այս նշան էր պատրաստութեան, և ահա օդի մէջ քթոցը վերև համբարձուեցաւ:

Իսկ եթէ թշնամին իմանում էր դրանց թաքստեան տեղը, այն ժամանակ վերևի պատի միջից դուրս ցցուած զարաւուլատեղերից արանչիքը հրացանների ճայթոցներովն իրանց այն տեղ լինելը հաստատում էին և թշնամու գլխին կարկուտի պէս գիւլլէք էին շաղ տալիս:

Պռօշեանց.

6. Աստղեր:

«Հայրիկ, ա՛խ ինչ գեղեցիկ է
Պարզ երկինքը գիշերով,
Ինչպէս սիրուն զարդարած է
Նա անհամար աստղերով.
Թէ ուղիղ է, որ ամեն մարդ
Մի աստղ ունի երկնքում,
Ինչո՞ւ ապա բոլոր աստղեր
Միատեսակ չեն փայլում:

Ինչո՞ւ համար միայն տեղ տեղ
Վառվում են լոյս աստղեր,
Իսկ մեծ մասը այնպէս մանր են՝
Ասես թէ են միայն կայծեր:
Ինչ լաւ կը լինէր, որ բոլորն էլ
Այնպէս պայծառ փայլէին,
Ինչպէս ահա՛, տես, այն աստղը,
Որ վառվում է մեր գլխին:»

— Հա՛, իմ որդի, գեղեցիկ է
Պարզ երկինքը գիշերով.
Նորան այդպէս զարդարել է
Աստուած կարող իր ձեռով:
Ճշմարիտ է, ամեն մարդ էլ
Մի աստղ ունի երկնքում.
Եւ քեզ կասեմ, ինչո՛ւ ողջն էլ
Միատեսակ չեն փայլում:

Ինչպէս այս տեղ երկրի վրայ
Մարդիկ միմեանց չեն նման.
Խելքով, գործով, վարք ու բարքով
Են միմեանցից զանազան, —
Ահա՛ այդպէս էլ երկնքում
Բոլոր մարդկանց աստղերը
Հայելու պէս ցոյց են տալիս
Իրանց տիրոջ պատկերը:

Բայց մի՛ կարծիր, որդեակ քաղցիկ,
Որ այն վառվառ աստղերը,
Որոնք իրանց պայծառ լուսով
Զարդարում են երկիրը,
Հարուստներին են պատկանում
Կամ աշխարհիս մեծերին.
Ոչ, ոսկին, իշխանութիւնն
Այն տեղ ոչինչ չունին գին:

Շատ իշխան կայ, որի աստղը
Հազիւ հազ է պսպղում.
Աղքատ էլ կայ, որի աստղը
Գոհարի պէս է փայլում:
Ինչ մարդ այս տեղ զարդարած է
Առաքինի գործերով,
Նորա աստղն էլ միշտ վառած է
Գեղեցիկ, պայծառ լուսով: —

«Հայրիկ, ախ, տես, այն գեղեցիկ
Մեծ աստղը թռաւ իր տեղից,
Թռաւ ու հանգաւ և մի պայծառ
Գիծ թողեց իր ետևից:
Աս՛, հայրիկ, այն ո՞ւմ աստղն էր.
Ափսո՜ս, ինչո՞ւ նա հանգաւ.
Տե՛ս երկնքի այն մի կողմը
Ինչպէս յանկարծ մթնեցաւ:»

— Այո՛, որդեակ, հազար ափսոս,
Որ պակասեց երկնքից
Այն վառ աստղը, որ գեղեցիկ
Լոյս էր տալիս վերևից:
Այս րոպէին մի ազնիւ մարդ
Աստուծուն տուեց իր հոգին.
Մի ազնիւ մարդ, որ միշտ անկեղծ
Ծառայել է իր ազգին...

Բարխուդարեանց:

7. Անի:

I.

Մէկ տափարակ դուզ տեղ բաց է ըլում յանկարծ տեսնողի առաջին, մէկ մեծ դաշտ չորս կողմը սարերով պատած՝ աջ ու ձախ սեւին տալիս, ու քանի գնում ա մարդ, ամպ ու դուման քաշվում, պարզըւմ են. հենց իմանում ես՝ թէ առաջիդ մէկ էնպէս քաղաք ա բաց ըլում, որ հազար հազար կենող միջումն ունի, ու ջրի եա շըքի ձեռից բէզարած՝ ուզում ես, որ շտապիս, գնաս մէկ աստուածասէրի դուռն վեր գաս, դինջանաս, էլ եդ ճամբէդ բռնես, գնաս: Մէկ տեղից ահագին բերդի պարիսպն ա քեզ խաբում, մէկ տեղից զարմանալի եկեղեցեաց գմբէթը ու մեծութիւնը, միւս տեղից բարձր մինաբէթը, քօշք ու սարայի գլխները. միքումդ ասում ես՝ թէ էս տեսածդ մէկ մեծ, զօրեղ թագաւորի թախտ պէտք է ըլի, էս տեղ ոսկի ու արծաթն աղպի հետ պէտք է խառը ընկած ըլի, էստեղ օրը հարիր քարվան ներս մտնի, հարիրը դուս գայ: Բայց ինա, ջինս, մարդ անասուն չես տեսնում, հենց ջամդաքակեր ագռաւներն են աչքերիդ սեւին տալի: Մարդ չի կայ՝ որ հարցնես, գիր չես կարդացել՝ որ իմանաս. միքիդ հետ ընկած, տեսածդ հրաշք կարծելով եա աչքակապութիւն, որ յանկարծ գլուխդ չես բարձրացնում, ախ սիրելի Հայազգի, ջանդ դող ա ընկնում, կանէրդ թուլանում, հենց իմանում ես՝ թէ մէկ վիշապ եա մէկ հարամի հենց էն սհաթին ա մտել ու բոլոր կենողներին եա կուլ տուել, եա սուրը քաշել, եա գերի արել, ինքն էլ փախել. ուզում ես, որ աչքդ խփես, եդ դառնաս: Ա՛խ՝ չէ՛, չէ՛, եդ մի դառնալ. էստեղաց ծուխը հազար տարի աւելի ա՝ որ կտրվել ա, կա՛ց, մի՛ վախենալ. անշունչ քարերն ու եկեղեցիքը մարդակեր չեն: Աչք բա՛ց արա, սի՛րտդ քեզ հաւաքիր ու գլուխդ վե՛ր տուր: Էս սրբատաշ տաճարները, էս ահագին բերդը, էս քարերը քեզ կասեն՝ թէ սա գոռոզն Անի՛, քո թագաւորների հզօր մայրաքաղաքը, որ էնքան իր հարստութիւնովը, իր փառքովը փարթամացել, ծոխացել, մեծամտել՝ մինչև մէկ հովիւ տեսնելով մէկ զատկին՝ թէ կնիկը եկեղեցումը կանգնելու տեղ չէր ճարել, էս պատճառաւ մէկ ահագին տաճար շինեց. ոչխարածն էլ ար-

ծածկէ նալչովը, սաղրի քօշերով ման գալիս, ուզվորն էլ հացի տեղակ փլաւ, ղանդ ու շաքար. սև փողի տեղակ արծաթ ու ոսկի պահանջում. որ եկեղեցի մտած ժամանակն էլ էնքան էին Աստուած մոռացել նրանք, որ կարճ վարդապետ ըլելիս՝ բարձր գրքակալ էին դնում, բարձր եպիսկոպոս ըլելիս ցած գրքակալ դուրս բերում, որ եա կռանան, եա չօքին, եա գիրքը չտեսնեն ու իրանք ծիծաղեն: Բայց սուրբ Յովհան Որդնեցի հանաք չը վերցնելով՝ մէկ օր օրհնած բերանը բաց արեց, անիծեց երկիրը տրաքեցաւ, տակը վեր էկաւ, խալխը ցրուեցին, փախան, որը Ղրիմ, որը Լեհաստան: Էս անշունչ քարերը մնացին ցից ցից, հազար եկեղեցուցը հինգը մնացին չէն. տաճարք, ապարանք, գանձ, հարստութիւն անէծքի փայ էլաւ, հողը մտաւ Հայոց ազգի մնացած փառքը. գող աւազակ են միջումը բուն դնում, նրանց բանն Աստուած յաջողում ա, նրանք չեն տակով ըլում, ու Աստուած էնքան իր գութը հայերիցը պակսեցրեց, որ էնքան անմեղ հոգիքը, էնքան միլիոնաւոր մարդիկ մէկ ահաթումը մէկ անսիրտ վանքականի խօսքով ջնջեց, Հայոց տունը քանդեց, էլած փառքն էլ ձեռիցը խլեց, որ գնայ էսպէս երերեալ, տատանեալ մնայ աշխարհքիս երեսին, ա՛խ, անմեղ սնապաշտութիւն:

Լաց գլուխդ՝ անցաւոր, տես թէ Աստուծոյ դատաստանը ինչպէս արդար է. էսպէս քաղաքը անէծքով քանդողին էս օր էլ տօնումենք, որ մեզ էլ չանիծի: Բայց նրա սուրբ յիշատակը ինչով է մեղաւոր, քանդողը Աստծու դատաստանին պարտական լինի...: Դրաղին կանգնել ես, ձեռդ ծոցդ դրել, խելքդ ցնորվել, լեզուդ պապանձուել. ասում ես. «Ո՜վ էսքան հրաշք տեսաւ, վայելեց. հօ՞ նո՞ր են այս պատերը, բաս սրանց միջումն ընչի՞ չկայ ձէն, ընչի՛ են լռել:» — Ա՛խ՝ Թշնամեաց սուրն ա նրանց վերջացրել: Հմիկ հաւատումես՝ ա՛յ իմ խեղճ ազգ, թէ քո երկրումն բիւր էսպէս քաղաք կամ կրակով փչացան, կամ սուրը քաշուեցին, ու քեզ չոր քարեր մէնակ թողեցին, որ տեսնես ու լաս, տաս քո գլխիդ վա՜յ, խելքդ ժողվես, լինես կտրիճ Հայ, քո աշխարհքին մուղայիթ կենաս, արինդ թափես, քո ազգը պահես, քեզ անուն ճարես:

Ո.

Հանգստարանի ձէն էր գալիս, որ մէկ քանի բէզարած ճամփորթք գիշերուայ կէսին էստեղ հասան: Լաւ կտրիճ մարդ

պէտք է ըլի, որ էս ժամանակին էսպէս չօլ եաբանի տեղը սիրտ անի մտնի: Նրանք չէին գիտի, թէ ուր են. Անու քաղաքի անունն էլ չէին լսել, ուր մնաց իմանային, թէ նրա խարաբէքը դեռ աշխարհքում կան: Հեռուանց տաճարների, բրջերի ցից ցից գլուխը նրանց խաբեց: Դորդ ա՝ աքլորի ձէն չէր գալիս, ամա սարերի չօբանի ձէնը լսելով՝ էլ մտիկ չարին ու որ չմտան էս լուռ, տխուր պարսպների մէջը հէնց իմացան՝ թէ մէկ մեռլատուն կամ գերեզմանատուն ընկան, ու ամեն մէկ ձիու ոտի չփլթոցը եա իրանց քաշած շունչը սար ու ձոր կատաղացնում ա:

Ամէն մարդ փորձած կըլի, որ մութը ժամանակին մարդ որ մէկ գերեզմանատան կամ մէկ քանդված եկեղեցու ղրաղով էլ ա անց կենում, սիրտը թուլանում ա, ջանը զարզանդում, հազար միտք հոգին կտրատում, քարերն էլ դև համարում ու հարամի, որ իրան կամենումեն ուտել, շատ անգամ էլ ուշագնաց ըլում: Սրա պատճառը բոլորը էս ա, որ մարդ սովոր ա, ինչ տեղ տուն ա տեսնում, եա շէնութիւն, կարծելով՝ թէ մարդ էլ կըլի ու եղջ՝ որ ձէն չի լսում, էնպէս կարծում ա՝ թէ անպատճառ չար հոգիք են էնտեղ բնակում. թէ չէ՝ մեռելի չոր մարմինը եա խարաբայ պատերը ի՞նչ զօրութիւն ունին, որ մեզ ինչ անեն: Էլ ո՞վ սիրտ կանէր ապա կամ եկեղեցու մօտանայ եա մէկ բուրջ մտնի: «Տղէրք՝ չար սատանի թուրը գլխըներիս խաղում ա», ձէն տուեց պինդ սրտով քաջն Աղասի, «տղամարդութիւնն էսպէս տեղը մալում կանի. եարեաղ, ասպաբ հազրեցէք, ես մէկ շունչս առնեմ, եաւաշ եաւաշ մէկ աչք ածեմ, տեսնեմ՝ թէ տեղըներս ռահաթ ա, թէ չէ սրով ու արնով պէտք է եա գլուխս պահենք, եա գլուխս կտրենք:» Շատ էլ խնդրեցին ընկերքը՝ որ չանի, ականջ չարեց. թվանքն ուսին դրեց, փշտովները հազրեց, սուրբ Սարգսի անունը տուեց ու ոտը փոխեց: Հաւատարիմ շունը գլուխը նրա ոտիցը չէր հեռացնում. մէկ հոտ առնելիս եա շփլթու իմանալիս՝ կանգնում էր, եղի ոտների մինն էլ ցցում, երկար վախտ ականջ դնում, յետոյ երրմիշ ըլում:

Հէնց մի քիչ հեռացան թէ չէ, մէկ եկեղեցու դռնից կրակի լեան ընկաւ Աղասու աչքը. էլ միտք չի արեց, թէ էսպէս տեղը գողեր, հարամուց աւելի ուրիշ օքմին չի ըլել, թուշ կրակի վրայ գնաց: Աստուած հեռու տանի, ինչ նա տեսաւ. տասը Քուրդ եկեղեցու մէջ տեղը կրակ էին արել, չորս կողմը

նստել՝ խորոված էին անում, շամփուրներով բերանները քա-
շում, ուտում, խնդում ու աչքերը ցխաղ որսկանի շան պէս
եա դուռը քցում, եա պուճախը: Հարամին ինչքան ղաղան էլ
ըլի, շատ անգամ իր շվաքիցն էլ կըվախենայ: Աղասին եաւաշ
ներս մտաւ, ծանր դէմքով առանց բարով տալու կրակին մօ-
տեցաւ ու ձեռը մեկնեց՝ որ մէկ խորովածի շամփուր էլ ինքը
քաշի: Նրա դեղնած մեռելի պատկերը, նրա անահ շարժմունքն
ու էնպէս անժամանակ վախտը ներս գալը որ չտեսան քրդերը,
հէնց իմացան՝ թէ նա էն աշխարքիցն է վեր էկել. լեզուները
չորացան, ձեռները թուլացան. ի՞նչ կըկարծէին, թէ էն հա-
ղաղին խաւարում մէն մէնակ սիրտ կանէր էն աւազականոցը
մտնէր, որ ցերեկն էլ հարիր մարդ զարզանդում էին մօտիկ
անցկենան, որ հազար տարուց աւելի էլ խաւարի սիրտ չէր
անում, որ գայ էն հալիր շինած աներումը կենայ: Հէնց գիտես՝
թէ մարդիկ չըլին առաջին. աչքը խոժոռած՝ մէկ դէս քցեց,
մէկ դէն, մէկ բառ էլ չասեց, լուռ մնաց: Մէկ շամփուր խորո-
վածի՝ որը կերաւ, որն էլ եդ կրակը քցեց, տաճարի հիմնալի
շինուածքին ու գեղեցկութեանը մտիկ արեց ու գլուխը ժաժ
տուեց: Քրդերը փէտացած մնացել էին նստած. աչքը որ յան-
կարծ նրանց վրայ չխոժոռեց, ամեն մէկը տեղն ու տեղը ուղե-
ցան որ հալչեն, հէնց գիտէին թէ մէկ դև է իրանց առաջին:
Էնքան էսպէս նրանց աչքը մոխիր ածեց, որ ընկերների շփլթուն
իմացաւ, ու շունը ուրախ ուրախ ներս ընկաւ, ամենքով փա-
թաթուեցաւ: Հէնց շունը տեսան հարամիքը թէ չէ, աչքերի
փառը վեր ընկաւ, ամեն մարդ թրի վրայ վազեց, որ նրան փառ-
չալամիշ անի. առաջի թուր վրայ բերողի գլուխը կէս էլաւ,
փշտոմների երկուսն էլ իրանց հոգը ճարեցին, ու ղամէն ձեռն
առած որ գոռաց ո՛չ. «տղէք՝ ձեր արևին ղուրբան, Աստուած
մեր կողմն ա, դուռը կտրեցէք, որ սրանց մատաղն էս գիշեր
անենք:» Հայի լեզուն որ բաց չեղաւ, հէնց բռնես պատերը լե-
զու առան: «Աման ձեր էկած հողին ղուրբան, ճար ունիք՝ տե-
սէք, մեզ ազատեցէք, տնով տեղով ձեզ եսիր կըդառնանք:»
Տասը տասնըհինգ Քրդստանցի հայ էլ որ էս կողմից, էն կողմից
գլուխ չի բարձրացրին ու քրդերի մնացած թրերն ու մզրախ-
ները ձեռք առան, Քրդերի ատղը թեքվեցաւ. ութը կոտրվել
էին, երկուսը մնացել եարալու, սրանց էլ կապեցին, ու աչքդ
բարին տեսնի, ոչինչ սհաթի մարդի քաջութիւնը էն բարերա-

րութիւնը չի՛ արել, ինչպէս հիմիկ:—Աղջիկ ասես, տղայ, հարս,
երեխայ, ծծկեր՝ հազար չվանով կապած՝ տուն էին արել,
Ղարսից եսիր բերել, որ տանին՝ եա սարդարին փէշքաշ անեն,
եա Ախալցխայ ծախեն: Ո՞ւմ էսպէս սհաթին մարդ կեանք տայ,
որ նրա առաջին ծունր չդնեն, երկրպագութիւն չանեն. բայց
հսկայն Աղասի ինքն էր ընկնում սրանց ճտովը, ինքը նրանց
կապը ետ անում, ինքը երեխին ջոկ, մօրը ջոկ, սիրում, գուր-
գուրում, որ Աստծուն փառք տան, սուրբ Սարգսին խունկ ու
մոմ վառեն, թէ չէ՝ էս իր հունարը չէր:

Փոքր որ դինջացան, Աղասին Քրդստանցի Հայերին հարց-
րեց, որ իրան միամտացնեն՝ թէ էն գիշերը կարո՞ղ են էնտեղ
ապահով մնալ՝ թէ ոչ: «Աղա՛յ՝ գլխուդ, արևուդ ղուրբան՝
վալլախայ չընք գիտայ, թէ էս անիրաւ լաճերիցն էլ կան, թէ
չէ, ամա օջաղուին աղէկ է: Էսոնց հանգիստը շունը չի խըլըսի,
մարդ իմա՞լ կխըլըսի: Մըգայ Աստծուն փառք, խազար էնպէս
ջանավար մեր առաջ գան, մենք չենք փախնի, մէկ թուր տուր
մեր ձեռը, մենք գիտանք՝ թէ իմալ քո ճակատը պարզ կէնենք:
Մեր ամեն մէկը՝ սուրբ Կարապետ գիտայ, էսոնց տանին խաւի
պէս կծալի, տակը կըքաշի, դու դարդ մի արա, ռահաթ
պարկի, մեր երեսն ստացդ հողն ըլի:»

Հէնց էս մասլահաթին էին, մէկ էլ էն տեսան՝ որ ձիա-
ւորի ոտի ձէնն ա գալիս: Արխասիրտ Աղասին միտք արեց, որ
սրանք նրանց ընկերները պէտք է ըլին. ական թօթափել երե-
խայ, օղլուշաղ ղրաղ քաշեց, հազար անգամ ձեռն էստուր
բերնին դրեց՝ որ ձէն չհանեն, երկու Քրդի վըները մէկ իգիթ
Քրդստանցու թուրը հանած կաղնացրուց, միւս Քրդստանցոցը
կրակի չորս կողմը նստացրուց, որ կարծիք չընկնեն, ու ինքն
իր ռաշիդ տղերքանցովը եկեղեցու դրան աջ ու ձախ կողմը
կտրեցին, թուրները հանած՝ պատնըդուս ցցվեցին ու թշնա-
մուն ճամբայ պահէին:

Լոյս ձէն տալով՝ քանից աւելի ձիաւոր ժամի դռանը
վեր եկան: Հայի երէխէքանց ու կնանոնց սուգ ու շիւանի ձէնը՝
որ ժամ չէր ընկնում, պատերն էլ սուգ էին անում. բայց խեղ-
ճերը չէին իմանում՝ թէ ինչ բարի հրեշտակ ա Աստուած
նրանց համար ուղարկել: Հէնց որ ղալմաղալ անելով ներս
չընկան, էլ չիմացան՝ թէ մարդ ա, որ իրանց գլուխը կտրում ա.
դև կարծեցին կամ սուրբ: Քրդստանցի Հայերը Աջամի Հայե-

րից էլ աւելի կատաղած կռւում էին: Նշի Աղասին էր՝ որ էս կատաղութեան չափ դրեց ու չթողեց որ Քրդերին շատ տանջեն: «Աղա՛յ՝ մեր տուն քակող էտոնք են, էտոնց խոր տունը քանդվի, էտոնք մեր ճիժը ու մանչ խատացրին. Թո՛րկ, Թո՛րկ էտոնց սատանի կեր անենք:»

III.

Թող կարդացողը ինքը միտք անի, թէ էս գիշեր ինչ գիշեր կըլինէր էս ջրատար եարների համար: Զարմացած, մահի դուռը գնացած ու ետ եկած Հայերը՝ որ աչքները բաց չարին, իրանց ազատողին տեսան, ուզում էին ոտներն արտասունքով լուանան, բայց համեստ պատանին հէնց էն էր խնդրում, թէ Աստծուն փառք տան: Աղասու սիրտը վկայում էր՝ թէ էն գիշերը էլ փորձանք չի կայ. բոլորին էլ խնդրեց, որ չօքեն՝ աղօթք անեն. Նրանց բախտից եարների միջումը տէրտէր էլ կար, տիրացու էլ. սրանք սկսեցին առաւօտեան ժամը, ու Անի քաղաքը հազար տարուց աւելի որ ո՛չ ժամ էր տեսել, ոչ աղօթքի ձէն լսել, էս գիշեր հէնց իմացաւ թէ իրանք երեւելի շքեղ Թագաւորազունքը կրկին վեր են կացել, իրա հողն օրհնում, իրա ջուրն գովաբանում, որ Հայ ազգը էլ չհաւատայ՝ թէ իրան Աստուած էնպէս ա անիծել, որ էլ մարդ չի կարող նրա միջումը կենալ: Ո՛չ երկիրը քանդուեցաւ, ոչ երկինք փուլ եկաւ:

Առաւօտը որ լուսացաւ, Աղասու աչքը մնացել էր սառած, չէր իմանում աչքին հաւատայ, թէ ո՛չ. եկեղեցի, պարիսպ, բերդ, մինարէք, էնքան նոր, էնքան պայծառաշէն ու անբնակ: Կարդալ չէր գիտում՝ որ միտք բերի, թէ էս ինչ քաղաք պէտք է ըլի. տէրտէրին որ չի կանչեց ու պատմութիւնն իմացաւ, խելքը գլխից թռաւ: «Վա՛յ իմ օրին արեւին. մեր ազգն էսպէս քաղաքներ ա ունեցել, էսպէս մեծութիւն ու հմիկ ամենն էլ կորցրել, հարամու ձեռքն գերի ա մնացել», ասեց հսկայն լալով: «Զէ՛, տէր հա՛յր, մեզ Աստուած ա բերել էստեղ, Աստուածն մեր Թրին, մեր կռանը ղվաթ տուեց, որ մէկ գիշեր էսքան բաներ արինք. էն Աստուածն էլ էնքան կարողութիւն ունի, որ մեզ միշտ յաջողի. հարամութիւն հօ չենք անում, որ նա բարկանայ, հարամու ոտն ենք կտրում, Աստուծոյ ստեղծածը ազատում: Մնանք էս սուրբ հողումը, մեր սուրբ

Թագաւորաց գերեզմանը, մեր սուրբ եկեղեցիքը ազատենք գողի, աւազակի ոտքից. հարբըից աւելի ենք հիմիկ. ինչ ձեռք ենք գցել՝ ձեզ ըլի. Միանք էստեղ. եւ մենք էլ մեր արինը մեր սուրբ Թագաւորաց հողի վրայ Թափենք, եւ քիչ քիչ նրանց քաղաքը էլ ետ պայծառացնենք:»

Բայց Թէ քարին ասած, Թէ մեր Քրդստանցի Հայերին. կռւում ղորդ ա՝ ամեն մէկը մէկ աժդահայ, բայց ինչ գրումը գրած ա՝ նրա շլինքը տա՛ր, նրան ուրիշ բան մի՛ ասիլ: Մեռնիս էլ՝ նա իր ասածը կանի, էնքան կոլքը հաստ ա: «Իմա՞լ կեղնի, անիծած խաղում վո՞վ կըմնայ: Ցայսմաւուրքն սուտ իմա՞լ կխօսի: Մեր վիզը զարկես, մեր ջանը խանես, վալլահա էս չօլում կեցող հմըյ մէկն էլ ա չեղնի, չեղնի: Խազար տարի խա ասա, խա գլուխդ ի քարին զարկի, մենք չընք կենայ, ինչ կասես՝ ասա, մենք մեր խողը չենք Թողայ:»

«Չէ՛ք Թողալ, Աստուած ձեզ հետ. մեր ասողը մէկ անգամ ծավէլ ա. մարդն ինքն իր գլուխը որ Թրի տակը դնի, էլ ո՞ւմ բանն ա կտրվել նրան քօմակ անի. էսպէս արինք՝ որ մեր տունը քանդուեց, է: Գնացէ՛ք, Աստուած բարի ճանապարհ տայ ու ձեր սիրտը մէկ լեւ քցի, որ ձեր խէրն ու շառն իմանաք:» Նրանց լալով խէլիմ տեղ տարաւ, ճամփու քցեց ու ինքը իր ընկերտանցովը ետ դառաւ:

Աբովեանց.

8. Ողբալից բանք Անի քաղաքին Հայոց առ Հայազգի ոմն, որ գնացեալ էր նմա ի տեսութիւն:

Անի քաղաք նստեր՝ կու լայ, չկայ լսող՝ մի՛ լա, մի՛ լա.
Կըսես՝ քիչ է, Թող, Միայ՝ լայ. ա՛խ, երբ լսեմ՝ մի՛ լա, մի՛ լա.
Շատ ցաւերով կ'այրիմ՝ տապիմ, չունիմ մէկ մարդ հաւա-(տարիմ,
Որ խղճալոյս գայ՝ մօտենայ, հէչ չէ լսէ՛ մի՛ լա, մի՛ լա.
Ա՜յ Հայ տղայ, խղճա ինձի, տես՝ Թէ քո Անին ինչպէս է,
Հերիք՝ ես լամ, դու չգթաս, չէ՞ քո Անին ափսոս է:

Ախ ու վախով օրերս անցաւ, լալէն աչքերս կուրացաւ,
Որբ մնալն ինձ վիճակեցաւ, բախտս բնաւ զիս մոռացաւ.
Կորուցեր եմ թագաւորներ, ժողվեր եմ գլխիս քօռ բուվեր,
Որք միշտ կ'երգեն. «Անին անցաւ, Անին անտէր աւերեցաւ:»
Անին եմ շատ մարդաբնակ, մնացեր եմ դառն աւերակ,
իմ լացն, իմ կոծն, իմ աղաղակ՝ անտէր որբերու նմանակ:
Երբեմն էի շատ աննման, Հայոց քաղաք արևելեան.
Աւերեր եմ հիմնայատակ, նստեր՝ կուլամ ես միայնակ:
(Մնաս»:

Եկար՝ տեսար, դարձար՝ կերթաս, լալով կըսես՝ «բարեաւ
Աստուած սիրես՝ չմոռանաս, Մասիս սարին երբ մօտենաս,
ըսես իմ քաջ Արարատին. «Նստեր՝ կուլայ քո խեղճ Անին»․
ըսէ. «Երբ աւետիք կըտաս, թէ իմ Անի հերիք է լաս:»

Ա. Վ. Արարատեան.

9. Իգիթի վիճակն ու հոգսերը:

Ազատին մէկ ջահել, ուշիմ Քանաքեռցի հայ էր: Ղզլբաշի ժամանակին սովորութիւն կար, որ աղջիկ էին քաշում: Մէկ օր էսպէս աղջիկ քաշելիս՝ կտրիճ Ազատին դուս էկաւ, մէկ երկու թուրք սպանեց: ընկերներն էլ ժամանակ չկորցրին. գիտէին, որ բոլորի վերջն էլ մահ է, Ազատին կապեցին ձիու վրայ և ընկան Աբարանու սարը, որ մի տեղ փախչեն: Ազատին շատ տեղ իրանից գնում, քիչ էր մնում ձիուցը վեր ընկնի. էլի ընկերքը հասնում՝ երեսին ջուր էին ածում, ականջները տրորում, եդ բերում: Հէնց մութը գետինն առաւ, նրանք ներս մտան Աբարանու քանդուած եկեղեցին: Ձիանքը որ շունչ չէին քաշում, աչքները արին էր քցում, քիթ ու բերան՝ կրակ: Ամեն մէկ շունչ քաշելիս՝ փոր ու աղեք իրար էին կպչում, էնքան էին քշել: Վաթօն սկսեց ձիանը ման ածել. Կարօն՝ սար ու ձոր աչքի տակն առնիլ, ղարաւուլ քաշել. Մուսէն՝ Ազատին ուսին դրած մտաւ եկեղեցու խարաբէն, գլուխը դրեց գոգն, ձեռը երեսին ու աչքը երկինքը քցեց, որ իմանայ, թէ աստղերն ինչ են ասում: Մէկէլներն ընկան դէս ու դէն, որ ձիանոց համար մի քիչ եմ (ուտելիք) ճարեն: Բայց էն վախտին չոլումն ինչ կըլէր, խոտի

չօփերն էին մնացել տեղ տեղ ցից ցից կանգնած: Երկինք՝ աչք ու ունք կիտած՝ իր չարխը պտտում էր. հանդարտ լուսինը ամպերի տակիցն մէկ երեսն հանում, շըհանց տալիս, մէկ էլ ծածկում, կորչում էր: Գերեզմանատունն էնքան սարսափելի չէր ըլել, ինչպէս էս եաբանի չոլը: Ամեն մէկ քարի տակից դժոխքի ձէն էր գալիս: Գէլ, չարխալ, արջ մէկ կողմից՝ դառնաշունչ բօրէագը որ մարդու աչքն ու բերանը խեղդում է միւս կողմից՝ սանդարամետը բաց էին արել: Ազատին՝ ջանի տաքութիւնը տուած, շունչը փորն ընկած՝ որ բաղի անգամ ախ չէր քաշում ու ոտին գլխին անում, գետինն ուզում էր պատռել, ընկերներին խոր տանի: Նրա հաւատարիմ շունը՝ գլուխը նրա ոտի տակը դրել՝ մնացել էր փէտացած: Ձին էլ բերին, գլխավերևը կապեցին, որ բալքի նրա շունչն էլա Ազատուն մէկ ճար անի: Մէկէլ ընկերները Ազատու չորս կողմը շարած՝ աչքներիցը արտասունքը գետի պէս էին վեր թափում: Մէկ սա էր ընկնում Ազատու վրայ, մէկ նա. «փառքդ շա՜տ ըլի, Աստուած, հէնց էս առաւօտ ամեն աչք մեզ էր էրնակ տալիս. ինչ արինք, որ մեզ էս պատժին հասցրիր: Վա՜յ մեր խեղճ օրին, վա՜յ աղեղ ծնողք՝ եարաբ սա՞ղ էք, թէ թրի տակին մնացիք մեր խաթրու. եարաբ մեր ցաւն էք քաշում, թէ ձեր սև օրը լաց ըլում: Էս տեղ մեր թագաւորներն էին վաղ ժամանակը քէֆ անում, որ տեղ որ հիմիկ մենք կրակումն էրվում ենք. էս ժամումն էին նրանք աղօթք անում, որ տեղ որ հիմիկ մենք մեր հոգին ուզում ենք տալ: Ձեր հողը լիս կտրի՝ այ մեր ազգի թագաւորք, իշխանք. եարաբ դուք էլ միտք կանէ՞ք, թէ ձեր որդիքը մէկ օր էսպէս արին պէտք է վեր ածեն ձեր գերեզմանի վրայ: Արին կապեցիր խալխի սիրտը, կրակ վառեցիր երկրի գլխին՝ վա՜յ աշխարհքի աչք Ազատի: Մէկ ճանճ էլա նհախ տեղը չես սպանել, մէկ սառը խօսք քո բերնիցը չէ՛ դուրս էկել՝ վա՜յ Աստուծոյ գառն ախպէր. ախր ինչի՞ պէտք է Աստուած քեզ էլ, մեզ էլ էս տեղը հասցնէր: Ո՞ւր գնանք, ո՞ւր: Տօ՝ մէկ բերանդ էլա բաց արա՛, քո ջանին մեռնենք. ի՞նչ կըլի, որ էդ սիրուն աչքդ էլա մի բաց անես, մեզ էսպէս չսպանես: Աշխարքն էլ ի՞նչ պէտք է մեզ համար, որ քեզ չենք ունենալ: Կաթն ու ծիծ մէկ տեղ ենք կերել, որ քեզանից ձեռ քաշենք. բախտ ու լաւ օր մէկ տեղ էնդուր համար ենք վայելել, որ քեզ նեղ օրը բաց թողա՞նք: Ախր մէկ խօսաս, ի՞նչ կըլի:»

Էս խօսքին մէկ ձիու շփլթոց էկաւ: Երկինք, գետինք գլուխներին սեւացաւ: Եարաղ, ասպար առան ուսները. ամեն մէկը մէկ բուռը հողը սրբութիւնի տեղակ բերանը քցեց, մէկ քարի առաջի չօքեց, իր մեղքը խոստովանեց, մէկ քանի ծունր դրեց, երեսին խաչը հանեց, ժամի քարերը պաչելով՝ տեղէցը վեր կացաւ: Շունը ղրաղ քաշեցին, մատով, ձեռով արին, որ ձէն չհանի ու իրանք թուր ու թվանք հազրած, ձիու ջիլաւը քցած՝ սկսեցին պատի արանքէցը անսաս ականջ դնել, որ տեսնին՝ էկողներն ո՞վքեր են: Անիծած բուքն ու քամին հիւսսի դհեցն էր գալիս ու ձէն փակում: Ուզում էին իրանց կարատեն, որ չէր թողում պարզ իմանան՝ թէ ինչ խաբար է: Շատ մնիկ արին, ձէն չեկաւ: «Տղէք, ասաց Եարօն, ինչ կըլի ըլի, տղամարդութիւնն էն ա, որ մարդ իր գլուխը դուշմանի ձեռ չտայ: Դուք լաւ գիտէք, որ մեր մէկ հայը տասը թուրքի բարեբար է: Երեւումա ետեւներիցս մարդ են քցել, ման գալիս: Թող գան. բոլորին էս կը ջարդենք, էս կը ջարդվենք: Քամակ քամակի տանք, նամարդի մուհդաջ չըլինք»: Ասին էս սուրբ Սարգիս ձէն տալն ու թուանքների ճռոցը մէկ էլաւ:

«Տղէրք, ձեր ջանին մեռնեմ, էլ մնիկ մի՛ք անիլ. մեր թուրը՝ նրանց գլուխը, էլ ո՞ր օրուայ համար ենք կոխքներէցս կախ անում, երեքի գլուխը գնաց, սրանց անունն անիծած:» — «Երկուսինն էլ իմ թրիս մատաղ արի, ղօչաղ կացէք», էն դհեից Վաթօն գոռաց: «Երկուսին սպանել, մի գլուխն էլ հրես ոտիս տակին է», ասաց Վանին: «Տղէրք՝ փախան, ձիանը նի՛ էլէք, սրանց էկած ճամփէն քռանայ. սովորել են գեղերումը հաւի գլուխ թռցնելով ման գան, հայերի արինը խմեն, սրանց տունը քանդուի: Տղէրք, սուրբ Սարգսի ջանին մեռնեմ, մէյդանը մերն ա», ասեցին ու վիշապի պէս ընկան հարամու քամակիցը, որին ինչ տեղ հասցրին, էնտեղ փառչալամիշ արին:

Բայց ա՜խ՝ արինը աչքները կոխած՝ հէնց քշեցին, գնացին, էլ միտք չարին, թէ Աղասին ինչ նեղ սհաթի միջում՝ ընկեր ա ձէն տալիս՝ ընկեր չի կայ, ա՜խ ա քաշում, ձէն լսող իմանող չկայ: Թուանքները որ բիրադի չճռճռացին, հէնց իմանաս՝ թէ հոգին եդ եկաւ տեղը. վրայ թռաւ. տեղէցը, ընկաւ ձիու քամակն ու խելքը կորցրածի պէս էլ չիմացաւ՝ թէ ուր ա գնում: Թուրը որ մէկի քեալլին չհասցրեց, գլխի հետ էրկու կտոր էլաւ. ընչանք թուրը էս ղամէն կհանէր, պարանն ընկաւ

ճրտովն ու շատ էլ ուզեց՝ որ ձին առաջ քշի, չէլաւ. ձին տակիցը դուրս թռաւ, ինքը գետնին դիպաւ ու չորս աժդահայ տղայ մարդ վրայ թափեցին: Շունը տեսնելով որ տիրոջն էլ խէր չի անիլ, ընկաւ գնացածների եդեւիցը: Աղասու ձեռները կապեցին, բերանը բամբակով լցրին, ազլուղ ղայիմ հուպ տուին ու շատ ու քիչ Աստուած գիտի, թէ ուր տարան:

Տղէրքը բիրադի որ եդ դառան, գլխներին կրակ վառուեց, երբ Աղասու շունը տեսան ճամփին: Մէկն էս սարն ընկաւ, մէկն՝ էն ձորը. քարը լեզու չունէր, որ ասէր. ձին իմաստուն չէր, որ դանէր, շունն էլ առաջներիցը վաղուց կորել էր. ո՞ւր գնային, ո՞ւր կորչէին. գետին էլ թէ պատռվէր, ներս կերթային, որ նրան հանեն: Ինչ անեն, մնացել էին մոլորուած: «Տղէրք, մնանք էստեղ. Աղասու շունը տեսնում էք որ կորել ա, նա իմաստուն հայվան ա, ինչպէս որ ըլի, հոտի վրայ կարող է գտնիլ. թէ ճար կայ, նրանից կըլի էս գիշեր, մենք ոչինչ չենք կարող անիլ:» Էսպէս խելքէմ վախտ տարակուսած նստած՝ միտք էին անում, որ խեղճ շունը լեզուն հանած՝ հեթեթալով էս ընկաւ: Շունը վազեց, նրանք եդեւիցը: Հէնց մէկ խելքիմ տեղ անց կացան թէ չէ, շունը եդի ոտը վեր քաշեց՝ կանգնեց: Շատ էլ զօռ արին, որ տեղէցը եռայ, չէլաւ: Իսկոյն իմացան զգուշ հայվանի միտքը, ձիանոցը վեր եկան, մէկին տուին ու կամաց կամաց ոտները փոխեցին: Էլի շունը կանգնեց, հոտոտաց: Թուանքները առան ձեռները: Էնքան էսպէս ուսուլով գնացին կռացած, փորսող անելով, որ հարամին մնաց դէմ ու դէմ: Սարի շուաքը իրանց կողմն էր՝ չէին երեւում. լուսնակը հէնց ընկաւ թուրքերի ճակատներին, տեսան՝ որ Աղասին միջներումը չի: Մէկի ճակատին նշանելը, թուանքների տրաքալը ու հարամիքանց բանհողի ըլելը մէկ էլաւ: Հաւի պէս դեռ էնպէս թրպրտում էին, որ մեր տղէրքը վրայ հասան: Ա՜խ ո՞վ է կարող նրանց ուրախութիւնն ու արտասունքը էս սհաթին պատմիլ: Որ էլ վախտ չկորցնեն, վերցրին իրանց կորցրած զանձը, հանեցին թշնամու եարաղ ասպաբը ու գնացին: Ո՞վ կը զարմանայ, որ լսի, թէ Աղասին ամեն իր շանը տեսնելիս՝ ուզում էր կեանքը նրան տայ: Կարավուրղով մինչեւ տասնըհինգ մարդ էն գիշերը սպանել էին: Եկեղեցու մօտ որ էլի եդ հասան, հանեցին մէկ քանի շահի փող դրին սեղանի վրայ, չօքեցին, Աստծուն փառաբանութիւն տուին ու ճամփայ ընկան:

Աբովեանց.

10. Վարդանի երգը:

Հիմի է՞լ լռենք, եղբարք, հիմի է՞լ,
Երբ մեր թշնամին իր սուրն է դրել,
Իր օրհասական սուրը մեր կրծքին,
Ականջ չի դնում մեր լաց ու կոծին,
Ասացէ՛ք, եղբարք Հայեր, ի՞նչ անենք,
Հիմի է՞լ լռենք:
Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջնջեց աշխարքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խլեց մեզանից թագ և՛ խօսք և՛ զէնք,
Հիմի է՞լ լռենք:
Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին,
Մշակի ձեռքիցն էլ խոփը խլեց,
Ա՛յդ սուր ու խոփից մեր շղթան կռեց,
Վա՜յ մեզ, շղթայով կապած գերի ենք.
Հիմի է՞լ լռենք:
Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Լիրբ գոռոզութեամբ լցրած իր հոգին,
Արդարութեան ձայնն հանած իր սրտից
Արտաքսում է մեզ մեր բնիկ երկրից,
Պանդուխտ, հալածեա՜լ, եղբարք, ո՞ւր դիմենք.
Հիմի է՞լ լռենք:
Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին,
Անգութ մեր բերած ծանր զոհերին,
Իւր լիրբ, նզովուած ձեռքը կարկառեց,
Ազգութեան վերջին կապը պատառեց.
Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք,
Հիմի է՞լ լռենք:
Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,

Գայլազգեստ գառին մեզ գլուխ դրաւ,
Սուրբ խորան չունենք, արդ ո՞ւր աղօթենք.
Հիմի է՞լ լռենք:
Հիմի է՞լ լռենք՝ մարդիկ ի՞նչ կասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
Չե՞ն ասիլ, որ Հայք արժանի էին
Այդ ստրկական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Մինչև ե՞րբ լռենք:
Թո՛ղ լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք
Ու այնպէս լռենք:

Պատկանեանց.

11. Մի պատկեր վերջին պատերազմից:

1877 տարվայ մայիս ամիսը մօտենում էր իր վախճանին: Աղբակայ դաշտերից մէկի վրայ մի բանակ էր երևում՝ բազմաթիւ վրաններից բաղկացած: Մէջ տեղը կար մի ընդարձակ հրապարակ, ուր անբացատրելի խռովութեան մէջ շարժվում էին զինուորված տղամարդիկ, որոնց երեսները արտայայտում էին կատաղի անհամբերութիւն: Նոցա ամեն մէկ շարժուածքը ցոյց էր տալիս, թէ դոքա մի սարսափելի պատերազմի են պատրաստվում: Վերջապէս գլխաւոր վրանի առջև կազմվեցաւ մի ամբիոն, թամբերը միմեանց վրայ դարսելով: Մի պատկառելի ծերունի բարձրացաւ նրա վրայ, որ իր արտաքին կերպարանքով ներկայացնում էր մի անձնաւորութիւն, որ մի և նոյն ժամանակ և՛ բարձր հոգևորական է և՛ հզօր զինուոր:—Նա՝ և՛ շէյխ էր և՛ զօրավար: Նա իր ձեռքում բռնած ունէր կարմիր դրօշակ: Զինուորած ժողովուրդը այս հրաշալի երևոյթը տեսնելով՝ այնպէս էր երևակայում, իբրև թէ իրանց հզօր պապերը կենդանացել են և ոգելից ճառ պէտք է խօսեն:

Շէյխի քարոզը սկսվեցաւ օրհնութիւններով և փառաբանութիւններով: Ալլահի, Մուհամմէդի և նրա յաջորդների անունները արտասանվում էին մեծ ջերմեռանդութեամբ: Յետոյ սկսեց քաջալերել այսպէս.

«Ո՛վ իսլամի որդիք, մեծ մարգարէն—փառք իր զօրութեանը—կոչում է ձեզ մի սուրբ գործի համար, կոչում է ձեզ պատերազմել իր կրօնի թշնամիների դէմ, որոնք սկսել են թափել Աստծոյ ծառաների արիւնը: (Եւ թող նզովեալ լինին նոքա:)

«Վհատութիւնը, երկչոտութիւնը և կասկածը թող հեռու լինին ձեզանից, որովհետև երկիւղը Աստուծոյ զինուորների համար չէ: Տէրը ինքը կըտայ ձեր բազուկներին զօրութիւն, և թշնամու պարանոցները ձեր սրերի առջև կըկորացվեն, որպէս չորացած հասկը հնձողի մանգաղի առջև: Դուք ձեր ձեռքով կըբռնէք նրանց գնտակները և դէպի իրանց յետ կըդարձնէք: Ձեր անձերը պաշտպանված կըլինեն երկաթեայ պարիսպներով, որոնց ձեր աչքերը չեն տեսնի: Ձեզ աջակից կըլինեն կոտորող հրեշտակների աներևոյթ գունդերը, որոնց մարգարէն ձեզ օգնութեան կուղարկէ: Մեծ է իսլամի Աստուածը և բացի նորանից ուրիշը չկայ:

«Բոլոր գաւուրները պիղծ են Աստուծոյ առջև: Նրանց կայքը, ընտանիքը և ամեն ինչ, որ պատկանում է անհաւատներին, Աստուած մատնում է ձեր ձեռքը: Յափշտակեցէ՛ք, կողոպտեցէ՛ք, այրեցէ՛ք և կոտորեցէ՛ք, որքանով կըլիանայ ձեր սիրտը: Աւարը և իր կրօնի թշնամիների արիւնը՝ Աստուած հալալ է անում սուրբ պատերազմի զինուորներին...:

«Սուրբ կրօնի թշնամիների արիւնի հոտը հաճելի է Տէրի առջև: Անհաւատների աւերակների ծուխը նա ընդունում է, որպէս մի ողջակէզ, որից մուխը ուղիղ բարձրանում է դէպի Յաւիտենականի աթոռը: Կոտորեցէ՛ք, որքան կըզօրեն ձեր բազուկները, այրեցէ՛ք, որքան կարող էք դուք: Եւ ձեր կոտորածների արիւնի իւրաքանչիւր կաթիլի համբարքով՝ դուք կըստանաք վարձ Աստուծոյ դրախտի մէջ:

«Մեծ է ուղղափառների Աստուածը և բացի նրանից չկայ մի ուրիշը:

«Եթէ ձեր վեր առած գերիներից՝ ձեր սրտերին հաճելի կըլինի ընտրել կիներ կամ աղջիկներ,—եթէ դուք ծառայեցնելու համար կընտրէք պատանի տղաներ ձեր ձեռքը ընկած

գաւուրներից,—Աստուած չէ արգելում ձեզ, միայն այն ժամանակ, երբ նրանք կընդունեն իսլամը: Իսկ եթէ հաստատ մնացին իրանց մոլորութեան մէջ, ձեզ թոյլ է տրվում սպանել: Իսկ ծերերին խնայել չկայ: Անհաւատութիւնը նրանց մէջ ամրացած է իրանց ոսկորների նման:»

Դեռ և ս երկար խօսում էր Շէյխը, կանգնած իր ամբիոնի վրայ, որպէս իսլամի մարմնացած ոգին, որպէս հալածասիրութեան և մոլեռանդութեան մի կենդանի օրինակ: Նրա ձայնը ազդու էր և սուր: Եւ այն վայրենի ժողովրդեան կարողացաւ ոգևորել մարդկանց մորթելու համար: Երբ վերջացրուց նա ճառը, կրկին դարձաւ դէպի բազմութիւնը այս խօսքերով.

«Աստուած ձեզանից ուխտ է պահանջում, և թո՛ղ ձեզանից ամեն մէկը կատարէ իւր երդումը:»

Երբ երդումը կատարեցին և բոլոր արարողութիւնները վերջացան, լսելի եղաւ թմբուկի ձայնը: Ամեն մարդ վազեց իր ձին նստելու, վրանները հաւաքվեցան, և մի քանի ժամից յետոյ՝ ամբողջ բանակը պատրաստ էր ճանապարհ ընկնելու: Նա շարժուեցաւ, երբ Շէյխը իր ձին նստած՝ կարմիր դրօշակը ձեռին՝ առաջ ընկաւ: Աւելի քան տասն հազար քուրդեր հետևում էին այդ սարսափելի ծերունուն:

Այսպէս սկսվեցաւ Շէյխ Ջալալէդդինի արշաւանքը դէպի տաճկական Հայաստանը:—

Անցաւ մի ամբողջ շաբաթ:

Մի ճանապարհորդ էլ չէր ճանաչում իր ծանօթ լեռները: Այժմ տեսնում է բոլորովին դատարկ, առաջ այսպէս չէր: Խոտաւէտ արօտներում արածում էին հօտեր, ձորերի մէջ կազմուած էին խաշնարած հայերի վրաններ, և հովիւների սրինգը հեռուից հնչում էր թռչունների առաւօտեան ձայների հետ: Այն ժամանակ հովիտների և լեռնադաշտերի վրայ հողագործ հայը, իր սովորական երգը երգելով, կամ վարում էր կամ հնձում: Իսկ այժմ:—Այժմ ամեն գործ դադարել էր, ոչ մի շունչ չէր երևում, էլ անց ու դարձ անող քարաւաններ չէին երևում, այլ միայն գիւղերի ճարակն ու ծուխը երկինքն էր բարձրանում: Աւերակներ և ամայութիւն ամենայն տեղ:

Մէլիքզադէ.

12. Վանեցի կտրիճ:

Հազիւ լրացաւ քըսան մէկ տարիս,
Աղուամազ բուսաւ երես ու ծնօտիս,
Թըշերէս կարմիր վարդեր կըթափի,
Ջիլերս ամուր՝ ասես երկաթի:

Տըւէք ինձ սարեր՝ սարեր կործանեմ,
Ծառը արմատով գետինէն հանեմ,
Սուր ակռաներովս երկաթ կըծամեմ,
Մէջս այդքան ոյժ՝ ասէք, ի՞նչ անեմ:

Առջևս դրէք հարիւր ու հազար—
Ջարդեմ, տըրորեմ զերդ բողկ ու գազար.
Ինչ այլք շաբթու մէջ՝ այն ես օր կանեմ...
Մէջս այդքան ոյժ՝ ասէք, ի՞նչ անեմ:

Իմ պէս բիւրերով լի է Հայաստան,
—Նրա սուրբ հողին ըլեմ ես ղուրբան—
Մարմինը ուժեղ՝ առողջ է Հային,
Այլ, ափսո՜ս, թըմրած է նորա հոգին,

Թէ մի օր զարթընի նորա հոգին,
Նա պարզ կըցուցնէ Օսմանլի ազգին—
Ով էր երկուսէն ստրուկ և կամ տէր...
Ախ, երբ պիտ՝ թնդանք, խեղճ Հայի սրտեր:

Պատկանեանց.

13. Վան քաղաքի «հրապարակ ծերոց»:

—«Էն տարին որ խան Մահմուտ եկաւ՝ պիտի մեր այգեստան և քաղաքը թալանէր, չորս կողմից գեղըցիք եկան քաղաքը լցուեցան. այգեստանեայց դռները մէկ մէկ ամրոց դարձան. կնիկ, մարդ, ճիժ, բիժ տանիքները բարձրացել էին արապահների ետև կացած. փողոցի քարեր, կուէթներ (կոշտ հող), հող, փոշի և մոխիր կուտել էին, որ Քրդերի գլխին և երեսներին խփեն. մարտակ, ձողին, թոնրի երկաթ, կրակ, ուրագ, դանակ, ինչ որ ձեռքին գար՝ առան, որովհետև՝ «Արգելուած էր Հայերին զէնք ունենալ...:»

Միւսն ասում է. «Երանի այն օրին, որ առաջ ուխտ կ'երթայինք. Մի Սուսուն խաթուն ունէինք, որ ձի հեծած, ոտից գլուխ կրակ ու զէնք, մէկ ձեռին էլ մզրախ, գալիս էր ուխտաւորներին ժողովում էր, ինքը առաջնորդում էր. էն աբունբերան Քրդերից ո՞րը հոգի ունէր Սուսունի դէմ դուրս գար: Բոլոր Քրդերը նորանից դողում էին:—Ափսոս այն ժամանակներ, ափսոս: Այն ժամանակ հաւատ կար, Աստուած էլ շատ կտրիճ տղամարդիկ և կնիկներ էր հանում:

—Մխոտ կուզի՞ Ջանկայ Պօղոս, որ չորս գոմշի ուժ ունէր: Խասխ փաշի օրով Աջմու փահլեւան էր եկել Վան, «կամ բերէք մէկին ըմբշամարտենք, կամ այսքան մալ ու խազնայ կուզեմ» ասում էր: Դևի պէս մի անհաւատ գաղան էր, ո՞վ կարող էր նրա դէմ դուրս գալ: Ջանկայ Պօղոսը որ լսեց, «Եա՜, ասաց, մի՞թէ Վանայ երկիրն այսպէս աւերեցաւ, որ մէկ Աջմու վատը գայ Վանայ թալանը տանի՞:» Պօղոսն եկաւ փաշին, փաշէն էն օր փահլեւանի ուզածը պէտք է տար, դարդից աչքերը թթուել էին դառել էին բակլի ջուր: Ի՞նչ անէր, փահլեւան շատ ունէր, բայց այս Աջամից քաշվում էին. Աջամ չէ, Աժդահար է. ուր գնացել է, անուն է հանել, բերնի ուզածը ստացել է:—Պօղոսը մէյդան դուրս եկաւ, կանչեց փահլեւանին: Հողագործ մարդ էր Պօղոսը, գերանդին դաշտում դրել, եկել էր: Մէկ երկու տակ մէյդանի մէջ գնաց եկաւ Աջամը, խօսք ձգեց, ձեռք ձգեց, վիշապի պէս պռռաց:—Ինչի՞.—Պօղոսին վախեցնի: Մէկ էլ որ մէկ մէկու կպան, Պօղոսը Աջամին առաւ գետինը խփեց. ինչպէս որ երկնքից մէկ վիշապ ընկնի, դըմփայ, էնպէս էլ նրա փորի ձէնը գնաց մինչև Իրան և Թէհրան:—Ա՛ռ քեզ մալ ու խազինայ, ասաց Պօղոսը, դէ՛ գնա՛ մարդ ճանչցիր: Բերէք, ես կնկայ հալաւ հագցնեմ սրան, թող սրա ազգականներն իմանան, թող հասկանան թէ Վանայ Հայերը խոյայ խաներ չեն:—

Փաշէն Պօղոսին շատ խալաթներ տուեց, մէկ էլ գութան վեց լուծ գոմէշներով: Առաջ էս տեսակ մարդիկ կային, բաներ կային. հիմիկուայ մարդիկն էլ մա՞րդ են:

—Էն տարին որ Ս. Կարապետ գնացինք՝ մի մարդ կար էն տեղ, որ ասում են՝ Ջաղացի քարեր մէկ ձեռով վերցնում է,

Քրդերի ետևից ընկնում է, ձիերի պոչից բռնում է, պոչը դուրս է քաշում, չորս գոմշ լծած սելը ետևից քաշում կանգնեցնում է, և ուրիշ էսպէս բաներ է անում:

—Դոցա ոյժը երկնային ուրբ է, ասեց ամենից ծերը: Ով եօթը տարի Ս· Կարապետի պասը պահի, եօթն անգամ Ս· Կարապետի գերեզմանը համբուրէ, ինչ որ ուզէ, կըստանայ:—

—Այս ժամանակին էլ ո՞վ է միտք անում ուխտ, սրբեր, հունար: Քօռ օղլին ասել է· «Երբ որ թուանքը յայտնուեցաւ, իգիթները անյայտացան»· մերն էլ՝ վարժապետներ, զաղաթաներ եղան, ընէն բան ջուր տարաւ···:»

Սրուանձտեան·

14. Նախապատրաստութիւն:

Ստիպիմ ասել ի ցաւոյս ձեզ, ո՛վ մանկունք ողբանուէր,
Ողբական բանիւ պատմել զգաղթականաց դերաշխարհումն,
Զոր առնէին աստանօր մինչ հայրենի զերկիր թողեալ
Ողորմիկ լալոտ աչօք ելեալ յինէն բաժանեցան.
Ա՛հ, յայնժամ էր տեսանել զնոցին լալիւն աշխարհահեծ,
Ըզտեսիլ ըզկերպարան թշուառագոյն ուղեւորացն,
Որ երթային և լային որպէս երբեմն հրէական ազգն.
Ծերքն ի ձեռըս գաւազան առեալ ելին դողդոջաքայլ,
Որ բազմէին ի յաթոռս զոտէպաշտեալ ի ծառայից.
Իշխանքըն փառաւոր, որ յերիվարս պալարակապ
Նըստէին չըքեղապէս և շրջէին ի հրապարակս,
Այնպէս գնային հետիոտս քղանցք ըզգեստուցն փոշոտեալ.
Տընաչէն կանայք ըզտունս և ըզմառանս թողեալ ի լի,
Ելին զծծկերս ի գիրկս առեալ միով ձեռամբ
Եւ միւսովն ըզձեռանէ մանկանց կալեալ յուշիկաքայլ,
Բոկանի գնային լալով ընդ ճանապարհս տաժանալից,
Ո՛հ, քընքուշ զոտս մանկանց պատառոտէր փըշուտ գետին,
Ելին յառագաստից հարսունքն անքօղ փեսայազուրկ,
Զի փեսայք նոցին զենան ի սուր գերչացն անագորոյն.
Ելին և նորապըսակ փեսայք զըրկեալ ի նոր հարսանցն,
Զի հարսունք պըսակաւէր գերի գնացին ի խուժադան.
Ելին այն պատկառոտ կոյս օրիորդք չըքնաղագեղ,
Հերարձակ և հոլանի գնացին ի մէջ կարաւանին.
Ելին հովիւքն ի դաշտացըն Շիրակայ մնացեալ հօտիւք,
Նորածին գառինքն ըզկնի մարց երթային բառաչելով.

Ընդ հովիւսն և հողագործքն յակօս հերկին թողեալ զարօր
Եւ զեզինս առեալ ելին, ուր ոչ գոյր արտ յերկիր օտար.
Այգունակ դառըն կածով ելին յինէն իմ ժողովուրդք,
Թողին զամենապտուղ պարտէզս հայգիսըն գինեբուխ,
Թողին ըզգաշտօրայս և զանդաստանս ցորենաբեր,
Եւ բազմաբեր մեծ ամբարս լի ցորենովք ատոքաձեմ.
Ընդ սոսին զինչս և ըզգանձս մեծութեան թողեալ ի յետս
Անինչ և հացազուրկ ի վայր օտար պանդըխտեցան,
Ուր կարօտ բերեալ հացի տառապէին թըշուառապէս.
Ոչ գոյր նոցա բնաւին անդ ափ մի հողիկ սերմանելոյ,
Այց արտոց չէր սահման ի Շիրակայ դաշտ լայնատար.
Ոչ այգի գինեբեր, ոչ մըրգաստան բազմապտուղ,
Ոչ բուրաւոր խաշանց հօտ կամ պաճարաց խուռն երամ,
Որով անդ և այնուքիւք փափկանային ի ճոխ վայելս.
Վասն այն յուշ բերեալ նոցա զի բարութիւն երկրի իմոյ
Դառնապէս հառաչէին զօր ամենայն արտասուելով.

———

Նա յաւէտ, որ այժմ եկեալ էք դուք մանկունք իմ հարազատ,
Նայեցայք աւաղ աչօք յիմ այս տեսիլ աշխարհիս,
Ինձ թէ զութ չարժիցի մանկտւոյդ ի սիրտ դիւրագորով
Մնացելոյս այս խնայել, զիս նորոգել ի փառըս նոր[…]
Եւ ի դիրկ այրւոյս կըրկին զըգուել սիրովն իմ մայրական.
Վա՜չ, յայնժամ տառապեալ մայրս լինի ոգւով ուրախալից.
Ուստերովք և դըստերովք բերկրեալ որպէս մայր եօթնածին,
Նոր փառօք ըստ առաջնոյն բարգաւաճեալ ամենայնիւ,
Զառաջինն մոռանալով, վերջնով լիցի մխիթարեալ.

Խրիմեան Հայրիկ·

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկրորդ բաժնի։

ՀԱՅՐԵՆԻՔ

Ա. ԸՆՏԱՆԻՔ

Երես

1. Տան օրհնութիւնը . . . 3
2. Հին տունը . . . —
3. Աչքի տակից եղածը հեռու մի ման գար (Պռօշեանց). 4
4. Հայի գերդաստանը (Աղայեանց) . . . 6
5. Մեծ նանը (Պռօշեանց) . . . 7
6. Մայր և որդի. . . . 9
7. Հայր և երեք որդի (Բարխուդարեանց). . . . 10
8. Երկու քոյր (Պատկանեան). . . . 12
9. Եօթը ագռաւներ. . . . 13
10. Երգ պանդուխտ պատանեկի (Դոդոխեանց) . . . 16
11. Ամուսնական հաւատարմութիւն (Աֆիմեանց) . . . —
12. Ուսումնածարաւ մանուկը (Գեղամեանց) . . . 22
13. Աղ ու հաց . . . 24
14. Կարեկից (Պատկանեան) . . . 25
15. Քահանայ (Պատկանեան) . . . —
16. Տէր Մարգարը (Գեղամեանց) . . . 27
17. Պանդուխտ առ կռունկ (Ժողովր. Բանաստեղծ.). . . . 29
18. Պսականարոտ (Սրուանձտեանց) . . . 30
19. Սայաթ-Նովա (Ախվերդեանց). . . . 32
20. Նախապաշարմունք և սնոտիապաշտութիւն (Սրուանձտեանց) 34
21. Նախապատրաստութիւն (Խրիմեան Հայրիկ) . . . 37

Բ. ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

I. ՀՈՎԻՒ

1. Հովուի երգը (Շահազիզեան). Եւ ասէ Յիսուս (Ա-ե-տարեան) . . . 38

2 Մարգի փերին . . . 39
3. Հովուի ցուպը (Սրուանձտեանց) . . . 40
4. Ծաղկասար . . . —
5. Նախրչի մանուկը (Պռօշեանց) . . . 41
6. Մարգար Մառնիկեցի (Սրուանձտեանց). . . . 43
7. Սար երթալը (Աղայեանց) . . . 45
8. Եայլաղ (Աբովեանց) . . . 47
9. Վազանի բաժինը. . . . 48
10. Հովուի դարձը սարից (Բարխուդարեանց). . . . 50
11. Նախապատրաստութիւն (Խրիմեան Հայրիկ) . . . 51

II. ԵՐԿՐԱԳՈՐԾ

1. Երգ շինականաց (Ժողովրդական երգ). . . . 51
2. Հսկաների խաղալիք . . . 52
3. Ցորենի հասկը. . . . 53
4. Ճգնաւորի հացը . . . 54
5. Շեղջայ դար (Սրուանձտեանց) . . . 55
6. Բանուոր մշակ . . . —
7. Հալել բարօ և քառասուն ակունք (Սրուանձտեանց). . 56
8. Գեղցու երջանկութիւնը (Աբովեանց). . . . 58
9. Պարտիզպանների աւանդական սովորութիւնները (Պռօշեանց) . . . 59
10. Երաշտութիւն (Արարատեան) . . . 60
11. Նուրին (Պռօշեանց) . . . 62
12. Սուրբ Ականատես (Պռօշեանց) . . . 63
13. Երկու ճանապարհորդ (Բարխուդարեանց). . . . —
14. Ջրի հերթը (Պռօշեանց) . . . 64
15. Աստուած որ բանն աջողի ոչ, մարդ հազար էլ աշխատի, ոչինչ չի շինիլ (Պռօշեանց). . . . 65
16. Փոթորիկ (Բարխուդարեանց) . . . 66
17. Փոխարայ բանողներ (Պռօշեանց). . . . 67
18. Լօռցի և Քուրդստանցի Հայ (Աղայեանց) . . . 68
19. Հայաստանու հող (Աբովեանց) . . . 70
20. Տարուայ սկիզբն Հայաստանում (Աշըշեան) . . . 71
21. Նաւասարդի տօները (Աշըշեան). . . . 73
22. Երկրագործութիւն . . . 76

23. Հայաբոյս 79
24. Նախապատրաստութիւն (Խրիմեան Հայրիկ) 81

III. ՈՐՍՈՐԴ

1. Որսորդի երգ (Բարխուդարեանց) 82
2. Որսի հանդէսը (Մովսէս Խորենացի) . . . . . . —
3. Արտաւազդ (Ազգային աւանդէն) 84
4. Բաղէ (Վ. Փոփներ) . . . . —
5. Ողբ կաքաւու (Ժողովրդական երգ) 87
6. Հարսանիքի մի արարողութիւն (Պռօշեանց) . . . 88
7. Քաջ որսկաններ (Աբովեանց) 89
8. Որսի սէրը 90
9. Եղնիկի որսը 91
10. Որսորդի երգը (Բարխուդարեանց) 93
11. Մի գիշատիչ կենդանի անտառի մէջ ձմեռուայ ժամանակ . . . . —
12. Նախապատրաստութիւն (Խրիմեան Հայրիկ) 95

IV. ԶՕՐԱԿԱՆ

1. Զօրս հսկայ (Բարխուդարեանց) 96
2. Ո՞վ է վայելում քրտնքի պտուղը (Բարխուդարեանց) . 98
3. Երկրագործների զուարճութիւնները (Աբովեանց) . . 100
4. Թուանքչի (Պռօշեանց) 101
5. Արանչիք (Պռօշեանց) 104
6. Ասղեր (Բարխուդարեանց) 106
7. Անի (Աբովեանց) 107
8. Ողբալից բանք Անի քաղաքին Հայոց առ Հայազգի ոմն, որ գնացեալ էր նմա ի տեսութիւն (Արարատեան). 113
9. Իգիթի վիճակն ու հոգսերը (Աբովեանց) 114
10. Վարդանի երգը (Պատկանեանց) 118
11. Մի պատկեր վերջին պատերազմից (Սէհլիօղոտէ) . . 119
12. Վանեցի կորիճ (Պատկանեանց) 122
13. Վան քաղաքի «Հրապարակ Ծերոց» (Սրուանձտեանց) . —
14. Նախապատրաստութիւն (Խրիմեան Հայրիկ) 124

ԳԱԹ
№